




**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ  
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ**



**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ  
ԲԱՆԿ**



## **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ**

*Վիճակագրական վերլուծական զեկույց*

**Ըստ 2004թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված  
հետազոտության արդյունքների**

**Երևան 2006թ.**

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ԱՎԾ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները, խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ Աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժին:

*375010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական տուն, 3*

*Հեռախոս (374 1) 52-33-56, 52-42-45*

*Ֆաքս (374 1) 52-19-21*

*Էլ. փոստ [info@armstat.am](mailto:info@armstat.am)*

*ՀՀ ԱՎԾ ինտերնետային էջ <http://www.armstat.am>*

Սույն գեկույցը թվով վեցերորդն է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության (ՀՀ ԱՎԾ) կողմից ամենամյա պարբերականությամբ հրապարակվող «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» համանուն գեկույցների շարքում: Նշյալ գեկույցների հիմնական նպատակն է փաստել, վերլուծել և տրամադրել տեղեկատվություն երկրում աղքատության մակարդակի և սոցիալական կարգավիճակի վերաբերյալ: Մինչ այժմ հրապարակված գեկույցների հիմքում ընկած էին հիմնականում 1996թ.-ից ի վեր ներդրված և 2001թ.-ից տարեկան պարբերականությամբ իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքները:

Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունները ՀՀ ԱՎԾ կողմից տվյալների հավաքագրման առավել կարևոր գործիքներից են: Նման հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների կենսամակարդակի վերաբերյալ հավաքագրվում է բավական հարուստ և արժեքավոր տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ ԱՎԾ-ին տարեկան կտրվածքով կառավարությանը և հասարակությանը արդիական տեղեկատվություն տրամադրել երկրում աղքատության մակարդակի փոփոխության վերաբերյալ: Ամեն տարի ՀՀ ԱՎԾ-ն Համաշխարհային բանկի, ԱՄՆ ՄՁԳ և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ միջոց ջանացել է կատարելագործել այդ հետազոտությունները՝ զարգացած երկրներում նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ համադրելի դարձնելու ակնկալիքով: Մեծ ջանքեր են գործադրվում նաև աղքատության մակարդակի գնահատման ժամանակակից մեթոդաբանությանն ու մոտեցումներին տեղեկացված լինելու գործում:

*Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը* պարբերականի սույն համարը մի շարք տեսանկյուններով տարբերվում է նախորդ գեկույցներից:

- ***Նախ, գեկույցի հիմքում ընկած են տնային տնտեսությունների առավել կատարելագործված հետազոտությունից ստացված տվյալները:*** 2003թ.-ի սեպտեմբերից մինչև 2005թ.-ի նոյեմբերը Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝ բազմաթիվ խորհրդատվությունների և գործնական աշխատանքների արդյունքում (1) արդիականացվեց հետազոտության ընտրանքի ձևավորումն՝ օգտագործելով 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, (2) ընդլայնվեց ընտրանքի չափն, ապահովելու տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, (3) վերանայվեց ՏՏԿԱՀ հետազոտության հարցաշարը՝ արտացոլելու 1998/99 թթ.-ից ի վեր տեղ գտած տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ինչպես նաև զբաղվածության վերաբերյալ համապարփակ բաժին ավելացվեց հարցաշարում, (4) ավելի խորը վերապատրաստում անցավ հետազոտությունն իրականացնող անձնակազմը: Կատարելագործված այդ հետազոտությունը սկսվեց 2004թ.-ին՝ փաստացի տեղեկատվություն հավաքագրելով 2004թ.-ի ապրիլի 1-ից 2005թ.-ի մարտի 31-ը:
- ***Երկրորդ, օգտագործվել է աղքատության մակարդակի գնահատման առավել ճշգրտված մեթոդաբանություն:*** Մեթոդաբանական փոփոխություններն իրականացվել են Համաշխարհային բանկի հետ սերտ համագործակցությամբ և վերջինիս տեխնիկական աջակցությամբ: Ի տարբերություն ՀՀ ԱՎԾ-ի կողմից մինչ այդմ կիրառվող մեթոդաբանության, ճշգրտված մեթոդաբանությունն ունի հետևյալ նոր առանձնահատկությունները. (i) հիմնված է սպառման ագրեգատի ավելի ընդարձակ հաշվարկման վրա, քանի որ այս անգամ *սպառման ագրեգատն*, ի լրումն ստանդարտ պարենային և ոչ պարենային բաղադրիչների, ներառում է նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը, այն է՝ տնային տնտեսության կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքներից ստացվող ծառայությունների արժեքը, (ii) *սպառման ագրեգացված ցուցանիշը* ճշգրտվել է՝ հաշվի առնելով չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերությունները, ինչպես նաև ճշգրտվել են տնային տնտեսության ծախսերը՝ տնտեսության անդամների միջև հավասարապես բաշխման միջոցով: Այսպիսով, կիրառվել է *մեկ չափահաս անձի հաշվով համարժեք սպառումը*՝ նախկինում կիրառվող մեկ շնչի հաշվով սպառման գնահատման մոտեցման փոխարեն, և (iii) 2004թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա ձևավորվել է *նոր նվազագույն պարենային զամբյուղը*, որն օգտագործվեց 1990-

ականների կեսերից սպառման ցուցանիշի փոփոխություններն արձանագրելու համար: Այդ նոր զամբյուղը կիրառվել է 2004թ.-ի ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը հաշվարկելու համար, որը կկիրառվի որպես համեմատության հիմք հաջորդ մի քանի տարիների ընթացքում աղքատության մակարդակի գնահատման համար և կճշգրտվի միայն գնաճի մակարդակը հաշվի առնելով:

- **Երրորդ, այն ներկայացնում է 1998 և 2004թթ.-ի ընթացքում Հայաստանում սոցիալ տնտեսական զարգացումների և աղքատության մակարդակի փոփոխությունների համապարփակ վերլուծություն:** Բնականաբար, զեկույցը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ մակրոտնտեսական զարգացումներ, աղքատություն, աշխատանքի շուկա և աղքատության ոչ նյութական ցուցանիշները: Այն նաև ներկայացնում է աղքատության մակարդակին տրված բնակչության սուբյեկտիվ գնահատականը: Զարմանալիորեն, 2004թ.-ին իրենց աղքատ կամ շատ աղքատ է համարել բնակչության 20 տոկոսը, ինչը շատ ավելի ցածր է, քան օբյեկտիվ, այն է՝ սպառման ագրեգատի հիման վրա կատարված աղքատության մակարդակի գնահատականը (34.6 տոկոս):

Զեկույցը կազմված է համատեղ՝ ՀՀ ԱՎԾ և Համաշխարհային բանկի մասնագետների ու փորձագետների կողմից: Համաշխարհային բանկի համար սույն զեկույցը մասն է կազմում Հայաստանում աղքատության մակարդակի գնահատման ծրագրի, որի նպատակն է ոչ միայն վերլուծել և դիտարկել Հայաստանում սոցիալ տնտեսական իրավիճակն ու աղքատության մակարդակն, այլև աջակցել ՀՀ ԱՎԾ-ին և ՀՀ կառավարությանը կառուցելու տնային տնտեսություններից ստացվող լավ որակի տվյալների կայուն համակարգ և կատարելագործել Հայաստանի մասնագետների այդ տվյալները վերլուծելու և աղքատության մակարդակի փոփոխությունները վերահսկելու կարողությունները՝ ժամանակակից վիճակագրական գործիքների և մեթոդների կիրառմամբ: 2004թ.-ին իրականացված հետազոտությունը և սույն զեկույցն այդ նպատակներին հասնելու կարևոր քայլեր էին: Համաշխարհային բանկի Աղքատության մակարդակի գնահատման ծրագրի թիմը վստահ է, որ Հայաստանի մասնագետներն ունեն բավարար կարողություն իրականացնելու աղքատության մակարդակի գնահատման այդ կարևոր աշխատանքը:

Թեև զեկույցի հիմքում հիմնականում ՀՀ ԱՎԾ կողմից իրականացված տնային տնտեսությունների հետազոտության արդյունքներն են, այստեղ օգտագործված են նաև Համաշխարհային բանկի, ՄԱԿ-ի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, ինչպես նաև մի շարք այլ միջազգային կազմակերպությունների վիճակագրական տեղեկատվությունը: Զեկույցում օգտագործվել են ՀՀ մախարարությունների և գերատեսչությունների վարչական վիճակագրական ամբողջական ցուցանիշները, մասնավորապես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության մախարարությունների, ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի կողմից ՀՀ ԱՎԾ ներկայացրած տեղեկատվությունը:

Մենք հուսով ենք, որ սույն զեկույցը տեղեկատվության կարևոր աղբյուր կլինի Հայաստանում սոցիալ տնտեսական զարգացումների և աղքատության մակարդակի վերաբերյալ տեղեկացված լինելու ցանկություն ունեցող բոլոր սպառողների համար:

*Ալեքսանդրա Պոսարակ*

Ավագ տնտեսագետ, Մարդկային  
զարգացման ծրագրի հարավկովկասյան  
երկրների գծով համակարգող,  
Համաշխարհային բանկ

*Ստեփան Մնացականյան*

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության  
նախագահ

## Երախտագիտություններ

Սույն զեկույցը պատրաստվել է ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ստեփան Մնացականյանի անմիջական խորհրդատվությունների ներքո՝ Համաշխարհային բանկի ավագ տնտեսագետ Ալեքսանդրա Պոսարակի կողմից ղեկավարվող մասնագետների խմբի կողմից: Խմբի անդամներն են. Համաշխարհային բանկից՝ Գոհար Գյուլումյանը, Յան Ռուտկովսկին, Դիեգո Անգել-Ուրդինոլան և Շվետա Ջեյնը, խորհրդատուներ՝ Գոռանա Քրստիչ, Հասմիկ Դուկասյան և Սիլվա Պրինա, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից՝ Աստղիկ Մինասյանը, ՀՀ գիտության և կրթության նախարարությունից՝ Մարինե Աղաջանյանը և ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունից՝ Դիանա Մարտիրոսովան և Արմենուհի Առուշանյանը:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն իր երախտիքն է հայտնում բոլոր նրանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել սույն հետազոտության անցկացման և զեկույցի պատրաստման գործում: Մասնավորապես՝

- Համաշխարհային բանկին 2004թ.-ի հետազոտության կազմակերպման և իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական և տեխնիկական աջակցության տրամադրման համար, ինչպես նաև Համաշխարհային բանկի փորձագետներին՝ աղբատության գնահատման վերաբերյալ տրամադրված խորհրդատվության, առաջարկների և վերլուծությունների համար:
- Եվրոպական հանձնաժողովի պարենային ապահովության ծրագրին հետազոտության իրականացմանն անհրաժեշտ ֆինանսական աջակցության տրամադրման համար:
- ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալությանն ի դեմս ՊԱԴԿՈ ինք ( inc.) ԱՄՆ խորհրդատվական ընկերության կողմից իրականացվող Հայաստանի սոցիալական բարեփոխումների ծրագրին՝ հետազոտության դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի վերապատրաստման գործում տրամադրված աջակցության համար:
- ՀՀ ֆինանսերի և էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության ու գիտության և կրթության նախարարություններին՝ համագործակցության համար:
- Հարցմանը մասնակցած բոլոր տնային տնտեսություններին և հարցումն իրականացրած հարցազրույցավարներին և ղեկավարներին:

ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունն իր երախտիքի հատուկ խոսքերն է հղում

Համաշխարհային բանկի Մարդկային զարգացման ծրագրի հարավկովկասյան երկրների գծով համակարգող, ավագ տնտեսագետ Ալեքսանդրա Պոսարակին, որն իր անմիջական ու անգնահատելի ներդրումն ունեցավ սույն հետազոտության կազմակերպման և անդունքների ձևավորման ողջ գործընթացի վրա, իրագործելով կազմակերպչական և կոորդինացիոն մեծ աշխատանք, ներգրավելով գործընթացներում ինչպես Համաշխարհային բանկի, այնպես էլ այլ միջազգային կազմակերպությունների և տեղական փորձագետների՝ համակարգելով նրանց աշխատանքը:

Համաշխարհային բանկի խորհրդատու Գոռանա Քրստիչին, որը 2004-2005թթ. իր աշխատաժամանակի զգալի մասը ծախսեց Հայաստանում՝ ՀՀ ԱՎԾ-ում, և իր ամենօրյա օպերատիվ աշխատանքով նպաստեց հետազոտության գործիքների կատարելագործմանը, ստացված արդյունքները նոր մեթոդաբանությամբ ամփոփումանը՝ ՀՀ ԱՎԾ-ի անձնակազմին փոխանցելով իր փորձառությունը:

Համաշխարհային բանկի խորհրդատու Հասմիկ Ղուկասյանին, որը աշխատանքների ողջ ընթացքում ապահովել է ոչ միայն ՀՀ ԱՎԾ-ի կապը և փոխգործակցությունը Համաշխարհային բանկի և այլ միջազգային կազմակերպությունների հետ, այլև ՀՀ նախարարությունների և գերատեսչությունների հետ, ապահովել զեկույցի շարադրման և գործավարական մեծ ծավալի աշխատանքներ ու թարգմանել զեկույցի ողջ տեքստը՝ չհոգնելով բազմաթիվ անգամ հայերենից անգլերեն և հակառակը թարգմանելու զեկույցի տարբեր բաժինների խմբագրական փոփոխությունները:

Զեկույցի բովանդակության պատրաստման աշխատանքներին իրենց ներդրումն են ունեցել. Ալեքսանդրա Պոսարակը, Գոռանա Քրստիչը, Դիեգո Անջել -Ուրդինոյան, Սիլվիա Պրինան, Շվետա Ջեյնը, Յան Ռուտկովսկին, Գահար Գուլումյանը, Հասմիկ Ղուկասյանը, Աստղիկ Մինասյանը, Մարինե Աղաջանյանը, Դիանա Մարտիրոսովան և Արմենուհի Առուշանյանը: Զեկույցն ամփոփվել է Ալեքսանդրա Պոսարակի կողմից՝ Ստեփան Մնացականյանի հետ սերտ համագործակցությամբ:

ՀՀ ԱՎԾ տարբեր վարչություններ և բաժիններ իրենց կարծիքն ու տեսակետն են հայտնել զեկույցի տարբեր մասերի պատրաստման ընթացքում և պատրաստակամորեն տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, մասնավորապես.

*Գագիկ Գևորգյանը, ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ (ՀՀ ԱՎԾ կողմից զեկույցի պատասխանատու)*

*Յուրա Պողոսյանը, ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ*

*Վահե Դանիելյանը, ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի անդամ*

*Մանյա Թամազյանը, Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ*

*Կարինե Կույումջյանը, Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ*

*Լուսինե Քալանթարյանը, Աշխատանքի վիճակագրության բաժնի պետ*

*Գուրգեն Մարտիրոսյան, Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժնի պետ*

*Ալեքսանդր Պետրոսյանը, Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ*

*Հայկուշ Տիտիզյանը, Ֆինանսների վիճակագրության բաժնի պետ*

*Արսեն Ավագյանը, Գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ*

## ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԸՀ	Աշխատուժի ընտրանքային հետազոտություն
ԱԸՆ	Աղքատության ընտանեկան նպաստ
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀՌԾ	Աղքատության հաղթահալի ռազմավարական ծրագիր
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԱՄՆ	Ամերիկայի Միացիալ Նահանգներ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացիալ Նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԵԿԱ	Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի Երկրներ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՎՋԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկ
ԽՍՀՄ	Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն
կկալ	կիլոկալորիա
կմ	կիլոմետր
հազ.	հազար
ՀԶՆ	Հազարամյակի զարգացման նպատակներ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՀ ԱԾՎ	Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՀ ՖԷՆ	Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն
ՀՀ ԱՍՀՆ	Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ՀՀ ՍԱՊՀ	Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ
ՀՆԱ	համախառն ներքին արդյունք
ՁԻԱՀ	ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ
ՄԱԶԾ	Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԳՄՈՒՄ	Մաթեմատիկայի և այլ գիտությունների միջազգային ուսուցման միտումները
ՄԻԱՎ	մարդու իմունային անբավարարության վիրուս
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՆԶ	Նշանակություն չունի
ՍԳԻ	Սպառողական գների ինդեքս
ՏՀԶԿ	Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
ՏՏ	տնային տնտեսություն
ՏՏԿԱՀ	Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն
ՏԶ	Տվյալ չկա
ՕՈԲՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրումներ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ



1996թ.-ից ի վեր, երբ Հայաստանում առաջին անգամ ներդրվեց տնային տնտեսությունների բարեկեցության ուսումնասիրության ժամանակակից մեթոդաբանությունը, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ)՝ Համաշխարհային բանկի, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության և այլ դոնոր կազմակերպությունների աջակցությամբ, շարունակաբար ջանացել է կատարելագործել տնային տնտեսությունների մակարդակով հավաքագրվող տվյալների որակը և սեփական հմտությունն՝ աղքատության մակարդակի առավել ստույգ գնահատման իմաստով: Այդ ջանքերն արդարացված էին, քանզի տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և վերջիններիս հիման վրա ստացված աղքատության մակարդակի գնահատականները շատ կարևոր ներդրում էին աղքատության հաղթահարման ռազմավարության ձևավորման և մոնիթորինգի տեսանկյունից, ինչի համար պատասխանատվությունը ստանձնել էր ՀՀ Կառավարությունը:

Վերջերս ՀՀ ԱՎԾ-ն լուրջ քայլեր էր ձեռնարկել տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) կատարելագործման և աղքատության մակարդակի գնահատման մինչ օրս կիրառվող մեթոդաբանությունն արդիականացնելու ուղղությամբ: 2003թ.-ի սեպտեմբերից մինչև 2005թ.-ի նոյեմբերը Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ՝ բազմաթիվ խորհրդատվությունների և գործնական աշխատանքների արդյունքում (1) արդիականացվեց հետազոտության ընտրանքի ձևավորումն՝ օգտագործելով 2001թ.-ի մարդահամարի տեղեկատվական բազան, (2) ընդլայնվեց ընտրանքի չափն, ապահովելու տվյալների ներկայացուցչականությունը մարզային կտրվածքով, (3) վերանայվեց SSԿԱՀ հետազոտության հարցաշարը՝ արտացոլելու 1998/99 թթ.-ից ի վեր տեղ գտած տնտեսական և սոցիալական փոփոխությունները, ինչպես նաև զբաղվածության վերաբերյալ համապարփակ բաժին ավելացվեց հարցաշարում, (4) ավելի խորը վերապատրաստում անցավ հետազոտությունն իրականացնող անձնակազմը: Կատարելագործված այդ հետազոտությունը սկսվեց 2004թ.-ին՝ փաստացի տեղեկատվություն հավաքագրելով 2004թ.-ի ապրիլի 1-ից 2005թ.-ի մարտի 31-ը:

ՀՀ ԱՎԾ-ի կողմից որոշակի ճշգրտվեց նաև աղքատության մակարդակի գնահատման մեթոդաբանությունը, կատարելագործվեց աղքատության միտումների և սոցիալ-տնտեսական իրավիճակի գնահատման ու վերլուծության կարողությունը: Այդ ճշգրտված մեթոդաբանությունը կիրառվեց 2004թ.-ին իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքների մշակման ժամանակ: Ի տարբերություն ՀՀ ԱՎԾ-ի կողմից մինչ այդ կիրառվող մեթոդաբանության, ճշգրտված տարբերակն ունի հետևյալ նոր առանձնահատկությունները. (i) հիմնված է սպառման ագրեգատի ավելի ընդարձակ հաշվարկման վրա, քանի որ այս անգամ **սպառման ագրեգատն**, ի լրումն ստանդարտ պարենային և ոչ պարենային բաղադրիչների, ներառում է նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը, այն է՝ տնային տնտեսության կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքներից ստացվող ծառայությունների արժեքը, (ii) սպառման ագրեգացված ցուցանիշը ճշգրտվել է՝ հաշվի առնելով չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերությունները, ինչպես նաև ճշգրտվել են տնային տնտեսության ծախսերը՝ տնտեսության անդամների միջև հավասարապես բաշխման միջոցով: Այսպիսով, գնահատվել է **մեկ չափահաս անձի հաշվով համարժեք սպառումը**՝ նախկինում կիրառվող մեկ շնչի հաշվով սպառման գնահատման մոտեցման փոխարեն, և (iii) 2004թ.-ի SSԿԱՀ արդյունքների հիման վրա ձևավորվեց **նոր նվազագույն պարենային զամբյուղը**: 2004թ.-ի նվազագույն սպառողական զամբյուղը օգտագործվեց գնահատելու 2004թ.-ի ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը, որը կկիրառվի հաջորդ մի քանի տարիների համար աղքատության մակարդակի գնահատման համար և կճշգրտվի միայն գնաճի մակարդակը հաշվի առնելով:

Չեկույցի այս մասում ներկայացված է Հայաստանում տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության նկարագիրը, ինչպես նաև սպառման ագրեգատի կառուցման, համարժեքության սանդղակի և մասշտաբից տնտեսումը գնահատելու և ապա աղքատության գծի սահմանման մանրամասն տեխնիկական նկարագրությունները:

## 1. Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը Հայաստանում

**Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը** (SSԿԱՀ) առաջին անգամ Հայաստանում անց է կացվել 1996թ.-ին և այնուհետև իրականացվել է 1998/99թ., 2001թ., 2002թ., 2003թ. և 2004թ.-ին: Հետազոտություններն իրականացվել են մեկ տարվա ընթացքում՝ տնային տնտեսությունների և բնակավայրերի ամենամսյա փոփոխմամբ (ռոտացիայով): Հետազոտության արդյունքները հիմնականում կիրառվել են երկրում սպառման վրա հիմնված աղքատության մակարդակի գնահատման համար:

### (i) Ընտրանքի ձևավորումը

**Ընտրանքի ձևավորման** համար հիմք էր հանդիսացել հանրապետության բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան, որը ստեղծվել էր 2001թ.-ի մարդահամարի արդյունքների հիման վրա՝ Համաշխարհային բանկի տեխնիկական աջակցությամբ: Ընտրանքի ձևավորման համար հանրապետության բոլոր տնային տնտեսությունների հասցեների տվյալների բազան բաժանվել էր 48 ստրատաների (խմբերի), որոնցից 12-ը Երևանի համայնքներն էին: Մարզային մակարդակով բոլոր տնային տնտեսությունները բաշխվել են ըստ երեք կատեգորիաների. մեծ քաղաքներ՝ 15 հազար և ավելի բնակչությամբ, գյուղեր և այլ քաղաքներ: Մեծ քաղաքները կազմել են 16 խումբ (ստրատա): Ի դեպ, միայն Վայոց Ձորի մարզում չկան մեծ քաղաքներ: Գյուղերի և այլ քաղաքների թիվը կազմել է տասական ստրատա:

Համաձայն այս բաշխման ձևավորվել է պատահական, ըստ մարզերի ստրատիֆիկացված երկաստիճան ընտրանք: Բոլոր մարզերը, ինչպես նաև բոլոր գյուղական և քաղաքային բնակավայրերը ընտրանքային համակցության մեջ ներառվել են ըստ երկրի ընդհանուր բնակչության կազմում այդ բնակավայրերում ապրող բնակչության համամասնության: **Առաջին փուլով** ընտրվել են բնակավայրերը այսինքն, ընտրանքի նախնական միավորները, որոնք պետք է հետազոտվեին մեկ տարվա ընթացքում: Այսպիսով ընտրանքում ընդգրկվեցին 43 քաղաքներ՝ 48-ից, կամ հանրապետության քաղաքների 90 տոկոսը և 216 գյուղ՝ 951-ից, կամ հանրապետության բոլոր գյուղերի 23 տոկոսը: **Երկրորդ փուլով** ընտրվել են հետազոտվող տնային տնտեսությունները՝ 6816 տնային տնտեսություններ, որոնցից 5088 քաղաքային իսկ 1728 գյուղական բնակավայրերից:

Արդյունքում, առաջին անգամ 1996թ.-ից ի վեր, հնարավոր եղավ ստանալ մարզային կտրվածքով նվազագույն ներկայացուցչականությամբ տվյալներ:

### (ii) 1998/99-2004թթ.-ի հետազոտությունների տվյալների համադրելիությունը

2004թ.-ի ՏՏԿԱՀ հետազոտության վերջնական արդյունքները կարող են համեմատվել միայն 1998/1999թթ. իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքների հետ (որն իրականացվել է 1998թ.-ի հուլիսի 1-ից 1999թ.-ի հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում): Այս հանգամանքը կարելի է բացատրել այդ երկու հետազոտությունների ընտրանքային համակցություններով:

**Աղյուսակ 1. Հետազոտված տնային տնտեսությունների ու ընտրանքում ընդգրկված գյուղական ու քաղաքային բնակավայրերի քանակը, 1996-2004թթ.-ին**

	1996թ.	1998/99թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Հետազոտված տնային տնտեսությունների քանակը	4920	3600	4037	4634	4641	6816
Ընտրանքում ընդգրկված քաղաքային բնակավայրերի քանակը	28	33	19	14	17	43
Ընտրանքում ընդգրկված գյուղական բնակավայրերի քանակը	100	71	28	30	20	216

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

2004թ.-ի հետազոտությունը ներառել է 43 քաղաքային և 216 գյուղական բնակավայրեր, իսկ ընտրանքի չափը կազմել է 6816 տնային տնտեսություն, և ինչպես վերը նշվել էր, բացառիկ

հնարավորություն էր ընձեռում ստանալու մարզային կտրվածքով ներկայացուցչական տվյալներ: 1996թ.-ի հետազոտությունը նույնպես ուներ բնակավայրերի լայն ընդգրկվածություն և մեծ ընտրանքի չափ, սակայն այդ հետազոտությունը իրականացվել էր միայն մեկ ամսվա ընթացքում (նոյեմբերի 15-ից դեկտեմբերի 15-ը) և չի կարող համեմատվել 2004թ.-ի մեկ տարվա ընթացքում իրականացված հետազոտության հետ: 2001-2003թթ./-ին իրականացված հետազոտությունները նույնպես ունեն բավական մեծ ընտրանք, սակայն պետական բյուջեի կողմից հատկացվող սուղ միջոցների պատճառով շատ փոքր թվով գյուղական բնակավայրեր էին ընդգրկվել ընտրանքային համակցության մեջ: 1998/99թթ.-ի հետազոտությունն ընդգրկել է 33 քաղաքային և 71 գյուղական բնակավայր և փաստորեն լավագույն տարբերակն է համեմատություններ կատարելու համար, չնայած ընտրանքի ձևավորման մեթոդաբանությունն ու ընտրության մեթոդները բավական տարբեր են 2004թ.-ին իրականացված հետազոտության ժամանակ կիրառված մեթոդներից: 1998/1999թթ.-ին ընտրանքային համակցությունը ձևավորվել էր ըստ 1996թ.-ին վարչական միավորների կողմից ստացված տնային տնտեսությունների հասցեների ցանկի, իսկ 2004թ.-ին ընտրանքային համակցության ձևավորման հիմքում 2001թ.-ի մարդահամարի արդյունքում ձևավորված տվյալների բազան էր: 1998/1999թթ.-ի ընտրանքն ինքնակշռված էր, իսկ 2004թ.-ի ՏՏԿԱՀ ընտրանքը ստրատիֆիկացված էր ըստ գլխավոր համակցության մեջ յուրաքանչյուր ընտրանքային նախնական միավորի համամասնության:

### (iii) Դաշտային աշխատանքների նկարագրությունը

Հետազոտության իրագործման համար կազմավորվել էր 71 հարցազրուցավարներից, 6 որակի հսկիչներից (ստուգողներից) և 13 խմբավարներից բաղկացած անձնակազմ: Հետազոտության իրականացումը վերահսկվում էր նախագծի համակարգողների կողմից: Նախքան հետազոտության սկիզբը դաշտային աշխատանքներն իրականացնող անձնակազմի համար կազմակերպվել է եռօրյա վերապատրաստման դասընթաց:

Յուրաքանչյուր հարցազրուցավար տարվա ընթացքում աշխատել է 12 քլաստերներում՝ այցելելով 8 տնային տնտեսություն մեկ ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր քլաստերում աշխատանքն ավարտելուց հետո հարցազրուցավարը ներկայացնում էր լրացված հարցաշարերն ու օրագրերը ստուգման և կողավորման համար: Միաժամանակ ներկայացվում էր ընտրանքի հաշվետվությունը: Յուրաքանչյուր տնային տնտեսություն մեկ ամսվա ընթացքում օրագիրը լրացնելու համար ստացել է 550 դրամ: Դաշտային աշխատանքների ընթացքը բազմաթիվ անգամ ստուգվել է տարվա ընթացքում կրկնակի վերստուգիչ հարցումների միջոցով: Ողջ հավաքագրված տեղեկատվությունը կողավորվել է, անցել է տրամաբանական ստուգում, կրկնակի մուտքագրվել տարբեր օպերատորների կողմից, համադրվել, որից հետո անցել ծրագրային տրամաբանական ստուգում և ուղղվել ըստ ստացված սխալների ելքային արդյունքների: Արդյունքում կազմավորվել է 6816 տնային տնտեսությունների տվյալների բազան: Դաշտային աշխատանքների ընթացքում հարցազրուցավարներն այցելել են 11885 հասցե, իսկ հրաժարման միջին հանրապետական մակարդակը գրանցվել է 10.4% (աղյուսակ 2-ը ներկայացնում է հրաժարման տոկոսն ըստ մարզերի):

**Աղյուսակ 2. 2004թ. հետազոտված տնային տնտեսությունների քանակը և հրաժարման դեպքերն ըստ մարզերի**

Մարզեր	Լրացված հարցաշարերի թիվը	Հրաժարումն տոկոսը
Երևան	2016	17.9
Արագածոտն	384	12.6
Արարատ	576	9.1
Արմավիր	576	5.8
Գեղարքունիք	480	7.0
Լոռի	576	8.9
Կոտայք	576	6.4
Շիրակ	576	9.9
Սյունիք	384	3.2
Վայոց Ձոր	288	1.1
Տավուշ	384	0.2
Ընդամենը Հայաստանում	6816	10.4

**Նշում.** Հրաժարման տոկոսը հաշվարկվել է որպես հրաժարման դեպքերի հարաբերություն օգտագործված հասցեների թվի վրա:

Հետազոտությանը մասնակցելուց հրաժարման դեպքերի տեսակարար կշիռը, որը հաշվարկվում է որպես հրաժարման դեպքերի հարաբերությունը ընդամենը օգտագործված հասցեների նկատմամբ, գգալիորեն տարբերվում է ըստ մարզերի: Հրաժարման ամենաբարձր մակարդակը գրանցվել է Երևանում՝ 17.9%, իսկ նվազագույնը Տավուշի մարզում՝ 0.2%:

#### **(iv) Հետազոտության գործիքների նկարագրությունը**

Հետազոտության իրագործման համար ՀՀ ԱՎԾ անձնակազմը՝ Համաշխարհային բանկի աջակցությամբ, մշակել է հետազոտության հետևյալ գործիքները. հարցաշար, օրագիր և հարցազրուցավարի հրահանգ:

**Հարցաշարը** լրացվում է հարցազրուցավարի կողմից՝ ամսվա ընթացքում առնվազն հինգ անգամ տնային տնտեսություն կատարած իր այցելությունների ժամանակ: Տնային տնտեսության գլխավորի կամ այլ չափահաս անդամի հետ անմիջական հարցազրույցի ընթացքում հարցազրուցավարը հավաքագրում է տեղեկատվություն տնային տնտեսության կազմի, բնակարանային պայմանների, տնային տնտեսության անդամների կրթական մակարդակի և առողջական վիճակի, զբաղվածության կարգավիճակի, հողամասի, անասունների և գյուղտնիկայի առկայության և օգտագործման, տնային տնտեսությունների միջև դրամական և ապրանքային հոսքերի մասին: Հարցաշարում ներառված բաժինների ցանկն այսպիսին է. (1) տնային տնտեսության ռեսուրս, (2) միգրացիա, (3) բնակարանային և կենցաղային պայմաններ, (4) զբաղվածություն, (5) կրթություն, (6) գյուղատնտեսություն, (7) ինքնազբաղվածություն, (8) դրամական և ապրանքային հոսքեր տնային տնտեսությունների միջև, (9) առողջություն (ընդհանուր) և առողջապահություն, (10) խնայողություններ և պարտքեր, (11) աղքատության սուբյեկտիվ գնահատականը, (12) սոցիալական կապիտալ և ծառայությունների մատուցում և (13) սոցիալական աջակցություն:

**Օրագիրը** լրացնում է անմիջապես տնային տնտեսությունը մեկ ամսվա ընթացքում: Ամեն օր տնային տնտեսությունը գրանցում է սննդամթերքի, ոչ պարենային ապրանքների և ծառայությունների ձեռք բերման համար կատարած իր բոլոր ծախսերը՝ տալով դրանց մանրամասն նկարագիրը, օրինակ գնված սննդամթերքի համար նշվում է ապրանքի անվանումը, քաշը, արժեքը և այն վայրը, որտեղից գնվել է այդ ապրանքը: Բացի այդ օրագրում տնային տնտեսությունը նշում է նաև տնամերձ հողակտորից ստացված և օգտագործված ապրանքները, ինչպես նաև այլ տնային տնտեսություններից ստացված ապրանքները: Ամսվա վերջում լրացվում է նաև քիչ քանակությամբ սպառվող սննդամթերքի մասին և երկարաժամկետ օգտագործման ապրանքների կամ ծիսակատարությունների մասին տեղեկատվությունը: Օրագրում կատարված գրանցումները ստուգվում են հարցազրուցավարի կողմից՝ նույն ամսվա ընթացքում, հարցաթերքի լրացման նպատակով, տնային տնտեսություն կատարած իր այցելությունների ընթանքում: Հետազոտության օրագիրը բաղկացած է հետևյալ բաժիններից. (1) օրվա ընթացքում գնված սննդամթերք, (2) օրվա ընթացքում սպառված սննդամթերք, (3) տնից դուրս սպառված սննդամթերք, (4) ոչ պարենային ապրանքների գնում և ծառայությունների ստացում, (5) անվճար ստացված ապրանքներ և ծառայություններ, (6) տնային տնտեսության եկամուտները, (7) երկարաժամկետ օգտագործման ապրանքների գնում և առկայություն:

**Հարցազրուցավարի հրահանգը** մանրամասն հրահանգավորում է հարցաշարի և օրագրի լրացման կարգը: Եվ՝ հարցաշարը և՛ օրագիրը վերանայվել և համապատասխան ուղղումների են ենթարկվել հետազոտությունից առաջ՝ 2004թ.-ի հունվարին իրականացված նախատեստի արդյունքների հիման վրա:

## **2. Բարեկեցության գնահատում. սպառման ազդեցատի հաշվարկը**

Սպառման ազդեցացված ցուցանիշն օգտագործվում է Հայաստանում բարեկեցության մակարդակը մոտավոր ճշտությամբ գնահատելու համար: Ենթադրվում է, որ հարցման ժամանակ սպառման մասին ավելի ճշգրիտ տեղեկատվություն է ներկայացվում և որ սպառումն առավել սահուն է անցնում և այդքան էլ զգալուն չէ կարճատև տատանումների նկատմամբ, քան եկամտի ցուցանիշը հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում: Սպառման ազդեցացված ցուցանիշը հաշվարկվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի հետազոտության հիման վրա և ներառում է հետևյալ բաղկացուցիչները. (ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը, ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունը և (բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

### **(i) Պարենային ապրանքների սպառումը**

Պարենային ապրանքների սպառումը ներառում է տանը և տնից դուրս (այսինքն՝ ռեստորաններում և այլն) սպառված սննդամթերքը, ինչպես նաև բնամթերային տեսքով ստացված սննդամթերքի՝ սեփական արտադրության սննդի, որպես նվեր և օգնություն ստացված սննդի և մարդասիրական օգնության տեսքով ստացված սննդի սպառումը:

Հայաստանում իրականացված տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը տեղեկատվություն է տրամադրում տնային տնտեսությունների կողմից ձեռք բերված 195 ամուն սննդատեսակների մասին, ինչպես նաև հետազոտության 30 օրերի ընթացքում տնային տնտեսությունների կողմից սպառված սննդամթերքի վերաբերյալ: Սպառված սննդամթերքը գումարային տեսքով արտահայտելու համար կիրառվել են գնված սննդատեսակների գնահատված գները: Տնային տնտեսությունների կողմից սպառված սննդամթերքի վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը ներառում է այդ սննդամթերքի արժեքը, քանակը, չափման միավորը և գները վայրը: Օգտագործելով գնված սննդամթերքի արժեքը և (ստանդարտացված) քանակը, հաշվարկվել է տնային տնտեսության մակարդակով բոլոր սննդատեսակների միավորի արժեքը: Հիմնվելով միավորի՝ տնային տնտեսության մակարդակով արժեքի վրա, հաշվարկվել են ազդեցացման տարբեր մակարդակների համար միավորների մեղիան արժեքները: Ապա ազդեցացման համար կիրառվել են երեք հիմնական խմբեր՝ տարածաշրջան (մարզ), բնակավայր (քաղաքային/գյուղական) և հարցման անցկացման եռամսյակը: Հաշվարկվել են մեղիան գները՝ բացառելով աուտլայեր որակված տնային տնտեսության մակարդակով գները (ամենացածր և ամենաբարձր գները): Աուտլայեր է որակվել այն գինը, որը տնային տնտեսության մակարդակով գնի և տվյալ տարածաշրջանային գնի միջև եղած տարբերությունը գերազանցել է երկու ստանդարտ շեղման չափով: Տարածաշրջանային գինը որոշվել է որպես մեղիան գին համապատասխան մարզ-քաղաք/գյուղ-եռամսյակ ստրատայում:

Եթե տնային տնտեսությունը գնել է տվյալ ապրանքը, ապա օգտագործվել է այդ ապրանքի գինը, եթե տնային տնտեսությունը սպառել է այդ ապրանքը, որը սակայն գվնաժ չի եղել, ապա այդ ապրանքի համար մոտեւագրվել է տվյալ մարզ-քաղաք/գյուղ-եռամսյակի համար հաշվարկված գինը: Հարկ է նշել, որ այդ գների վրա աուտլայերներն ազդեցություն չեն ունեցել: Սննդամթերքի սպառման մոդուլում գրանցվել էր հինգ անվանում սննդատեսակ, որոնք սակայն չէին եղել Սննդամթերքի համար ծախսերի մոդուլում: Այս սննդատեսակների համար օգտագործվել են ՀՀ ԱՎԾ գների վիճակագրության բաժնի կողմից տրամադրված համապատասխան ամիս/եռամսյակային գները:

### **(ii) Ոչ պարենային ապրանքների սպառումը**

Ոչ պարենային ապրանքների սպառումը ներառում է հետևյալ կատեգորիաները. ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ, հագուստ և կոշիկներ, կենցաղային իրեր, տրանսպորտային ծախսեր, կոմունալ ծառայություններ, հանգստի, կրթության և առողջապահության հետ կապված ծախսեր, ինչպես նաև երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը: Այն նաև ներառում է բնամթերային տեսքով ոչ պարենային ապրանքների սպառումը, ինչպիսիք են օրինակ անվճար ստացված ոչ պարենային ապրանքներն ու ծառայությունները (այսինքն՝ մարդասիրական օգնությամբ բնամթերային տեսքով ստացված ոչ պարենային ապրանքները, նվերները, տնային տնտեսության անդամների կողմից տրամադրվող ոչ պարենային

ապրանքները): Բնամթերային տեսքով ոչ պարենային այդ ապրանքների արժեքը գնահատվում է տնային տնտեսության կողմից: Օգտագործելով ամսական կտրվածքով կատարված ծախսերի տվյալները գնահատվել են ոչ պարենային ապրանքների համար կատարված ծախսերի դրամային արժեքները: Այս խմբի համար գները ճշգրտվել են համապատասխան եռամսյակի համար պաշտոնական սպառողական գների ինդեքսի հիման վրա:

Բնակարանների պայմանական հաշվարկային արժեքը՝ այսինքն այդ բնակարանում ապրողի/սեփականատիրոջ օգուտն այդ բնակարանից, չի գնահատվել որպես սպառման բաղադրիչ՝ Հայաստանում բնակարանային գործարքների վերաբերյալ տվյալների սակավության պատճառով:

Երկարատև օգտագործման ապրանքների պայմանական հաշվարկային արժեքի գնահատումը, այսինքն՝ տնային տնտեսության կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքների ծառայելու արժեքի որոշումը, որոշ դժվարություններ էր ստեղծում, չնայած 2004թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը՝ նախորդների համեմատ, երկարատև օգտագործման ապրանքների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվություն էր պարունակում: Հետազոտության օրագրի միջոցով ստացվել էր տեղեկատվություն այն մասին, թե արդյոք տնային տնտեսությունը վերջին 12 ամիսների ընթացքում գնել էր երկարատև օգտագործման ապրանքներ և եթե այո, ապա նշվել էր այդ ապրանքի գինը: Հարցաշարը ներառում էր նաև լրացուցիչ հարց երկարատև օգտագործման ապրանքների վերաբերյալ, ինչպես օրինակ տնային տնտեսության կողմից տնօրինվող այդ ապրանքի տարիքը և ինչ կարծենար այդ ապրանքը, եթե տնային տնտեսությունը ցանկանար այն վաճառել հարցման պահին: Սակայն հարցվողները գերազնահատել էին իրենց կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքների ընթացիկ արժեքը վաճառքի դեպքում, երբեմն գնահատելով դրանք ավելի, քան նոր ապրանքների գինն էր<sup>1</sup>: Տվյալների հետ կապված այդ խնդիրների պատճառով երկարատև օգտագործման ապրանքների պայմանական հաշվարկային արժեքը գնահատվել է պարզ մեթոդով: Վերջին 12 ամիսների ընթացքում գնված ապրանքների պայմանական հաշվարկային արժեքը հաշվարկվել է տարեկան մաշվածության գործակցի կիրառմամբ<sup>2</sup>: Վերջին 12 ամիսների ընթացքում գնված օգտագործված ապրանքների պայմանական հաշվարկային արժեքը հաշվարկվել է նոր ապրանքների հաշվարկային արժեքի մեկ երրորդի չափով: Ավելի քան մեկ տարի առաջ գնված ապրանքների (որոնք ակնհայտորեն ավելի հին են) պայմանական հաշվարկային արժեքը հաշվարկվել է յուրաքանչյուր ապրանքի պայմանական հաշվարկային մեղիան արժեքի մեկ հինգերորդի չափով: Այս մեթոդը կարելի է համադրել այլընտրանքային մոտեցումների հետ, երբ ապրանքների պայմանական հաշվարկային արժեքը գնահատվում է որպես ապրանքի գնի (երբ դրա մասին տրամադրվում է տեղեկատվություն) և այդ ապրանքի ծառայելու ակնկալվող տարիների հարաբերություն (Համաշխարհային բանկ, 2000թ.)<sup>3</sup>: Այս դեպքում, հիմնականում ենթադրվում է, որ ապրանքների, որոնք առկա էին տնային տնտեսություններում, սակայն չէին գրանցվել, որպես ձեռք բեված՝ հարցմանը նախորդող 12 ամիսների ընթացքում, ծառայելու միջին տևողությունը կազմում է 20 տարի:

### (iii) Տարածաշրջանային և սեզոնային գների տարբերությունների ճշգրտում

Քանի որ հետազոտության տվյալները հավաքագրվում են ամբողջ տարվա ընթացքում, ապա հարկ է ճշգրտել տարբեր եռամսյակների սպառումն ըստ հետազոտման ժամանակահատվածի գնաճի: Ավելին, քաղաքային և գյուղական բնակավայրերում գների միջև առկա տարբերությունները կարող են շեղել բարեկեցության գնահատականը, քանզի սպառումը բարեկեցության գնահատման լավ միջոց է, եթե բարձր ծախսերը ենթադրում են բարձր սպառում կամ ավելի բարձր որակի սննդամթերքի սպառում, այլ ոչ թե այն դեպքում, երբ սպառման բարձր մակարդակը պայմանավորված է բարձր գների առկայությամբ: Ուստի հարկ է ճշգրտել տարածաշրջանային գների այդ տարբերությունը:

<sup>1</sup> Դրանով պայմանավորված 2006 թվականի հետազոտության օրագիրը կվերաճնափոխի այս հարցը լրացուցիչ տեղեկատվություն հավաքագրելով տնային տնտեսությունների կողմից տնօրինվող երկարատև օգտագործման ապրանքների գնման արժեքի վերաբերյալ:

<sup>2</sup> 8 տոկոս մաշվածությունը նշանակում է, որ տաս տարի անց տվյալ ապրանքը կկորցնի իր արժեքի 57 տոկոսը: Միացյալ Նահանգներում մաշվածության գործակիցը կազմում է 6.66 տոկոս /Կատարման և բյուջեի գրասենյակ, 1999թ./: Հայաստան, աղբատության գնահատման նոր մոտեցումներ հաշվետվությունում օգտագործվում է մաշվածության 8 տոկոս գործակիցը, սղանի ավելի բարձր ցուցանիշը ընդգրկելու համար:

<sup>3</sup> Տե՛ս. Պանամա. Աղբատության գնահատում. Աղբատության հաղթահարման նախապատվությունները և ռազմավարությունը: Համաշխարհային բանկ. Վաշինգտոն D.C. 2000թ.

Սննդամթերքի սպառումը ճշգրտվում է հաշվի առնելով ժամանակի ընթացքում և տարբեր շրջաններում գների տարբերությունները՝ օգտագործելով հետազոտության տվյալները, քանի որ, ՀՀ Ազգային վիճակագրության ծառայությունը (ըստ գների վիճակագրության մեթոդաբանության) չի տարանջատում սննդամթերքի գներն ըստ քաղաքային և գյուղական բնակավայրերի: Ոչ պարենային ապրանքների սպառումը ճշգրտվել է միայն ժամանակի ընթացքում գների փոփոխության նկատմամբ, քանզի տնային տնտեսությունների հետազոտությամբ սովորաբար չեն ստացվում ոչ պարենային ապրանքների մեկ միավորի գները և այս նպատակի համար կարող է կիրառվել միայն պաշտոնական սպառողական գների ինդեքսը:

Պարենային ապրանքների սպառման գների ճշգրտման համար դիտարկվող գործոնները, որոնք հաշվի են առնում եռամսյակային և քաղաքային ու գյուղական բնակավայրերի միջև գների տարբերությունները, գնահատվել են երեք տեսակի գների ինդեքսների միջոցով՝ Լասպեյրեսի, Պաշեի և Ֆիշերի ինդեքսներով: Աղյուսակ 3-ը ցույց է տալիս գների տարբերություններն ըստ եռամսյակների և քաղաքային ու գյուղական բնակավայրերի՝ այս երեք ինդեքսների կիրառությամբ: Գների ճշգրտման համար կիրառվել է Ֆիշերի ինդեքսը, քանի որ վերջինիս գնահատականը ընկած է Լասպեյրեսի արժեքի (վերին արժեք) և Պաշեի արժեքի (ստորին արժեք) միջև: Սա ակնհայտ էր, ելնելով վերջինիս հաշվարկման եղանակից (Լասպեյրեսի ինդեքսը բազմապատկած Պաշեի ինդեքսով): Պարենային ապրանքների սպառումը 2004/05թթ.-ի համար արտահայտվել է 2004թ.-ի աշնանային քաղաքային գների մակարդակով:

**Աղյուսակ 3. Սննդամթերքի սպառման գների ճշգրտման գործակիցները, մեղիան գներ (բազմապատկած 100)**

Եռամսյակ	Քաղաքային			Գյուղական		
	Լասպեյրես	Պաշե	Ֆիշեր	Լասպեյրես	Պաշե	Ֆիշեր
Ապրիլ-հունիս, 2004թ.	101.3	98.2	99.7	100.8	100.5	100.6
Հուլիս –սեպտեմբեր, 2004թ.	100.8	100.1	100.5	101.5	99.3	100.4
Հոկտեմբեր-դեկտեմբեր, 2004թ.	<b>100.0</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>	96.6	98.1	97.4
Հունվար-մարտ, 2005թ.	91.3	86.7	89.0	86.6	86.2	86.4
Ենթադրվող գնաճ II 2004/IV 2004թ.	+1.3%	-1.8%	-0.3%	+4.3%	+2.4%	+3.3%

**Աղբյուրը.** ՏՏԿԱՀ 2004թ.

**Նշում.** Գործակիցները սննդամթերքի ծախսերը վերաժում են 2004թ.-ի վերջին եռամսյակի ընթացքում քաղաքային բնակավայրերի գների հետ համադրելի գումարների: Տարբեր տնային տնտեսությունների սննդամթերքի սպառման արժեքները բազմապատկվում են այս գործակիցներով՝ առավել ճշգրտությամբ աղբատության վերլուծություն կատարելու համար. Կիրառվել է Ֆիշերի ինդեքսը (մեղիան գները).

Սննդամթերքի գները գյուղական վայրերում ավելի են աճել, քան քաղաքներում: Ֆիշերի ինդեքսը ցույց է տալիս, որ սննդամթերքի գները 2004թ.-ի վերջին եռամսյակում մնացել են անփոփոխ՝ նույն տարվա երկրորդ եռամսյակի համեմատ: Մինչդեռ գյուղական վայրերում գները ավելացել են 3.3 տոկոսով: Ըստ Լասպեյրեսի ինդեքսի վրա հիմնված պաշտոնական ՍԳԻ գնահատականի, որը ներառում է Հայաստանի միայն մեծ քաղաքների գները, սննդամթերքի գները նվազել են 5.8 տոկոսով նույն ժամանակաշրջանի ընթացքում: 12 ամիս տևողությամբ հետազոտության ընթացքում սննդամթերքի գների զգալի տատանումներ նկատվել են 2005թ.-ի առաջին եռամսյակում (2004թ. ՏՏԿԱՀ վերջին եռամսյակում): Սննդամթերքի գները զգալիորեն բարձր էին 2005թ.-ի առաջին եռամսյակի ձմեռային ամիսների ընթացքում, անկախ կիրառված ինդեքսի: Ֆիշերի ինդեքսը ցույց է տալիս, որ քաղաքային բնակավայրերում սննդամթերքի գները ձմռան ամիսներին 12.4 տոկոսով ավելի բարձր էին, քան աշնանը և ուստի պետք է բազմապատկվեն 0.89-ով՝ աշնանային քաղաքային գների մակարդակով արտահայտվելու համար: Պաշտոնական ՍԳԻ-ն նույնպես ցույց է տալիս սննդամթերքի գների աճ նույն ժամանակաշրջանի համար (11.8 տոկոս, I եռամսյակ 2005/IV 2004թ.):

Ոչ պարենային ապրանքների սպառումը ճշգրտվում է գնաճի նկատմամբ՝ օգտագործելով ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության կողմից տրամադրված ոչ պարենային ապրանքների վրա կատարվող ծախսերի համապատասխան ենթախմբերի պաշտոնական սպառողական գների ինդեքսը: Ընդհանուր սպառման ագրեգատը արտահայտվում է 2004թ. աշնան գների մակարդակով:

**Աղյուսակ 4. Սպառման ագրեգատի բաղադրությունը, 2004թ.**

Սպառման ագրեգատ		Բաղադրիչներ	
$C_0$	=	Սննդամթերք	
$C_1$	= $C_0$	+	Ալկոհոլային խմիչքներ և ծխախոտ, հագուստ և կոշիկ
$C_2$	= $C_1$	+	Տնտեսական պարագաներ
$C_3$	= $C_2$	+	Կոմունալ ծառայություններ, տրանսպորտ
$C_4$	= $C_3$	+	Կրթություն, մշակույթ, հանգիստ
$C_5$	= $C_4$	+	Առողջություն
$C_6$	= $C_5$	+	Երկարաժամկետ օգտագործման ապրանքների հաշվարկային արժեք

Ի վերջո տնային տնտեսության սպառումը հաշվարկվել է որպես վերը նշված ենթաագրեգատների գումար (Աղյուսակ 4), որտեղ սննդամթերքի գները ճշգրտվել են գների տարածաշրջանային և եռամսյակային տատանումների նկատմամբ, իսկ ոչ պարենային ապրանքների գները ճշգրտվել են գների եռամսյակային տատանումների նկատմամբ: Սպառման ագրեգատի տարբեր սահմանումներ են կիրառվել տարբեր համարժեքության սանդղակների և մասշտաբից տնտեսման պարամետրերի գնահատման ժամանակ՝ այս գնահատականների զգայունությունը ուսումնասիրելու նպատակով:

### 3. Համարժեքության սանդղակ և տնտեսումը տնային տնտեսության մասշտաբից

Համարժեքության սանդղակը հաշվի է առնում չափահասների և երեխաների սպառման միջև առկա տարբերությունները: Ենթադրվում է, որ երեխաների սպառման պահանջներն ավելի քիչ են աշխատանքային տարիքի չափահաս անձանց պահանջների համեմատ: Նույնիսկ ավելին, տնտեսումը տնային տնտեսության մասշտաբից ենթադրում է, որ տնային տնտեսությունների կողմից կատարվող որոշ ծախսեր հավասարապես բաշխվում են բոլոր անդամների միջև (օրինակ, բնակարանային և կոմունալ ծառայությունների, ավտոմեքենայի, թերթերի և այլնի վրա կատարվող ծախսեր): Օրինակ, ամսական 100 ԱՄՆ դոլարին համարժեք եկամուտ ունեցող հինգ անձից բաղկացած տնային տնտեսությունն ավելի ապահովված է, քան մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունը, որի ամսական եկամուտը կազմում է ԱՄՆ 20 դոլար՝ սպառման ցուցանիշում մասշտաբից տնտեսման հաշվին:

#### (i) Համարժեքության սանդղակ

Չափահասների նկատմամբ երեխաների համարժեքության սանդղակը գնահատելու համար կիրառվել է Էնգելի մեթոդը: Այս մեթոդը գնահատում է երեխաների համար կատարվող ծախսերը, որոնք անհրաժեշտ են փոխհատուցելու կամ ըստ սննդամթերքի սպառման մասնաբաժնի գնահատված տնային տնտեսության կենսամակարդակը նախկին մակարդակին (առանց երեխաների) քերելու համար:

Էնգելի ստանդարտ հավասարումը ռեգրեսիա է, որը բացատրում է սննդամթերքի վրա կատարված ծախսերի մասնաբաժինը՝  $w_s$  ներկայացնելով այն հետևյալ կերպ.

$$w_s = \alpha + \beta \ln\left(\frac{x}{n}\right) + \sum_{j=1}^J \gamma_j n_j + \varepsilon \quad (1)$$

որտեղ  $n_j$ -ն անհատների թվաքանակն է  $j^{\text{րդ}}$  ժողովրդագրական կատեգորիայում ( $j=1, \dots, J$ ),  $n$ -ը տնային տնտեսությունում ապրող մարդկանց թվաքանակն է,  $x$ -ը ընդհանուր ծախսերը,  $\varepsilon$  -ը պատահական սխալն է, իսկ  $\alpha$ ,  $\beta$ , և  $\gamma$ -ը՝ պարամետրերը: Երբեմն ներառվում է նաև  $\ln(x/n)$  քառակուսի աստիճանը: Ելնելով ռեգրեսիա (1)-ից և սպառման ագրեգատի տարբեր բնութագրիչներից, գնահատվում են համարժեքության սանդղակները: Չափահաս զույգից կազմված տնային տնտեսության համար համարժեքության սանդղակի պարամետրը մեկ



լրացուցիչ երեխայով բյուջեի հարաբերությունն է սկզբնական բյուջեին՝ սննդի մասնաբաժինը անփոփոխ թողնելու նպատակով: Այս գնահատականները ներկայացված են հաջորդ աղյուսակում:

<b>Աղյուսակ 5. Համարժեքության սանդղակները 0-14 տարեկան երեխաների համար</b>		
<b>Սպառման ագրեգատ.</b>	<b>Համարժեքության սանդղակ E</b>	<b>Տեստ E=1 F-տեստ</b>
1	1.737	1206.4
2	1.704	1501.4
3	1.631	1524.9
4	1.643	1930.3
5	1.645	2462.8
6	1.549	1345.2

**Նշում:** Համարժեքության սանդղակ E-ն ցույց է տալիս տնային տնտեսությանը մեկ լրացուցիչ երեխա ավելացնելուց հետո ծախսերի  $x_1$ , հարաբերությունը նախքան փոփոխությունն այդ տնային տնտեսության ծախսերի վրա  $x_0$ : Այսինքն,  $E = x_1/x_0$ . կամ բանի տոկոսով պետք է ավելանան ծախսերը՝ տնային տնտեսության կենսամակարդակն անփոփոխ պահպանելու համար:

Արդյունքները ցույց են տալիս, որ լրացուցիչ երեխայի համար կապահանջվի մեկ չափահաս անդամի ծախսի 74-ից 55 տոկոսը՝ կախված կիրառվող սպառման ագրեգատի տեսակից: Եթե ներառվում են կոմունալ ծառայությունները (սպառման ագրեգատ 3), երեխայի համար ծախսը նվազում է՝ չափահաս անդամի ծախսի 71 տոկոսից՝ 63 տոկոսի: Այն մի փոքր ավելանում է կազմելով 64 տոկոս, երբ ավելանում են կրթության հետ կապված ծախսերը և մնում է անփոփոխ, երբ ավելանում են առողջապահական ծախսերը: Ընդունվել է այն ենթադրյալով, որ լրացուցիչ երեխայի ծախսը ընտանիքի համար կկազմի չափահաս անդամի ծախսի 64.5 տոկոսը, որը շատ մոտ է սպառման ագրեգատ 3 և 4-ի կիրառմամբ հաշվարկված գնահատականներին, ինչպես նաև շատ մոտ է նախորդ՝ 1998/99թ. հետազոտության արդյունքների վրա հիմնված գնահատականներին<sup>4</sup>:

## (ii) Տնտեսումը տնային տնտեսության մասշտաբից

Տնտեսումը տնային տնտեսության մասշտաբից հաշվարկվել է սննդամթերքի մասնաբաժնի հավասարման կիրառմամբ՝ համաձայն Լանժուի և Ռավալիոնիի (1995թ.), որտեղ տնտեսումը մասշտաբից կարող է գնահատվել կախվածության մեջ դրվելով տնային տնտեսության կազմի փոփոխությունից և այլ փոփոխականների նկատմամբ:  $\theta$  պարամետրը ցույց է տալիս տնային տնտեսության սպառման մեջ մասշտաբից տնտեսման աստիճանը: Եթե  $\theta = 1$ , ապա նշանակում է, որ չկա տնտեսում մասշտաբից, և ավելի հարմար է կիրառել հենց մեկ շնչի հաշվով սպառումը: Սննդամթերքի մասնաբաժինը կարելի է ներկայացնել բանաձևի տեսքով, որպես ֆունկցիա նախքան համարժեքության բերված սպառման մակարդակի,  $x/n^\theta$ , տնային տնտեսության ժողովրդագրական կազմի փոփոխականների ( $\eta_j = n_j/n$ ), գների, և այլ փոփոխականների, ինչպես օրինակ բնակավայրը: Գնահատվող հավասարումը կարող է ներկայացվել հետևյալ տեսքով.

$$w_f = \alpha + \beta \ln\left(\frac{x}{n^\theta}\right) + \sum_{j=1}^{J-1} \gamma_j \eta_j + \varepsilon = \alpha + \beta \ln x + \beta \theta \ln n + \sum_{j=1}^{J-1} \gamma_j \eta_j + \varepsilon \quad (2)$$

Իսկ  $\theta$ -ի արժեքը կարելի է ստանալ սպառման գործակիցների և տնային տնտեսության չափի հարաբերություններից:

<sup>4</sup> 1998/99թ.-ի հետազոտության տվյալների հիման վրա գնահատված համարժեքության սանդղակը կազմել է 0.68:

Աղյուսակ 6. Տնտեսումը տնային տնտեսության մասշտաբից	
Սպառման ագրեգատ	OLS
	Միջին (1)
1	0.710
2	0.756
3	0.790
4	0.743
5	0.710
6	0.874

Հավասարում (2)-ը գնահատվել է OLS ռեգրեսիայի կիրառմամբ: Աղյուսակ 6-ը ցույց է տալիս  $\theta$  արժեքները սպառման ագրեգատի տարբեր սահմանումների դեպքում: Այն եզրակացությունը, որ համեմատաբար բարձր տնտեսում մասշտաբից ստացվում է սննդամթերքի և հագուստի սպառման դեպքում, պետք է դիտարկվի որոշակի վերապահումով:  $\theta$  պարամետրի արժեքները 1-ից 3 սպառման ագրեգատների դեպքում կարող են շեղված լինել, քանի որ տնային տնտեսությունների հատվածում սննդամթերքի մասնաբաժինը հավասար է մեկի: Սակայն, տնտեսումը մասշտաբից սննդամթերքի սպառման դեպքում նորություն չէ գրականության մեջ (Դետոն և Պաքսոն, 1998թ.): Ամբողջական սպառման ագրեգատը ցույց է տալիս, որ մասշտաբից տնտեսում նկատվել է, և որ այն մոտ է 0.87: Հիմք է ընդունվել այն ենթադրյալով, որ մասշտաբի ճկունությունը 0.87 –ի շուրջ համապատասխանում է Հայաստանի տնային տնտեսությունների համար և ուստի այն կիրառվել է սույն զեկույցում:

### (iii) Մեկ չափահաս անձին համարժեք սպառման գնահատումը

Մեկ չափահաս անձին համարժեք սպառումը ստացվում է տնային տնտեսության ընդհանուր սպառումը բաժանելով տնային տնտեսությունում չափահաս անձին համարժեք անդամների թվաքանակի վրա ( $EA_i$ ): Չափահաս անձին համարժեք անդամները գնահատվում են վերը նշված համարժեքության սանդղակի և մասշտաբից տնտեսման գնահատականների միջոցով՝ ըստ հետևյալ բանաձևի. *i-րդ տնային տնտեսության համար*

$$EA_i = (A_i + a C_i)^{\theta}$$

որտեղ  $A_i$  –ն տնային տնտեսության չափահաս անդամների թվաքանակն է,  $C_i$ -ն երեխաների թվաքանակն է,  $\theta$ -ն մասշտաբի պարամետրն է ( $\theta=0.87$ ), իսկ  $a$ -ն դա չափահաս անդամի նկատմամբ երեխայի ծախսն է ( $a=0.65$ ): Երեխա են դիտարկվում մինչև 14 տարեկան անհատները:

Այս գնահատված պարամետրերը կկիրառվեն հաջորդ հետազոտությունների տվյալների հիման վրա տնային տնտեսությունների սպառումը մեկ չափահաս անձին համարժեք սպառմամբ արտահայտելու համար՝ դրանով իսկ կանխելով այդ պարամետրերում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով աղբատության ցուցանիշների փոփոխությունը:

## 4. Աղբատության գիծը

### (i) Ծայրահեղ (պարենային) աղբատության գիծը

Պարենային աղբատության գիծը կիրառվում է շատ աղբատ, կամ ինչպես հաճախ անվանում են, ծայրահեղ աղբատության մեջ ապրող մարդկանց որոշելու համար: Այդ գիծն այն գումարն է, որն անհրաժեշտ է նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար: Այսինքն, մարդիկ, որոնց սպառումը չի բավականացնում նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար, համարվում են շատ աղբատներ: Այդ գումարը հաշվարկելու համար հարկ է նախ սահմանել Հայաստանի համար անհրաժեշտ միջին կալորիականությունը և գնահատել յուրաքանչյուր կալորիայի արժեքը:

### **Անհրաժեշտ միջին կալորիականությունը**

Հայաստանի համար անհրաժեշտ նվազագույն միջին կալորիականությունը հաշվարկվել է օգտագործելով տարբեր ժողովրդագրական խմբերի համար Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կողմից անհրաժեշտ կալորիականության համար սահմանված չափանիշները (1985թ.) և այդ ժողովրդագրական խմբերի բնակչության համամասնության մասին տեղեկատվությունը (Աղյուսակ 7): Այդ մեթոդով Հայաստանի համար անհրաժեշտ միջին կալորիականությունը սահմանվել է 2,232 կկալ օրական մեկ շնչի հաշվով:

**Աղյուսակ 7. Հայաստանի համար անհրաժեշտ օրական մեկ շնչի հաշվով կալորիականությունը, 2004թ.**

	Տեսակարար կշիռներն ըստ ժողովրդագրական կառուցվածքի					Անհրաժեշտ միջին կալորիականությունը
	Տղամարդիկ 16-60	Կանայք 16-60	Մեծահասակներ	Երեխաներ 0-6 տարեկան	Երեխաներ 7-15 տարեկան	
<b>Օրական անհրաժեշտ կալորիականությունը</b>	<i>2,655</i>	<i>2,099</i>	<i>2,006</i>	<i>1,614</i>	<i>2,362</i>	
Երևան	0.279	0.360	0.151	0.078	0.131	2,237
Արագածոտն	0.257	0.305	0.151	0.115	0.172	2,217
Արարատ	0.260	0.317	0.150	0.083	0.190	2,239
Արմավիր	0.264	0.322	0.135	0.098	0.181	2,234
Գեղարքունիք	0.257	0.321	0.157	0.091	0.174	2,229
Լոռի	0.236	0.316	0.175	0.092	0.181	2,216
Կոտայք	0.283	0.352	0.122	0.077	0.166	2,251
Շիրակ	0.251	0.323	0.149	0.100	0.177	2,223
Սյունիք	0.259	0.321	0.166	0.084	0.169	2,231
Վայոց ձոր	0.258	0.308	0.163	0.091	0.181	2,231
Տավուշ	0.249	0.309	0.205	0.082	0.155	2,220
Ընդամենը Հայաստան	0.264	0.334	0.153	0.087	0.162	<b>2,232</b>

Աղբյուրը. 2004թ ՏՏԿԱՀ և ԱՀԿ (1985թ.)

**Մեկ կալորիայի արժեքը.** Մեկ կալորիայի արժեքը Հայաստանի համար հաշվարկվել է սննդամթերքի վրա կատարված բոլոր ընդհանուր ծախսերը բաժանելով ընդհանուր սպառված կալորիաների վրա: Սննդամթերքի վրա կատարված համընդհանուր ծախսերը ստացվել են ընտրանքում ընդգրկված բոլոր տնային տնտեսությունների սննդամթերքի վրա կատարված ծախսերը գումարելով: Օգտագործելով յուրաքանչյուր տնային տնտեսության կողմից գնված յուրաքանչյուր սննդատեսակի արժեքի մասին տեղեկատվությունը (ներառյալ բնամթերքային տեսքով սպառված սննդամթերքի համար մուտքագրված արժեքը, այսինքն՝ սպառված սննդամթերքի արժեքը, որը չի գնվել, այլ ստացվել է սեփական տնտեսությունից կամ որպես նվեր և մարդասիրական օգնություն) հաշվարկվել է տնային տնտեսության կողմից բոլոր տեսակի սննդամթերքի վրա կատարված ծախսը: Երկրում ընդամենը սպառված կիլոկալորիաները հաշվարկվել են բոլոր տնային տնտեսությունների համար բոլոր սննդատեսակների կալորիականությունները գումարելով: Յուրաքանչյուր սննդատեսակի կալորիականությունը ստացվել է Պարենի և գյուղատնտեսության միջազգային կազմակերպության (FAO) կողմից: Յուրաքանչյուր գնված կամ սպառված սննդատեսակի ընդհանուր կալորիականությունը հաշվարկվել է ըստ տվյալ սննդատեսակի գնված կամ սպառված քանակության և մեկ կիլոգրամի հաշվով կալորիականության:

Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը ստացվել է Հայաստանի համար անհրաժեշտ միջին կալորիականությունը բազմապատկելով մեկ կալորիայի արժեքով: Մեկ կալորիայի արժեքը գնահատվել է 173.7 դրամ ամսական մեկ շնչի հաշվով ըստ միջին գների և 167.2 դրամ ամսական մեկ շնչի հաշվով ըստ մեղիան գների: Այսպիսով 2,232 կիլոկալորիա

զամբյուղի ամսական արժեքը գնահատվել է 11,631 դրամ<sup>5</sup> ամսական մեկ շնչի հաշվով՝ միջին գներով և 11,195.7 դրամ՝ մեդիան գներով<sup>6</sup>: Աղքատության պարենային գծի արժեքը կիրառվել է օգտագործելով 2004թ.-ի չորրորդ եռամսյակի քաղաքային գները, քանի որ սպառման ագրեգատը նույնպես արտահայտված էր այդ գներով (2004թ.-ի աշնանային քաղաքային գների մակարդակով): Նման մոտեցմամբ գնահատված աղքատության պարենային գիծն արտացոլում է միջին հայկական տնային տնտեսության սպառման պատկերը և գնումներ կատարելիս նրա կողմից իրականում վճարված գները:

Այնուհետև մեկ շնչի հաշվով հաշվարկված աղքատության պարենային գիծը ճշգրտվել է համարժեքության սանդղակով, քանզի կենսամակարդակի գնահատման ցուցանիշ ընդունված սպառումը նույնպես վերահաշվարկվել է ըստ մեկ չափահաս անդամի համարժեքության: Տարբեր ժողովրդագրական խմբերի (մեծեր և երեխաներ) համար համարժեքության սանդղակի գործակիցների և տնային տնտեսության չափի կշռված միջին հարաբերությունը՝ 0.898 գործակիցը կիրառվել է մեկ շնչի հաշվով աղքատության պարենային գիծը՝ մեկ չափահաս անդամի համարժեքության աղքատության պարենային գծով արտահայտելու համար: Այսպիսով մեկ չափահաս անդամի հաշվով համարժեք աղքատության միջին պարենային գիծը 2004թ.-ին գնահատվել է 12,952 դրամ՝ միջին գներով և 12,467 դրամ՝ մեդիան գներով:

## (ii) Աղքատության ընդհանուր գիծը

Աղքատության ընդհանուր գիծն իր մեջ ներառում է աղքատության պարենային գիծը և **ոչ-պարենային** ապրանքների օրական սպառումը, քանի որ անձը պետք է կարողանա հոգալ ոչ միայն իր նվազագույն պարենային պահանջը, այլև կարևոր կամ նվազագույն ոչ պարենային ապրանքների պահանջը: Ոչ-պարենային ապրանքների օրական սպառումն աղքատության ընդհանուր գծի որոշման համար գնահատվել է ըստ Պարենային ծախսերի մեթոդի (FEM) և Սպառողական զամբյուղի մեթոդի (CBM) (Համաշխարհային բանկ, 2002թ.): Ըստ առաջին մեթոդի ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը հաշվարկվել է որպես այն տնային տնտեսությունների ծախսերի ոչ պարենային ապրանքների մասնաբաժին, որոնց մեկ չափահաս անդամի հաշվով պարենային ապրանքների սպառումը գտնվում է պարենային գծին մոտ: Երկրորդ մեթոդի համաձայն (CBM), ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը հաշվարկվել է որպես այն տնային տնտեսությունների ծախսերի ոչ պարենային ապրանքների մասնաբաժին, որոնց մեկ չափահաս անդամի հաշվով ընդհանուր սպառումը գտնվում է պարենային գծին մոտ: Արդյունքները ներկայացված են աղյուսակ 8-ում, օգտագործելով պարենային գծի նկատմամբ տարբեր հարաբերական հեռավորությունները և միջին և մեդիան գները:

Ոչ պարենային ապրանքների մասնաբաժնի գնահատականները փոքր ինչ բարձր են առաջին մեթոդի կիրառման դեմպքում՝ երկրորդ մեթոդի համեմատ: Օգտագործելով Պարենային ծախսերի մեթոդը, ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը հաշվարկվել է որպես ընդամենը նվազագույն սպառման 43.4 տոկոս (+/- 2% տարբերություն պարենային գծի նկատմամբ), մինչդեռ Սպառողական զամբյուղի մեթոդի կիրառմամբ, այն գնահատվել է 35.6 տոկոս:

Աղքատության ընդհանուր գիծը հաշվարկվել է օգտագործելով վերոնշյալ երկու մեթոդների հիման վրա հաշվարկված ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը և կիրառելով պարենային գծի նկատմամբ 2 տոկոս հարաբերական տարբերությունը: Համաձայն վերոնշյալ հաշվարկների, աղքատության ընդհանուր գիծը Հայաստանի համար սահմանվել է 18,984 դրամից 24,429 դրամի սահմաններում ամսական մեկ չափահաս անձին համարժեք չափով՝ միջին գներով, և 19,373 դրամից 20,033 դրամ՝ ամսական մեկ չափահաս անձին համարժեք չափով՝ մեդիան գներով:

<sup>5</sup> Ստացվել է: 173.7\*30 օր\*2.232 կիլոկալորիա

<sup>6</sup> Ստացվել է: 167.2\*30 օր \*2.232 կիլոկալորիա

**Աղյուսակ 8. Հայաստան. Աղքատության գիծը, 2004թ.**

Հարաբերական տարրերությունը պարենային գծի նկատմամբ	Աղքատության պարենային գիծը մեկ չափահաս անձին համարժեք դրամ	Ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը ( %-ով)		Աղքատության ընդհանուր գիծ	
		Ստորին սահման	Վերին սահման	Ստորին սահման	Վերին սահման
Միջին գները մեկ կկալորիայի հաշվով					
2%	12,952	31.77	46.98	18,984	24,429
5%	12,952	29.76	46.00	18,439	23,987
10%	12,952	30.74	44.22	18,701	23,219
Մեղիան գները մեկ կկալորիայի հաշվով					
2%	12,467	35.64	43.42	19,373	22,033
5%	12,467	31.77	43.42	18,274	22,033
10%	12,467	30.74	45.08	18,001	22,701

**Աղբյուրը.** 2004 ՏՏԿԱՀ

**Նշում.** Աղքատության պարենային գիծը և ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը գնահատված է ըստ 2004թ.-ի չորրորդ եռամսյակի համար քաղաքային բնակավայրերի գների:

1998/99 և 2004թթ.-ի աղքատության ցուցանիշները համեմատելու համար գնահատվել են ծայրահեղ և ընդհանուր աղքատության գծերը նախորդ տարիների համար: Ծայրահեղ աղքատության գիծը 1998/99-2003թթ.-ի ընթացքում ճշգրտվել է սննդամթերքի ՄԳԻ նկատմամբ, նմանապես աղքատության ընդհանուր գծի ոչ պարենային ապրանքների բաղադրիչը 2004թ.ին ճշգրտվել է դիտարկվող ժամանակահատվածի կտրվածքով ոչ պարենային ապրանքների ՄԳԻ փոփոխությամբ (Աղյուսակ 9), և գումարվել է ճշգրտված պարենային գծին՝ տվյալ տարում աղքատության ընդհանուր գիծը ստանալու համար:

**Աղյուսակ 9. Հայաստան. Աղքատության գիծը, 1999-2004թթ.  
(դրամ)**

	1998/99թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ	11,210	10,246	10,441	11,662	12,467
Աղքատության ընդհանուր գիծ	17,663	16,989	17,299	18,541	19,373

**Աղբյուրը.** 1998/99 և 2004թ ՏՏԿԱՀ

Աղքատության գծի գնահատման այս մոտեցումը կկիրառվի հաջորդ տարիների ընթացքում ևս: 2004թ.-ի ծայրահեղ (պարենային) աղքատության գիծը կճշգրտվի 2004թ.-ի և դիտարկվող տարվա միջև պարենային ապրանքների գների տղաճի նկատմամբ, օգտագործելով պարենային ապրանքների համար հետազոտությամբ ստացված գները: Նմանապես 2004թ.-ի հետազոտության տվյալների հիման վրա գնահատված ոչ պարենային ապրանքների օրական սպառումը կճշգրտվի 2004թ.-ի և դիտարկվող տարվա միջև ոչ պարենային ապրանքների գների տղաճի նկատմամբ՝ օգտագործելով գների վիճակագրությամբ ստացված ոչ պարենային ապրանքների սպառողական գների ինդեքսը: Այսպիսով, որոշակի տարիների ընթացքում օգտագործելով կայուն գներով հաշվարկված աղքատության անփոփոխ գիծը կարելի կլինի դիտարկել աղքատության մակարդակի փոփոխությունը միևնույն սկզբնական միջնակետի նկատմամբ: Բացի այդ, պարենային և ոչ պարենային ապրանքների սպառման կայուն հարաբերակցությունը հնարավորություն կընձեռի դիտարկել ժամանակի ընթացքում աղքատության մակարդակի փոփոխությունները, որոնք հետևանք չեն սպառման բնույթի փոփոխության:

## 5. Աղքատության հիմնական ցուցանիշները

Միջազգային փորձից ելնելով, սույն զեկույցում աղքատությունը գնահատվել է ըստ աղքատության մակարդակի, աղքատության խորության և սրության ցուցանիշների: Ամենապարզ և առավել հաճախ կիրառվող աղքատության մակարդակի գնահատականը աղքատների ընդհանուր թվաքանակի համաթիվն է, որը պարզապես, իրենից ներկայացնում է մեկ չափահաս անդամի հաշվով համարժեք սպառման մակարդակով աղքատության գծից ցած գտնվող անհատների հարաբերություն (Ֆոստեր և ուրիշներ 1984թ.): Աղքատության խորության համաթիվը ցույց է տալիս, թե որքան են աղքատ այդ մարդիկ, կամ որքան է նրանց սպառումը ցածր աղքատության գծից: Աղքատության սրության ցուցանիշը կիրառվել է գնահատելու աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը (որոշ աղքատների մոտ սպառումը կարող է շատ մոտ գտնվել աղքատության գծին, իսկ ոմանք սպառման ցուցանիշով կարող են շատ ցած գտնվել աղքատության գծից):

Զեկույցում կիրառված աղքատության ցուցանիշները նկարագրվել են ստորև բանաձևով.

$$P(\alpha) = \frac{1}{n} \sum_{i=1}^n \left[ \max \left( \frac{z - c_i}{z}, 0 \right) \right]^\alpha$$

որտեղ  $\alpha$ -ն պարամետր է (նկարագրված է ստորև),  $z$ -ը աղքատության գիծն է,  $c_i$  -ն  $i$ -րդ անհատի սպառումն է, իսկ  $n$ -ն անհատների ընդհանուր թվաքանակը: Եթե  $\alpha$ -ն հավասար է զրոյի, ստացվում է  $P(0)$ , կամ աղքատության մակարդակի համաթիվը, որը գնահատում է աղքատության գծից ցած գտնվող անհատների հարաբերությունը: Եթե  $\alpha$ -ն հավասար է 1-ի, ստացվում է  $P(1)$ , կամ աղքատության պակասությունը, որը հաշվի է առնում, թե որքան են միջին հաշվով աղքատները հեռու այդ գծից:  $P(1)$ -ը կարող է արտահայտվել հետևյալ բանաձևով.

$$P(1) = P(0) * (\text{Average Deficit})$$

որտեղ միջին պակասությունը հաշվարկվել է որպես տոկոս աղքատության գծի նկատմամբ, որի չափով աղքատների սպառումը միջին հաշվով պակաս է աղքատության գծից: Վերջապես, եթե  $\alpha$ -ն հավասար է 2, ստացվում է  $P(2)$ , կամ աղքատության սրությունը, որը հաշվի է առնում աղքատների միջև անհավասարությունը:

Սույն զեկույցում ընդհանուր աղքատության միտումները նկարագրված են աղքատության բալոր երեք գնահատականների միջոցով, սակայն աղքատության պատկերի վերլուծությունները հիմնականում կատարվել են աղքատության մակարդակի գնահատականի հիման վրա:

*ՄԱՍ 1. ՀԱՅԱՍՏԱՆ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ,  
ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ  
ՇՈՒԿԱՅԻ ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԸ 1998-2004թթ.*

## Գլուխ 1: Ժողովրդագրություն և միգրացիա

1994 և 2005թթ.-ի միջև՝ տաս տարուց մի փոքր ավել ժամանակահատվածում, Հայաստանի «մշտական» բնակչության թվաքանակը նվազել է մոտ 141 հազար մարդով (1994թ.-ի բնակչության 4.2% չափով), որի հիմնական պատճառը ծնելիության մակարդակի նվազումն էր՝ 2004թ.-ին 1000 բնակչի հաշվով 11.7 ծնունդ ցուցանիշը կազմել էր 1990թ.-ի համապատասխան ցուցանիշի մոտ կեսը: Սակայն, նույն ժամանակահատվածում ավելացել էր գյուղական բնակչության թվաքանակը՝ մոտ 73 հազար մարդով, որն իր հերթին արդյունք էր դեպի գյուղ քաղաքաբնակների ներհոսքի՝ քաղաքներում արդյունաբերական ձեռնարկությունների անգործությամբ և հողի համատարած սեփականաշնորհմանն անմասն չմնալու մտավախությամբ պայմանավորված, դեպի գյուղ ներքին միգրացիայի միտումների, ինչպես նաև քաղաքային բնակչության համեմատ, գյուղական բնակչության ծնելիության բարձր մակարդակի: Արտագաղթը նույնպես կարևորագույն գործոն էր, այդուհանդերձ վերջին ժամանակները նկատվել է միգրացիայի տեմպերի նվազում՝ 2004թ.-ին հարցմանը մասնակցած տնային տնտեսությունների 10 տոկոսը նշել էին միգրացիայից վերադարձած անդամների մասին: Արտագաղթածների գերակշռող մասը՝ 53%-ը մեկնել էին Ռուսաստանի Դաշնություն: Ընդհանուր առմամբ, ծնելիության ցածր մակարդակը և աշխատանքային տարիքի բնակչության արտագաղթը հանգեցրել են Հայաստանի բնակչության կազմում երեխաների թվաքանակի կրճատման և մեծահասակների տեսակարար կշռի ավելացման. արդյունքում նվազում է աշխատուժը, կրճատվում է հիմնական կրթության ծառայությունների նկատմամբ պահանջարկը, իսկ ծերերի նկատմամբ խնամքի ծառայությունների և կենսաթոշակների նկատմամբ պահանջարկն ավելանում է. խնդիրներ, որ պահանջում են հատուկ ուշադրությամբ մշակվող քաղաքականություն:

### 1.1. Բնակչության միտումները

1990-ականներին Հայաստանի բնակչությունը նվազել էր՝ ծնելիության անկման և բարձր արտագաղթով պայմանավորված: Միայն 2003 և 2004թթ.-ին է գրանցվել բնակչության թվաքանակի որոշակի աճ:

Հայաստանի առաջին ազգային մարդահամարի տվյալներով, (2001թ. հոկտեմբերի 10-19-ը) Հայաստանի առկա բնակչության թվաքանակը (de facto բնակչություն) կազմել է 3002.6 հազ. մարդ, իսկ մշտական բնակչության թվաքանակը (de jure բնակչություն)՝ 3213.0 հազ.մարդ:

Մարդահամարի արդյունքով ստացված մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշի հիման վրա ՀՀ ԱՎԾ-ն իրականացնում է բնակչության ընթացիկ հաշվառումը: Վիճակագրական մարմինների կողմից իրականացվող ընթացիկ հաշվառմամբ, բնակչության թվաքանակի տվյալներն արդիականացվում են եռամսյակային պարբերականությամբ, հաշվետու ժամանակաշրջանում, բնակչության բնական աճի (գրանցված ծնունդների և մահերի տարբերության) և միգրացիայի մնացորդի (հաշվառման կանգնած և հաշվառումից դուրս գրվածների տարբերության) տվյալների հիման վրա: Վերջինիս արդյունքներով, 2004թ. հունվարի 1-ի դրությամբ առաջին անգամ արձանագրվել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի աճ, որը սկսած 1993 թվականից (ըստ մարդահամարի արդյունքների հիման վրա վերահաշվարկված մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների), միայն նվազման միտում է դրսևորել: 2005թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 3215.8 հազ. մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրելով աճ՝ 3.6 հազ.մարդով (աղյուսակ 1.1).



**Աղյուսակ 1.1. Հայաստան. Հանրապետության մշտական բնակչությունը 1989-2005 թթ.  
(տարեկազմ)**

<b>Տարիներ</b>	<b>Ամբողջ բնակչությունը (հազ. մարդ)</b>	<b>Ամբողջ բնակչության նկատմամբ տոկոսներով</b>	
		<b>քաղաքային</b>	<b>գյուղական</b>
1989	3448.6	68.4	31.6
1991	3574.5	69.2	30.8
1994	3356.7	67.8	32.2
1999	3232.1	65.3	34.7
2001*	3213.0	64.3	35.7
2002	3212.9	64.3	35.7
2003	3210.3	64.2	35.8
2004	3212.2	64.2	35.8
2005	3215.8	64.1	35.9

**Աղբյուրը.** ՀՀ ԱՎՏ, բնակչության վիճակագրություն

**Նշում.** 2001թ. մարդահամար: Բնակչության տվյալները բերված են յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ:

1999-2005թթ. ընթացքում փոփոխվել է նաև քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքային հարաբերակցությունը: Այսպես, 2005թ.-ին քաղաքային բնակչության տեսակարար կշիռը ցածր էր 1991թ.-ի համապատասխան ցուցանիշի համեմատ, իսկ գյուղական բնակչության տեսակարար կշիռը բարձր էր՝ նույն ժամանակահատվածի ցուցանիշի համեմատ, որը պայմանավորված էր բնակչության ինչպես արտաքին միգրացիայի միտումներով (քանզի առաջինը բարձր կրթությամբ քաղաքաբնակ բնակչությունն էր, որ սկսեց մեկնել Ռուսաստան կամ արտասահմանյան այլ երկրներ, աշխատանք փնտրելու ակնկալիքով) այնպես էլ ներքին միգրացիայի միտումներով (քաղաքներում արդյունաբերական ձեռնարկությունների անգործությամբ և հողի համատարած սեփականաշնորհմանն անմասն չմնալու մտավախությամբ պայմանավորված գրանցվեց քաղաքաբնակների ներհոսք դեպի գյուղ): 2001թ.-ի համեմատ տվյալները ցույց են տալիս շատ աննշան փոփոխություն: Մինչդեռ ժամանակ 2004թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքներով (SSՀԱՀ)<sup>1</sup> քաղաքային մշտական բնակչությունը կազմել է 62.4 տոկոս, իսկ գյուղական բնակչության տեսակարար կշիռն ավելի բարձր էր՝ 37.6 տոկոս:

Ցանկացած երկրում բնակչության թվաքանակի փոփոխությունը գնահատվում է բնակչության բնական աճի (ծնունդների և մահերի տարբերություն) և միգրացիայի հաշվեկշռով:

**Բնակչության բնական աճը.** 1990-2002թթ.-ին հանրապետությունում, ինչպես և անցումային տնտեսությամբ այլ երկրներում, արձանագրվել են բնական հավելաճի և՛ բացարձակ, և՛ հարաբերական ցուցանիշների նվազում: Այդ բացասական միտումը հիմնականում պայմանավորված էր նվազող ծնելիության մակարդակով, քանի որ մահացության մակարդակը, չնայած դրա որոշակի աճին, այդքան դրամատիկ չի փոխվել (աղյուսակ 1.2): Անկայուն տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավիճակը 1990-ականների սկզբում իր ազդեցությունն է թողել վերարտադրողական (ռեպրոդուկտիվ) վարքի վրա: Արդյունքում ծնելիության գումարային գործակիցը պտղաբերության տարիքի (15-49 տարեկան) 1000 կանանց հաշվով նվազել է 1990թ.-ի 2620 -ից 1208-ի՝ 2002թ.-ին: Այդ ցուցանիշն աճել է 1349 և 1383 համապատասխանաբար 2003 և 2004թթ.-ին, այնուամենայնիվ այն զգալի ցածր է անգամ բնակչության պարզ վերարտադրությունն ապահովելու մակարդակից: 2004թ.-ին բնութագրական է եղել քաղաքայինի համեմատ՝ գյուղական բնակչության պտղաբերության ավելի բարձր մակարդակը (1493՝ 1323 համեմատ):

Հատկանշական է, որ 20-24 տարիքային խմբի ծնելիության գործակիցը միշտ եղել է մնում է ամենաբարձրը: Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ 2004թ. կազմել է 24.1 տարի, իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 22.5 տարի, 1990թ. համապատասխանաբար կազմել են՝ 25.3 և 22.8 տարի: Հարկ է նշել, որ ըստ ծննդի հերթականության՝ երրորդ և բարձր կարգի ծնվածները կազմում են հանրապետության կենդանածինների ընդհանուր թվաքանակի 14.0 %-ը, 1990թ.-ի 30.3%-ի համեմատ: Ներկայումս Հայաստանում նկատվել է վերարտադրողական վարքի մեկ այլ հետաքրքիր առանձնահատկություն. ավելացել է

1 Հետազոտության տվյալները տարածվել են գլխավոր համակցության վրա:

չգրանցված ամուսնություններից նորածինների տեսակակար կշիռը. 2004թ.-ին ծնված երեխաների մոտ 36 տոկոսը չգրանցված ամուսնության (այդ թվում՝ արտաամուսնական) ծնունդներ էին, 1990թ.-ին այդ ցուցանիշը կազմում էր 9.3 տոկոս:

**Աղյուսակ 1.2:** Հայաստան. Ծնելիության ու մահացության գործակիցները 1990-2004թթ.-ին\*

Ծնունդներ							Մահեր					
Հազար մարդ			1000 բնակչի հաշվով				Հազար մարդ			1000 բնակչի հաշվով		
Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ		Ընդամենը	Քաղաք	Գյուղ	Ընդամենը	Քաղաք	Գյուղ
1990	79.9	50.2	29.7	22.5	20.5	27.0	22.0	14.7	7.3	6.2	6.0	6.7
1991	77.8	48.4	29.4	21.6	19.5	26.3	23.4	15.8	7.6	6.5	6.3	6.9
1992	70.6	44.0	26.6	19.9	18.1	23.8	25.8	17.4	8.4	7.3	7.2	7.5
1993	59.0	35.3	23.7	17.3	15.2	21.7	27.5	18.6	8.9	8.1	8.0	8.2
1994	51.1	29.9	21.2	15.5	13.5	19.5	24.6	16.7	7.9	7.5	7.5	7.3
1995	49.0	29.2	19.8	15.0	13.5	18.1	24.8	16.7	8.1	7.6	7.8	7.4
1996	48.1	29.4	18.7	14.8	13.7	17.0	24.9	16.5	8.4	7.7	7.7	7.7
1997	43.9	26.9	17.0	13.5	12.6	15.3	24.0	15.8	8.2	7.4	7.4	6.9
1998	39.4	24.6	14.8	12.2	11.6	13.3	23.2	15.5	7.7	7.2	7.3	7.3
1999	36.5	22.4	14.1	11.3	10.7	12.5	24.1	15.8	8.3	7.5	7.5	7.4
2000	34.3	21.4	12.9	10.6	10.3	11.4	24.0	15.7	8.3	7.5	7.5	7.3
2001	32.1	20.3	11.8	10.0	9.8	10.3	24.0	15.6	8.4	7.5	7.6	7.3
2002	32.2	20.8	11.4	10.1	10.1	10.0	25.5	16.7	8.8	8.0	8.1	7.7
2003	35.8	22.6	13.2	11.2	11.0	11.5	26.0	16.9	9.1	8.1	8.2	8.0
2004	37.5	23.6	18.9	11.7	11.5	12.1	25.7	16.5	9.2	8.0	8.0	7.9

**Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ**

**Նշում.** Ծնելիության մակարդակները հաշվարկվել են ըստ 2001թ.-ի մարդահամարի արդյունքներով վերահաշվարկված բնակչության թվաքանակի: Բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ մարզերի ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A1.1-ում:

1990-2004թթ. հանրապետության բնակչության թվաքանակի ցուցանիշն, ի հաշիվ բնական հավելվածի, ավելացել է 357.5 հազ. մարդով կամ 11.1 %-ով:

**Միգրացիա.** ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքով ստացված մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը շուրջ 590 հազ. մարդով պակաս էր 2001թ. տարեսկզբի (ըստ 1979թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառման) դրությամբ ստացված մնացորդային ցուցանիշից: Միջմարդահամարային տարիների ընթացքում բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառման ցուցանիշում կուտակված մնացած չափերի հասնող տարբերությունը հիմնականում պայմանավորված էր 1990-ականներին հանրապետությունում ստեղծված բարդ քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի արդյունքում մեծ ծավալների հասնող միգրացիոն շարժով, որի վերաբերյալ տեղեկատվությունը՝ միգրացիայի վարչական հաշվառման գործող համակարգի անկատարության հետևանքով, դուրս էր մնացել նաև վիճակագրության տեսադաշտից: Ընդ որում, թերհաշվառումը վերաբերում էր ինչպես Հայաստանից արտագաղթածներին, այնպես էլ ներգաղթածներին (փախստականներին և բռնի տեղահանվածներին):

2004թ. ՏՏԿԱՀ արդյունքներով պարզվել է, որ հարցման մասնակից տնային տնտեսություններից մոտ 20%-ն ուներ 15 և բարձր տարիքի բացակա անդամ (աղյուսակ 1.3), որոնցից գրեթե կեսը նշել է, որ մեկնել են Ռուսաստան:

**Աղյուսակ 1.3.** Հայաստան. Տնային տնտեսություններում միգրացիայում գտնվող 15 և բարձր տարիքի անդամներն ըստ գտնվելու վայրի և մեկնման պատճառների.

*տոկոսներով*

Գտնվելու վայրը	Միգրացիայում գտնվող 15 և բարձր տարիքի անդամներն ընդամենը	Այդ թվում ըստ պատճառների			
		Աշխատանք փնտրելու	Աշխատելու	Սովորելու	Ընտանեկան այլ հանգամանքներ
Երևան	9.5	5.5	9.6	45.9	39.0
Այլ քաղաք	14.6	1.9	4.2	7.0	86.9
Հայաստանում					
Այլ գյուղում	9.3	0.0	9.0	0.0	91.0
Հայաստանում					
Ռուսաստանի դաշնություն	53.3	32.4	50.4	2.2	15.0
ԱՊՀ այլ երկիր	3.0	16.9	29.1	6.3	47.7
Եվրոպական երկիր	3.3	47.5	29.1	10.1	13.4
ԱՄՆ և Կանադա	1.7	29.1	26.2	10.0	34.7
Այլ	5.3	4.2	8.6	3.1	84.1
<b>Ընդամենը</b>	<b>20</b>	<b>20.9</b>	<b>32.0</b>	<b>7.4</b>	<b>39.8</b>

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ


Հայաստանի աշխատաշուկայում վերջին ժամանակաշրջանում արձանագրված դրական տեղաշարժերն իրենց ազդեցությունն են թողել նաև միգրացիայի միտումների վրա: Այսպես միգրացիայում գտնվող անդամ ունեցող տնային տնտեսություններից մոտ 10 տոկոսի մոտ արձանագրվել է նաև միգրացիայից վերադարձած անդամներ, այդ թվում 4.4 տոկոսը արտասահմանից իսկ 5.4 տոկոսը Հայաստանի այլ բնակավայրերից: Միգրացիայից վերադարձի պատճառները չեն դիտարկվել, քանզի հետազոտության հարցաշարը նման տեղեկատվություն չէր նախատեսել:

## 1.2. Տարիքային կառուցվածքը

Ծնունդների ցածր տեսակարար կշիռը և ծննդյան պահից թե՛ կանանց և թե՛ տղամարդկանց մոտ կյանքի սպասվող տևողության հարաբերականորեն բարձր ցուցանիշը (համապատասխանաբար 70.3 և 76.4 տարի 2004թ.-ին) համատեղ զգալիորեն նպաստել են Հայաստանի բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխության վրա՝ 1990 և 2005թթ.-ի ընթացքում (պատկեր 1.1):

Մինչև 16 տարեկան երեխաների տեսակարար կշիռը մեկ երրորդից նվազել է, կազմելով բնակչության մեկ քառորդը, մինչդեռ մեծահասակների տեսակարար կշիռը, չնայած 1990թ.-ի համեմատ կենսաթոշակային տարիքի՝ կանանց համար 4 տարով իսկ տղամարդկանց համար 3 տարով ավելացման, ավելացել է գրեթե 50 տոկոսով (1990թ.-ի 9.1 տոկոսից՝ 2005թ.-ին կազմելով 13.1 տոկոս): Նման փոփոխությունը ոչ միայն բացասաբար կանդրադառնա Հայաստանի աշխատուժի ներուժի վրա, այլև կազդի սոցիալական ծառայությունների, հատկապես առողջապահական և կրթական ծառայությունների պահանջարկի վրա:

**Պատկեր 1.1:** Հայաստան. Բնակչության տարիքային կառուցվածքը 1990 և 2005թթ.-ին



**Աղբյուրը.** ՀՀ ԱՎԾ

**Նշում.** 2005թ.-ի համար բնակչությունը հունվարի 1-ի դրությամբ է: Աշխատանքային տարիքի բնակչություն համարվել են 16-ից բարձր տարիքի բնակչությունը մինչև կենսաթոշակային տարիքը: Կենսաթոշակային տարիքը ավելացել է աստիճանաբար և 2004թ.-ին տղամարդկանց համար կազմել է 63 տարի, իսկ կանանց համար՝ 59 տարի:

#### **Ներդիր 1.1. Որոշ փաստեր Հայաստանի բնակչության վերաբերյալ**

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով հանրապետությունում տնային տնտեսությունների ընդհանուր քանակը կազմել է 779.3 հազ., որից 778.6 հազ.-ը անհատական տնային տնտեսություններն են, իսկ 0.7 հազարը՝ խմբային (ինստիտուցիոնալ): Անհատական տնային տնտեսությունների անդամների միջին թվաքանակը կազմել է 4.1 մարդ, քաղաքներում՝ 4.0, իսկ գյուղական վայրերում՝ 4.4 մարդ:

Ըստ հետազոտության տվյալների, քաղաքային բնակավայրերում գերակշռում են չորս անդամից բաղկացած տնային տնտեսությունները, այսինքն՝ զրեթե ամեն չորրորդ տնային տնտեսությունն այդ տեսակի է: Գյուղական բնակավայրերում նույնպես մեծ մասնաբաժին ունեն չորս անդամ ունեցող տնային տնտեսությունները (18.2%), սակայն գերակշռում են հինգ անդամ ունեցող տնային տնտեսությունները (22.0%): 1998/99թ.-ի համեմատ 2004թ.-ին նվազել էր բազմանդամ տնային տնտեսությունների համամասնությունը: 2004թ.-ին մինչև երեք անդամ ունեցող տնային տնտեսությունների տեսակարար կշիռը 42 տոկոս էր՝ 1998/99թ.-ի 33.7 տոկոսի համեմատ (աղյուսակ 1.4):

**Աղյուսակ 1.4:** Հայաստան. Տնային տնտեսությունների համեմատական բաշխումն ըստ նրանց կազմի (ըստ մշտական բնակչության) 1998/99 և 2004թ.-ին

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ	
	Ըստ 1998/99թ. հետազոտության	Ըստ 2004թ. հետազոտության
Տնային տնտեսություններ կազմված՝		
մեկ անդամից	8.4	10.9
երկու անդամից	13.1	16.5
երեք անդամից	12.2	14.6
չորս անդամից	21.9	21.6
հինգ անդամից	20.1	17.2
վեց և ավելի անդամներից	24.6	19.2

**Աղբյուրը.** 1998/99 և 2004թ ՏՏԿԱՀ

Գյուղական բնակավայրերում գերակշռում են բազմանդամ ընտանիքները (յոթ և ավելի անդամ ունեցող ընտանիքները): Քաղաքի համեմատ, նման տնային տնտեսությունների համամասնությունը գյուղում 2 անգամ ավելի է:

Տնային տնտեսությունների գերակա մասը հանրապետությունում գլխավորվում է տղամարդու կողմից (68.5%): Քաղաքային բնակավայրերում կին գլխավոր ունեցող տնային տնտեսությունների թիվն ավելի բարձր է, քան գյուղական բնակավայրերում (32.8 տոկոս քաղաքում՝

29.0 տոկոս գյուղում): Կին գլխավոր ունեցող մեկ տնային տնտեսությանը բաժին է ընկնում 0.4 երեխա, իսկ տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսությանը՝ 0.6 երեխա:

**Աղյուսակ 1.5.** Հայաստան. Մինչև 16 տարեկան երեխա ունեցող տնային տնտեսությունների համամասնությունը մարդահամարի և հետազոտության տվյալներով (ըստ մշտական բնակչության)

Տնային տնտեսությունների կազմը	Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ	
	Ըստ 2001թ.-ի մարդահամարի	Ըստ 2004թ. հետազոտության
Տնային տնտեսությունների ընդամենը այդ թվում ըստ երեխաների թվի՝	100	100
մեկ երեխա ունեցող	20.2	22.2
երկու երեխա ունեցող	23.3	22.9
երեք երեխա ունեցող	9.4	7.2
չորս երեխա ունեցող	2.3	1.8
հինգ և ավելի երեխա ունեցող	0.8	0.6
Երեխա չունեցող	44.0	45.3

**Աղբյուրը.** ՀՀ ԱՎԾ բնակչության վիճակագրություն և 2004թ.-ի ՏՏԱՀ.

Տնային տնտեսությունների 45 տոկոսը չունեն մինչև 16 տարեկան երեխա: Մեկ և երկու երեխա ունեցող տնային տնտեսությունների համամասնությունը գրեթե նույնն էր՝ կազմելով 22 և 23 տոկոս համապատասխանաբար: Երեք և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների համամասնությունը կազմել է բոլոր տնային տնտեսությունների 10 տոկոսը, սակայն նրանց թվում մեծ մասնաբաժին ունեին երեք երեխաներ ունեցող տնային տնտեսությունները, քանի, որ չորս և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները շատ փոքր տեսակարար կշիռ ունեին (աղյուսակ 1.5): 2005թ.-ի սկզբի դրությամբ աշխատանքային տարիքի ամեն 1000 մարդու հաշվով գրանցվել է 579 մինչև 16 տարեկան երեխա և կենսաթոշակառու:

1990թ.-ին գրանցվել էր 28000 ամուսնություն և 4000 ամուսնալուծություն: 2004թ.-ին այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմել են 17000 և 2000: Ամուսնալուծությունների թիվը 1999թ.-ից նվազում էր, սակայն այդ միտումը կտրուկ փոխվեց և արդեն 2004թ.-ին՝ 2000թ.-ի համեմատ գրանցվել է շուրջ 50 տոկոսով ավելի ամուսնալուծություններ:

2004թ. ամուսնալուծությունների ընդհանուր քանակից՝ ամուսնալուծվածների 50.5 %-ը երեխաներ չեն ունեցել, 19.7 %-ը ունեցել է մեկ երեխա, իսկ 29.8 %-ը՝ երկու և ավելի երեխաներ: Ամուսնալուծությունների հետևանքով միայն 2004թ.-ին շուրջ 1.4 հազ. երեխաներ (մինչև 18 տարեկան) գրկվել են ծնողներից մեկի ծնողական խնամքից:

### 1.3. Եզրահանգումներ

Երկար տարիներ բնակչության թվաքանակի շարունակաբար նվազող միտումներից հետո 2003 և 2004թթ.-ին գրանցվել է բնակչության թվաքանակի որոշակի աճ: 2004թ.-ին Հայաստանի մշտական բնակչությունը կազմել է 3215.8 հազար մարդ: Չնայած 2002թ.-ից գրանցվող ծնունդների թվաքանակի աճին, վերարտադրողական տարիքի կնոջ հաշվով պտղաբերության 1.4 ծնունդ կազմող գործակիցը բավարար չէ ընթացիկ բնակչության պարզ վերարտադրությունն ապահովելու տեսանկյունից: Չգրանցված ամուսնություններից ծնունդների տեսակարար կշիռը բավական բարձր է՝ կազմելով 2004 թ.-ի ծնունդների 36 տոկոսը (1990թ.-ի 9.3 տոկոսի համեմատ):

Նվազող պտղաբերությունն ու աճող արտագաղթն իրենց ներգործությունն են բոլել բնակչության տարիքային կառուցվածքի վրա: Նվազել է երեխաների և ավելացել ծերերի տեսակարար կշիռը: Այդ միտումը ոչ միայն բացասաբար կանդրադառնա ապագայում աշխատուժի առաջարկի վրա, այլև առողջապահական, կրթական, սոցիալական ծառայությունների և սոցիալական տրանսֆերտների, մասնավորապես կենսաթոշակների և այլ տարիքային սոցիալական աջակցությունների պահանջարկի վրա:

## Գլուխ II: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓ ՆԿԱՐԱԳԻՐԸ 1994-2004թթ.-ին

*Խելամիտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունը, առևտրի և արտարժույթի փոխանակման ազատական պայմանները, արագ և համեմատաբար ճիշտ գույքորոշված կառուցվածքային բարեփոխումները, ինչպես նաև հայ սփյուռքի աջակցությունն այն առանցքային գործոններն էին, որոնք պայմանավորել են Հայաստանի տնտեսության կայուն աճը 1994թ.-ից սկսած: Տնտեսական աճը հատկապես զգալի էր 2001-04թթ.-ի ընթացքում, երբ երկրի տնտեսությունը սկսեց աճել երկնիշ թվերով: Արդյունքում, 2004-ին Հայաստանը կարողացավ վերականգնել 1990 թվականի ՀՆԱ-ի մակարդակը և անցնել եկամտների միջին մակարդակով գնահատվող երկրների խումբ: Տնտեսական աճը հանգեցրեց իրական աշխատավարձի ավելացման, զբաղվածության մակարդակի կայունացման և հնարավորություն ընձեռեց համախմբված բյուջետային ծախսերում ավելացնել սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը: Այդ ամենը՝ մասնավոր տրանսֆերտների աճող հոսքի հետ համատեղ, նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը:*

### 2.1. Ներածություն

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը բախվեց մի շարք հիմնախնդիրների՝ սոցիալ-տնտեսական, աշխարհաքաղաքական և ժողովրդագրական բնույթի: 1992-1993 թվականների ընթացքում համախառն ներքին արդյունքը կտրուկ անկում արձանագրեց, նվազելով համապատասխանաբար 41.8 և 8.8 տոկոսներով: Թե՛ արտաքին և թե՛ ներքին առևտրի ծավալները, ինչպես նաև էլեկտրաէներգիայի առաջարկը սրընթաց նվազեցին, հիպերինֆլյացիան 1994թ.-ին գերազանցեց 5062 տոկոսը, գործազրկությունը դարձավ հիմնախնդիր և նախկինում գրեթե անհայտ աղքատության երևույթը դարձավ դաժան իրականություն Հայաստանի բնակչության մեծ մասի համար: Վերոհիշյալ գործոնների ազդեցությունն ավելի խորն էր, քանզի երկիրը ժառանգել էր 1988թ.-ի աղետալի երկրաշարժի կործանարար հետևանքները և ներքաշվել տարածաշրջանային հակամարտության մեջ:

**Աղյուսակ 2.1. Հայաստան. Մակրոտնտեսական ցուցանիշներ 1995-2004թթ.**

	1995թ.	1996թ.	1997թ.	1998թ.	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Անվանական ՀՆԱ (մլրդ ՀՀ դրամ)	522.3	661.2	804.3	955.4	987.4	1031.3	1175.9	1362.5	1624.6	1896.4
Իրական ՀՆԱ (1998-ի գներով)	...	...	...	955.4	986.5	1044.7	1145.0	1296.1	1477.6	1626.8
Իրական ՀՆԱ-ի աճ (տարեկան %-ային աճ)	6.9	5.9	3.3	7.3	3.3	5.9	9.6	13.2	14.0	10.1
ԱՄՆ դոլարի փոխարժեք, (ժամանակաշրջանի միջին)	406	413	491	505	535	540	555	573	579	533
Անվանական ՀՆԱ (մլն ԱՄՆ-ի դոլար)	1,287	1,599	1,639	1,892	1,845	1,912	2,118	2,376	2,807	3,555
Պաշտոնական գործազրկության մակարդակ - %	6.7	9.3	10.8	9.4	11.2	11.7	10.4	10.8	10.1	9.6
Միջին տարեկան անվանական աշխատավարձ (հազ. դրամ)	84.7	113.6	163.0	216.0	241.9	272.5	293.8	327.9	417.4	521.3
Գնաճ (միջին տարեկան)	176.0	18.7	14.0	8.7	0.6	-0.8	3.1	1.1	4.7	7.0
Համախմբված բյուջեի ծախսեր (ՀՆԱ-ի նկատմամբ %)	26.3	22.0	21.9	24.5	28.4	24.7	23.6	22.0	22.4	20.7
Համախմբված բյուջեի պակասուրդ (ՀՆԱ-ի նկատմամբ %)	-6.0	-3.6	-2.5	-3.7	-5.4	-4.8	-4.2	-2.5	-1.3	-1.5

**Աղբյուրը:** ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (ՀՀ ԱՎԾ)

Տնտեսական և սոցիալական դժվարությունների հաղթահարման, ինչպես նաև սոցիալ-տնտեսական աճի և զարգացմանը նպաստող կայուն մակրոտնտեսական միջավայրի ստեղծման և պահպանման նպատակով, Հայաստանի իշխանությունները միաժամանակ սկսեցին իրականացնել համապարփակ տնտեսական քաղաքականություն և կառուցվածքային

փոփոխություններ տնտեսության բոլոր ճյուղերում: 1992թ.-ին Հայաստանը նախաձեռնեց և իրականացրեց հողի սեփականաշնորհումը, ինչն առաջինն էր ԱՊՀ ողջ տարածքում և ըստ էության շատ կարևոր դեր խաղաց բազմաթիվ ընտանիքների կենսագործունեության պահպանման գործում: Բարեփոխումների վաղ շրջանի հաջորդ զգալի ձեռքբերումը երկրում մասնավոր սեփականության հիմնական զանգվածի ձևավորումն էր: 4-5 տարիների ընթացքում փոքր և միջին ձեռնարկությունների մեծ մասը մասնավորեցվեց և արդեն 90-ականների սկզբին ՀՆԱ-ի գրեթե 70-75 տոկոսն արտադրվում էր տնտեսության մասնավոր հատվածի կողմից:

Տնտեսական բարեփոխումների վաղ շրջանի այլ բաղադրիչներից էին գների ազատականացումը, սպառողական և արտադրական սուբսիդիաների վերացումը, կոշտ դրամավարկային և հարկաբյուջետային քաղաքականությունների իրականացումը, որոնց նպատակն էր սահմանափակել պետական ծախսերի մակարդակը՝ բյուջետային պակասուրդի կառավարելի մակարդակին համապատասխան: Տնտեսական քաղաքականության բոլոր նշված փոփոխությունները դրական արդյունքներ արձանագրեցին արդեն իսկ 1990-ականների երկրորդ կեսից:

1994 թվականից սկսած Հայաստանի տնտեսությունն արձանագրել է միջին տարեկան 7.7 տոկոս աճի տեմպ, ինչը հնարավորություն է տվել 2004 թվականի ավարտին վերականգնել և գերազանցել նախաանցումային ժամանակաշրջանի ՀՆԱ-ի մակարդակը 5.6 տոկոսով: Հայաստանի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 1994թ.-ի 190 ԱՄՆ դոլարից 2004թ.-ին կազմել է 1106 ԱՄՆ դոլար: Արդյունքում Հայաստանն անցավ ըստ երկրների դասակարգման միջին եկամուտների մակարդակով բնութագրվող երկրների խումբ:

## **2.2. Մակրոտնտեսական միջավայրի բարեփոխումները**

Գների թռիչքի կանխումը 90-ական թվականների կեսերին ամենահրատապ խնդիրներից էր և հիմնական գերակայություններից մեկը: 90-ականների սկզբում գների համատարած ազատականացման և դրանց կենտրոնացված կարգավորման վերացման արդյունքում հսկայական գնաճ արձանագրվեց՝ 1994թ.-ին միջին ամսական գնաճը կազմեց 27.6 տոկոս, առավելագույն գնաճ արձանագրելով հունվարին ( 82.5% ) և դեկտեմբերին (60.8%): Այնուհետև, 1994թ.-ից սկսած կոշտ դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունքում, մի քանի տարիների ընթացքում իրավիճակն արմատապես շտկվեց և արդեն 1999թ.-ին, միջին տարեկան գնաճը նվազեց մինչև 0.6 տոկոս՝ 1994թ.-ին արձանագրված 50.6 անգամի դիմաց: Կայուն գնաճի միջավայրը, որը հետագայում պահպանվեց ցածր միանիշ թվի մակարդակում, մեծապես նպաստեց համընդհանուր մակրոտնտեսական կայունության հաստատմանն ամբողջ տասնամյակի ընթացքում:

Հաջորդ լուրջ մարտահրավերը և շարունակական գերակայությունը հարկաբյուջետային ոլորտի վերակառուցումն ու կատարողականի բարելավումն էր, հարկային բեռի և ընդհանուր պետական ծախսերի ցածր մակարդակի խնդիրների հասցեագրման միջոցով: 90-ականների կեսերին, պետական բյուջեն հիմնականում բնութագրվում էր ֆիսկալ պակասուրդի բարձր մակարդակով, ներքին աղբյուրներից եկամուտների ձևավորման սուղ հնարավորություններով, արտաքին ֆինանսավորման աղբյուրներից (թե՛ անհատույց և թե՛ փոխառու միջոցների) զգալի կախվածությամբ, բյուջեի վրա զգալի բեռի առկայությամբ, այն է՝ ոչ միայն «հիմնական» պետական ծառայությունների ֆինանսավորում, այլև քվազիֆիսկալ ոլորտների<sup>2</sup> ֆինանսական ճեղքվածքի և երաշխիքային պարտավորությունների փոխհատուցում: Վերջին երկուսը միասին 1995թ.-ի ավարտին կազմում էին բյուջետային պակասուրդի գրեթե 80 տոկոսը (Համաշխարհային բանկ, 2003թ.):

<sup>2</sup> Քվազիֆիսկալ ոլորտը ներառում է կոմունալ ծառայությունները (էներգետիկա, ջրամատակարարում, ոռոգում և այլն) և պետական ֆինանսավորմամբ կազմակերպություններին:

**Աղյուսակ 2.2. Հայաստան. Համախմբված բյուջեի ամփոփ ցուցանիշները,**  
%-ով ՀՆԱ նկատմամբ

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, Հարկային եկամուտներ	16.6	20.3	18.3	19.4	20.8	22.9	19.9	19.5	19.5	21.2	19.2
Ընդամենը ծախսեր,	21.9	26.3	22.0	21.9	24.5	28.4	24.7	23.6	22.0	22.4	20.7
Պակասուրդ,	-5.3	-6.0	-3.6	-2.5	-3.7	-5.4	-4.8	-4.2	-2.5	-1.3	-1.5

**Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ**

Անհրաժեշտ էր կտրուկ բարելավել ֆինանսական կարգապահությունը և կարգավորել ֆիսկալ իրավիճակը, փակելով քվազիֆիսկալ սողանցքը, որը մեծապես դուրս էր մղում սոցիալական ոլորտի համար նախատեսվող պետական ծախսերը: 1999թ.-ին ձեռնարկված բյուջետային համընդհանուր կարգավորումը հնարավորություն ընձեռեց հաստատված բյուջեում ավելի քան 20 մլրդ դրամ լրացուցիչ ուղղել լիովին մարելու առկա բյուջետային պարտքերը և քվազիֆիսկալ ճյուղերի փոխկապակցված պարտքերը, որոնք կուտակվել էին կոմունալ ծառայությունների ոլորտում: Միևնույն ժամանակ, ա) էլեկտրաէներգիայի սակագները բարձրացվեցին միջինը 46 տոկոսով, մինչև ծախսաձածկման մակարդակը և բ) միջոցառումներ ձեռնարկվեցին վճարման կարգապահությունը բարձրացնելու և սպառողներից վարձավճարների հավաքագրումը բարելավելու ուղղությամբ: Զուգահեռաբար, սակագների բարձրացման բացասական ազդեցությունն արդեն իսկ աղքատացած բնակչության վրա մեղմելու և ընդհանուր առմամբ աղքատության կրճատման համար սոցիալական պաշտպանության համակարգը վերակառուցելու նպատակով, տարբեր մանր սոցիալական աջակցության վճարներ (թվով 26) համախմբվեցին մեկ միասնական կանխիկ նպաստի համակարգում, որը հիմնված էր կարիքավորության միավորների սահմանման համակարգի վրա: Զգալի միջոցներ, ՀՆԱ-ի 2 տոկոսն ուղղվեց նպաստի այդ նոր համակարգին, պայմանավորելով աստիճանական անցում պետական ծախսերի առավել աղքատամետ ուղղվածություն: Ավելին, այն տնային տնտեսությունները, որոնք նպաստառուների ցուցակում չէին, սակայն շատ մոտ էին սահմանային միավորին, մեկ տարվա կտրվածքով ստացան էլեկտրաէներգիայի դիմաց վճարումներ կատարելու կանխիկ սուբսիդիաներ: Դա փաստորեն տարբեր քաղաքականությունների միաժամանակյա “օգտավետ” համակցություն էր: Էլեկտրաէներգիայի բարձր սակագինը և սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարների բարելավված հավաքագրումը զգալի դրական ազդեցություն ունեցան էներգետիկայի ոլորտ կանխիկ հոսքերի վրա, ինչը հավասարապես կարևոր հանգամանք էր, քանզի էլեկտրաէներգիայի մատակարարումը հասու եղավ շուրջօրյա 24 ժամվա ընթացքում Հայաստանի ողջ տարածքում, ոչ միայն բարելավելով կյանքի պայմանները, այլև վերացնելով գործարարության զարգացման կարևոր խոչընդոտը, ինչպես ցույց էին տալիս գործարար միջավայրի տարբեր ուսումնասիրություններ: Վերակառուցված սոցիալական պաշտպանության համակարգը հնարավորություն ընձեռեց սահուն կերպով իրականացնելու սակագների բարձրացումը, ինչն ինքնին դժվար էր իրագործել, քանի որ նույնիսկ փոքր բարձրացումները քաղաքականապես հակասական էին:

Թեև 1999 թվականի բյուջետային փոփոխություններն ավելացրեցին տվյալ տարվա բյուջեի կանխիկ պակասուրդը, սակայն դրանից հետո կտրուկ բարելավվեց բյուջետային իրավիճակը: 2002 թվականի դրությամբ Հայաստանը հաջողեց պահել բյուջետային անհավասարակշռությունը ՀՆԱ-ի 2-3 տոկոսից ցածր մակարդակում, առանց կուտակելու լրացուցիչ բյուջետային պարտքեր (Աղյուսակ 2.2): Ավելին, գործնականում վերացվեց քվազիֆիսկալ ոլորտների ֆինանսական պակասուրդը՝ էներգետիկ ճյուղի բարեհաջող վերակառուցման արդյունքում (2002թ.-ին էլեկտրական բաշխիչ ցանցերը մասնավորեցվեցին):

2002թ.-ին տեղի ունեցած «գույք-պարտքի դիմաց» գործարքը Ռուսաստանի հետ պետական ծախսերի կառուցվածքի բարելավմանն ուղղված հաջորդ կարևոր քայլն էր: Դա օգնեց «ազատվելու» արտաքին պարտքի առավել թանկ մասից և դրանով բացեց լրացուցիչ



բյուջետային տարածք հիմնական սոցիալական ոլորտների և այլ «աղքատամետ» ծախսերի գծով հատկացումների ավելացման համար (Ֆրեյնկման և ուրիշներ, 2003թ.):

2000-ականների սկզբից, կառավարությունը կենտրոնացրել է ջանքերը հարկային եկամուտների բազայի ընդլայնման և հարկերի հավաքագրման աստիճանի բարձրացման ուղղություններով՝ միաժամանակ բարելավելով բյուջեի կազմման որակը և բարձրացնելով պետական ծախսերի բաշխման արդյունավետությունը: Ներդրվեց տնտեսական քաղաքականության վրա խարսխված բազմամյա բյուջետավորման գործընթացը, բյուջետային հատկացումների հատակ գերակայությունների սահմանման վրա հիմնված բյուջեի կազմմամբ: Աղքատության Հաղթահարման Ռ-ազմավարական Ծրագիրը և Միջինժամկետ Ծախսային Ծրագիրը դարձան տարեկան բյուջետային գործընթացներն ուղղորդող փաստաթղթերը

**Աղյուսակ 2.3.** Հայաստան. Համախմբված բյուջեի\* սոցիալական ոլորտներին ուղղված փաստացի ծախսերը, % համախմբված բյուջեի ընդամենը ծախսերի նկատմամբ, 1999-2004թթ.

	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Կրթության և գիտության ոլորտ	8.8	12.2	11.3	10.6	10.5	13.1
Առողջապահության ոլորտ	4.9	3.9	5.7	5.3	5.4	6.2
Թոշակներ**	10.2	11.3	11.2	11.4	11.1	11.2
Թոշակներ, ՀՆԱ %	2.9	2.8	2.7	2.5	2.5	2.3
Սոցիալական աջակցության այլ ծախսեր (ներառյալ աղքատության ընտանեկան նպաստներ)	9.7	10.0	9.5	8.8	8.7	9.5
Այլ սոցիալական ծրագրեր***	1.9	2.0	2.5	2.7	4.3	2.6
Ընդամենը	35.5	39.4	40.2	38.8	40.0	42.6

Աղբյուրը. ՀՀ ՖԵՆ, ՀՀ ՍԱՊՀ, ՀՀ ԱՎԾ

**Նշում.** \*Ներառում է պետական բյուջեի, ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի և 930 տեղական համայնքների հատկացումները սոցիալական ոլորտների համար \*\* Կենսաթոշակներն են, որոնք ֆինանսավորվում են և որոնց վարչարարությունն իրականացնում է ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի կողմից \*\*\*ներառում է ծախսերը մշակույթի, կրոնի, սպորտի և տեղեկատվության ձեռքբերմքն համար:

Հարկաբյուջետային ոլորտում տեղի ունեցած վերակառուցումն ու կայուն տնտեսական աճը պայմանավորեցին բարելավված բյուջետային կատարողական, որի արդյունքում կառավարությանը հասու եղան ավելի շատ միջոցներ՝ վերջինիս հնարավորություն տալով կենտրոնանալու սոցիալական ոլորտների հիմնամնդիրներին և հետևաբար, էլ ավելի լավ զուգորդելու պետական բյուջեի ծախսերի կառուցվածքն աղքատության կրճատման ռազմավարության գերակայություններին: Արդյունքում, համախմբված բյուջետային ծախսերում ավելացան սոցիալական ոլորտներին ուղղված ծախսերի տեսակարար կշիռը՝ 1999թ.-ի 35.4 տոկոսից 2004 թվականի 42.6 տոկոսի (Աղյուսակ 2.3): Այդ ավելացման առյուծի բաժինը տեղի է ունեցել առողջապահության և կրթության ոլորտներում՝ ակնհայտորեն ընդգծված առաջնահերթությամբ՝ առաջնային բուժօգնության և միջնակարգ կրթության ուղղություններով: Նշված ծառայությունների հասանելիությունը հատկապես կարևոր է աղքատ բնակչության կենսամակարդակի բարձրացման իմաստով:

Պետական ծախսերի կառուցվածքում տեղի ունեցան կարևոր այլ կառուցվածքային տեղաշարժեր ևս: Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռն ավելացավ և կայունացավ ՀՆԱ 4-4.5 տոկոսի մակարդակում: 2001 թվականից սկսած, պետական ներդրումների ծավալները, որոնք ուղղորդվում էին հիմնական ենթակառուցվածքների վերականգնմանը (ճանապարհներ, ջրային տնտեսություն և ոռոգման համակարգ). զգալիորեն ավելացան՝ նպաստելով բնակչության ոչ դրամական եկամուտների ավելացմանը:

Զնայած ընդհանուր մակրոտնտեսական միջավայրի կայունացմանն ուղղված կառավարության ջանքերին, մասնավոր հատվածի վատահոսությունը և ներդրումային կատարողականն 90-ականներին առավելապես թույլ էր: Հայաստանի մասնավոր հատվածի խոցելիությունն այդ ժամանակահատվածում կարելի է բացատրել մի շատ գործոններով: Նախ և առաջ, մասնավոր սեփականությունը նոր երևույթ էր Հայաստանի համար՝ այն ձևավորվել էր 90-ականների կեսերին սկսված լայնամասշտաբ սեփականաշնորհման արդյունքում: Երկրորդ, որոշ ժամանակ բյուրեղացում էր կար, թե սեփականության ձևի փոփոխությունից հետո մասնավոր հատվածը կդառնա ինքնաբավ, շուկան կսահմանի «փառլի կանոնները» և

պետությունը ոչ մի դերակատարություն չի ունենա այդ ամենում: Ըստ էության շատ քիչ ուշադրություն էր դարձվում ձեռնարկությունների վերականգնմանը և նոր օրենսդրությանը նպաստող պատշաճ իրավական դաշտի ստեղծմանը: Այսինքն, մակրոտնտեսական կայունությունը և տնտեսության վերականգնման արագ տեմպերը 90-ականների երկրորդ կեսին չէին ուղեկցվում ընդհանուր գործարար միջավայրում բավարար առաջընթացով և արդար մրցակցության միջավայրի հաստատմամբ:

**Աղյուսակ 2.4.** Հայաստան. Տնտեսական միավորներ և համատեղ ձեռնարկություններ, ժամանակաշրջանի վերջ

	1994թ.	1996թ.	1998թ.	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Գրանցված առևտրային իրավաբանական անձանց քանակը	5,089	29,836	41,241	43,327	44,196	46,193	48,069	49,984	51,480
Աճի տեմպը (%)		40.5	9.4	5.1	2.0	4.5	4.1	4.0	3.0
Գրանցված համատեղ ձեռնարկությունների քանակը	92	685	1,350	1,657	1,916	1,920	2,197	2,482	2,821
Աճի տեմպը (%)		72.5	29.6	22.7	15.6	0.2	14.4	13.0	13.7

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Արտահանման կատարողականը մնում էր ցածր, տնտեսական աճի ազդեցությունն աննշան էր աղքատության մակարդակի կրճատման և աշխատատեղերի ստեղծման վրա: Չնայած, համատեղ ձեռնարկությունների քանակը զգալիորեն ավելացել էր 1995-1999թթ. ժամանակահատվածում (Աղյուսակ 2.4), այնուամենայնիվ, ստեղծված ձեռնարկությունների քանակն անբավարար էր ընդհանուր զբաղվածության առումով եղանակ ստեղծելու համար՝ փոխհատուցելու 1990-ականների սկզբում տեղի ունեցած աշխատատեղերի կրճատումը (Համաշխարհային բանկ, 2002թ.):

2001 թվականից սկսած, արձագանքելով գործարար միջավայրում դիտարկված թերություններին, կառավարության կողմից տնտեսական քաղաքականության ուժեղացման բազմաթիվ միջոցառումներ որդեգրվեցին: Դրանք ներառում էին ձեռնարկությունների ստուգումների նվազեցումն ու համախմբումը և վարչարարության պարզեցումը, կրճատելով ձեռնարկությունների գրանցման ժամանակահատվածը, և ավելի հստակեցնելով լիցենզավորման գործընթացը: Մասնավոր հատվածի հետ կառավարության խորհրդակցությունների մեխանիզմն ավելի ամրապնդվեց և ստեղծվեց բարձր մակարդակի գործարար խորհուրդ՝ հանրապետության վարչապետի նախագահությամբ: Հայկական Ջարգացման Գործակալության դերակատարումը, որպես ներդրումների և արտահանման խթանման, ինչպես նաև գործարար միջավայրում առկա խնդիրների հասցեագրման օղակի, առավել նկատելի դարձավ: Ի լրումն, բարելավվեցին մաքսագերծման գործընթացը և ավելացված արժեքի հարկը վերադարձվեց արտահանողներին, տեղի ունեցան մի շարք այլ փոփոխություններ, որոնք նպաստակ ունեին նվազեցնելու գործարարի և պետական ծառայողի միջև շփումը: Վերջինս ներառում է նաև էլեկտրոնային ստորագրության մասին օրենքի ընդունումը:

**Աղյուսակ 2.5.** Հայաստան. 1 շնչի հաշվով զուտ օտարերկրյա ուղղակի ներդրումները նախկին ԽՍՀՄ և արևելյան եվրոպական մի շարք երկրներում, ԱՄՆ-ի դոլար, 1999 և 2004թթ.

	1999թ.	2004թ. (նախնական)
<b>Հայաստան</b>	<b>37.7</b>	<b>64.7</b>
Ադրբեջան	104.0	284.0
Չինիա	339.8	383.4
Էստոնիա	233.3	298.2
Վրաստան	17.8	110.9
Ղազախստան	53.3	229.6
Դոմինիկա	13.9	23.8
Լիտվա	108.1	148.6

Սլովենիա	75.0	-20.9
Տաջիկստան	4.9	40.6
Թուրքմենստան	20.8	47.2
Ուզբեկստան	9.4	7.2

**Աղբյուրը.** ՀՀ ԱՎԾ Հայաստանի տվյալների համար: Օտարերկրյա ներդրումների հարցերով խորհրդատվական ծառայություն (FIAS) և ՀԲ՝ ԵԿԱ տարածաշրջանի տվյալների համար :

Գործարար միջավայրում տեղի ունեցած բարելավումներն արտահայտվում են մի շարք սինթետիկ ցուցանիշների միջոցով: Մեկ շնչի հաշվով օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՆՆ) ցուցանիշը նման կարևոր ցուցանիշներից է: Աղյուսակ 2.5-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ չնայած 1999-2004թթ. ժամանակահատվածում մեկ շնչի հաշվով ՕՈՆՆ աճել է մոտավորապես երկու անգամ, այնուամենայնիվ, 2004թ.-ին արձանագրված մակարդակը դեռևս ետ է մնում եկամուտների մույն մակարդակով բնութագրվող ԱՊՀ երկրների համանման ցուցանիշներից:

### 2. 3. 1994-2004 թվականների տնտեսական կատարողականի վերլուծությունը


Պատկեր 2.1-ը ցույց է տալիս հիմնական մակրո-տնտեսական ցուցանիշների ժամանակային շարքը՝ սկսած 1990թ.-ից: Իրական ՀՆԱ-ի, աշխատավարձի, ինչպես նաև ընդհանուր զբաղվածության ցուցանիշներն ներկայացված են այնպես, ինչպես դրանք գնահատվել և գրանցվել են ՀՀ ԱՎԾ-ի կողմից: Իրական ՀՆԱ-ն 1991-1993 թվականների ընթացքում նվազելով մոտ 55 տոկոսով, 1994 թվականից սկսել է աճել՝ ապահովելով տարեկան միջինը 7.7 տոկոս աճի տեմպ և վերականգնել 1990 թվականի մակարդակը 2004-ին:

Իրական միջին աշխատավարձը 1990-ականների սկզբին առավել կտրուկ է նվազել, 1994թ.-ին կազմելով 1990 թվականի մակարդակի ընդամենը 7 տոկոսը: Չնայած 1995 թվականից սկսած Հայաստանում միջին աշխատավարձն իրական արտահայտությամբ անընդհատ և կայուն կերպով աճել է, անցումային շրջանի սկզբում անկումն այնքան խորն է եղել, որ անգամ 1995-2004թթ. ընթացքում ապահովելով 425 տոկոս կուտակային աճի տեմպ , 2004 թվականի վերջում հնարավոր է եղել վերականգնել 1990թ.-ի մակարդակի միայն 35 տոկոսը: մինչև 2002 թվականը պաշտոնապես գրանցված ընդհանուր զբաղվածությունը դանդաղ և անընդհատ նվազել է, որից հետո նկատվել են կայունացման միտումներ<sup>3</sup>: Ազատական տնտեսակարգին անցման սկզբնական փուլում զբաղվածության միտումներին թերևս բնորոշ էր աշխատուժի կուտակումները, քանզի ձեռնարկությունները ձեռնպահ էին մնում ազատվել լրացուցիչ աշխատուժից և կարգավորում էին կրճատվող արդարությունն աշխատավարձերի կրճատմամբ կամ ընդհանրապես չվճարմամբ: Դա տարածված երևույթ էր գրեթե բոլոր անցումային տնտեսությամբ երկրներում: Տասնամյակի կեսերից Հայաստանում սկսվեց աշխատուժի լայնածավալ ազատումը, որի արդյունքում կրճատվեցին վերամշակող արդյունաբերության ու ծառայությունների ոլորտի գրեթե կես միլիոն աշխատողներ: Սակայն աշխատուժի շուկայի այս կարևոր վերադասավորումները չեն արտացոլվել զբաղվածության պաշտոնական տվյալներում, քանի որ աշխատանք կորցրածների մեծ մասը՝ հողի սեփականաշնորհման արդյունքում ստացավ հողակտորներ, այդպիսով համարվելով զբաղված, չնայած տնտեսության բոլորովին այլ ճյուղում: Տնտեսական աճի վերահաստատումից հետո ստեղծվեցին աշխատատեղեր, սակայն ոչ բավարար քանակով որպեսզի փոխհատուցվեր զբաղվածության շարունակվող կրճատումը: Եվ միայն 2003թ.-ից սկսված պաշտոնական

<sup>3</sup> Պատկեր 2.1-ում արտացոլված զբաղվածության միտումները ցույց են տալիս խզում 2001թ.-ից 2002 թվականն ընկաց ժամանակահատվածում, ինչը հետևանք է 2001թ.-ի մարդահամարի արդյունքներով զբաղվածության մակարդակի ճշգրտումների: Պաշտոնական զբաղվածության գնահատականների մեթոդաբանությունը հիմնված է ընդհանուր բնակչության գնահատականների վրա: Մարդահամարի տվյալներով Հայաստանի բնակչությունը 2001 թվականի վերջին 3.2 միլիոնից մի փոքր ավել էր, ինչը զգալի ցածր էր մինչև մարդահամար գնահատված մակարդակից (3.8 միլիոն) և արտացոլում էր 1990-ականների ինտենսիվ արտագաղթի արդյունքները: Այսպիսով, 2001 և 2002թթ.-ի միջև զբաղվածության մակարդակի խզումն արտացոլում է 2001թ.-ի մարդահամարի արդյունքները այլ ոչ թե աշխատուժի շուկայում որևէ կտրուկ փոփոխություն: Մյուս կողմից, տնային տնտեսությունների հետազոտությունների հիման վրա ստացված տվյալները զբաղվածության որոշակի աճ են արձանագրում 1998/99 և 2004թթ.-ի միջև (տե՛ս Աշխատուժի Շուկայի Ջարգացումները գլուխը):

գրադվածության կայունացման միտումները կարող են նշանակել, որ աշխատատեղերի ստեղծումն ու աշխատատեղերի կրճատումը միմյանց հաշվեկշռում են:

**Պատկեր 2.1. Հայաստան. ՀՆԱ-ն, գրադվածությունը և իրական աշխատավարձը, 1990=100, տոկոսներով**



Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Տնտեսական աճի և՛ տեմպերը և՛ որակը տարբեր էին 1995-2000թթ. և 2001-2004թթ. ժամանակահատվածներում: Տնտեսության վերականգնման առաջին փուլում տնտեսական աճի տեմպը կազմում էր տարեկան միջինը 5.4 տոկոս: ՀՆԱ-ի իրական աճի ճյուղային կառուցվածքը ցույց է տալիս, որ աճին մեծապես նպաստել են շինարարության և առևտրի ճյուղերը, մինչդեռ, իրական հատվածի հիմնական «ներկայացուցիչները»՝ արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, ցուցաբերել են ամենաթույլ կատարողականը (Աղյուսակ 2.6): Այդ ժամանակահատվածում կուտակային տնտեսական աճը կազմել է 37.2 տոկոս, որից 13.2 տոկոսային կետը ձեռք է բերվել շինարարության և առևտրի ճյուղերի հաշվին և միայն 10.9 տոկոսային կետը՝ արդյունաբերության և գյուղատնտեսության հաշվին (Համաշխարհային բանկ, 2002թ.):

**Աղյուսակ 2.6. Հայաստան. ՀՆԱ իրական աճը 1995-2000 և 2001-2004թթ.-ին (տոկոսներով)**

	Համաթիվ 2000/1994	Միջին տարեկան աճի տեմպը 1995-2000	Համաթիվ 2004/2000	Միջին տարեկան աճի տեմպը 2001-2004
Համախառն ներքին արդյունքը	137.2	5.4	155.7	11.7
Արդյունաբերություն	115.5	2.5	139.7	8.7
Գյուղատնտեսություն	114.7	2.3	138.3	8.5
Շինարարություն	188.1	11.1	244.7	25.1
Տրանսպորտ և կապ	145.1	6.4	144.1	9.6
Առևտուր	261.7	17.4	176.9	15.4
Այլ ծառայություններ	163.4	8.5	145.9	9.9

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ.

Հայաստանում տնտեսական աճի տեմպն արագացել է 2001 թվականից հետո, երբ ՀՆԱ-ն՝ նախորդ 4 տարիների ընթացքում սկսեց աճել երկնիշ թվերով: Դա արտացոլում էր ոչ միայն ավելի սրընթաց ընդհանուր աճի տեմպը, այլև, նախորդ ժամանակահատվածի նկատմամբ տեղի ունեցող որակական փոփոխությունները: Նախ, տնտեսական աճը ձևավորվում է ավելի ընդարձակ բազայով և գեներացվում ավելի կայուն աղբյուրների հաշվին: 2000-ականներին տնտեսական աճի հիմնական առաջատարները արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն էին, միևնույն ժամանակ շինարարությունը ոչ միայն պահպանել, այլ նաև եռապատկել էր աճի իր ներուժը:

2001-2004թթ.-ի ժամանակահատվածում միջին տարեկան տնտեսական աճի տեմպը կազմել է 11.7 տոկոս՝ 2000 թվականի համեմատ արձանագրելով 55.7 տոկոս կուտակային աճ: Փոխվել է տնտեսական աճի կառուցվածքը՝ ավելացել է արդյունաբերության տեսակարար կշիռը, որը 2004-ին հասել էր 28 տոկոսի: Տեղական արտադրության շատ ենթաճյուղեր՝ սննդի վերամշակման, տեքստիլ արդյունաբերության, հանքարդյունաբերության, և տնտեսության այլ աշխատատար ենթաճյուղեր, առանձնացել են զարգացման բավականին բարձր աճի տեմպով՝ գերազանցելով ընդհանուր տնտեսության աճի տեմպը: Շինանյութերի տեղական արտադրության ընդլայնմանը խթանել են ավելացող պետական ներդրումները և մասնավոր հատվածի բարձր պահանջարկը: Վերամշակող արդյունաբերության ընդարձակումը մի կողմից օգնել է բավարարել ներքին պահանջարկը, մյուս կողմից նպաստել երկրի արտաքին առևտրի զարգացմանը՝ ավանդական շուկաներից դուրս:

**Աղյուսակ 2.7. Հայաստան. Համախառն պահանջարկի կառուցվածքը, %**

	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
<b>Համախառն ներքին արդյունք</b>	100	100	100	100	100	100	100	100
այդ թվում								
Տնային տնտեսությունների վերջնական սպառման ծախսեր	107.7	103.6	98.8	96.7	89.6	85.6	83.4	80.4
Ընդհանուր կառավարության վերջնական սպառման ծախսեր	11.2	11.1	11.9	11.8	11.3	10.0	10.2	10.7
Համախառն կուտակում	19.1	19.1	18.3	18.7	19.8	21.7	24.3	24.0
Զուտ արտահանում	-38.0	-33.8	-29.0	-27.2	-20.7	-17.3	-17.9	-15.1
Ապրանքների և ծառայությունների արտահանում	20.3	19.0	20.8	23.4	25.5	29.3	32.1	27.4
Ապրանքների և ծառայությունների ներմուծում	58.3	52.8	49.8	50.6	46.2	46.6	50.0	42.5
Համախառն ներքին խնայողություններ	-18.9	-14.7	-10.7	-8.5	-0.9	4.4	6.4	8.9

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

2001 թվականից սկսած ավելի բազմազան դարձան տնտեսական աճի ֆինանսավորման աղբյուրները.

- Չնայած դրնոր երկրների աջակցությունը<sup>4</sup> նվազում է, այն դեռ շարունակում է մնալ տնտեսական աճը պայմանավորող բավականին զգալի գործոն: Այն արտացոլում է մասնադրական աջակցության իրացման Հայաստանի փարձը, որն ըստ միջազգային չափանիշների համարվում է լավագույն օրինակներից մեկը (Համաշխարհային բանկ, 2001թ.):
- Վերջին տարիների տնտեսական աճի արտաքին ֆինանսավորման աղբյուրներից առավելագույնը թերևս հայկական սփյուռքի աջակցությունն է: Ի լրումն ավանդական աջակցության ձևերի, սփյուռքում ստեղծված հիմնադրամները աջակցեցին վերականգնել Հայաստանի ֆիզիկական և սոցիալական ենթակառուցվածքները, ինչպես նաև մշակութային հաստատությունները, գրոսաշրջության և ծառայությունների ոլորտի այլ ենթակառուցվածքները:
- Մասնավոր տրանսֆերտներն արտերկրից, որոնք մշտապես եղել են Հայաստանում տնտեսական աճի ֆինանսավորման ավանդական աղբյուրներից մեկը, 2000 թվականից հետո դարձան ավելի պատկառելի և էական: 2004 թվականին, նախորդ տարվա համեմատ, արտերկրից մասնավոր տրանսֆերտների և գործույնային եկամուտների զուտ ցուցանիշն ավելացել է ավելի քան 20 տոկոսով, իսկ դրանց ներհոսքի համապատասխան ցուցանիշը՝ ավելի քան 80 տոկոսով:
- 2000-ականների սկզբից սկսած, մասնավորեցման գործընթացներից հետո, ծանր արդյունաբերության մեջ ռազմավարական նշանակության ներդրումների

<sup>4</sup> Հայաստանը դեռևս համարվում է մեկ շնչի հաշվով մեծագույն դոնորային օգնություն ստացող երկրներից մեկը:

զուգահեռ հանքարդյունահանման ճյուղը դարձավ տնտեսական աճի զգալի աղբյուր: Պղնձի և ֆերո-մոլիբդենի արտադրատեսակների համար միջազգային գների աճը խթանեց այս ճյուղի վերականգնմանն ու զարգացմանը:

- Ներքին խնայողությունները, որոնք 2002 թվականից սկսած դարձան դրական, հանդիսանում են նաև տնտեսական աճը ֆինանսավորող մեկ այլ աղբյուր (աղյուսակ 2.7): Մասնավոր տրանսֆերտների հետ միասին, ներքին խնայողությունները ֆինանսավորեցին բնակարանային շինարարության մեծ մասը, ինչպես նաև լրացուցիչ խթան հանդիսացան մասնավոր սպառման համար:
- Վերջին տարիներին ներքին աղբյուրներից ֆինանսավորվող պետական ներդրումային ծրագրերը զգալիորեն նպաստեցին տնտեսական աճին: 2004թ.-ին ընդունված լրացուցիչ բյուջեն, որն ամբողջությամբ կապիտալ ծախսեր էր առաջարկում, հավելյալ 15 տոկոս հակաացումներ էր նախատեսում պետական ներդրումային ծրագրերում դպրոցների վերանորոգման և ճանապարհների վերականգնման տեսքով:

Տնտեսական աճի, զբաղվածության և միջին աշխատավարձի զարգացումները տարբեր են եղել տնտեսության տարբեր ճյուղերում: 90-ականների երկրորդ կեսին, տնտեսության այլ ճյուղերի համեմատ, իրական աշխատավարձի աճի տեմպն ամենաբարձրն էր տրանսպորտի և կապի, ինչպես նաև ծառայությունների ոլորտում, մինչդեռ ժամանակ զբաղվածության մակարդակի նվազումը այս ճյուղերում համագոր է եղել տնտեսության միջին մակարդակին (10-15 տոկոս): Արդյունաբերության և շինարարության ճյուղերը ևս ապահովել են իրական աշխատավարձի զգալի աճ, սակայն առավել մեծ անկում են արձանագրել զբաղվածության ոլորտում՝ կրճատելով իրենց զբաղվածության մակարդակն ավելի քան 30 տոկոսով: Գյուղատնտեսությունը միակ ճյուղն է եղել, որտեղ տնտեսական աճը և վարձատրության ավելացումը չի ուղեկցվել համապատասխանաբար զբաղվածության կրճատմամբ: Ավելին, գյուղատնտեսությունը մասամբ կլանել է այլ ճյուղերի կողմից կրճատված աշխատուժը:

**Աղյուսակ 2.8. Հայաստան. Աշխատանքի արտադրողականությունը 1990-2004թթ. (1990=100)**

	1990	1991	1993	1995	1997	1999	2001	2002	2003	2004
ՀՆԱ-ի աճի համաթիվ	100	88.3	46.9	52.8	57.8	64.0	74.3	84.1	95.9	105.6
Զբաղվածության համաթիվ	100	102.5	94.7	90.6	94.4	89.7	86.6	67.9	68.0	66.4
Աշխատանքի արտադրողականություն	1.0	0.86	0.50	0.58	0.61	0.71	0.86	1.24	1.41	1.59


**Աղբյուր.** ՀՀ ԱՎԾ

**Նշում.** Աշխատանքի արտադրողականությունը գնահատվել է որպես համախառն արտադրանքի և զբաղվածության համթիվների հարաբերություն:

Հարկ է նշել, որ մինչև 2002 թվականը տնտեսական աճի և զբաղվածության ընդհանուր մակարդակի միջև կապը բացասական է եղել, սակայն դրան հակառակ, միջին աշխատավարձի արձագանքը տնտեսական աճին՝ միշտ եղել է դրական: Վերջին ժամանակներում, 2003-2004 թվականներին (պատկեր 2.2) պաշտոնապես գրանցված զբաղվածության մակարդակը կայունացել է տնտեսության բոլոր հիմնական ճյուղերում: Մինչդեռ ժամանակ, նշված տարիներին համախառն արտադրանքն իրական արտահայտությամբ, ավելացել է բավականին բարձր տեմպերով, իսկ աշխատավարձի իրական աճը զգալիորեն գերազանցել է արտադրանքի աճի տեմպին<sup>5</sup>: Ինչպես վկայում են աղյուսակ 2.8-ում ներկայացված տվյալները, Հայաստանի տնտեսությունում աշխատանքի ընդհանուր արտադրողականությանն աճել է 1995 թվականից սկսած, այն ավելի է արագացել հատկապես 2002 թվականից սկսած՝ հասնելով և գերազանցելով նախաանցումային ժամանակաշրջանի աշխատանքի արտադրողականության

<sup>5</sup> Իրական արտահայտությամբ (ՄԳԻ ով ճշգրտված) միջին աշխատավարձը աճել է 22 և 17 տոկոսներով համապատասխանաբար 2003 և 2004թթ օրացուցային տարիներին: Նույն տարիներին ՀՆԱ աճը կազմել է համապատասխանաբար 14.0 և 10.1 տոկոս:

մակարդակը (Տնտեսական քաղաքականության և իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն, 2004թ. ):



Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

90-ականներին Հայաստանի առևտրային հաշվեկշիռը հիմնականում բացասական էր՝ չնայած առևտրային պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ նվազել էր 1994 թվականի 30.5 տոկոսից մինչև 1999թ.-ի 25.7 տոկոսը: Այս նվազումը տեղի է ունեցել հիմնականում ՀՆԱ-ի աճի և ներմուծման ծավալների նվազման հաշվին: Հայաստանի արտահանման կատարողականը նշված ժամանակաշրջանում մնում էր բավականին անկայուն և ցածր (90-ականների վերջին արտահանման հարաբերակցությունը ՀՆԱ-ին դեռևս 14 տոկոսից ցածր էր): Արտահանման կենտրոնացման գործակիցը՝ 1999 թվականին բավականին բարձր էր՝ 0.323 տոկոս և միայն ադամանդը կազմում էր ապրանքների արտահանման ավելի քան 36 տոկոսը: Արտահանման մյուս մեծ մասը կազմում էր մետաղի ջարդոնը, իսկ վերամշակող արդյունաբերության արտադրանքը կազմում էր արտահանման ծավալի միայն մի փոքր մասը:

**Աղյուսակ 2.9. Հայաստան. Արտահանման պատկերը 1994-2004թթ.-ին**

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Ապրանքների արտահանում, ընդամենը (ՖՕԲ, մլն. ԱՄՆ-ի դոլար)	215.4	270.9	290.3	232.5	220.5	231.7	300.5	341.8	505.2	685.6	722.9
Աճի տեմպը (%)	...	25.8	7.2	-19.9	-5.2	5.1	29.7	13.8	47.8	35.7	5.4
Արտահանում առանց ադամանդի, մլն. ԱՄՆ-ի դոլար	...	199.7	156.2	185.2	173.5	147.8	201.8	256.0	307.0	397.7	501.9
Աճի տեմպը (%)	...	...	-21.8	18.6	-6.3	-14.8	36.5	26.9	19.9	29.6	26.2

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ

Այդուհանդերձ, վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանի արտահանման կատարողականը գրանցում է բավականին տպավորիչ արդյունքներ: Ադամանդից բացի մյուս ապրանքների գծով միջին տարեկան արտահանման տեմպը գերազանցել է 27 տոկոսը

<sup>6</sup> UNCTAD օգտագործում է կենտրոնացման կամ Հիռչման (H) ինդեքսը, ինչը հաշվարկում են օգտագործելով երկրի արտահանման տեսակարար կշիռները բոլոր եռանիշ կոդերով.  $H_j = \sqrt{\sum (x_i/X_t)^2}$  ] որտեղ  $X_{i,t}$ -ը  $i$  ապրանքի արտահանման արժեքն է (ապրանքների դասակարգման եռանիշ համակարգում SITC 3-րդ վերանայում)  $t$ -րդ տարում և  $X_t$ -ը այդ տարում ամբողջ արտահանման ծավալն է: Այսպիսով, այդ ինդեքսի առավելագույն արժեքը կարող է լինել 1 և նվազագույն արժեքը՝ 0, այն երկրներում որտեղ ընդհանրապես արտահանում չկա:

(Աղյուսակ 2.9): Արտահանման ապրանքային կազմում նկատվել են զգալի փոփոխություններ՝ ադամանդից բացի մյուս ապրանքների արտահանումը կազմել է ընդհանուր արտահանման ավելի քան 66 տոկոսը՝ 1994-1996 թվականների 55 տոկոսի դիմաց: Հայաստանի արտահանման աշխարհագրությունը հստակորեն ցույց է տալիս ավանդական շուկաներից (ԱՊՀ և Միջին-Արևելք) աստիճանաբար անցում դեպի Եվրոպական Միության շուկաներ:

Արդյունքում, կրճատվել է արտահանման և ներմուծման հարաբերակցությունը՝ 1997 թվականի 1:4-ից մինչև 1:2-ի հարաբերակցության՝ 2004 թվականին: Ներքին արտադրության վերակենդանացման գործում շարունակում էր կարևոր դեր խաղալ ներմուծվող ապրանքների փոխարինումը, ինչն արտահայտվում էր ներմուծման կառուցվածքում մթերքների և սպառողական ապրանքների տեսակարար կշռի նվազմամբ: Արտաքին առևտրի վիճակագրությունը ցույց է տալիս, որ չնայած 1997 թվականից սկսած Հայաստանի արտահանման տեսականին զգալիորեն հարստացել է (1997 թվականի համեմատ 2004թ.-ին արտահանվող ապրանքների քանակը կրկնապատկվել է), նույն ժամանակահատվածում արտահանման կենտրոնացման գործակիցը ևս զգալիորեն աճել է:

1993 թվականին հայկական դրամի ներդրումից հետո մինչև 2000-ականների սկիզբն այն մշտապես ենթարկվել է արժեզրկման ճնշումների<sup>7</sup>, սակայն 2003 թվականից սկսած նկատվել է հակադարձ միտում՝ այսինքն ազգային արժույթը շարունակաբար արժեզրկվում է: Մասամբ այդ երևույթը բացատրվում է ԱՄՆ դոլարի համատարած արժեզրկմամբ, այնուամենայնիվ, կարևոր է նաև տնտեսական աճի բարձր տեմպերի և տնտեսությունում արտադրողականության բարձրացման համադրության հզոր ազդեցությունը:

## 2.4. Տնտեսական աճը և աղքատությունը

Վերջին տարիների տնտեսական աճը զգալի դրական ազդեցություն է ունեցել աղքատության մակարդակի վրա: Ի տարբերություն 1990-ականների երկրորդ կեսի, երբ տնտեսական աճի ազդեցությունը աղքատության մակարդակի վրա շատ թույլ էր անտահայտվել (Համաշխարհային Բանկ, 2002թ.), վերջին տարիներին գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերը հանգեցրել են աղքատության մակարդակի զգալի նվազեցմանը: Ինչպես ներկայացված է սույն գեկույցի հաջորդ գլխում, 1999-2004 թվականներին աղքատության ընդհանուր մակարդակը նվազել է 55.1 տոկոսից 34.6 տոկոսի, միևնույն ժամանակ ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը նվազել է 22.9 տոկոսից 6.4 տոկոս: Ստորև աղյուսակ 2.10-ում բերված են ՀՆԱ-ի աճի նկատմամբ աղքատության մակարդակի էլաստիկության գործակիցները, որոնք ցույց են տալիս, որ 1999-2004 թվականներին արձանագրված տնտեսական աճի յուրաքանչյուր տոկոսային կետն աղքատության ընդհանուր մակարդակը նվազեցրել է 0.57 տոկոսային կետով: Էլաստիկության գործակիցն առավել հզոր էր Երևանում և ամենաբույլը՝ գյուղական բնակավայրերում:

**Աղյուսակ 2.10. Հայաստան. Ավելացված արժեքի նկատմամբ աղքատության էլաստիկության գնահատականներ, 1999-2004թթ.**

	1999-2004թթ.
<b>Ընդհանուր աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն</b>	<b>-0.57</b>
ա) քաղաքային աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.58
1) Երևան քաղաքի աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.73
2) այլ քաղաքներում աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.44
բ) գյուղական աղքատության նվազեցում / ՀՆԱ էլաստիկություն	-0.58
գ) գյուղական աղքատության նվազեցում / գյուղատնտեսության ավելացված արժեքի էլաստիկություն	-1.02

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ և ՏՏԿԱՀ 2004թ.

<sup>7</sup> 1994-2002թթ. ժամանակաշրջանում դրամի արժեզրկումն իրական արտահայտությամբ կազմել է 680 տոկոս (2002թ.-ի տարվա վերջի դրությամբ փոխարժեքը 1993թ.-ի տարվա վերջի նկատմամբ) և արժեքավորվել է 17 տոկոսով 2003-2004թթ.-ի ժամանակաշրջանում (նույն մեթոդաբանությամբ հաշվարկված), չնայած որ իրական արդյունավետ փոխարժեքը 1995-2002թթ. ժամանակահատվածում արժեզրկվել է 4.1 տոկոսով (2002թ.-ի թվականի միջինը 1995թ.-ի միջինի նկատմամբ) և արժեզրկվել է 3.7 տոկոսով 2003-2004թթ. ժամանակաշրջանում (նույն մեթոդաբանությամբ հաշվարկված):



## 2.5. Եզրահանգումներ

Հաջող իրականացված կառուցվածքային բարեփոխումների և նպատակային տնտեսական քաղաքականության զուգորդումը թույլ տվեցին Հայաստանին 1994 թվականից սկսած ապահովելու կայուն տնտեսական աճ: Տնտեսական աճը հատկապես հզոր էր 2001-2004 թվականներին, երբ վերջինս արտահայտվեց երկնիշ թվերով: Արդյունքում Հայաստանը վերականգնեց 1990 թվականի իր ՀՆԱ-ի մակարդակը և միացավ միջին եկամուտներով բնութագրվող երկրների դասակարգման խմբին: Տնտեսական աճը նպաստեց իրական աշխատավարձի բարձրացմանը, զբաղվածության կայունացմանը և սոցիալական ծառայություններին և տրանսֆերտներին ուղղվող բյուջետային ծախսերի ավելացմանը: Այդ ամենը, ինչպես նաև արտասահմանից մասնավոր տրանսֆերտների աճը, նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը Հայաստանում: 2004 թվականին, 1998/99 թվականների համեմատ, գրեթե 700 հազար մարդ դուրս էր եկել աղքատությունից, իսկ նրանցից առնվազն կես միլիոնը՝ ծայրահեղ աղքատությունից: Նվազել էին աղքատության թե՛ խորությունը և թե՛ սրությունը:

### Գլուխ III. Աղքատության պատկերը 1998/99-2004թթ.-ին

Աղքատամետ տնտեսական զարգացումները Հայաստանում նպաստեցին աղքատության մակարդակի զգալի կրճատմանը: 1998/99թ.-ից ի վեր գրեթե 700 հազար մարդ դուրս է եկել աղքատությունից, իսկ նրանց կազմում գրեթե կես միլիոն մարդ շրջանցել են ծայրահեղ աղքատությունը: Աղքատությունը դարձել է ավելի մակերեսային և նվազ սուր: Այնուամենայնիվ աղքատությունը դեռ լուրջ խնդիր է հանդիսանում Հայաստանի համար, քանզի բնակչության մոտ մեկ երրորդը (մոտ մեկ միլիոն մարդ) դեռ աղքատ է, իսկ նրանցից 200 հազարը՝ ծայրահեղ աղքատ: Կայուն և շարունակական տնտեսական աճը, նոր և լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և ավելացված աշխատավարձերը, ավելացված կենսաթոշակներն ու այլ սոցիալական տրանսֆերտները նվազեցրել են եկամուտների և սպառման բաշխվածության անհավասարությունը, ինչպես նաև արտասահմանում աշխատողներից ստացվող մասնավոր տրանսֆերտների կայուն աճը հանդիսացել են աղքատության հաղթահարման հիմնական լծակները: Մայրաքաղաք Երևանն առավելագույն է օգտվել տնտեսական աճից, մինչդեռ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում գրանցվել է աղքատության հաղթահարման ամենացածր տեմպը, որի արդյունքում այդ բնակչությունը շարունակել է մնալ Հայաստանի բնակչության ամենանղքատ հատվածը 2004թ.-ին: Եթե 1998/99թ.-ին աղքատությունը հիմնականում ուներ քաղաքային ուղղվածություն, ապա 2004-ին աղքատության մակարդակը շատ չէր տարբերվում ըստ գոյական և քաղաքային բնակավայրերի:

#### 3.1. Աղքատության ցուցանիշներն ու դրանց միտումները

**Աղքատության միտումները:** Հայաստանում աղքատությունը զգալիորեն նվազել է 1998/99-2004թթ.-ի ժամանակահատվածում: Գրեթե 700 հազար մարդ դուրս է եկել աղքատությունից, իսկ աղքատ բնակչության մասնաբաժինը կրճատվել է 38.3 տոկոսով՝ մոտ 56 տոկոսից նվազելով՝ կազմել է մոտ 35 տոկոս (աղյուսակ 3.1): Առավել արագ նվազել է ծայրահեղ աղքատությունը մոտ 70 տոկոսով՝ 21 տոկոսից նվազելով մինչև 6.4 տոկոսի, այլ կերպ ասած, գրեթե կես միլիոն մարդ շրջանցել են ծայրահեղ աղքատությունը: Աղքատությունը դարձել է ավելի մակերեսային և նվազ սուր, քանզի զգալի նվազել են նաև աղքատության խորությունն ու սրությունը: 2004թ.-ին աղքատության խորությունը գնահատվել է 7.4 տոկոս՝ նվազելով 1998/99թ.-ին գրանցված 17.2 տոկոսի համեմատ, իսկ աղքատության սրությունը գնահատվել է 2.4 տոկոս (7.2 տոկոսի համեմատ): Աղքատների սպառման տարբերությունն աղքատության գծից (գնահատված որպես տոկոս աղքատության գծի նկատմամբ) 31 տոկոսից նվազել է 21 տոկոսի: Չնայած այդ ցուցանիշներին, աղքատությունը դեռ լուրջ խնդիր է հանդիսանում Հայաստանի համար, քանզի բնակչության 34.6 տոկոսը կամ մոտ մեկ միլիոն մարդ դեռ աղքատ է, իսկ նրանցից 200 հազարը՝ ծայրահեղ աղքատ:

<b>Աղյուսակ 3.1. Հայաստան. Աղքատության ցուցանիշները 1998/99 և 2004թթ.-ին, տոկոսներով</b>										
	1998/99թ.					2004թ.				
	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսը ողջ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսը ողջ բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Քաղաքային բնակավայրեր	26.2	62.1	57.1	20.1	8.7	7.5	36.4	62.4	8.4	2.8
Երևան	24.8	58.4	27.7	18.7	7.9	6.1	29.2	31.8	6.5	2.2
Այլ քաղաքներ	27.4	65.5	29.4	21.5	9.4	9.2	43.9	30.6	10.3	3.5
Գյուղական բնակավայրեր	14.1	48.2	42.9	13.3	5.1	4.4	31.7	37.6	5.7	1.6
<b>Ընդամենը</b>	<b>21.0</b>	<b>56.1</b>	<b>100.0</b>	<b>17.2</b>	<b>7.2</b>	<b>6.4</b>	<b>34.6</b>	<b>100.0</b>	<b>7.4</b>	<b>2.4</b>

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Նշում:** Սպառումը գնահատվել է մեկ չափահաս անձի հաշվով: Աղքատության ցուցանիշները հաշվարկվել են օգտագործելով 2004թ.-ի նվազագույն պարենային զամբյուղը և 2004թ.-ին գնահատված ոչ պարենային

սպրանքների մասնաբաժինը: Աղքատության գծերը ճշգրտվել են գնաճը հաշվի առած: Աղքատ են գնահատվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության գծից, իսկ շատ աղքատ կամ ծայրահեղ աղքատ գնահատվել են նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել պարենային, կամ ծայրահեղ աղքատության գծից: 1998/99թ.-ին աղքատության ընդհանուր գիծը և պարենային գիծը արտահայտված մեկ չափահաս անձի հաշվով մեկ ամսվա համար կազմել են 17663 և 11210 դրամ համապատասխանաբար: 2004թ.-ին աղքատության գիծն ու պարենային գիծը համապատասխանաբար կազմել են 19373 և 12467 դրամ (Աղյուսակ A3.1, վիճակագրական հավելված): Աղքատության խորության 7.4 տոկոս գնահատականը ցույց է տալիս, որ եթե երկիրը հնարավորություն ունենար յուրաքանչյուր անհատի հաշվով (և՛ աղքատ և՛ ոչ աղքատ) համախմբելու աղքատության գծի 7.4 տոկոսին համարժեք ռեսուրսներ և եթե այդ ռեսուրսները հատկացվեին աղքատներին, ապա աղքատությունը տեսականորեն կվերացվեր, ենթադրելով, որ աղքատներին ուղղված աջակցությունն ամբողջությամբ հատկացվում է աղքատներին: Եթե հաշվարկվում է միայն աղքատ բնակչության հաշվով, ապա աղքատության խորությունը ցույց է տալիս աղքատության պակասությունը, այսինքն՝ այն ցույց է տալիս թե որքանով է աղքատների միջին եկամուտը (կամ սպառումը) ցածր աղքատության գծից: Աղքատության արությունը ցույց է տալիս աղքատների միջև եղած անհավասարությունը, այն հաշվի է առնում, որ որոշ աղքատների սպառումը շատ է հետո աղքատության գծից, իսկ որոշ աղքատների սպառումը շատ է մոտ աղքատության գծին: Այդ տվյալները ստանդարտ սխալներով ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A3.2 –ում:


***Աղքատության նվազումը պայմանավորող գործոնները:*** Հայաստանում աղքատության մակարդակի կրճատումը պայմանավորող առավել կարևորագույն գործոնը կայուն և առաջանցիկ տնտեսական աճն է: Կայուն տնտեսական զարգացումները զուգորդվելով նվազող անհավասարության և մասնավոր տրանսֆերտների անդադար հոսքի հետ, նպաստել են բնակչության սպառման զգալի ավելացմանը: Ինչպես բացահայտում են 2004թ.-ի ՏՏԿԱՀ տվյալները, որք բնակչության միջին ամսական իրական սպառումը 1998/99թ.-ի համեմատ ավելացել է 20 տոկոսով: Առավել արժեքավոր է այն, որ այդ աճը նկատվել է սպառման բոլոր քվանտիլներում և հատկապես զգալի է եղել բնակչության առավել ցածր քվանտիլային խմբում, որտեղ սպառման միջին ամսական աճը կազմել է 36 տոկոս:

Տնտեսական աճը բերեց իրական աշխատավարձի աճի, ներառյալ հանրային հատվածի աշխատավարձերի աճի, ինչպես նաև նոր աշխատատեղերի լայն հնարավորության: Դիտարկվող ժամանակահատվածում միջին իրական աշխատավարձն աճել է 80 տոկոսով: Տնային տնտեսությունների հետազոտության հիման վրա ստացված աշխատաշուկայի վերաբերյալ տվյալները ցույց են տալիս, որ զբաղվածների բացարձակ թվաքանակն աճել է մոտ 141.5 հազար մարդով կամ գրեթե 14 տոկոսով, մինչդեռ գործազուրկների թվաքանակը նվազել է 26 տոկոսով կամ մոտ 100 հազար մարդով՝ գործազրկության մակարդակը կրճատելով 1998/99թ.-ին գրանցված 27 տոկոսից՝ 2004թ.-ին 19.3 տոկոսի: Գյուղատնտեսությունից ստացված եկամուտները նույնպես աճել են, հատկապես 2003 և 2004թթ.-ին՝ պայմանավորված գյուղատնտեսական արտադրության ավելացմամբ և գյուղմթերքի գների առաջանցիկ աճով: Արտադրանքի համընդհանուր աճը հանգեցրեց պետական գանձարանում առավել շատ ռեսուրսների կուտակման, որն իր հերթին Կառավարությանը հնարավորություն ընձեռեց ուղղելու հանրային ծախսերն աղքատության հաղթահարման ռազմավարությանը համահունչ և առավել որոշակի հետամուտ լինելու աղքատներին ուղղված պետական ծախսերի քաղաքականությանը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով կենսաթոշակների ավելացմանը, առողջապահության և կրթության ծառայություններին: Արդյունքում միջին կենսաթոշակն իրական արտահայտությամբ ավելացավ գրեթե 80 տոկոսով: Աղքատության ընտանեկան նպաստը՝ մեկ նպաստառու ընտանիքի հաշվով իրական արտահայտությամբ նույնպես ավելացել է, սակայն ընդամենը 8 տոկոսով: Հայաստանում աղքատության կրճատումը պայմանավորող մեկ այլ կարևոր գործոն է արտասահմանում և հատկապես Ռուսաստանում ապրող և աշխատող հայերի կողմից ուղարկվող տրանսֆերտների կայուն աճը: Ըստ պաշտոնական գնահատականների 1999թ.-ի համեմատ տրանսֆերտների միջին տարեկան գումարը 143.9 միլիոն ԱՄՆ դոլարից հասել է 548.7 միլիոն ԱՄՆ դոլարի՝ տարեկան կազմելով 180 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով: Եվ վերջապես նվազող անհավասարությունը, որը տարբեր գնահատականների միջոցով ներկայացված է սույն գլխում, ունեցել է իր կարևոր դերը: Այսպես օրինակ, սպառման բաշխվածության անհավասարությունը գնահատված ըստ Ջինիի գործակցի նվազել է 0.301-ից 0.260-ի, բնակչության ամենահարուստ 10 տոկոսի միջին սպառման հարաբերությունն ամենաաղքատ 10 տոկոսի միջին սպառման նկատմամբ նվազել է 6.7-ից 5.1-ի, բնակչության ամենաաղքատ 10 տոկոսի մասնաբաժինն ընդհանուր սպառման

մեջ ավելացել է 1998/99թ.-ին գրանցված 3.7 տոկոսից 4.3 տոկոսի 2004թ.-ին (Աղյուսակ A3.3 վիճակագրական հավելվածում):

**Աղքատությունը ըստ տարածաշրջանների:** Աղքատությունը Հայաստանում ավելի բարձր էր քաղաքային բնակչության շրջանում՝ գյուղականի համեմատ, չնայած այդ տարբերությունը գնալով փոքրանում է և այդքան էլ արտահայտված չէր 2004թ.-ին: Աղքատությունը ավելի է արձագանքել քաղաքային բնակավայրերում գրանցված տնտեսական աճին՝ գյուղական բնակավայրերի համեմատ, որը պայմանավորված է աշխատաշուկայում քաղաքաբնակ աղքատների առավել լայն ինտեգրմամբ (տե՛ս աշխատաշուկայի վերաբերյալ բաժինը), որը զգալիորեն կրճատել է քաղաք-գյուղ տարբերությունը 1998/99թթ.-ի համեմատ:

**Պատկեր 3.1.** Հայաստան. Աղքատների և շատ աղքատների սպառումն ըստ տարածաշրջանների, 1998/99 և 2004թթ. (տոկոսներով)



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Մայրաքաղաք Երևանը, որտեղ կենտրոնացված են հիմնական տնտեսական հնարավորությունները, առավելագույն է օգտվել տնտեսական աճից, քանզի այստեղ գրանցվել է աղքատության կրճատման ամենաբարձր տեմպը: Հակառակ, Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերը գրանցել են աղքատության հաղթահարման ամենացածր տեմպը՝ շարունակելով մնալ Հայաստանի բնակչության ամենանղքատ հատվածը: Երբ ողջ բնակչությունը դիտարկվում է ըստ քաղաք-գյուղ բաշխվածության, աղքատների մեծ մասը քաղաքաբնակներ են (աղյուսակ 3.1), իսկ 1998/99թ.-ից ի վեր աղքատ բնակչության կազմում ավելացել է քաղաքաբնակների մասնաբաժինը, որը պայմանավորված է աղքատ բնակչության կազմում այլ քաղաքներում բնակվողների համամասնության ավելացմամբ (պատկեր 3.1):

2004թ.-ին գյուղական բնակավայրերում գրանցվել էին ծայրահեղ աղքատ բնակչության ամենացածր, իսկ Երևանից դուրս այլ քաղաքներում՝ ամենաբարձր ցուցանիշները (4.4 և 9.2 տոկոս համապատասխանաբար): Նման ցուցանիշներ գրանցվել էին նաև 1998/99թ.-ին, որը կրկին ցույց է տալիս, որ բնամթերային գնուղատմությունը կարևոր դեր ունի մարդկանց ծայրահեղ աղքատությունից դուրս բերելու գործում: Գյուղատնտեսական արտադրության աճը, որը հանգեցրել է գյուղատնտեսական գործունեությունից ստացված իրական եկամուտների աճին, հատկապես աղքատ տնային տնտեսությունների համար, հիմք է հանդիսացել հենց գյուղական աղքատության կրճատման համար: Միևնույն ժամանակ, 1999թ.-ից 2004թ.-ն ընկած ժամանակահատվածում պարենային ապրանքների գներն ավելի են աճել, քան ոչ պարենային ապրանքներինը (29.3 տոկոս և 6.1 տոկոս համապատասխանաբար): Քանի որ գյուղաբնակ տնային տնտեսությունների համար սննդամթերքի արտադրությունն եկամտի և սպառման գլխավոր աղբյուրն է (հիմնականում սեփական սպառման տեսքով), պարենային ապրանքների գների հարաբերական աճը բարենպաստ ներգործություն է ունեցել գյուղաբնակ բնակչության համար: Սակայն, հարկ է նշել, որ գյուղաբնակ աղքատները հիմնականում զբաղված էին գյուղատնտեսական գործունեությամբ, նրանց միայն շատ չնչին մասն էր զբաղված ոչ գյուղատնտեսական գործունեությամբ: Զբաղվածությունը ոչ գյուղատնտեսական հատվածում,

ինչպես ցույց են տալիս Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում իրականացված ուսումնասիրությունների հիման վրա ստացված փաստացի տվյալները (Ալամ և ուրիշներ, 2005թ.), միջին հաշվով առավել եկամտաբեր է, քան ցանկացած տեսակի գյուղատնտեսական գործունեություն և գյուղաբնակ աղքատների համար եկամուտների ավելացման, և հետևաբար, գյուղական աղքատության կրճատումը պայմանավորող հիմնական գործոն է:

Հայաստանում աղքատության միտումներն ըստ տարածաշրջանների բավական մասն են Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում գրանցված ցուցանիշներին: Այդ երկրներում իրականացված հետազոտությունների փաստացի տվյալները ցույց են տալիս, որ բարելավված տնտեսական զարգացումներից առավել օգտվում են մայրաքաղաքները, գյուղական բնակավայրերը ետ են մնում, սակայն մայրաքաղաքից բացի այլ քաղաքների բնակչությունն ամենանվազ արդյունքներն է ստանում (Ալամ և ուրիշներ, 2005թ.):

**Ներդիր 3.1. Աղքատության միտումները Հայաստանում 1998/99-2004թթ.-ին ըստ հին մեթոդաբանության:**

ՀՀ ԱՎԾ-ի կողմից նախկինում կիրառվող մեթոդաբանությամբ գնահատված աղքատության մակարդակի ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 3.2-ում: Ինչպես արդեն պարզաբանվել է, այդ մեթոդաբանությունը վերանայվել է և սույն գեկույցում ներկայացված աղքատության իրավիճակի վերլուծությունները հիմնված են վերանայված մեթոդաբանության վրա: Վերանայվել և ձևավորվել են աղքատության նոր գիծը և առավել համապարփակ սպառման ազդեցատր, որը գնահատվել է ըստ մեկ չափահաս անձին համարժեք սպառման՝ հաշվի առնելով երեխաների և չափահասների սպառման տարբերությունները, ինչպես նաև ընտանիքի անդամների բարեկեցության վրա համատեղ ապրելու ազդեցությունը (տե՛ս Մեթոդաբանական պարզաբանումները):

**Աղյուսակ 3.2:** Հայաստան. Աղքատության հիմնական ցուցանիշների դինամիկան Հայաստանում 1998/99-2004թթ.-ին ըստ հին մեթոդաբանության ( որպես տոկոս ընդամենը առկա բնակչության նկատմամբ, տոկոսներով)

	Աղքատության մակարդակը					Աղքատության խորություն	Աղքատության արության
	Ընդամենը	Քաղաքային բնակավայր	Երևան	Այլ քաղաքային բնակավայր	Գյուղական բնակավայր		
	Շատ աղքատներ						
98/99թ.	22.9	23.2	21.0	25.2	22.6	5.9	2.2
2001թ.	16.0	18.3	16.8	19.6	11.3	3.3	1.0
2002թ.	13.1	15.0	11.8	18.4	10.2	2.4	0.7
2003թ.	7.4	7.9	3.7	12.2	6.8	0.7	0.1
2004թ.	7.2	8.6	6.2	11.0	5.0	1.5	0.5
	Աղքատներ						
98/99թ.	55.1	58.3	54.7	61.6	50.8	19.0	9.0
2001թ.	50.9	51.9	46.7	56.7	48.7	15.1	6.1
2002թ.	49.7	52.6	43.8	61.9	45.3	13.5	5.2
2003թ.	42.9	39.7	29.6	49.9	47.5	8.9	2.8
2004թ.	39.0	38.0	29.4	46.9	40.6	9.9	3.5

**Աղբյուրը.** Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն 1998/99-2004թթ.

**Նշում.** Աղքատության գիծը սահմանվել է 1996թ.-ին՝ հիմնական պահանջների մոտեցման կիրառմամբ (պարենային գիծն օգտագործվել է ծայրահեղ աղքատության սահմանը որոշելու համար: Աղքատության ընդհանուր գիծը ներառում է ոչ պարենային ապրանքների սպառման մասնաբաժինը, որը սահմանվել է ընդհանուր գծի 35 տոկոսի չափով): Որպես բարեկեցության գնահատական ընդունվել է մեկ շնչի հաշվով սպառումը: Սպառման ազդեցատր չի ներառում բնակարանների և երկարաժամկետ օգտագործման ապրանքների պայմանական հաշվարկային արժեքը, այլ միայն պարունակում է երկարաժամկետ օգտագործման ապրանքների վրա կատարված ծախսերը: Այս աղյուսակը վիճակագրական սխալներով ներկայացված է Վիճակագրական հավելվածի աղյուսակ A3.4-ում:

Հին մեթոդաբանությամբ ստացված արդյունքները համահունչ են վերանայված մեթոդաբանությամբ ստացված արդյունքների հետ. այսպես զգալիորեն նվազել են թե՛ աղքատ և թե՛ ծայրահեղ աղքատ բնակչության համամասնությունները, նվազել են նաև աղքատության խորությունն ու սրությունն արտահայտող ցուցանիշները: Երևան քաղաքում գրանցվել է աղքատության մակարդակի նվազման ամենաբարձր տեմպը, Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերը շարունակում են մնալ ամենաաղքատը Հայաստանում: Ծայրահեղ աղքատությունն ամենացածրն էր գյուղական վայրերում և ամենաբարձրը այլ քաղաքներում:

Աղքատության ընդհանուր մակարդակի տարբերությունը քաղաք-գյուղ կտրվածքով ավելի թույլ է արտահայտված՝ վերանայված մեթոդաբանությամբ ստացված արդյունքների համեմատ:

**Աղքատությունը մարզերում:** Հայաստանն ըստ վարչական բաժանման ունի 11 մարզ: 2004թ.-ին իրականացված տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտությունը միակն էր մինչ այդ իրականացված հետազոտությունների շարքում, որն ապահովել է տվյալների ներկայացուցչականություն մարզային կտրվածքով: Աղյուսակ 3.3-ում ներկայացված են 2004թ.-ին աղքատության ցուցանիշներն ըստ մարզերի: 1998/99թ.-ի արդյունքները նույնպես ներառված են, սակայն միայն որպես տարածքային աղքատության մոտավոր պատկեր (1998/99թ.-ի ՏՏԿԱՀ ներկայացուցչական չէր մարզային կտրվածքով):

2004թ.-ին շատ մարզերում աղքատության մակարդակը գրեթե մեծ տարբերություններով չէր առանձնանում միջին հանրապետական մակարդակից, ավելին, աղքատության ցուցանիշների միջմարզային տարբերությունները փոքրացել են վերջին վեց տարիների ընթացքում<sup>8</sup>: Շիրակի մարզը՝ բարձր աշխարհագրական դիրքով և 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից առավել տուժած բնակավայրերով, շարունակում է մնալ Հայաստանի ամենաաղքատ տարածաշրջանը, որտեղ բնակչության գրեթե 50 տոկոսը գտնվում է աղքատության գծից ցած: Միջին հանրապետական աղքատության մակարդակից բարձր աղքատություն գրանցվել է Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում: Իսկ Վայոց Ձորում և Երևանում գրանցվել է աղքատության ամենացածր մակարդակը:

**Աղյուսակ 3.3.** Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ մարզերի, 1998/99 և 2004թթ. *տոկոսներով*

	1998/99թ.		2004թ.					
	Ծայրահեղ աղքատության մակարդակ	Աղքատության մակարդակ	Ծայրահեղ աղքատության մակարդակ	Աղքատության մակարդակ	Տոկոսն աղքատների մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ	Աղքատության խորություն	Աղքատության սրություն
Երևան	24.8	58.4	6.1	29.2	26.8	31.8	6.5	2.2
Արագածոտն	22.8	60.5	5.6	35.4	5.5	5.4	6.9	2.1
Արարատ	13.3	52.3	6.4	32.7	8.5	9.0	6.8	2.2
Արմավիր	10.2	41.7	6.6	36.0	8.9	8.6	7.1	2.2
Գեղարքունիք	11.3	49.9	4.5	41.9	8.3	6.9	8.0	2.2
Լոռի	30.0	62.6	4.5	31.3	8.7	9.6	6.5	2.2
Կոտայք	24.5	61.7	9.2	39.3	10.4	9.1	8.6	2.9
Շիրակ	33.0	75.8	10.4	48.8	13.1	9.3	11.7	4.0
Սյունիք	18.7	53.1	5.9	36.5	4.7	4.5	7.6	2.3
Վայոց Ձոր	12.9	34.7	4.1	28.9	1.4	1.7	5.4	1.5
Տավուշ	9.3	29.3	3.3	30.5	3.6	4.1	5.6	1.5
Ընդամենը	21.0	56.1	6.4	34.6	100.0	100.0	7.4	2.4

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Նշում.** Այս աղյուսակը վիճակագրական սխալներով ներկայացված է Վիճակագրական հավելվածում, որպես աղյուսակ A3.5:

**Աղքատության մակարդակի զգալունությունն աղքատության գծի փոփոխության նկատմամբ.** Շատ աղքատ մարդկանց թվաքանակն առավել զգալուն է աղքատության գծի փոփոխության նկատմամբ, քան ընդհանուր աղքատության մակարդակը, որը խոսում է այն

<sup>8</sup> 1998/99 և 2004թթ.-ի հետազոտությունների միջև ընկած ժամանակահատվածը 5 տարի և 9 ամիս է, սակայն վերլուծության մեջ պարզության համար նշվում է 6 տարի: Այնուամենայնիվ սպառման տարեկան աճի տեմպերը գնահատելիս օգտագործվել է ճշգրիտ ժամանակաշրջանը տարի/ամիսներով՝ 5.75:

մասին, որ բնակչության կենտրոնացումն աղքատության պարենային գծի շուրջ ավելին է, քան ընդհանուր աղքատության գծի շուրջ: Աղյուսակ 3.4-ում ներկայացված են աղքատության մակարդակի ցուցանիշներն ըստ աղքատության գծի փոփոխության: Եթե աղքատության գիծն ավելանա 5 տոկոսով, ծայրահեղ աղքատությունը կաճի 22 տոկոսով, իսկ ընդհանուր աղքատությունը՝ 14 տոկոսով: Սակայն ծայրահեղ աղքատության և ընդհանուր աղքատության մակարդակների այս փոփոխությունները վիճակագրականորեն նշանակալի չեն: Նման եզրահանգում ստացվում է նաև, երբ աղքատության գիծը նվազեցվում է 5 տոկոսով: Աղքատության մակարդակի նշանակալի փոփոխություններ գրանցվում են (1% նշանակության մակարդակի դեպքում) երբ աղքատության գիծը ավելացվում կամ նվազեցվում է 10 տոկոսով:

**Աղյուսակ 3.4.** Հայաստան. Աղքատության մակարդակի փոփոխություններն ըստ աղքատության գծի փոփոխության 2004թ.-ին


Աղքատության գծի փոփոխություններ	Շատ աղքատ (%)	Աղքատ (%)
Անփոփոխ, 0%	6.4	34.6
+5%	7.8	39.5
-5%	5.2	29.6
+10%	9.7	43.5
-10%	3.9	24.7

Աղբյուրը. SSՀԱՀ 2004թ.

**Աղքատությունն ըստ սպառման և եկամտային ցուցանիշների.** Պատկեր 3.2-ում ներկայացված է 2004թ.-ին Հայաստանում աղքատության սպառման և եկամտային ցուցանիշների համեմատությունը (եկամտի ցուցանիշների հիման վրա գնահատված աղքատության մակարդակի արդյունքները ներկայացված են վիճակագրական հավելվածում աղյուսակ A3.6-A3.8-ում): Ինչպես և սպասվում էր, եկամտի ցուցանիշների հիման վրա գնահատված աղքատության մակարդակի գնահատականներն ավելի բարձր են, քան սպառման՝ որպես բարեկեցության աստիճանի գնահատման հիման վրա ստացված արդյունքները: Այդ տարբերությունը հիմնականում բացատրվում է սպառման բաշխվածության համեմատ եկամուտների միջև եղած ավելի բարձր անհավասարությամբ, քանի որ միջին եկամտի և սպառման մակարդակների միջև տարբերությունն այնքան էլ մեծ չէր (2004թ.-ին եկամտի հարաբերությունը սպառման նկատմամբ կազմել է 0.83):

Դիտարկելով աղքատության սպառման և եկամտային ցուցանիշների խաչաձևումը 2004թ.-ին, ակնհայտ է դառնում, որ անհատների մի մեծ խումբ, որոնք եկամտի ցուցանիշով գտնվում էին աղքատության գծից ցածր, սպառման ցուցանիշով բարձր են աղքատության գծից: Միայն եկամտային ցուցանիշով աղքատների 46 տոկոսը և շատ աղքատների 14 տոկոսն է սպառման ցուցանիշով գնահատվել նույնպես աղքատ: Հակառակ պատկերն էր ստացվել սպառման ցուցանիշով աղքատ և շատ աղքատներին դիտարկելիս: Նրանց մոտ երեք քառորդը աղքատ են գնահատվել նաև եկամտի ցուցանիշով: Մնացած մեկ քառորդի մոտ սպառման ցուցանիշը չէր անցնում պարենային կամ ընդհանուր աղքատության գծերը, սակայն նրանց եկամտի ցուցանիշները բարձր էին այդ գծերից:

**Պատկեր 3.2. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ սպառման և եկամտի ցուցանիշների 1998/99 և 2004թթ.-ին**



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Նշում. Սպառում և եկամուտ ցուցանիշը ցույց է տալիս այն անհատների համամասնությունը, ովքեր աղքատ/շատ աղքատ են և՛ սպառման և՛ եկամտի ցուցանիշներով:

**Ողբա՞ն կարժենա աղքատության հաղթահարումը:** Աղքատության հաղթահարման համար Հայաստանին անհրաժեշտ է 54.4 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.9 տոկոսը կազմող գումար՝ ի լրումն սոցիալական աջակցության համար արդեն իսկ հատկացված միջոցների, ենթադրելով, որ սոցիալական աջակցությունը բարձր հասցեականությամբ տրվում է միայն աղքատներին (Աղյուսակ 3.5): Ծայրահեղ աղքատության վերացումը կպահանջի մոտ 5.2 միլիարդ դրամ կամ ՀՆԱ-ի 0.3 տոկոսը, ի լրումն ծայրահեղ աղքատներին արդեն իսկ ուղղված սոցիալական աջակցության և ապահովելով բարձր հասցեականություն: Այդ գումարները զգալիորեն փոքր են 1998/99թ.-ին պահանջվող գումարների համեմատ:

**Աղյուսակ 3.5. Հայաստան. Աղքատության հաղթահարման դրամական արժեքը 1998/99 և 2004թթ.-ին**

	1998/99թ.		2004թ.	
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ
Աղքատների միջին սպառումը (դրամ, մեկ չափահաս անձին համարժեք, ամսական)	8,799	12,238	10,340	15,244
Աղքատության գիծ (դրամ, մեկ չափահաս անձին համարժեք, ամսական)	11,210	17,663	12,467	19,373
Պահանջվող լրացուցիչ սպառում (դրամ, ամսական)	2,411	5,425	2,127	4,129
Պակասորդը: որպես % աղքատության գծի նկատմամբ, աղքատների համար անհրաժեշտ ՀՆԱ (մլրդ. դրամ)	21.5	30.7	17.1	21.3
Անհրաժեշտ բյուջե (մլրդ դրամ)	987.1	987.1	1,896.4	1,896.4
Անհրաժեշտ բյուջեն որպես տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ	19.4	116.7	5.2	54.4
	2.0	11.8	0.3	2.9

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ և ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Քանզի անթերի հասցեականությունն ապահովելը շատ անհավանական է, ուստի աղքատության հաղթահարման համար պահանջվող փաստացի միջոցները շատ ավելի են. Դա է վկայում նաև այլ երկրների փորձը: Ազատական տնտեսակարգում բարձր հասցեականության ապահովման պարագայում անհրաժեշտ է եղել առնվազն կրկնապատկել աղքատության հաղթահարման համար պահանջվող նվազագույն ռեսուրսները: Անցումային տնտեսակարգերում (Լեհաստան, Հունգարիա, Բուլղարիա, Էստոնիա և Ռուսաստան), աղքատներին 1 ԱՄՆ դոլարին համարժեք աջակցություն տրամադրելու համար պահանջվող ծախսը տատանվել է 1.5 ԱՄՆ դոլարից 8 ԱՄՆ դոլարի սահմաններում (առանց վարչական



ծախսերի)<sup>9</sup>: Ինչպես ներկայացված է սոցիալական աջակցության հարցերը քննարկող գլխում, սոցիալական աջակցությունը Հայաստանում բավական բարձր հասցեականություն ունի: Այնուամենայնիվ դեռ բավական աշխատանք կա հասցեականության աստիճանը բարելավելու իմաստով, քանզի աղքատ ընտանիքներին ուղղված ռեսուրսների գրեթե 40 տոկոսը ստանում է ոչ աղքատ բնակչությանը: Այդ թերության կրճատմանը զուգահեռ շատ ու շատ աղքատ ու ծայրահեղ աղքատ ընտանիքներ կնդգրկվեն սոցիալական աջակցության ծրագրերում:

### 3.2. Աղքատություն և տնտեսական աճ փոխկապակցվածությունը

Ընդհանուր առմամբ, աղքատության մակարդակի փոփոխությունը պայմանավորված է կենսամակարդակը գնահատող ագրեգատի փոփոխությամբ և վերջինիս անհավասար բաշխվածությամբ: Համաձայն Դատտի և Ռավալիոնիի (1992թ.) կողմից մշակված մեթոդաբանության, Հայաստանում աղքատության մակարդակի փոփոխությունը բաժանվում է սպառման աճի և բաշխվածության բաղադրիչների: Ինչպես վկայում են վերլուծության արդյունքները, 1998/99 և 2004թթ.-ի միջև ղիտարկվող աղքատության մակարդակի նվազումը հիմնականում պայմանավորված է կենսամակարդակի աճով, որը գնահատվում է մեկ չափահաս անձին համարժեք սպառման ցուցանիշով (տե՛ս աղյուսակ A3.9, Վիճակագրական հավելված):

**Աղյուսակ 3.6.** Հայաստան. Սպառման աճի տեմպերն ըստ բնակավայրերի, 1998/99-2004թթ.

Տարեկան աճի տեմպերը	Ընդամենը	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղական բնակավայրեր
Աճի միջին տեմպերը (սովորական աճի տեմպը)	3.2	5.3	3.9	1.2
Միջին տոկոսային աճի տեմպը	3.9	5.7	4.4	2.4
Ամենացածր քվանտիլի աճի միջին տեմպը	5.4	6.3	5.7	4.7
Աճի միջին տեմպերը P(0) համար, ծայրահեղ աղքատության գիծ	5.6	6.5	5.6	5.1
Աճի միջին տեմպերը P(0) համար, աղքատության ընդհանուր գիծ	4.8	6.3	4.8	3.9

**Աղբյուրը.** SSՀԱՀ 1998/99 և 2004թթ.

**Նշում.** Աճի տեմպերը վերաբերում են սպառման աճին: P(0)-ն նշանակում է աղքատության մակարդակ (Ֆոստեր, Գրին և Տոբենկեն, 1984թ.)


**Տնտեսական աճը Հայաստանում աղքատամետ էր:** Աղքատամետ տնտեսական աճը կարելի է գնահատել ըստ բաշխվածության տարբեր մակարդակներում միջին սպառման աճի (Ռավալիոնի և Չեն 2003թ.): Աղյուսակ 3.6-ը ցույց է տալիս, որ աղքատ բնակչության սպառումն ավելի արագ տեմպերով է աճել, քան ընդհանուր սպառումը (տարեկան 4.8 տոկոս և 3.2 տոկոս համապատասխանաբար), որը նշանակում է, որ բաշխումը շեղված է դեպի աղքատները: Ավելին, շատ աղքատների սպառումն աճել է ավելի արագ տեմպերով՝ տարեկան 5.6 տոկոս, ընդգծելով, որ Հայաստանի առավել կարիքավոր բնակչությունը հարաբերականորեն առավել շատ է օգտվել տնտեսական աճից, որը հանգեցրել է ծայրահեղ աղքատության մակարդակի ավելի զգալի նվազման՝ աղքատության ընդհանուր մակարդակի համեմատ, ինչպես արդեն նշվել էր:

Ինչպես ներկայացված է ստորև բերված աճի կորերի միջոցով (պատկերներ 3.3-3.6), տնտեսական աճը աղքատամետ էր բոլոր բնակավայրերում: 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում սպառման բաշխվածության տոկոսների կտրվածքով մեկ չափահաս անձին համարժեք սպառման փոփոխությունները ներկայացնող կորերը (y-առանցք) միջին հաշվով նվազում են բոլոր տոկոսներում, այդպիսով ցույց տալով նվազող անհավասարություն: Այլ կերպ ասած, եթե բոլոր քվանտիլային խմբերում բնակչության սպառման ցուցանիշներն աճում են, աղքատ բնակչության սպառումը աճում է առավել արագ, քան ոչ աղքատ բնակչության սպառումը: Դա պարզ ներկայացնում է պատկեր 3.3-ը, քանի որ կորի միջոցով պատկերված սպառման աճը (անվանվել է աճի կոր) ավելի բարձր է առավել աղքատ, քան ոչ աղքատ բնակչության մոտ (սպառման բաշխվածության ձախ կողմն աջ կողմի համեմատ՝ x-առանցք): Օրինակ՝ 1998/99-

<sup>9</sup> Ի Բրայքվեյթ, Զ. Գրուբեր և Բ. Միլանովիչ, **Աղքատությունն ու սոցիալական աջակցությունը անցումային տնտեսությամբ երկրներում**, 2000թ.

2004թթ.-ին բնակչության ամենաաղքատ 20 տոկոս քվանտիլային խմբի սպառման աճը միջին հաշվով կազմել է 35 տոկոս, կամ տարեկան 5.4 տոկոս, մինչդեռ ամենահարուստ 20 տոկոս քվանտիլային խմբի սպառման աճը միջին հաշվով կազմել է 10 տոկոս, կամ տարեկան 1.7 տոկոս: Դա հիմնականում կարելի է բացատրել ստեղծված նոր աշխատատեղերի առկայությամբ, ավելացված սոցիալական տրանսֆերտներով և պետական ու մասնավոր հատվածներում աշխատավարձերի աճով:


**Պատկեր 3.3:** Հայաստան. Սպառման աճի կորը 1998/99-2004թթ.-ին



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.


Նշում. Կորը վերաբերում է 5 տարի և 9 ամիս ժամանակահատվածին.

**Պատկեր 3.4:** Հայաստան. Աճի կորը Երևանում, 1998/99-2004թթ.,




Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Պատկեր 3.5:** Հայաստան. Աճի տեմպը այլ քաղաքային բնակավայրերում 1998/99-2004թթ



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ

**Պատկեր 3.6:** Հայաստան. Աճի տեմպը գյուղական վայրերում, 1998/99-2004թթ



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Աղբատամետ աճի տեմպն ամենաբարձրն էր Երևանում և ամենացածրն էր գյուղական բնակավայրերում, քանի որ Երևանաբնակ աղբատների սպառումն ավելացել էր առավել քան գյուղաբնակների մոտ (տարեկան միջինը 6.3 տոկոս՝ 3.9 տոկոսի համեմատ): Սպառման ամենավերին տասերորդ քվանտիլի գյուղաբնակ տնային տնտեսությունները միակ խումբն էին, որտեղ 2004թ-ին գրանցվել է սպառման մակարդակի անկում՝ 1998/99թ.-ի համեմատ նրանք

գրանցել են ավելի քիչ ծախսեր սննդի վրա, ոգելից խմիչքների և ծխախոտի վրա, նվազ ծախսեր հագուստի և կոշիկների, ինչպես նաև կրթության և առողջապահության վրա:

### 3.3. Աղքատության կառուցվածքային պատկերը և դրա փոփոխությունը 1998/99-2004թթ.-ի ընթացքում

Դիտարկվող ժամանակաշրջանում աղքատության կառուցվածքային պատկերը շատ չի փոփոխվել:

(ա) Աղքատության մակարդակը չի տարբերվում ըստ սեռի թե՛ 1998/99թ.-ին և թե՛ 2004թ.-ին (աղյուսակ 3.7):

(բ) Մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր է այլ տարիքային խմբերի համեմատ: Աղքատության մակարդակը նվազում է անհատների տարիքի աճին զուգահեռ: Եթե ծերերի շրջանում աղքատությունն ամենաբարձրն էր 1998/99թ.-ին, ապա այժմ աղքատության մակարդակի անկման ամենաբարձր տեմպը գրանցվել է այդ խմբի մոտ: Դա կարելի է բացատրել կենսաթոշակների չափի ավելացմամբ և առանց ուշացումների կենսաթոշակների վճարումներով: Ծեր բնակչության շրջանում բարելավված տնտեսական պայմաններ վերջին հինգ տարիների ընթացքում դիտարկվել են բոլոր անցումային երկրներում:

**Աղյուսակ 3.7.** Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ սեռի և տարիքային խմբերի, 1998/99 և 2004թթ.-ին, տոկոսներով

	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
<b>Սեռը</b>						
Կանայք	21.1	56.3	6.4	34.3	54.0	54.5
Տղամարդիկ	20.9	55.9	6.4	35.0	46.0	45.5
<b>Տարիքային խմբեր</b>						
Երեխաներ 0-5	24.1	63.3	8.0	41.9	8.9	7.3
Երեխաներ 6-14	17.1	51.6	7.2	36.6	16.3	15.4
Երեխաներ 15-17	18.4	52.9	6.4	35.7	6.4	6.2
18-25 տարեկան	25.8	59.7	6.3	35.3	13.2	12.9
26-45 տարեկան	19.9	54.6	6.7	35.7	27.7	26.9
46-60 տարեկան	22.0	56.6	5.4	29.8	13.8	16.0
61+ տարեկան	22.5	58.3	5.5	31.2	13.8	15.3
Ընդամենը	21.0	56.1	6.4	34.6	100.0	100.0

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

(գ) Բազմանդամ և երեխաներ ունեցող տնային տնտեսություններն ավելի մեծ ռիսկ ունեն աղքատ լինելու: Աղքատության հարաբերական ռիսկն ավելանում է տնային տնտեսության անդամների թվի ավելացմանը զուգահեռ (աղյուսակ 3.8): Բազմանդամ ընտանիքներում աղքատության բարձր մակարդակը պայմանավորող կարևորագույն գործոն է կախվածության մակարդակը: Բազմանդամ տնային տնտեսություններն ունեն շատ թվով երեխաներ, ուստի եկամուտ ստացողների ավելի ցածր մասնաբաժին՝ փոքր տնային տնտեսությունների համեմատ, որն էլ հանգեցնում է նրանց սպառման ցածր մակարդակի:

**Աղյուսակ 3.8. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ տնային տնտեսության չափի 2004թ.-ին, տոկոսներով**

	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
Տնային տնտեսության անդամների թիվը						
1	6.8	43.7	1.6	13.2	1.1	2.8
2	16.5	49.8	3.9	20.3	5.0	8.5
3	14.8	49.0	3.8	25.3	8.2	11.2
4	17.0	50.1	5.3	28.5	18.2	22.1
5	17.7	54.1	5.2	36.3	23.1	22.0
6	26.3	63.1	7.7	39.7	19.4	16.9
7 և ավելի	29.0	63.8	11.9	52.8	25.1	16.5
Ընդամենը	21.0	56.1	6.4	34.6	100.0	100.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ

Հայաստանում երեխայի առկայությունն ավելացնում է աղքատության աստիճանը, սակայն 2004թ.-ին միայն երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներն ունեին աղքատության ավելի բարձր ռիսկ՝ միջին հանրապետական մակարդակի համեմատ (աղյուսակ 3.9): Այնուամենայնիվ, այդ արդյունքները պետք է դիտարկվեն որոշակի վերապահումով, քանզի դրանք հիմնականում բխում են համարժեքության սանդղակի և մասշտաբից տնտեսման ենթադրություններից (Լանժու և Ռավալիոնի, 1995թ.):

**Աղյուսակ 3.9. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ երեխաների թվաքանակի և ծերերի առկայության, 1998/99 և 2004թթ, տոկոսներով**

	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
<b>Երեխաների թվաքանակը</b>						
0 երեխա	20.0	54.2	4.0	24.0	17.2	24.8
1 երեխա	23.6	55.6	5.5	34.5	22.0	22.0
2 երեխաներ	20.0	56.9	7.4	36.2	33.3	31.8
3 երեխաներ	21.2	55.8	5.9	41.1	17.5	14.8
4 երեխա և ավելի	21.4	58.5	14.7	53.1	10.0	6.6
<b>Ծերերի թվաքանակը</b>						
0 ծերեր	18.2	52.9	6.0	33.3	52.3	54.5
1 ծեր	22.9	60.4	7.0	34.4	28.6	28.9
2 և ավելի ծերեր	28.3	61.0	6.7	39.6	19.1	16.7
Ընդամենը	21.0	56.1	6.4	34.6	100.0	100.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ

- (դ) Մեծահասակների առկայությունը զգալի ազդեցություն չունի աղքատության ռիսկի ավելացման վրա: Հայաստանին բնորոշ տնային տնտեսությունում, որը բաղկացած է երկու չափահաս անդամներից և երկու երեխաներից, աղքատության մակարդակն ավելի ցածր է, քան միջին հանրապետականը: Եթե այդ տիպիկ ընտանիքին ավելացվում է մեկ մեծահասակ անդամ, աղքատության ռիսկը թեթևակի ավելանում է, սակայն այդ ավելացումը վիճակագրական կարևորություն չունի (աղյուսակ 3.9): Միայն ծերերից բաղկացած տնային տնտեսության աղքատ լինելու ռիսկը բավական ցածր է միջին հանրապետական մակարդակից (45 տոկոսով ցածր է միջին հանրապետական մակարդակից, աղյուսակ 3.10):
- (ե) Երեխա ունեցող կնոջ գլխավորությամբ տնային տնտեսություններն ավելի մեծ ռիսկ ունեն աղքատ լինելու՝ միջին հանրապետական մակարդակի համեմատ և 2004թ.-ին նման ընտանիքները կազմել են աղքատների 21 տոկոսը (և ամբողջ բնակչության 17 տոկոսը; աղյուսակ 3.10): Կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների բարձր տեսակարար կշիռը կարելի է բացատրել արտագաղթով և վերջինիս առանձնահատկություններով:

սովորաբար տան հայրն է մեկնում արտասահման առավել լավ աշխատանքային հնարավորություններ փնտրելու: Երբ նա կարողանում է կայանալ արտասահմանում, նրա ընտանիքը միանում է նրան: Նման ընտանիքներում աղքատության մակարդակի բարձր տոկոսը կարելի է բացատրել մի շարք գործոններով. որոնցից են ցածր կամ առանց վարձատրության աշխատելու հնարավորությունները, մեկնած ամուսինը չի կարողանում կամ չի ցանկանում արդեն օգնել իր ընտանիքին և այլն:

**Աղյուսակ 3.10.** Հայաստան. Աղքատության ցուցանիշներն ըստ տնային տնտեսության կազմի 1998/99 և 2004թթ.-ին, տոկոսներով

	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
1 չափահաս՝ առանց երեխա	6.2	41.2	0.6	11.9	0.3	0.9
1 չափահաս՝ երեխաներով	23.4	58.1	4.2	21.6	1.8	2.9
2 չափահաս, առանց երեխա	13.5	42.3	4.6	17.4	1.4	2.8
2 չափահաս, 2 երեխա	10.8	41.8	5.1	28.1	7.1	8.8
2 չափահաս, 2 երեխա, 1 ծեր	12.9	53.2	5.7	36.8	4.7	4.4
2 չափահաս, 2 երեխա և 2 ծեր	33.8	74.0	7.2	33.5	2.9	3.0
Չափահաս մարդ, առանց երեխա, առանց մեծի:	12.2	50.7	2.5	19.0	2.5	4.6
Այլ	23.0	58.2	7.0	37.8	79.3	72.7
Կին գլխավոր՝ առանց երեխա	20.5	58.3	5.6	23.5	5.4	7.9
Կին գլխավոր՝ երեխաներով	21.6	63.2	8.3	41.3	21.2	17.8
Ընդամենը	21.0	56.1	6.4	34.6	100.0	100.0

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

- (գ) Լավ կրթություն ունեցող անձանց համար աղքատ լինելու հավանականությունն ավելի փոքր էր (աղյուսակ 3.11): Բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում աղքատության մակարդակն ամենացածրն էր՝ այն մոտ 42 տոկոսով ցածր էր միջին հանրապետական մակարդակից և կրկնակի անգամ ցածր, քան տարրական կրթություն ունեցողների աղքատության մակարդակը: 1998/99թ.-ից ի վեր ծայրահեղ և ընդհանուր աղքատությունն առավել նկատելի է նվազել բարձր կրթություն ունեցողների մոտ (միջին մասնագիտական և բարձրագույն կրթությամբ անձանց շրջանում): Այնուհանդերձ, միջնակարգ կրթությամբ անձինք կազմում էին ամենամեծ խումբն աղքատ բնակչության շրջանում (47 տոկոս): Չնայած այդ ցուցանիշն արտացոլում է այս խմբի բարձր տեսակարար կշիռը՝ 16-ից բարձր տարիքի բնակչության կազմում, այն նաև ցույց է տալիս, այն դժվարությունները, որ այս խումբը հանդիպում է աշխատանք որոնելիս:

**Աղյուսակ 3.11.** Հայաստան. Աղքատությունն ըստ կրթության մակարդակի, 1998/99 և 2004թթ.

(16-ից բարձր տարիքի բնակչություն) տոկոսներով

	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատ բնակչության մեջ	Տոկոսն ընդհանուր բնակչության մեջ
Տարրական և ցածր	23.7	62.3	7.2	37.4	2.8	2.5
Թերի միջնակարգ	27.8	63.3	8.7	42.6	15.7	12.3
Միջնակարգ ընդհանուր	24.0	58.9	7.2	38.2	47.1	41.3
Միջնակարգ մասնագիտական	19.4	55.6	5.6	31.9	22.6	23.7
Բարձրագույն	13.4	44.9	2.6	19.5	11.8	20.1
Ընդամենը	21.6	56.4	6.1	33.5	100.0	100.0

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

- (ե) Մասնակցությունն աշխատանքի շուկայում կարևոր դեր է խաղում աղքատության կարգավիճակի վրա: Առանց աշխատող անդամի տնային տնտեսություններն առավել

բարձր ռիսկ ունեն աղքատ լինելու՝ 13 տոկոսով բարձր, քան միջին հանրապետական մակարդակը (Աղյուսակ 3.12): Այնուհանդերձ, ի տարբերություն 1998/99թ.-ի, այդ տարբերությունը վիճակագրականորեն նշանակալի չէր, որը ցույց է տալիս որոշ բարելավումներ այս խմբի հարաբերական դիրքում: Դա կարելի է բացատրել ավելացած սոցիալական տրանսֆերտներով (կենսաթոշակներ, աղքատության ընտանեկան նպաստ և այլն) և բարեկամներից ստացված տրանսֆերտներով, որոնք կարևոր եկամտի աղբյուր են այն տնային տնտեսությունների համար, որոնք նշել են, որ չունեն աշխատող անդամ:

**Աղյուսակ 3.12.** Հայաստան. Աղքատությունն ըստ տնային տնտեսությունում աշխատող անդամների թվաքանակի, 1998/99 և 2004թթ. տոկոսներով


	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	Տոկոսը համեմատվող բնակչության մեջ
Ոչ ոք չի աշխատում	36.1	68.9	9.8	38.0	18.4	16.2
Աշխատում է մեկ անդամ	21.2	58.3	6.9	35.0	30.3	29.0
Աշխատում են երկու անդամներ	15.4	48.8	4.5	29.9	29.1	32.5
Աշխատում են 3 և ավելի անդամներ	15.0	50.6	4.5	33.2	22.2	22.4
Ընդամենը	21.7	56.5	6.1	33.5	100.0	100.0

Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Նշում: 16-ից բարձր տարիքի բնակչություն.

Աղքատների և ոչ աղքատների կառուցվածքն ըստ զբաղվածության կարգավիճակի բավական փոխվել է 1998/99 և 2004թթ.-ին: Աղքատների մեծ մասը կամ անաշխատունակ էր կամ գործազուրկ, մինչդեռ ոչ աղքատների մեծ մասն աշխատում էր (պատկեր 3.7): 1998/99 և 2004թթ.-ին անաշխատունակների և գործազուրկների համամասնությունն աղքատ բնակչության շրջանում նվազել է, հատկապես 16 և բարձր տարիքի բնակչության շրջանում գործազուրկների թվաքանակի կրճատմամբ պայմանավորված:

**Պատկեր 3.7.** Հայաստան. Աղքատների և ոչ աղքատների կառուցվածքն ըստ զբաղվածության կարգավիճակի 1998/99 և 2004թթ.-ին (16 և բարձր տարիքի բնակչություն)



Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Աշխատուժի մասնակիցների կազմում աղքատության ռիսկն առավել բարձր էր գործազուրկների շրջանում (աղյուսակ 3.13): Ավելին, միջին հանրապետական մակարդակի համեմատ նրանց կարգավիճակն ավելի է վատացել, քանզի 1998/99-2004թթ.-ի ընթացքում աղքատության ռիսկը նրանց շրջանում աճել է 23 տոկոսից՝ 37 տոկոսի: Տարածաշրջանային կտրվածքով դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ այլ քաղաքներում բնակվող գործազուրկների շրջանում աղքատության ռիսկն ամենաբարձրն է (և՛ 2004թ.-ին և՛ 1998/99թ.-ին), և նրանց դիրքն

ավելի է վատացել, քանի որ նրանց շրջանում աղքատության մակարդակը դիտարկվող ժամանակաշրջանում ավելացել է միջին հանրապետական մակարդակի համեմատ՝ 33 տոկոսից 56 տոկոսի:

**Աղյուսակ 3.13.** Հայաստան. Աշխատուժի մասնակցությունն ու աղքատությունը, 1998/99 և 2004թթ (16 և բարձր տարիքի բնակչություն) տոկոսներով

	1998/99թ.		2004թ.			
	Շատ աղքատ	Աղքատ	Շատ աղքատ	Աղքատ	Տոկոսն աղքատների մեջ (համեմատվող բնակչություն)	Տոկոսը համեմատվող բնակչության մեջ
<b>Ընդամենը բնակչություն</b>						
Մասնակիցներ	19.7	54.2	5.7	32.6	58.7	60.3
Վարձու աշխատողներ	15.0	48.7	4.4	27.5	19.8	24.1
Ինքնագրավածներ	13.4	48.6	4.3	31.0	22.1	23.9
Այլ զբաղվածներ	14.7	45.6	4.3	38.8	0.8	0.7
Գործազուրկներ	35.1	69.5	11.4	45.9	16.0	11.6
Ոչ մասնակիցներ	24.6	59.9	6.6	34.8	41.3	39.7
Կենսաթոշակառուներ	25.4	64.0	6.2	33.2	14.4	14.5
Ուսանողներ	15.1	49.1	3.1	22.8	4.7	6.9
Այլ ոչ մասնակիցներ	27.4	60.3	8.2	40.6	22.3	18.3
<b>Երևան</b>						
Մասնակիցներ	24.3	57.8	6.1	27.8	53.6	53.8
Վարձու աշխատողներ	16.3	49.4	3.8	23.8	29.2	34.3
Ինքնագրավածներ	12.9	46.2	6.6	20.6	2.5	3.3
Այլ զբաղվածներ	16.7	50.0	1.0	16.7	0.2	0.3
Գործազուրկներ	33.2	67.2	11.1	38.3	21.7	15.8
Ոչ մասնակիցներ	23.7	58.0	5.2	28.0	46.4	46.2
Կենսաթոշակառուներ	22.2	59.5	5.8	31.2	19.0	17.0
Ուսանողներ	15.7	49.0	2.5	15.5	4.8	8.6
Այլ ոչ մասնակիցներ	28.6	60.4	5.8	30.6	22.6	20.6
<b>Այլ քաղաքներ</b>						
Մասնակիցներ	27.0	64.4	8.0	40.8	51.4	53.8
Վարձու աշխատողներ	17.9	57.5	6.2	34.7	20.8	25.6
Ինքնագրավածներ	14.1	49.6	5.9	39.4	11.6	12.6
Այլ զբաղվածներ	27.8	83.3	4.1	40.6	0.6	0.6
Գործազուրկներ	39.6	75.1	13.0	52.4	18.4	15.0
Ոչ մասնակիցներ	30.9	68.8	9.4	44.9	48.6	46.2
Կենսաթոշակառուներ	33.5	72.8	8.2	39.5	14.3	15.5
Ուսանողներ	19.6	56.3	4.8	32.7	5.4	7.1
Այլ ոչ մասնակիցներ	32.3	69.5	11.6	52.2	28.9	23.6
<b>Գյուղական բնակավայրեր</b>						
Մասնակիցներ	13.1	46.3	4.0	30.6	71.7	72.0
Վարձու աշխատողներ	9.1	35.1	2.7	24.6	10.7	13.4
Ինքնագրավածներ	13.3	48.6	3.9	29.9	51.2	52.7
Այլ զբաղվածներ	7.9	26.3	5.3	44.0	1.6	1.1
Գործազուրկներ	23.2	54.7	8.4	51.7	8.2	4.9
Ոչ մասնակիցներ	18.6	52.0	4.7	31.1	28.3	28.0
Կենսաթոշակառուներ	19.6	59.1	4.3	28.7	10.5	11.2
Ուսանողներ	9.5	41.8	2.1	22.6	3.7	5.1
Այլ ոչ մասնակիցներ	20.8	50.1	6.2	37.1	14.1	11.7
Ընդամենը	21.5	56.3	6.1	33.5	100.0	100.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Աշխատաշուկայում մասնակցություն չունեցող բնակչության շրջանում կենսաթոշակառուների կենսամակարդակը զգալի բարելավվել է. եթե 1998/99թ.-ին աղքատության հավանականությունը բարձր էր կենսաթոշակառուների մոտ, ապա 2004թ.-ին նրանց աղքատության ռիսկը բավական ցածր է: Իսկ աշխատաշուկայի այլ ոչ մասնակիցների



շրջանում (տնային տնտեսուհիներ, ուսանողներ և այլն) աղքատության ռիսկն ավելացել է 2004թ.-ին, հատկապես այլ քաղաքներում բնակվող խմբի մոտ: Նրանց շրջանում աղքատության մակարդակը մեկ ու կես անգամ ավելի էր միջին հանրապետականի համեմատ: Այլ քաղաքներում նրանք կազմում են աղքատ բնակչության գրեթե մեկ երրորդը և այդ բնակավայրերի ընդհանուր բնակչության 24 տոկոսը:

### 3.4. Սպառման և աղքատության դետերմինանտները

Այս մասում դիտարկվում են այն գործոնները, որոնք սերտորեն կապված են աղքատության և կենսամակարդակի հետ, ավելի քան հաստատված պատճառահետևանքային կապերը: Այդ գործոնների բացահայտումը կարևոր քայլ է աղքատության հաղթահարմանն ու տնային տնտեսություններին աղքատ լինելու հավանականությունից ետ պահելուն ուղղված տնտեսական և սոցիալական քաղաքականության մշակման գործում: Ուսումնասիրված գործոններն են. (i) տնային տնտեսության բնութագրիչները, ներառյալ տարիքային կազմը, չափը, միգրացիայում գտնվող անդամի առկայությունը, տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը և տնային տնտեսության բնակության վայրը, ինչպես նաև (ii) տնային տնտեսության գլխավորի բնութագրիչները, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, կրթությունը, զբաղվածությունը և հաշմանդամությունը: Այս գործոններն օգտագործվել են որպես բացատրող (անկախ) փոփոխականներ՝ պարզ ռեգրեսիոն մոդելում, որտեղ մեկ չափահաս անձին համարժեք սպառումը դիտարկվել է որպես կախյալ փոփոխական<sup>10</sup>:

Որպես մեկ չափահաս անձին համարժեք սպառման ցուցանիշի վրա ազդեցություն ունեցող գործոններ են դիտարկվել.

#### *Տնային տնտեսության ժողովրդագրական նկարագիրը*

- *Տնային տնտեսության չափը* բացասական ազդեցություն ունի տնային տնտեսության սպառման վրա և՛ 1998/99թ.-ին և՛ 2004թ.-ին. բազմանդամ տնային տնտեսություններն ունեն ավելի ցածր սպառում՝ ունենալով այլ հավասար բնութագրիչներ: Սպառումն ավելացել է 2004թ.-ին, որը նպաստել է աղքատների խմբից անցնելու ոչ աղքատների խմբին:
- *Տնային տնտեսության գլխավորի սեռը*. դիտարկվող ժամանակահատվածում կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների կենսամակարդակն ավելի ցածր է, քան տղամարդու կողմից գլխավորվող տնային տնտեսություններում, այլ հավասար բնութագրիչներ ունենալու պայմաններում<sup>11</sup>:
- *Տարիքային կազմը*. Մինչև հինգ տարեկան երեխաների տեսակարար կշիռը բացասական ներգործություն ունի սպառման ցուցանիշի վրա: Որքան բարձր է այդ տարիքի երեխաների մասնաբաժինը տնային տնտեսությունում, այքան ցածր է տնային տնտեսության սպառումը բազային կատեգորիայի համեմատ (46-ից 60 տարեկանների մասնաբաժնի համեմատ), պահպանելով տնային տնտեսության չափն անփոփոխ: Մեծահասակների մասնաբաժինը սպառման ցուցանիշի վրա ազդեցություն չի թողնում:

#### *Կրթություն*

- *Սպառման ցուցանիշը բարձր էր այն տնային տնտեսություններում, որոնց գլխավորն ուներ բարձրագույն կրթություն*: Բարձրագույն կրթությամբ գլխավոր ունեցող տնային

<sup>10</sup> Մոդելը գնահատվել է կիրառելով ստանդարտ OLS գործողությունը՝ հստակ ստանդարտ սխալներով: 1998/99 և 2004թթ.-ի արդյունքները ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A3.10-ում: Բացի այդ, վիճակագրական հավելվածի աղյուսակ A3.11-ում 2004թ.-ի համար ներկայացված է քվանտիլային խմբերով հաշվարկված ռեգրեսիան, որն ավելի քիչ է զգայուն տվյալների բազայում առկա աուտլայերների նկատմամբ: Այդ մեթոդի օգնությամբ տարբեր գործոնների (փոփոխականների) ներգործությունը գնահատվել է բաշխման տարբեր մակարդակներով՝ 10 տոկոս, 25 տոկոս, 50 տոկոս, 75 տոկոս և / կամ 90 տոկոս բաշխվածության խմբերով: Միջին և մեդիան ռեգրեսիոն արժեքները 2004թ.-ի համար ստացվում են մոտավորապես նույնը, քանի որ երկու ռեգրեսիաներում էլ գնահատված գործակիցների մեջ զգալի տարբերություն չկա (որոնք վիճակագրականորեն կարևոր են): Ուստի, վերլուծությունների համար կիրառվում է միջին ռեգրեսիան, քանի որ այն տրամադրում է սպառման դետերմինանտների հավաստի պատկերը՝ աուտլայերների բացակայության պատճառով:

<sup>11</sup> Արդյունքները չեն համապատասխանում աղյուսակ 3.11-ում ներկայացված տվյալների հետ, որոնք ցույց են տալիս, որ կնոջ գլխավորությունը, ոչ մի ներգործություն չի թողնում աղքատության մակարդակի վրա, սակայն դա վերաբերում է այն արդյունքին, որը ստացվում է երբ տնային տնտեսության այլ բնութագրիչները չեն դիտարկվում:

տնտեսությունների սպառման մակարդակը 2004թ.-ին 31 տոկոսով ավելի էր այն տնային տնտեսությունների սպառման մակարդակից, որոնց գլխավորում էին տարրական կամ թերի միջնակարգ կրթություն ունեցողները (համեմատվող կատեգորիա):

### ***Միգրացիա***

- *Միգրացիայում գտնվող անդամի առկայությունը բարձրացնում էր տնային տնտեսության կենսամակարդակը*, հանգամանք, որը մեկ անգամ ևս ընդգծում է բարեկամներից ստացված տրանսֆերտների կարևորությունը տնային տնտեսությունների կենսամակարդակի բարելավման վրա: 2004թ.-ին Հայաստանից դուրս աշխատելու մեկնած անդամ ունեցող տնային տնտեսությունների սպառման ցուցանիշը միջին հաշվով 11 տոկոսով բարձր էր առանց միգրացիայում գտնվող անդամ ունեցող տնային տնտեսությունների սպառման համեմատ: Տրանսֆերտների ներգործությունը բավական նշանակալի էր սպառման ողջ բաշխվածության կտրվածքով՝ առավել բարձր արտահայտվածությամբ ոչ աղքատների մոտ, աղքատների համեմատ, որը թույլ է տալիս եզրակացնելու, որ եթե մնացած բնութագրիչները նմանատիպ են, ապա ոչ աղքատ տնային տնտեսություններն առավել շատ են օգտվում տրանսֆերտներից, քան աղքատ տնային տնտեսությունները: Բացի այդ, այն տնային տնտեսությունները, որոնք ունեին միգրացիայից վերադարձած անդամ հետազոտությանը նախորդող վերջին 12 ամիսների ընթացքում, գրանցել էին ավելի բարձր սպառում, քան այն տնային տնտեսությունները, որոնք նման անդամ չեն ունեցել:

### ***Մասնակցությունը աշխատանքի շուկայում.***

- *Աշխատանքի շուկայում չմասնակցելը բացասաբար է ազդում սպառման ցուցանիշի վրա:* 2004թ.-ին այն տնային տնտեսությունները, որոնց գլխավորը ուսանող էր, տնային տնտեսուհի էր կամ աշխատանքի շուկայում չմասնակցող այլ անձ, գրանցել են 6 տոկոսով ավելի ցածր սպառում, քան վարձու աշխատող գլխավոր ունեցող տնային տնտեսություններում: Տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը նույնպես կարևոր էր: Որքան բարձր է գործազուրկների, կենսաթոշակառուների կամ աշխատաշուկայում մասնակցություն չունեցող այլ անդամների համամասնությունը տնային տնտեսությունում, այնքան ցածր է սպառման ցուցանիշը՝ տնային տնտեսությունում վարձու աշխատողների համամասնության համեմատ: Այդ գործոնների ազդեցությունը բարձր կարևորություն ուներ սպառման բաշխվածության կտրվածքով:

### ***Տնային տնտեսության բնակության վայրը***


- *Բնակության վայրը կարևոր դեր ունի Հայաստանում տնային տնտեսության կենսամակարդակը բացատրելիս:* Բնակության վայրի հիմնական ազդեցությունը սպառման ցուցանիշի վրա ստացվում է, երբ մոդելում ընդգրկված տնային տնտեսության այլ բնութագրիչների նկատմամբ ծրագրավորվում է հսկողություն (ըստ «մնացած հավասար պայմանների» սկզբունքի): 2004թ.-ին Հայաստանի մայրաքաղաքում բնակվող տնային տնտեսությունների տնտեսական կարգավիճակը բարելավվել էր՝ այլ բնակավայրերի համեմատ: Ի տարբերություն 1998/99թ.-ի, 2004թ.-ին Երևանում բնակվող տնային տնտեսությունները գրանցել են ամենաբարձր սպառման ցուցանիշները՝ այլ ցուցանիշներն անփոփոխ թողնելու պարագայում: Շիրակի մարզի տնային տնտեսությունները՝ բարձր աշխարհագրական դիրքով և աղետի գոտիով, Երևանի համեմատ գրանցել են սպառման ամենացածր ցուցանիշները: Այդ տարբերությունն ավելի բարձր էր ոչ աղքատների մոտ, քան աղքատ տնային տնտեսությունների մոտ:

### 3.5. Սպառումը<sup>12</sup>, եկամուտը և դրանց բաշխվածության անհավասարությունը

1998/99-2004թթ.-ի ընթացքում իրական արտահայտությամբ աճել է և՛ սպառումը և՛ եկամուտը: Բոլոր տնային տնտեսությունների համար մեկ չափահաս անդամին համարժեք ամսական սպառումը աճել է 20 տոկոսով, իսկ մեկ չափահաս անդամին համարժեք ամսական եկամուտն աճել է 30 տոկոսով (աղյուսակներ A3.12-3.14 և A3.18-3.19, վիճակագրական հավելված): Ամենամաղքատ քվադրանտին խումբը գրանցել է իրական արտահայտությամբ և՛ եկամտի ամենամեծ աճը (78 տոկոս) և՛ սպառման ամենամեծ աճը (36 տոկոս): Տարածաշրջանային կտրվածքով սպառումն ամենամեծ աճ գրանցել է Երևանում, իսկ եկամուտն առավել աճել է գյուղական վայրերում:

*Փոխվել է տնային տնտեսությունների սպառման կառուցվածքը:* Կենսամակարդակի բարելավմանը զուգահեռ նվազել է սննդի մասնաբաժինը սպառման ագրեգատում, 1998/99թ.-ին գրանցված 62 տոկոսից՝ 54 տոկոսի 2004թ.-ին (աղյուսակ A3.12-3.14, վիճակագրական հավելված): 2004թ.-ին սննդի մասնաբաժինն ամենաբարձրն էր գյուղական վայրերում և ամենացածրը Երևան քաղաքում (61 տոկոս և 46 տոկոս համապատասխանաբար): Դիտարկելով այդ ցուցանիշն ըստ տարածաշրջանների և սպառման բաշխվածության, սննդի մասնաբաժինը տատանվում է 71 տոկոսից՝ գյուղական բնակավայրերի ամենաաղքատ քվանտիլում, 38 տոկոսի՝ Երևանի տնային տնտեսությունների ամենավերին քվանտիլում: Ոչ պարենային սպառման բոլոր կատեգորիաներն ավելացել են՝ ամենաաղքատ քվանտիլներից ամենահարուստ քվանտիլներին անցնելիս:

**Պատկեր 3.8. Հայաստան: Տնային տնտեսության ամսական եկամտի աղբյուրները, 1998/99-2004թթ.-ին 1999թ.-ի կայուն գարնանային զննքով, դրամ**



Աղբյուրը: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ

*Եկամտի տարբեր աղբյուրներ ունեն տարբեր դինամիկա.* Հետազոտության արդյունքները 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում գրանցել են կտրուկ աճ տնային տնտեսության եկամտի երեք կարևոր աղբյուրներում՝ եկամուտ վարձու աշխատանքից, կենսաթոշակներ և եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից (աղյուսակ A3.15-19 վիճակագրական

<sup>12</sup> Ինչպես դիտարկվել է շատ երկրներում, Հայաստանում ևս մասնավոր սպառման գնահատականներն ըստ Ազգային հաշիվների զգալիորեն տարբերվում են տնային տնտեսությունների հետազոտությամբ ստացված տվյալներից: Ըստ Ազգային հաշիվների վիճակագրության, 1999 և 2004 թթ ընթացքում ամբողջական մասնավոր սպառումն իրական արտահայտությամբ, աճել է 50 տոկոսով, մինչդեռ ըստ ՏՏԿԱՀ տվյալների աճը կազմել է ընդամենը 13 տոկոս: Այս տարբերությունը մեծանում է, այսպես. եթե 1998/99թ.-ի ՏՏԿԱՀ ստացված տվյալները կազմում էին Ազգային հաշիվների գնահատականի 60-70 տոկոսը, ապա 2004թ.-ին միայն մոտ 50 տոկոսը: Սա ավելի ցածր է քան Արևելյան Եվրոպայի և կենտրոնական Ասիայի այլ երկրներում, որտեղ այդ հարաբերությունը կազմում է մոտ 65 տոկոս (Համաշխարհային բանկ 2005թ.):

հավելված): Բարեկամներից ստացված տրանսֆերտները գրեթե չեն փոփոխվել, մինչդեռ ինքնագրավածությունից (առանց գյուղատնտեսության), անշարժ գույքի կամ երկարաժամկետ օգտագործման իրերի վաճառքից ստացված եկամուտները և այլ եկամուտները (մարդասիրական օգնություն, ծախսվող խնայողություններ և այլն) նվազել են (պատկեր 3.8): Աշխատավարձերի և կենսաթոշակների հաշվին իրական եկամուտների աճի (77 և 125 տոկոս համապատասխանաբար) մասին տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությամբ ստացված արդյունքները վերահաստիմում են այլ վիճակագրական աղբյուրներով: Նույն ժամանակաշրջանի համար ըստ պաշտոնական վիճակագրության, իրական միջին աշխատավարձն աճել է 80 տոկոսով, իսկ իրական միջին կենսաթոշակն, ըստ վարչական տվյալների, աճել է 89 տոկոսով (125 տոկոսի նկատմամբ տարբերությունը կարելի է բացատրել 1998/99 ՏՏԿԱՀ համեմատ 2004թ.-ին կենսաթոշակառուների ավելի լայն ընդգրկվածությամբ): Գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամտի 33 տոկոս աճը կարելի է բացատրել ոչ գյուղատնտեսական գների<sup>13</sup> համեմատ, գյուղատնտեսական գների՝ սպառողների կողմից վճարված և արտադրողների կողմից ստացված գների աճով և 2003 և 2004թթ.-ին գրանցված գյուղատնտեսական արտադրության աճով:

Տնային տնտեսության եկամտի տարբեր աղբյուրների կարևորությունը Հայաստանի տնային տնտեսությունների համար դիտարկելիս ակնհայտ է դառնում, որ վարձու աշխատանքից ստացված եկամուտն ու գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը հանդիսանում են եկամտի ամենահիմնական աղբյուրները: Երրորդ տեղում են սոցիալական տրանսֆերտները: Տնային տնտեսությունների եկամտի աղբյուրների կառուցվածքը տարբերվում է ըստ քվանտիլային խմբերի և բնակավայրերի (աղյուսակ A3.17 վիճակագրական հավելված):

Աղքատ բնակչության համար վարձու աշխատանքն եկամտի հիմնական աղբյուրն է եղել՝ կազմելով ամենաաղքատ քվանտիլային խմբի եկամուտների 41 տոկոսը: Երևանում եկամտի այդ աղբյուրի մասնաբաժինը 64 տոկոս էր, այլ քաղաքներում այն կազմել է 42 տոկոս և գյուղական վայրերում՝ 17 տոկոս: Աղքատ տնային տնտեսությունների համար գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտն երկրորդն էր իր տեսակարար կշռով: Ինչպես և սպասվում էր, այն ամենակարևոր եկամտի աղբյուրն էր գյուղաբնակ տնային տնտեսությունների համար, որտեղ գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը կազմել է տնային տնտեսության ընդհանուր եկամուտների մոտ 54 տոկոսը: Սոցիալական տրանսֆերտները (կենսաթոշակները, սոցիալական աջակցությունը և այլն) աղքատ տնային տնտեսությունների համար հանդիսացել են եկամտի երրորդ ամենամեծ աղբյուրը՝ կազմելով ընդհանուր եկամտի մոտ 17 տոկոսը:

Բարեկամներից ստացված տրանսֆերտները՝ Հայաստանի ներսում և արտասահմանից, կազմել են տնային տնտեսության միջին եկամտի 10.5 տոկոսը 2004թ.-ին: Տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր էին ամենահարուստ քվանտիլային խմբի համար (16 տոկոս տեսակարար կշռով), իսկ ամենաաղքատ քվանտիլային խմբի համար կազմել են ընդհանուր եկամտի 7.4 տոկոսը: Տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր էին Երևանում և այլ քաղաքային բնակավայրերում ապրող բնակչության համար (13.9 և 13.3 տոկոս համապատասխանաբար), գյուղաբնակ տնային տնտեսությունների համեմատ, որտեղ տրանսֆերտները կազմել են ընդհանուր եկամտի ընդամենը 5 տոկոսը: Թե՛ Երևանում և թե՛ այլ քաղաքներում տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր են եղել հարուստ տնային տնտեսությունների համար (20.6 և 16.1 տոկոս համապատասխանաբար):

Պարզվում է, որ տնային տնտեսությունների հետազոտության միջոցով ամբողջությամբ չեն հաշվառվում տրանսֆերտները, քանզի պաշտոնական վիճակագրության համեմատ, հետազոտությամբ ստացված տվյալները շատ փոքր են. 2004թ.-ին ՏՏԿԱՀ գնահատվել է, որ մեկ տնային տնտեսության հաշվով տարեկան ստացվել է մոտ 150 ԱՄՆ դոլար տրանսֆերտներ, մինչդեռ ըստ պաշտոնական վիճակագրության մեկ շնչի հաշվով

<sup>13</sup> 1999-2004թթ.-ին գյուղմթերք արտադրողների իրացման և գյուղմթերքի մանրածախ գները աճել են համապատասխանաբար 25 և 20 տոկոսով: Ընդհանուր ՍԳ-ի աճել է 16 տոկոսով, պարենային ապրանքների գները՝ 19.3 տոկոսով, իսկ ոչ պարենային ապրանքների գները՝ 6.1 տոկոսով:

տրանսֆերտները կազմել են 200 ԱՄՆ դոլար: Ըստ պաշտոնական գրանցումների արտասահմանից ստացվող տրանսֆերտները կտրուկ աճել են 1998-2004թթ.-ի ընթացքում՝ սպահովելով տարեկան մոտ 30 տոկոս աճի տեմպ և 2004թ.-ին դրանք կազմել են ՀՆԱ-ի 15 տոկոսը: Տրանսֆերտները զգալի ավելացել են 2004թ.-ին՝ 2003թ.-ի համեմատ ավելանալով 78 տոկոսով:

Ոչ գյուղատնտեսական գործունեությամբ ինքնազբաղվածությունից ստացված եկամուտը շատ չնչին մաս էր կազմում աղքատ բնակչության եկամուտների կազմում: Եկամտի այդ խումբն առավել զգալի մասնաբաժին ուներ ոչ աղքատ բնակչության շրջանում: Նման եկամուտները մեծ մասնաբաժին ունեին Երևանում և ամենափոքր մասնաբաժինը գյուղական բնակչության եկամուտներում: Վարձու աշխատանքից և ինքնազբաղվածությունից ստացված եկամուտը կազմել է գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտների 23 տոկոսը, ինչը վկայում է գյուղական բնակավայրերում ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու փոքր հնարավորությունների մասին: Այդ հանգամանքն ընգծում է Հայաստանում ձեռներեցության և ինքնազբաղվածության գործունեության զարգացման անհրաժեշտությունը, ինչպես վկայում է Կենտրոնական Եվրոպայի առաջադեմ անցումային տնտեսությամբ երկրների փորձը, որտեղ ինքնազբաղվածությունն անցումային շրջանում բարձր արդյունք ապահովող ռազմավարություն է եղել (Dutz, M. et. al, 2004թ.):

**Աղյուսակ 3.14.** Հայաստան. Սպառման և եկամտային անհավասարությունը 1998/99 և 2004թթ.

	Սպառում		Եկամուտ	
	98/99թ.	2004թ.	98/99թ.	2004թ.
Վարիացիայի գործակից	0.784	0.596	2.338	1.067
Ջինիի գործակից	0.301	0.260	0.597	0.395
Թեյլի միջին լոգարիթմական շեղում E(0)	0.150	0.111	0.667	0.280
Թեյլի էնտրոպիա E(1)	0.174	0.125	0.818	0.297

**Աղբյուրը.** ՏՏԿԱՀ 98/99 և 2004թթ.

**Նշում.** Եվ՝ սպառումը և՛ եկամուտը գնահատվել են մեկ չափահաս անձին համարժեք: Եկամուտը որոշվել է որպես ընդամենը տնօրինվող եկամուտ, որը ներառում է դրամական եկամուտները, ոչ դրամական եկամուտները և ծախսված խնայողությունները: Ստանդարտ սխալները հաշվարկվել են ըստ ընտրանքի նախնական միավորի Այս աղյուսակը վիճակագրական սխալներով ներկայացված է վիճակագրական հավելվածում որպես աղյուսակ A3.20:

*Անհավասարությունը Հայաստանում զգալիորեն նվազել է, կարևոր դեր ունենալով աղքատության հաղթահարման գործում:* Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այլ երկրների մման Ջինիի գործակցի միջոցով գնահատվող և՛ սպառման և՛ եկամուտների անհավասարության ցուցանիշները զգալիորեն նվազել են (աղյուսակ 3.14): Անհավասարության գնահատման այլ եղանակները (Թեյլի էնտրոպիայի համաթիվը E(1) և Թեյլի միջին լոգարիթմական շեղումը E(0) նույնպես նվազել են: Չնայած Հայաստանում՝ Ենրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այլ երկրների համեմատ, գրանցվել է սպառման բաշխվածության անհավասարության հարաբերականորեն ցածր ցուցանիշ, եկամտի Ջինիի գործակիցն ամենաբարձրն էր տարածաշրջանում: Անհավասարությունն ըստ տարածաշրջանների ներկայացված է վիճակագրական հավելվածի աղյուսակ A3.21-ում:

### 3.6. Եզրակացություններ

Հայաստանում աղքատության մակարդակը զգալիորեն նվազել է 1998/99թ.-ի համեմատ: Գրեթե 700 հազար մարդ դուրս է եկել աղքատությունից և նրանց կազմում գրեթե կես միլիոն մարդ շրջանցել են ծայրահեղ աղքատությունը: Աղքատությունը դարձել է ավելի մակերեսային և նվազ սուր: Այնուամենայնիվ աղքատությունը դեռ լուրջ խնդիր է հանդիսանում Հայաստանի համար, քանզի բնակչության մոտ մեկ երրորդը (մոտ մեկ միլիոն մարդ) դեռ աղքատ է, իսկ նրանցից 200 հազարը՝ ծայրահեղ աղքատ:

Կայուն և շարունակական տնտեսական աճը նվազեցրել է եկամուտների և սպառման բաշխվածության անհավասարությունը և արտասահմանում աշխատողներից ստացվող տրանսֆերտները աղքատության հաղթահարման տեսանկյունից ազդեցիկ շարժիչ ուժ են եղել:

2004թ.-ին Հայաստանում՝ 1998/99թ.-ի համեմատ 142 հազարով ավելի զբաղված մարդ կար և 100 հազարով քիչ գործազուրկ: Մարդիկ ստանում էին աշխատավարձ, որն իրական արտահայտությամբ 80 տոկոսով ավել էր, քան 1998/99թ.-ին: Միջին կենսաթոշակն ավելացել է 79 տոկոսով, գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտն իրական արտահայտությամբ ավելացել է 24%-ով, իսկ տրանսֆերտները կազմել են մոտ 200 ԱՄՆ դոլար մեկ շնչի հաշվով: Նվազող անհավասարության հետ մեկտեղ սպառումն ավելացել է բոլոր խմբերի համար և հատկապես աղքատ բնակչության համար:

Մայրաքաղաք Երևանն առավելագույն է օգտվել տնտեսական աճից, մինչդեռ Երևանից դուրս այլ քաղաքային բնակավայրերում գրանցվել է աղքատության հաղթահարման ամենացածր տեմպը՝ շարունակելով մնալ Հայաստանի բնակչության ամենաաղքատ հատվածը 2004թ.-ին: Աղքատությունը հիմնականում ուներ քաղաքային ուղղվածություն 1998/99թ.-ին, իսկ 2004-ին աղքատության մակարդակը շատ չի տարբերվել ըստ գուղական և քաղաքային բնակավայրերի:

Շիրակի մարզը՝ բարձր աշխարհագրական դիրքով և 1988թ.-ի ավերիչ երկրաշարժից առավել տուժած բնակավայրերով, շարունակում է մնալ Հայաստանի ամենաաղքատ տարածաշրջանը: Միջին հանրապետական աղքատության մակարդակից բարձր աղքատություն գրանցվել է Գեղարքունիքի, Կոտայքի, Սյունիքի, Արմավիրի և Արագածոտնի մարզերում: Իսկ Վայոց Ձորում և Երևանում գրանցվել է աղքատության ամենացածր մակարդակը:

Աղքատության կառուցվածքային պատկերն իր բնութագրիչներով դարձել է հարաբերականորեն առավել կայուն: Մինչև հինգ տարեկան երեխաների շրջանում աղքատության մակարդակն ավելի բարձր էր այլ տարիքային խմբերի համեմատ: Ցածր կրթությամբ անձինք ավելի մեծ հավանականություն ունեն աղքատ լինելու: Բազմանդամ և երեխաներով տնային տնտեսությունները և կնոջ գլխավորությամբ երեխա ունեցող տնային տնտեսություններն առավել բարձր ռիսկ ունեն աղքատ լինելու: Առանց աշխատող անդամի տնային տնտեսություններն առավել աղքատ էին: Բացի կենսաթոշակառուներից, չզբաղվածները (տնային տնտեսուհիներ, ուսանողներ և այլն) և գործազուրկները երկրորդային քաղաքներում առավել խոցելի էին աղքատության իմաստով և նրանց հարաբերական կարգավիճակը բավական վատացել էր 1998/99թ.-ի համեմատ: Դրան հակառակ, եթե 1999/99թ.-ին մեծահասակների շրջանում աղքատության մակարդակն առավել բարձր էր, ապա 2004թ.-ին նրանց աղքատության մակարդակը միջին հանրապետականից ցածր էր:

Քանի որ աղքատ հանդիսացող խմբերը հիմնականում կազմում էին ընդհանուր բնակչության հարաբերականորեն փոքր մասը (բացի աշխատող անդամ չունեցող տնային տնտեսություններից), նրանք մեծ տեսակարար կշիռ չէին կազմում աղքատների շրջանում: Աղքատների շրջանում ամենամեծ մասնաբաժին ունեին մինչև 18 տարեկան երեխաները, անաշխատունակները, աշխատող անդամ չունեցող տնային տնտեսությունները, միջնակարգ կրթություն ունեցողները և այլ քաղաքներում բնակվողները: Վեց տարի առաջ այդ պատկերը հիմնականում նույնն էր, բացառությամբ անաշխատունակների, որոնք աղքատների շրջանում ունեին փոքր տեսակարար կշիռ՝ քան աշխատաշուկայի մասնակիցները:

Հայաստանի համար, որպես աղքատության մակարդակը պայմանավորող գործոններ առանձնացվել են հետևյալ գործոնները. (ա) տնային տնտեսության ժողովրդագրական ցուցանիշները. մինչև հինգ տարեկան երեխաների տեսակարար կշիռը հակառակ ազդեցությունն ունի սպառման ցուցանիշի վրա, նմանապես տնային տնտեսության չափը, կնոջ գլխավորությամբ տնային տնտեսությունների կենսամակարդակն ավելի ցածր է, քան տղամարդու գլխավորությամբ տնային տնտեսություններում՝ միանման այլ բնութագրիչների պարագայում: (բ) Միգրացիան. միգրացիայում գտնվող անդամի առկայությունը զգալիորեն ավելացնում է սպառումը, ընդգծելով, թե որքան կարևոր են տրանսֆերտները տնային տնտեսությունների կենսամակարդակի բարելավման համար: (գ) Տնային տնտեսության գլխավորի կրթությունը. որքան բարձր է տնային տնտեսության գլխավորի կրթական աստիճանը, այնքան բարձր է սպառումը և այնքան ցածր աղքատ լինելու հավանականությունը: (դ) Տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը. սպառումը նվազում է տնային տնտեսության կազմում գործազուրկների, կենսաթոշակառուների, կամ

աշխատաշուկայում այլ ոչ մասնակից անդամների համամասնության ավելացմանը զուգահեռ:  
(ե) Տնային տնտեսության բնակության վայրը կարևոր դեր ունի սպառման ցուցանիշի փոփոխության վրա. Երևանում բնակվող տնային տնտեսություններն ավելի բարձր կենսամակարդակ ունեն, քան այլ քաղաքներում և մարզերում ապրողները, Շիրակի մարզում բնակվող տնային տնտեսությունների սպառումն ամենացածրն էր՝ Երևանում ապրող տնային տնտեսությունների համեմատ:


## Գլուխ IV: Աղքատությունը գյուղական վայրերում

1998/99 և 2004թթ.-ի ընթացքում աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում կրճատվել է ավելի քան մեկ երրորդով: Աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում շարունակում է նկատելիորեն ավելի ցածր մնալ միջին հանրապետական մակարդակից, այն նաև համեմատաբար ավելի մեղմ է և ավելի համասեռ, քան այլ բնակավայրերում: 2004 թվականն աննախադեպ հաջող էր Հայաստանի գյուղատնտեսության համար: Գյուղատնտեսական արտադրության աճը, որն ուղղեկցվել է գյուղմթերք արտադրողների իրացման գների աճով, զգալիորեն ավելացրել են արտադրանքն ու արտադրողականությունը, գյուղական բնակչության եկամուտները և կրճատել աղքատության մակարդակը: Աղքատ լինելու հավանականությունն ավելի մեծ է գյուղաբնակ այն տնային տնտեսություններում, որոնք ունեն փոքր արտադրական ներուժ, ապրում են բարձր աշխարհագրական դիրք ունեցող բնակավայրերում, չունեն հող կամ ունեն շատ փոքր հողակտոր, չունեն կամ ունեն շատ քիչ գյուղատնտեսական տեխնիկա և ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորություններ: Ոռոգման համակարգից օգտվելը զգալի չի տարբերվում աղքատ, ծայրահեղ աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների շրջանում:

### 4.1. Աղքատության մակարդակի միտումները գյուղական վայրերում

Վերջին տարիներին երկրում գրանցված երկնիշ տնտեսական աճն իր ազդեցությունն է բողել նաև գյուղական բնակչության կենսամակարդակի բարելավման վրա, քանզի 1998/99 և 2004թթ.-ին աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում նվազել է 34.2 տոկոսով: Համընդհանուր աղքատության մակարդակի ներքո գյուղական բնակչության աղքատության մակարդակը շարունակում է մնալ համեմատաբար ավելի ցածր, այն համեմատաբար ավելի մակերեսային է և ավելի մեղմ, քան այլ բնակավայրերում: 2004 թ. աղքատ է եղել գյուղական բնակչության 31.7% տոկոսը, միջին հանրապետական 34.6% աղքատության մակարդակի համեմատ, իսկ Երևան քաղաքի համեմատ գյուղում աղքատության մակարդակը ցածր էր ընդամենը 8 տոկոսով (պատկեր 4.1):

Պատկեր 4.1. Աղքատության մակարդակն ըստ բնակավայրերի տեսակների 1998/99 և 2004թթ.-ին



Աղբյուր: ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

2004թ.-ին շատ աղքատ էր գյուղական բնակչության միայն 4.4 տոկոսը, ինչը Հայաստանում գրանցված ծայրահեղ աղքատության ամենացածր մակարդակն էր: Եթե գյուղական բնակավայրերում աղքատության մակարդակի ցուցանիշների նվազումը նման էր



քաղաքային բնակավայրերում համապատասխան ցուցանիշների վարքին, ապա Երևան քաղաքի աղքատության մակարդակի նվազման համեմատ այն բավական ցածր էր:

#### **Ներդիր 4.1: Գյուղական հավածը Հայաստանում**


2005թ.-ի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանում առկա են 338.5 հազ. գյուղացիական տնտեսություններ, որտեղ զբաղված են մոտ 550 հազ. մարդ (գյուղական բնակչության 43.5 տոկոսը): Գյուղացիական տնտեսություններին պատկանող գյուղատնտեսական հողատեսքերի միջին մեծությունը կազմում է 1.38 հեկտար: Տնային տնտեսությունների արտադրության երեք քառորդը վաճառվում է անմիջապես տնից: Աշխատուժը խիստ թերբեռնված է, իսկ օգտագործման արդյունավետությունը՝ ցածր: Ոլորտում ամբողջ տարին զբաղվածների տեսակարար կշիռը կազմում է 36.1 տոկոս, իսկ աշխատուժի մոտ 40 տոկոսը զբաղված է 7-9 ամիս: Տնային տնտեսությունների միայն 7.0 տոկոսն է հողի մշակման համար վարձել այլ աշխատող: 2004 թ. գյուղատնտեսությունում զբաղվածները կազմել են ընդհանուր զբաղվածների թվաքանակի 44.4 տոկոսը, իսկ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը՝ 23 տոկոս է:

2004թ. աննախադեպ բերքառատ է եղել և գրանցվել է հիմնական մշակաբույսերի համախառն բերքի նկատելի աճ, բացառությամբ բոստանային մշակաբույսերի: Ավելացել է հացահատիկային և հատիկաբերողային մշակաբույսերի համախառն բերքը, կարտոֆիլինը, պտղինը և հատապտղինն ու խաղողինը: Նշված մշակաբույսերի արտադրության ծավալների աճը գույճորդվել է նաև բերքատվության ցուցանիշի ավելացմամբ: 2004թ.-ին՝ նախորդ տարվա համեմատ, ավելացել են նաև կենդանական ծագման գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները՝ սպանդի համար իրացված մսի (կենդանի քաշով), կաթի ու ձվի արտադրության ծավալները: Միաժամանակ աճել են գյուղմթերքի արտադրողների իրացման գները: 2004թ.-ին՝ 1999 թ.-ի նկատմամբ, գյուղմթերքի արտադրողների իրացման գների ինդեքսն աճել է 25%-ով, իսկ սպառողական գների ինդեքսը՝ 16%-ով: Այդ ամենի արդյունքում ավելացել են գյուղմթերքի արտադրանքն ու արտադրողականությունը, գյուղական բնակչության եկամուտները, իսկ աղքատության մակարդակը նվազել է: 2004թ.-ի բացառիկ դրական զարգացումները գյուղատնտեսության ոլորտում հավանաբար դժվար կլինի պահպանել նաև հետագա տարիներում ևս, և այդ առումով ոլորտում տեղ գտած փոփոխությունների վերաբերյալ եզրահանգումները պետք է որոշակի վերապահումով կատարել, քանզի աղքատությունը գյուղում կարող է թերզանհատված լինել և որոշ վատացում գրանցել հաջորդող տարիներում:

#### **4.2. Գյուղաբնակ տնային տնտեսությունների եկամուտներն ու սպառումը 1998/99-2004թթ.-ին**

1998/99 և 2004թթ.-ի ընթացքում գյուղական բնակավայրերում բնակչության միջին եկամուտներն իրական արտահայտությամբ աճել են 39.4%-ով: Գյուղատնտեսական գործունեությունն եկամտի ամենակարևոր աղբյուրն էր բոլոր գյուղաբնակ տնային տնտեսությունների համար. հող կամ անասուն ունեցող գյուղաբնակ տնային տնտեսությունների 79.6%-ը գրանցել է եկամուտ գյուղատնտեսական գործունեությունից: Նման տնային տնտեսությունները կազմել են 62.8%՝ 1998/99թ.-ին: Չնայած դա շուկայում բարձր մասնակցության ցուցանիշ է, այդուհանդերձ գյուղաբնակ տնային տնտեսությունների մոտ 20%-ը գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվել է սեփական կարիքները հոգալու համար:

**Պատկեր 4.2. Հայաստան. Գյուղաբնակ տնային տնտեսությունների ամբողջական եկամուտների կառուցվածքը 1998/99 և 2004թթ.-ին**



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Նշում. Եկամուտը հաշվարկվել է որպես ընդամենը տնօրինվող եկամուտ և գնահատվել է մեկ տնային տնտեսության հաշվով:

Միջին հաշվով, 2004թ.-ին գյուղատնտեսական գործունեությունն ապահովել է գյուղաբնակ տնային տնտեսությունների ընդհանուր եկամտի 56 տոկոսը: Իր տեսակարար կշռով հաջորդում է վարձու աշխատանքից ստացված եկամուտը՝ 18.4 տոկոս, ապա պետական տրամադրությունները՝ կենսաթոշակները և սոցիալական աջակցությունը, 12 տոկոս: 1998/99թ.-ի համեմատ, գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամտի տեսակարար կշիռը մի փոքր նվազել է, աշխատավարձերը կրկնապատկվել են, իսկ պետական տրամադրությունների մասնաբաժինն ավելացել է ավելի քան երկու անգամ: Ինքնագաղաթնությունից ստացված եկամուտը կրկնակի անգամ նվազել է: Գյուղաբնակ տնային տնտեսությունների համար զգալիորեն նվազել է նաև ոչ դրամական եկամուտների՝ որպես եկամտի աղբյուրի կարևորությունը, 1998/99թ.-ի 53 տոկոսի դիմաց, կազմելով 35.8 տոկոս 2004թ.-ին: Դա շատ կարևոր փոփոխություն է, քանզի վկայում է գյուղատնտեսության դրամայնացման մակարդակի աճի մասին (Պատկեր 4.2): Վերջապես, եթե գյուղատնտեսական գործունեությունից ստացված եկամուտը գրեթե հավասարապես կարևոր էր բոլոր գյուղաբնակ տնային տնտեսությունների համար, ապա մասնավոր տրամադրությունները և ինքնագաղաթնությունը շատ ավելի մեծ եկամուտ էին ապահովում ոչ աղքատ, քան աղքատ տնային տնտեսությունների համար: Հակառակ պատկերն էր պետական տրամադրությունների հարցում, որոնք շատ ավելի կաևոր եկամտի աղբյուր էին սպառման բաշխվածության ամենաստորին քվանտիլի տնային տնտեսությունների համար, քան ամենավերին քվանտիլում գտնվողների համար: Հետաքրքրական է, որ ոչ դրամական եկամուտները շատ ավելի մեծ տեսակարար կշիռ ունեին ավելի հարուստ, քան ավելի աղքատ տնային տնտեսությունների համար (Աղյուսակներ A3.15-3.17 Վիճակագրական հավելվածում):

Աղյեսակ 4.1-ը ներկայացնում է գյուղաբնակ բնկաչության եկամուտների և սպառման ցուցանիշները՝ հաշվարկված մեկ չափահաս անձին համարժեք, ամսական, կայուն գներով: Եկամուտն ավելացել է սպառման բոլոր քվանտիլներում: Այդ աճն արտացոլում է 2004թ.-ի գյուղատնտեսական արտադրության աճը, ինչպես նաև արդյունք է տնային տնտեսությունների հետազոտությանը գյուղաբնակ բնակչության եկամուտների առավել մեծ ընդգրկվածության: Սպառումը նույնպես ավելացել է բոլոր քվանտիլներում, սակայն վերին քվանտիլում սպառման աճն աննշան էր, արտացոլելով ամբողջ գյուղական բնակչության կտրվածքով միջին սպառման շատ փոքր փոփոխությունը, որն իր հերթին բերում է սպառման բաշխվածության շեղմանը դեպի

ծախ, ինչն էլ արտացոլվում է Ջինիի գործակցով հաշվարկված սպառման բաշխվածության անհավասարությունը (1998/99թ.-ի 0.291 մակարդակից՝ 2004թ.-ի 0.217):

**Աղյուսակ 4.1. Հայաստան.** Գյուղաբնակ բնակչության եկամուտներն ու սպառումը 1998/99 և 2004թթ.-ին, մեկ չափահաս անձին համարժեք, ամսական, 1999թ.-ի գարնանային կայուն գներով

	Առաջին քվանտիլ	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ քվանտիլ	Միջինը
<i>Սպառումը մեկ չափահաս անձին համարժեք</i>						
1998/99թ.	8,875	12,786	16,483	21,350	38,110	21,149
2004թ.	12,102	16,482	20,417	25,642	38,964	22,590
<i>Եկամուտը մեկ չափահաս անձին համարժեք</i>						
1998/99թ.	6,608	9,219	12,806	13,560	19,310	13,044
2004թ.	11,942	18,162	18,083	20,821	25,964	19,130
<i>1998/99 և 2004 թթ տարբերությունը (%)</i>						
Սպառում	36.4	28.9	23.9	20.1	2.2	6.8
Եկամուտ	80.7	97.0	41.2	53.5	34.5	46.6


Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

#### 4.3. Ովքե՞ր էին աղքատ գյուղական վայրերում 2004թ-ին

Գյուղական բնակչությունն ամենաաղքատն էր նվազ արտադրական հնարավորություններ ունեցող տնային տնտեսություններում. բարձր աշխարհագրական դիրք ունեցող տնային տնտեսություններում, հողագուրկ կամ շատ փոքր հողակտոր ունեցող տնային տնտեսություններում, քիչ ոռոգման հնարավորություն ունեցող տնային տնտեսություններում, առանց կամ շատ քիչ գյուղտեխնիկա ունեցող և ֆինանսավորման աղբյուր չունեցող տնային տնտեսություններում:

*Աշխարհագրական դիրքը.* 2004թ., ինչպես և նախորդ տարիներին, բնակչությունն ամենաաղքատն էր այն մարզերում, որտեղ գյուղատնտեսության համար պայմաններն առավել անբարենպաստ էին: Այդ տեսանկյունից աղքատության մակարդակն ամենաբարձրն էր ծովի մակարդակից 1700մ բարձր գտնվող բնակավայրերում, մինչդեռ ծովի մակարդակից 1300մ բարձրության վրա գտնվող հարթավայրերում աղքատության մակարդակն ամենացածրն էր (Պատկեր 4.2):

**Պատկեր 4.3. Հայաստան. Գյուղական բնակչության աղքատության մակարդակն ըստ բնակավայրի աշխարհագրական դիրքի տոկոսներով**



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 98/99 և 2004թթ.

**Հողի առկայությունը.** Գյուղաբնակ տնային տնտեսությունների շրջանում հողակտորի բացակայությունը հանգեցնում է թե՛ ծայրահեղ աղքատության և թե՛ ընդհանուր աղքատության ավելի բարձր մակարդակների: Աղքատության մակարդակը նկատելի բարձր էր մինչև 0.2հա հողակտոր ունեցող տնային տնտեսություններում (Աղյուսակ 4.2): Աղքատ լինելու հավանականությունը նվազում է հողակտորի չափին զուգահեռ, սակայն միայն մինչև 1հա հողակտոր ունեցող տնային տնտեսությունների շրջանում: Աղքատության մակարդակը նկատելի բարձրանում է 1հա-ից ավել հողակտոր ունեցող տնային տնտեսությունների շրջանում, սակայն այն դեռ միջին հանրապետական մակարդակից բավական ցածր է, որը բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ նման չափի հողակտորներ ունենում են առավել բարձր լեռնային գոտիներում բնակվող տնային տնտեսությունները, որտեղ ինպես արդեն նշվեց, բնակլիմայական պայմանները բավարար նպաստավոր չեն գյուղատնտեսական գործունեության համար:

**Աղյուսակ 4.2. Հայաստան. Աղքատության մակարդակը գյուղական վայրերում ըստ հողակտորի առկայության և մեծության, տոկոսներով**

	1998/99թ.		2004թ.			
Հողակտորի չափը (հեկտար)	Ծայրահեղ աղքատություն	Աղքատության մակարդակ	Ծայրահեղ աղքատություն	Աղքատության մակարդակ	% աղքատների մեջ	% գյուղական բնակչության մեջ
0 հեկտար	39.1	65.4	10.1	49.5	6.2	4.0
Մինչև 0.2 հա	23.3	55.7	5.5	37.8	13.9	11.7
0.2 - 0.5 հա	11.9	51.2	2.6	29.2	18.5	20.1
0.5 - 1 հա	15.5	55.1	4.0	27.0	19.5	22.8
Ավելի քան 1 հա	10.4	39.6	4.7	31.9	41.9	41.5
Աղքատությունը գյուղում	<b>14.1</b>	<b>48.2</b>	<b>4.4</b>	<b>31.7</b>	<b>100.0</b>	<b>100.0</b>

Աղբյուրը. 1998/99 և 2004թթ. ՏՏԿԱՀ.

**Նշում.** Այս աղյուսակը ստանդարտ սխալներով ներկայացված է վիճակագրական հավելվածում Աղյուսակ A4.1.

#### **Ներդիր 4.2: Աղքատության հաղթահարման ռազմավարությունը և գյուղական աղքատության հաղթահարումը Հայաստանում**

Համաձայն ԱՀՌԾ-ի գյուղական աղքատության հաղթահարման ոլորտում հիմնական գերակայություններն են՝ գյուղմթերքի վաճառքից եկամուտների համակարգերի ներդրումը, փոխառու ֆինանսական ռեսուրսների մատչելիության ավելացումը,, հողի արդյունավետ շուկայի ստեղծումը, կոոպերատիվ շարժման զարգացումը և ինքնագրավածության ու փոքր ձեռնարկատիրության խրախուսումը:

Գյուղական աղքատության կրճատման հիմնական գործոնը 2003-2015 թթ. կհանդիսանա գյուղատնտեսական արտադրության աճը որը կանխատեսվում է միջին տարեկան 2.2 տոկոսի չափով՝ արտադրողականության աճի հաշվին (միջին տարեկան 2 տոկոս), զբաղվածների թվաքանակը էականորեն չի փոխվի և տարեկան կավելանա մոտ 0.22 տոկոսով: Նկատելիորեն կավելանա նաև գյուղատնտեսության ապրանքայնության մակարդակը՝ 2002թ.-ին այն կազմել է 54.1 տոկոս, 2004թ.-ին՝ 55.7%, իսկ 2015 թ. նախատեսվում է հասնել մինչև 70 տոկոս, որը թույլ կտա բարձրացնել գյուղատնտեսության ֆինանսական ռեսուրսների ծավալները և գյուղացիական տնտեսությունների մեծ մասը դուրս բերել գոյատևման մակարդակից:

**Հողի որակը.** Տնային տնտեսությունների հետագոտությամբ բավարար տեղեկատվություն չի ստացվում հողի որակի մասին, ուստի որպես հողի որակի ցուցանիշ դիտարկվել է ռոտզման հնարավորությունը, քանի որ այն պայմանավորում է ստացվող բերքի ու բերքատվության մակարդակը: Ըստ սոցիալ-տնտեսական խմբերի ռոտզման հնարավորության զգալի տարբերություն չի դիտարկվել:

**Աղյուսակ 4.3. Հայաստան. Ոռոգվող հողատարածքների մասնաբաժինն ըստ աղքատության մակարդակի, տոկոսներով**

	Ոչ աղքատ	Աղքատ	Ծայրահեղ աղքատ	Ընդամենը
Մինչև 25%	22.8	29.1	21.2	24.1
25-50%	15.4	10.8	9.6	14.2
50-75%	7.3	6.8	22.2	7.7
75%-100%	54.6	53.3	47.0	54.1

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

Ըստ ՏՏԿԱՀ, Հայաստանում ոռոգվում էր տնային տնտեսությունների կողմից տնօրինվող և օգտագործվող հողատարածքների մոտ 62 տոկոսը. Սակայն 75-100 տոկոսով ոռոգվում էր հողատարածքների միայն 55 տոկոսը (Աղյուսակ 4.3): Ոռոգման համակարգից օգտվում էր բերրի Արարատյան դաշտավայրի հողերի առավել մեծ համամասնությունը (Արարատի և Արմավիրի մարզեր) Աղյուսակ 4.4:

**Աղյուսակ 4.4. Հայաստան. Ոռոգվող հողերի համամասնությունն ըստ մարզերի տոկոսներով**

	Մինչև 25%	25-50%	50-75%	75%-100%
Արագածոտն	3.5	15.3	9.4	71.8
Արարատ	1.2	5.9	4.7	88.3
Արմավիր	7.9	7.3	4.9	79.9
Գեղարքունիք	56.4	16.2	0.0	27.4
Լոռի	34.5	36.8	8.1	20.7
Կոտայք	22.5	18.0	18.0	41.4
Շիրակ	39.4	12.8	20.2	27.7
Սյունիք	62.7	15.3	5.1	17.0
Վայոց Ձոր	50.0	21.3	12.8	16.0
Տավուշ	60.5	27.9	4.7	7.0
Ընդամենը	24.1	14.2	7.7	54.1

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

*Գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը.* Ջարմանալի չէ, որ ոչ աղքատ տնային տնտեսություններն առավել մեծ հնարավորություններ ունեն ձեռք բերելու կամ վարձակալելու գյուղատնտեսական տեխնիկա, քան աղքատ տնային տնտեսությունները: Այսպես, ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունները գյուղատնտեսական տեխնիկայից օգտագործել են միայն սալ, այն էլ միայն 4.8%-ը և տրակտոր՝ 2.6%: Ընդհանուր առմամբ տարբեր տեսակի գյուղտեխնիկայի օգտագործման հնարավորություն են ունեցել ոչ աղքատ տնային տնտեսությունների 72%-ը: Հետագոտությանը նախորդող տեսերկու ամիսների ընթացքում գյուղտեխնիկա ունեցող տնային տնտեսությունների մեկ երրորդը ձեռք էր բերել տրակտոր, իսկ 13.9%-ը՝ մինի տրակտոր: Սակայն տնային տնտեսությունների կողմից տնօրինվող և օգտագործվող գյուղտեխնիկայի մեծ մասը բավական հին էր՝ վեց և ավելի վաղեմության (Աղյուսակ 4.5):

**Աղյուսակ 4.5. Հայաստան. Գյուղ տեխնիկայի առկայությունն ըստ օգտագործման տևողության տոկոսներով**

	Մինչև երկու տարի	3--5 տարի	6--10 տարի	Ավելի քան տասն տարի
Տրակտոր	13.3	9.3	20.5	56.9
Մինի տրակտոր	26.4	22.9	16.4	34.4
Բեռնատար ավտոմեքենա	14.0	17.5	6.7	61.8
Գութան	6.8	19.4	13.2	60.6
Կուլտիվատոր	0.0	35.2	29.6	35.2
Շարքացան	14.9	48.3	18.2	18.7
Խոտհնձիչ	11.7	11.7	0.0	76.7

	Մինչև երկու տարի	3--5 տարի	6--10 տարի	Ավելի քան տասն տարի
Հացահատիկային կոմբայն	18.9	0.0	18.9	62.1
Սալյակ	10.7	19.3	24.3	45.6
Ցիստեռն (կաթի, ջրի և այլն)	0.0	0.0	0.0	100.0
<b>Ընդամենը</b>	<b>12.9</b>	<b>16.1</b>	<b>15.5</b>	<b>55.6</b>

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցնելու հնարավորությունը. 2004թ.-ին գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրել են հետազոտված տնային տնտեսությունների մոտ 12 տոկոսը՝ գյուղական բնակավայրերից և մոտ 3%-ը այլ քաղաքային բնակավայրերից (Երևանում նման գործունեությամբ զբաղվելու համար վարկ վերցրած տնային տնտեսություն չի գրանցվել): Բանկից (ներառյալ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը) վարկ վերցրել էր տնային տնտեսությունների 60.8 տոկոսը, իսկ 34.7 տոկոսը՝ պարք էր վերցրել ընկերներից, ծնողներից կամ բարեկամներից (Աղյուսակ 4.6): Բանկից օգտվելու հնարավորությունը կտրուկ տարբերվում է ըստ աղքատության մակարդակի. այսպես բանկից վարկ վերցնողների 82.6 տոկոսը կազմում են ոչ աղքատ տնային տնտեսությունները, իսկ շատ աղքատները կազմել են ընդամենը 2.8 տոկոս:

**Աղյուսակ 4.6. Հայաստան. Գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվելու համար վարկ կամ պարտք վերցրած տնային տնտեսություններն ըստ աղքատության մակարդակի տոկոսներով**

	Ոչ աղքատներ	Աղքատներ	Ծայրահեղ աղքատներ
Վերցրել են վարկ կամ պարտք ընդամենը, այդ թվում	10.5	7.8	7.7
• Բանկից (ներառյալ կառավարության և միջազգային կազմակերպությունների ծրագրերով նախատեսված միջոցների հաշվին ստացված վարկերը)	65.1	45.5	50.0
• Ծնողներից	1.7	4.5	0.0
• Ընկերներից և բարեկամներից	31.5	45.4	50.0
• Այլ աղբյուրներ	1.7	4.6	0.0

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

*Ինչու՞ որոշ տնային տնտեսություններ չեն մշակում իրենց հողատարածքը:* 2004թ.-ին, հողատարածք ունեցող տնային տնտեսությունների 5.3 տոկոսը հողը չէր մշակում: Միջին հաշվով հողի մշակումը կազմակերպելու համար անհրաժեշտ գումարի ու ռոռզման հնարավորության բացակայությունը հանդիսանում են հողի չմշակման հիմնական պատճառները, համապատասխանաբար կազմելով մոտ 27% և 22% տրված պատասխանների շարքում (Աղյուսակ 4.7): Այլ կերպ ասած, լրացուցիչ ֆինանսավորման դեպքում ավելացած արտադրական ներուժը և ռոռզման հնարավորությունը կիսով չափ կկրճատեն չօգտագործվող հողի մասնաբաժինը: Ֆինանսական միջոցների բացակայությունը խոչընդոտ էր հիմնականում աղքատ բնակչության համար, այն շատ ավելի հազվադեպ էր նշվել ոչ աղքատ բնակչության կողմից:

**Աղյուսակ 4.7. Հայաստան. Հողի չմշակման պատճառներն ըստ քվանտիլային խմբերի, 2004թ.**

Հողը չմշակելու պատճառները	Ընդամենը	Սպառման ագրեգատի քվանտիլային խմբեր				
		Առաջին	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ
Շատ է հեռու	5.1	4.3	4.5	3.6	7.4	5.7
Հողը վատորակ է	16.0	17.1	16.6	13.6	14.1	19.7
Հողը չի ոռոգվում	21.8	19.6	24.0	23.8	19.9	20.8
Մշակելը ձեռնառու չէ	13.9	7.6	11.4	17.1	14.9	17.1
Մշակելու համար փող չկա	27.4	38.3	35.2	28.7	23.1	11.9
Հիվանդ է, ծեր է	10.7	10.9	5.1	8.4	14.4	15.7
Այլ	5.1	2.2	3.2	4.8	6.2	9.1
<b>Ընդամենը</b>	<b>100.0</b>	<b>16.2</b>	<b>21.1</b>	<b>22.9</b>	<b>22.0</b>	<b>17.8</b>

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

Հողի չմշակման հաջորդ երկու հիմնական պատճառները՝ հողի վատ որակը և ձեռնառու չլինելը, կազմել են ընդամենը պատասխանների 35 տոկոսը: Այդ դեպքերում տնային տնտեսություններն ավելի ռացիոնալ են մոտենում հարցին՝ չմշակելով հողը, եթե այն ոչ մի եկամուտ չի բերելու: Հետաքրքրական է, որ ամենաաղքատ քվանտիլային խմբում տնային տնտեսությունների միայն 7.6 տոկոսն է համարել, որ հողի մշակումը ձեռնառու չէ, մինչդեռ սպառման բաշխվածության վերին քվանտիլում նման պատասխան տվել են տնային տնտեսությունների 17 տոկոսը:

### 4.3. Եզրահանգումներ

1998/99 և 2004թթ.-ի ընթացքում աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում կրճատվել է 34.2 տոկոսով: Այն արտացոլել է սպառման մակարդակի աճը և վերջինիս անհավասար բաշխվածության կրճատումը: Աղքատության մակարդակը գյուղական բնակավայրերում նկատելիորեն ավելի ցածր է միջին հանրապետականից, այն նաև համեմատաբար ավելի մեղմ է և ավելի համասեռ, քան այլ բնակավայրերում:

2004թ.-ն աննախադեպ հաջող էր Հայաստանի գյուղատնտեսության համար: Գյուղատնտեսական արտադրության աճը, որն ուղղեկցվել է գյուղմթերք արտադրողների իրացման գների աճով, զգալիորեն ավելացրել են արտադրանքն ու արտադրողականությունը, գյուղական բնակչության եկամուտները և կրճատել աղքատության մակարդակը:

Գյուղատնտեսական գործունեությունը եկամտի ամենակարևոր աղբյուրն է գյուղաբնակ տնային տնտեսությունների համար: Ավելին, մեկ երրորդով ավելացել է գյուղատնտեսական գործունեությունը որպես եկամտի աղբյուր նշած տնային տնտեսությունների համամասնությունը, որը վկայում է շուկայում գյուղաբնակ տնային տնտեսությունների մեծ մասնակցության մասին: Բացի այդ, զգալիորեն կրճատվել է ոչ դրամական եկամուտների կարևորությունը գյուղաբնակ տնային տնտեսությունների համար՝ 1998/99թ.-ի 53 տոկոսից 2004թ.-ի 35.8 տոկոսի: Դա կարևոր փոփոխություն է, քանզի վկայում է գյուղատնտեսության դրամայնացման աճի մասին:

Գյուղաբնակ տնային տնտեսություններն ավելի մեծ հավանականություն ունեն աղքատ լինելու Հայաստանում, եթե փոքր արտադրական ներուժ ունեն. ապրում են բարձր աշխարհագրական դիրք ունեցող բնակավայրերում. չունեն հող կամ ունեն շատ փոքր հողակտոր, չունեն կամ ունեն շատ քիչ գյուղատնտեսական տեխնիկա և ֆինանսական միջոցներից օգտվելու հնարավորություններ: Ոռոգման համակարգից օգտվելը զգալի չի տարբերվում աղքատ, ծայրահեղ աղքատ և ոչ աղքատ տնային տնտեսությունների շրջանում:

## Գլուխ V. Աշխատանքի շուկան և աղքատությունը Հայաստանում

Աշխատանքի շուկան այն հիմնական ուղին է, որի միջոցով տնտեսական աճի ներգործությունն անդրադառնում է բնակչության աղքատության մակարդակի վրա, քանզի աշխատանքից ստացվող եկամուտը **թե՛ աղքատների և թե՛ «աղքատությանը մոտ»** կանգնած տնային տնտեսությունների կենսամակարդակը պայմանավորող որոշիչ գործոն է: Բնակչության զբաղվածության մակարդակը բարձրացնելով տնտեսական աճը, նպաստում է աղքատության մակարդակի նվազեցմանը՝ ապահովելով աշխատանքի բարձր արտադրողականություն և իրական բարձր աշխատավարձի մակարդակ, ինչը տեղի ունեցավ Հայաստանում 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում: Զբաղվածության մակարդակն ավելացավ 13 տոկոսով, գործազրկության մակարդակը նվազեց գրեթե 1/3-ով, զգալիորեն նվազեց թերզբաղվածությունը, իսկ իրական աշխատավարձը զգալիորեն ավելացավ՝ որը արտադրողականության աճի արդյունք էր: Չնայած նման դրական արդյունքներին, գործազրկության մակարդակը դեռ 19 տոկոս էր, իսկ գործազուրկներն առավել բարձր ռիսկ ունեին աղքատ լինելու: Ընդհանուր առմամբ իրավիճակն ամփոփ կարելի է ներկայացնել այսպես. մինչ այժմ գրանցվել են դրական տեղաշարժեր, սակայն դեռ կան դժվարին խնդիրներ, որոնք պետք ստանան իրենց լուծումը, քանի որ գործազրկությունը կրճատելու համար Հայաստանին հարկավոր են ոչ միայն նոր, այլև լավ վարձատրվող աշխատատեղեր:

### 5.1. Աշխատանքի շուկայի զարգացումները

**ՀՆԱ-ի, զբաղվածության և աշխատավարձերի փոփոխությունը.** Ըստ պաշտոնական վիճակագրության<sup>14</sup>, 1998/99-2004թթ.-ին Հայաստանում գրանցված կայուն տնտեսական աճը ապահովել է ոչ այնքան զբաղվածության մակարդակի աճով, որքան աշխատանքի արտադրողականության աճի հաշվին: Զբաղվածության մակարդակը շարունակել է աստիճանաբար նվազել տարեկան միջին հաշվով 3.5 տոկոսով (պատկեր 5.1): Զգալի ավելացել է միջին արտադրողականությունը, որը տարեկան կազմել է 13.2 տոկոս՝ գնահատված մեկ աշխատողին ընկնող ՀՆԱ-ի հաշվով: Նույն ժամանակահատվածում իրական աշխատավարձի աճը շատ չէր ետ մնում արտադրողականության աճի մակարդակից (12.9 տոկոս), հանգեցնելով աշխատուժի կայուն գնի ձևավորմանը: Այսպիսով տնտեսական աճի արդյունքներն արտացոլվել են ոչ այնքան զբաղվածության մակարդակի բարձրացման, որքան աշխատավարձի բարձրացման ցուցանիշներում. երևույթ, որը դիտարկվում է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի անցումային տնտեսությամբ շատ երկրներում: Այնուամենայնիվ, 2003-4թթ.-ին արտադրողականության աճի համեմատ իրական աշխատավարձն առավել արագ տեմպերով է աճել, որով պայմանավորվել է աշխատուժի գնի ավելացումը. զարգացում, որը կարող է բացասաբար անդրադառնալ աշխատուժի պահանջարկի վրա<sup>15</sup>:

Ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածությունը դարձել է հիմնականում մասնավոր հատվածի գերակայությունը: Նման փոփոխությունն ի սկզբանե արդյունք էր պետական ձեռնարկությունների սեփականաշնորհման, իսկ այնուհետև, 2000-ականների սկզբներից սկսած, մասնավոր հատվածի ձևավորման: Ընդհանուր առմամբ, ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածության մեջ մասնավոր հատվածի մասնաբաժինը 1995թ.-ի 18 տոկոսից ավելացել է, 2004թ.-ին կազմելով 60 տոկոս: Պաշտոնական վիճակագրության կողմից որպես զբաղվածության կառուցվածքի մեկ այլ


<sup>14</sup> Այն տարբերվում է վիճակագրական հետազոտությունների, հատկապես աշխատուժի և տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքների հիման վրա կատարված գնահատականներից: Այսպես օրինակ, ինչպես նշված է հաջորդ բաժնում, ՏՏԿԱՀ հիման վրա զբաղվածության մակարդակի գնահատականները նույն ժամանակաշրջանի համար ցույց են տալիս զբաղվածության զուտ մակարդակի աճ՝ վկայելով, որ տնտեսական աճը հանգեցրել է նաև նոր աշխատատեղերի ստեղծման:

<sup>15</sup> Այդ եզրահանգումները պետք է դիտարկել որոշակի վերապահումով. քանի որ պաշտոնական ՀՆԱ-ն իր մեջ ներառում է ոչ ֆորմալ հատվածի զգալի մասը, մինչդեռ աշխատավարձերի վերաբերյալ պաշտոնական տվյալները վերաբերում են հիմնականում ֆորմալ հատվածին: Ըստ ՀՀ ԱՎԾ-ի գնահատականի, 2000-2003թթ.-ին ոչ ֆորմալ հատվածը (գրանցված և չգրանցված) կազմել է ՀՆԱ-ի մոտ 30 տոկոսը:



նշանակալի փոփոխություն է գնահատվել արդյունաբերության և արտադրության տեսակարար կշռի անկումն ու ծառայությունների մասնաբաժնի ավելացումը: Վերջերս զգալի կրճատվել է կրթության և առողջապահության հատվածներում զբաղվածների համամասնությունը, հիմնականում այդ ոլորտներում իրականացվող բարեփոխումների արդյունքում, մինչև 1990-ականների իրական աշխատավարձն այդ ոլորտներում զգալի աճ է գրանցել: Վերջին հինգ տարիների ընթացքում զբաղվածությունը գյուղատնտեսության ոլորտում կայունացել է. 1990-ականների սկզբներին զբաղված կտրուկ աճից հետո, երբ ձեռնարկություններում աշխատատեղերի համատարած կրճատման արդյունքում դուրս մնացած աշխատուժը մասամբ անցավ գյուղատնտեսական գործունեության:

**Պատկեր 5.1. Հայաստան. Իրական ՀՆԱ, զբաղվածությունը և աշխատավարձը 1998 -2004թթ. (1998=100)**



Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ.

**Աշխատուժի կառուցվածքի փոփոխությունը.** 1998/99 և 2004թթ.-ին իրականացրած տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունների արդյունքները որոշակի դրական փոփոխություններ են գրանցել Հայաստանի աշխատանքի շուկայում (Աղյուսակ 5.1):

- **Նախ,** աշխատուժի մասնակցության մակարդակը (բնակչության տնտեսական ակտիվությունը), որպես աշխատանքի առաջարկի ամփոփ ցուցանիշ, նվազել է 1998/99թ.-ի 63 տոկոսից՝ 60.3 տոկոսի 2004թ.-ին: Այդ փոփոխությունը հիմնականում արտացոլում էր Հայաստանում աշխատանքի առաջարկի վրա մինչ այժմ ներգործող երկու գործոնների ազդեցությունը. որոնք ամենայն հավանականությամբ, կշարունակեն ազդել նաև ապագայում: Այդ գործոններն են. (i) ծնելիության ցածր մակարդակը, որը բավական ցածր է բնակչության լրիվ վերարտադրությունն ապահովելու համար անհրաժեշտ մակարդակից, և (ii) բնակչության մեծ արտահոսքը (ժամանակավոր և մշտական): Քանի դեռ արտագաղթի արդյունքում ստացվող օգուտը գերազանցում է արտագաղթի հետ կապված ծախսերը և քանի դեռ ընդունող (ռեցիպիենտ) երկրները, հատկապես Ռուսաստանը չեն ներդրել վարչական խիստ արգելքներ, բնակչության արտահոսքը հավանաբար դեռ կշարունակվի: Բացի նշված այդ երկու գործոններից, որոշ մարդիկ կարող է որոշել են ընդհանրապես դուրս գալ աշխատանքի շուկայից, իրենց համար կենսաապահովման այլ աղբյուրների ձևավորման հետևանքով:
- **Երկրորդ,** զբաղվածների թվաքանակը (16 և բարձր տարիքի բնակչություն) աճել է 142 հազար մարդով կամ 13.9 տոկոսով: Այդ գնահատականը տարբերվում է պաշտոնական վիճակագրության գնահատականից, ըստ որի զբաղվածների թվաքանակը՝ 1998թ.-ի համեմատ մոտ 20 տոկոսով նվազել է: Այդ տարբերությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ ի տարբերություն պաշտոնական տվյալների, տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության միջոցով հնարավոր է լինում հաշվառել ոչ ֆորմալ հատվածում զբաղվածության առավել զգալի մասը: ՏՏԿԱՀ արդյունքներով գնահատված զբաղվածության մակարդակը, որպես

աշխատանքային ռեսուրսների օգտագործման աստիճանը բնութագրող ամփոփ ցուցանիշ, աճել է 6 տոկոսով՝ 1998/99թ.-ին գնահատված 46 տոկոսից 2004թ.-ին կազմելով 48.7 տոկոս:

- *Երրորդ*, գործազուրկների ընդհանուր թվաքանակը կրճատվել է 100 հազար մարդով՝ գործազրկության մակարդակը 27 տոկոսից նվազեցնելով 19.3 տոկոսի

**Աղյուսակ 5.1. Հայաստան.** 16 և բարձր տարիքի բնակչության տնտեսական ակտիվության, զբաղվածության և գործազրկության մակարդակներն ըստ բնակավայրի տեսակի 1998/99-2004թթ. (տոկոսներով)

	Ընդամենը	Քաղաքային	Երևան	Այլ քաղաքային	Գյուղական
<b>Տնտեսական ակտիվության մակարդակը</b>					
1998/99թ.	63.0	56.3	55.0	57.6	72.7
2004 թ.	60.3	53.8	53.8	53.8	72.0
<b>Զբաղվածության մակարդակը</b>					
1998/99 թ.	46.0	30.4	28.4	32.3	68.5
2004 թ.	48.7	38.4	38.0	38.8	67.2
<b>Գործազրկության մակարդակը</b>					
1998/99 թ.	27.0	46.0	48.3	43.9	5.7
2004 թ.	19.3	28.7	29.4	27.9	6.7

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Դիտարկելով տնտեսական ակտիվությունն ըստ տարածաշրջանների ակնհայտ է, որ աշխատանքի շուկայի ցուցանիշներն առավելագույնը բարելավվել են քաղաքային բնակավայրերում և հատկապես մայրաքաղաք Երևանում: Հակառակը, նոր աշխատատեղերի ստեղծման հնարավորությունները գյուղական վայրերում սահմանափակ էին, ինչն արտացոլվել է զբաղվածության մակարդակի փոքր ինչ նվազման և գործազրկության մակարդակի ոչ մեծ աճի ցուցանիշներում:

Ըստ միջազգային չափանիշների, Հայաստանի աշխատանքի շուկան դեռ բնութագրվում է տնտեսական ակտիվության և զբաղվածության համեմատաբար ցածր և գործազրկության բարձր մակարդակներով<sup>16</sup>: Եթե տնտեսական ակտիվության մակարդակը գնահատվի ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մեթոդաբանության, համաձայն որի աշխատանքային տարիքի բնակչություն համարվում են 15-ից 64 տարեկան անձինք, ապա Հայաստանում տնտեսական ակտիվության մակարդակը կկազմի 65.9 տոկոս (Աղյուսակ 5.2): Այնուհանդերձ, այդ մակարդակը դեռ ցածր է՝ ՏՀԶԿ միջին մակարդակից (70 տոկոսից): ՏՀԶԿ երկրների համեմատ Հայաստանում տնտեսական ակտիվության ցածր մակարդակը պայմանավորված է կանանց մասնակցության ցածր աստիճանով (55.6 տոկոս՝ ՏՀԶԿ երկրների 60.1 տոկոս միջին ցուցանիշի համեմատ): Տղամարդկանց տնտեսական ակտիվության մակարդակը շատ մոտ է ՏՀԶԿ երկրների միջին մակարդակին, որը սակայն, պայմանավորված է Հայաստանում տղամարդկանց շրջանում գործազրկության բարձր մակարդակով: Ի տարբերություն տնտեսական ակտիվության մակարդակի ցուցանիշի, Հայաստանի զբաղվածության և գործազրկության մակարդակները համադրելի չեն զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների համապատասխան ցուցանիշների հետ: Զբաղվածության մակարդակը Հայաստանում զգալիորեն ցածր է, իսկ գործազրկության մակարդակը՝ զգալիորեն բարձր ՏՀԶԿ երկրներում այդ ցուցանիշների միջին մակարդակների համեմատ:

<sup>16</sup> Համաձայն Հայաստանում կիրառվող մեթոդաբանության, տնտեսական ակտիվության մակարդակը գնահատվում է 16 և բարձր տարիքի բնակչության հաշվով: Աշխատանքային տարիքի բնակչության սահմանումը տարբեր է յուրաքանչյուր երկրում:

**Աղյուսակ 5.2.** Տնտեսական ակտիվության, զբաղվածության և գործազրկության մակարդակներն ըստ սեռի, 2004թ. (15-64 տարեկան բնակչություն(տոկոսներով))

	Հայաստան	ՏՀԶԿ	ԵՄ-19
<b>Տնտեսական ակտիվություն</b>	65.9	70.1	69.9
Կին	55.6	60.1	62.2
Տղամարդ	78.9	80.3	77.7
<b>Զբաղվածության մակարդակ</b>	52.2	65.3	63.5
Կին	43.5	55.8	55.9
Տղամարդ	63.4	75.0	71.2
<b>Գործազրկության մակարդակ</b>	20.7	6.9	9.2
Կին	21.8	7.2	10.1
Տղամարդ	19.7	6.7	8.5

**Աղբյուրը.** ՏՏԿԱՀ 2004 և Տնտեսական համայնապատկեր (OECD Economic Outlook) 2005թ.

Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այլ երկրների համեմատ, որտեղ զբաղվածության մակարդակը սովորաբար տատանվում է 50-ից 70 տոկոսի միջակայքում, զբաղվածության մակարդակը Հայաստանում գտնվում է ԵԿԱ ցանկի ամենաստորին մասում: Այն շատ մոտ է Վրաստանի և Լեհաստանի զբաղվածության մակարդակներին (Աղյուսակ A5.1 վիճակագրական հավելվածում): Բացի գործազրկության բարձր մակարդակից, Հայաստանում զբաղվածության ցածր մակարդակը պայմանավորող երկու հիմնական գործոններն են՝ կանանց զբաղվածության ցածր մակարդակը (Աղյուսակ A5.2 վիճակագրական հավելվածում) և երիտասարդների՝ 16-24 տարեկանների զբաղվածության ցածր մակարդակը (Աղյուսակ A5.1 վիճակագրական հավելվածում): Երիտասարդների զբաղվածության մակարդակը Հայաստանում կրկնակի անգամ ցածր է զարգացած շուկայական տնտեսությամբ երկրների համեմատ: Գործազրկության մակարդակն ամենաբարձրերից է անցումային տնտեսությամբ երկրների շարքում, որտեղ այն տատանվում է 10-ից 16 տոկոս միջակայքում և առավել համադրելի է ԱՊՀ այլ երկրների հետ:

#### **Գործազրկության առանձնահատկությունները Հայաստանում**

(i) *Գործազրկությունը տևական բնույթ ունի* (Աղյուսակ 5.3): Տևական գործազրկության մակարդակը շատ բարձր է, սակայն այն նվազման միտում է գրանցել: Եթե 1998/99թ.-ին ամեն տաս գործազուրկներից իննը անգործ էր մեկ տարուց ավելի ժամանակահատվածում, ապա 2004թ.-ին մեկ տարուց ավելի անգործ էր ամեն տաս գործազուրկից վեցը: Ի տարբերություն անցումային տնտեսությամբ շատ երկրների, Հայաստանում տևական ժամանակով գործազուրկները հաճախ շատ ավելի բարձր կրթական մակարդակ ունեն, քան այլ գործազուրկներ և նրանց շրջանում շատ ցածր մասնաբաժին ունեն երիտասարդները: Գործազրկության տևական բնույթը կարող է հանգեցնել մարդկային կապիտալի կորստի, քանի որ ժամանակակից աշխատանքի շուկայում շատ արագ են փոփոխվում աշխատուժի որակավորման պահանջները և նախկին հմտությունները կարող են այլևս պահնջվող չլինել: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ աշխատանք գտնելու հավանականությունը նվազում է գործազրկության տևողությանը զուգահեռ, որը կարող է հանգեցնել աշխատանքի շուկայից մշտապես դուրս մնալուն և աղքատության բարձր ռիսկի: Աշխատանքային տարիքի շատ անձինք նշել են, որ հիասթափվել են աշխատանք որոնելուց և համոզված են, որ իրենց ունակություններին համապատասխան աշխատանք չեն գտնի («հիասթափված աշխատողի էֆեկտ» (discourage worker effect)<sup>17</sup>:

<sup>17</sup> ՏՏԿԱՀ ներկա հարցաշարը հնարավորություն չի ընձեռում տվյալներ հավաքագրել այդ էֆեկտը գնահատելու համար:

**Աղյուսակ 5.3. Հայաստան. Գործազրկության տևողությունը, 1998/99 և 2004թթ. (տոկոսներով)**

Գործազրկության տևողությունը	1998/99թ.	2004թ.
Մինչև մեկ ամիս	1.1	4.0
1-6 ամիս	7.2	19.6
7-12 ամիս	4.6	13.6
13-24 ամիս	87.2*	17.8
24 ամիս և ավելի		45.1

**Աղբյուրը.** SSԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Նշում.** \* Վերաբերում է 12 ամսից ավելի գործազրկությանը, գնահատվել է ըստ հարցաշարում հարցի շարադրանքի հիման վրա ստացված պատասխանների:

(ii) Հմտությունների անհամապատասխանությունը Հայաստանում գործազրկության հիմնական պատճառը չէ: Հմտությունների անհամապատասխանությունը գնահատվում է, երբ գործազուրկի հմտություններն ու կարողությունները համադրելով գործատուի կողմից պահանջվող հմտությունների կառուցվածքի հետ (այսինքն՝ առկա աշխատանքի, թափուր աշխատատեղերի հետ): SSԿԱՀ ներկա հարցաշարը հնարավորություն չի ընձեռում տվյալներ հավաքագրել գործազուրկների հմտությունների, կարողությունների վերաբերյալ (նման տվյալներ ստացվում են միայն զբաղվածների մասին): Ուստի, գործազուրկների կրթական մակարդակը դիտարկվել է որպես նրանց հմտությունը գնահատող ցուցանիշ: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 5.4-ում ներկայացված տվյալները, հմտությունների անհամապատասխանության համաթիվը (ինդեքսը) կամ ավելի ճիշտ «կրթական մակարդակի անհամապատասխանության» համաթիվը Հայաստանում ցածր է, և այն 1998/99թ.-ի 9.7 տոկոսից նվազել է՝ 2004թ.-ին կազմելով 5.1 տոկոս<sup>18</sup>: 5.1 տոկոս համաթիվը ցույց է տալիս, որ գործազուրկ բոլոր անհատների 5.1 տոկոսը 2004թ.-ին աշխատանք չի գտել հմտությունների անհամապատասխանության պատճառով, ենթադրելով, որ թափուր աշխատատեղերի քանակը հավասար է աշխատանք փնտրողների թվաքանակին:

**Աղյուսակ 5.4. Հայաստան. Զբաղվածության և գործազրկության մակարդակն ըստ կրթության մակարդակի, 1998/99-2004թթ. (տոկոսներով)**

Կրթական մակարդակ	1998/99թ.			2004թ.		
	Զբաղվածություն	Գործազրկություն	Առաջարկ պահանջարկ	Զբաղվածություն	Գործազրկություն	Առաջարկ պահանջարկ
Տարրական	5.3	1.5	-3.8	1.7	0.2	-1.5
Թերի միջնակարգ	11.0	8.2	-2.8	12.0	8.5	-3.5
Ընդհանուր միջնակարգ	43.1	51.4	8.3	38.8	42.8	4.0
Միջնակարգ մասնագիտական	20.2	21.6	1.4	25.9	27.1	1.1
Բարձրագույն կրթություն	20.4	17.4	-3.1	21.6	21.5	-0.1

**Աղբյուրը.** SSԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Այդ համաթիվը զգալիորեն ցածր է Լիտվայի, Բուլղարիայի և Խորվաթիայի համեմատ (Ռուտկովսկի 2003a, 2003b, 2003c): Համաձայն Հայաստանում 2004թ.-ին զբաղված 19.3 տոկոս գործազրկության մակարդակի, հմտությունների անհամապատասխանության գնահատականը ցույց է տալիս, որ Հայաստանում գործազրկության մակարդակի միայն մեկ տոկոսային կեսն է պայմանավորված հմտությունների անհամապատասխանությամբ: Չնայած Աղյուսակ 5.4-ում ներկայացված տվյալները հմտությունների անհամապատասխանության մոտավոր գնահատական են, ակնհայտ է դառնում, որ

<sup>18</sup> Կրթության յուրաքանչյուր մակարդակի համար հաշվարկված հմտության անհամապատասխանությունը պահանջարկի նկատմամբ «առաջարկի գերազանցման» գումարն է: Կրթության յուրաքանչյուր մակարդակի «պահանջարկի նկատմամբ գերազանցող առաջարկը» զբաղվածության և գործազրկության մեջ այդ կրթական մակարդակների տեսակարար կշիռների տարբերությունն է:

գործազուրկների կրթական մակարդակը նրանց գործազուրկ լինելու հիմնական պատճառը չէ: Պարզվում է, որ առավել բարձր հմտություններով աշխատուժի պահանջարկը բավական համապատասխանում է բարձր հմտություններով աշխատուժի առաջարկին:

(iii) Այլ հավասար պայմաններում առանց կրթության կամ կրթական ցածր մակարդակով անձինք, երիտասարդները, կանայք, միայնակ ծերերը, հաշմանդամներն ու քաղաքաբնակներն, առավել բարձր հավանականություն ունեն գործազուրկ լինելու<sup>19</sup>:

Կրթության մակարդակի ցուցանիշների շարքում միայն բարձրագույն կրթությունը զգալի ներգործություն ուներ գործազուրկության մակարդակի վրա՝ այլ հավասար պայմաններում: Բարձրագույն կրթությամբ անձինք 5 տոկոսով նվազ հավանականություն ունեին գործազուրկ լինելու՝ թերի միջնակարգ կամ կրթական ավելի ցածր մակարդակ ունեցողների համեմատ:

Բավական նկատելի կապ կար տարիքի և գործազուրկության միջև: Երիտասարդները (16-ից 24 տարեկանները) այլ հավասար պայմաններում, առավել բարձր հավանականություն ունեին գործազուրկ լինելու: 2004թ.-ին գործազուրկության մակարդակը երիտասարդների շրջանում 43 տոկոս էր՝ բավական բարձր անցումային երկրներում այդ խմբի գործազուրկության միջին մակարդակից (15 տոկոս, ԱՄԿ (ILO), 2004թ.): Եթե գործազուրկության ընդհանուր մակարդակը զգալիորեն նվազել է 1998/99 և 2004թթ.-ի միջև (29 տոկոսով) երիտասարդների շրջանում գործազուրկության մակարդակը նվազել է միայն 6 տոկոսով (Ադյուսակ A5.3, վիճակագրական հավելվածում): Սա կրկին անգամ ընդգծում է, որ Հայաստանի աշխատանքի շուկայի հիմնական մտահոգություններից մեկը երիտասարդների շրջանում համեմատաբար բարձր գործազուրկությունն է:

Ամուրիներն առավել մեծ հավանականություն ունեին գործազուրկ լինելու, քան ամուսնացածները: Կանայք 1.7 տոկոսով ավելի բարձր հավանականություն ունեին գործազուրկ լինելու, այլ հավասար պայմաններում (*ceteris paribus*): Հաշմանդամները (հաշմանդամության 1-3 կարգեր) գործազուրկ լինելու բարձր ռիսկ ունեին: Տնային տնտեսությունում լրացուցիչ (երկրորդային) եկամուտ վաստակողները՝ հատկապես գլխավորի երեխաները, առավել բարձր հավանականություն ունեին գործազուրկ լինելու, քան հիմնական վաստակողը՝ տնային տնտեսության գլխավորը, մման իրավիճակ դիտարկվել է նաև Բուլղարիայում (տե՛ս Ռուտկովսկի, 2003b):

Քաղաքաբնակներն առավել բարձր հավանականություն ունեին գործազուրկ լինելու. գյուղաբնակները՝ քաղաքաբնակների համեմատ 22 տոկոսով նվազ հավանականություն ունեին գործազուրկ լինելու: Տարածաշրջանային ցուցանիշները ցույց են տալիս, որ զգալի տարածաշրջանային տարբերություններ կան գործազուրկ լինելու հավանականության մեջ Շիրակի մարզում՝ Հայաստանի ամենաաղքատ տարածաշրջանում, գործազուրկության ռիսկն ամենաբարձրն է, ի տարբերություն Տավուշի և Արմավիրի մարզերի, որտեղ գործազուրկության ռիսկն ամենացածրն էր:

Հայաստանում գործազուրկության մակարդակի տարածաշրջանային մման տարբերությունները բացահայտում են աշխատուժի համեմատաբար տարածքային ցածր շարժունակությունը և երկրի շատ բնակավայրերում ներդրումների անբավարար մակարդակով: Թերզարգացած բնակարանային շուկան և թույլ տրանսպորտային կապը, որը դժվարացնում և ժամանակատար է դարձնում որոշ շրջանների հետ կապը, կարող է նպաստել աշխատուժի տարածքային համեմատաբար ցածր շարժունակությանը: Գործազուրկները հաճախ չեն ցանկանում տեղափոխվել աշխատատեղերի առկայության բարձր հավանականությամբ

<sup>19</sup> Առանձին անհատական բնութագրիչների կապը գործազուրկ լինելու հավանականության հետ գնահատելու համար կիրառվել է պրոքիտ մոդել: Այդ մոտեցումը հնարավորություն է տալիս գնահատելու տարբեր փոփոխականների գուտ (այլ փոփոխականներից անկախ) ներգործությունը գործազուրկ լինելու հավանականության վրա: Կախյալ փոփոխականի արժեքը հավասար է մեկի, եթե անձը գործազուրկ է և զրո, եթե գործազուրկ չէ: Բացատրող կամ անկախ փոփոխականները ներառում են անհատների ժողովրդագրական և կրթության մակարդակի ցուցանիշները (սեռը, տարիքը, ամուսնական կարգավիճակը, հաշմանդամության կարգը, ինչպես նաև տարածաշրջանը և բնակավայրը: (գնահատված արդյունքները տե՛ս ադյուսակ A5.4 վիճակագրական հավելվածում):

շրջաններ՝ տեղափոխման հետ կապված ծախսերով, հարմար գնով բնակարան գտնելու և սոցիալական աջակցության ծրագրերից դուրս մնալու մտավախությամբ պայմանավորված<sup>20</sup>։ Հայաստանում աշխատուժի շարժունակության բարելավումը ցանկալի է աշխատուժի առավել նպատակահարմար բաշխման, գործազրկության մակարդակի կրճատման և արդյունքում աղքատության մակարդակի էլ ավելի նվազեցման համար։

#### **Ներդիր 5.1: Աշխատանքի շուկայի պաշտոնական վիճակագրությունը Հայաստանում**

*Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը 2004թ.-ին կազմել է 1196.5 հազար մարդ, որոնց 90.4 տոկոսը կամ 1081.7 հազար մարդ զբաղված են եղել տնտեսության տարբեր ճյուղերում։ Նրանց մեծ մասը՝ մոտ 79 տոկոսը, զբաղված է եղել մասնավոր հատվածում։*

*Աշխատանք փնտրող անձանց թվաքանակը հանրապետությունում 2005թ.-ի հունվարի 1-ի դրությամբ, ըստ «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալության տվյալների, կազմել է 142,7 հազար մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 4.0%-ով։ Նրանց 76.1%-ը կամ 108.6 հազարը գործազուրկ էին՝ նախորդ տարվա 118.7 հազարի փոխարեն, իսկ մնացածը զբաղված լինելով, դիմել են զբաղվածության գործակալությանը ցանկանալով փոխել իրենց աշխատանքը կամ գտնել լրացուցիչ աշխատանք։ Կանանց տեսակարար կշիռը շարունակում է մնալ բարձր և կազմել է գործազուրկների թվաքանակի 70.3%-ը կամ 76.3 հազ.մարդ։ Գործազուրկների մեջ մեծ է քաղաքային բնակչության տեսակարար կշիռը՝ շուրջ 93.7%։*

*Գործազրկության մակարդակը հանրապետությունում կազմել է 9.6%՝ տարեկգրի 10.0%-ի փոխարեն։ Գործազրկության մակարդակը միջին հանրապետական ցուցանիշից բարձր է միայն Շիրակի՝ 21.7%, Սյունիքի՝ 21.1%, Լոռու՝ 18.7%, մարզերում։*

*Ըստ կրթական մակարդակի գործազուրկների կազմում՝ 2005թ. հունվարի 1-ի դրությամբ մեծ տեսակարար կշիռ ունեին ընդհանուր միջնակարգ կրթություն ունեցողները՝ 56.0%, և միջին մասնագիտական կրթություն ունեցողները՝ 25.5%։ Բարձրագույն կրթություն ունեցողները կազմել են գործազուրկների ընդհանուր թվաքանակի 13.3%-ը, իսկ թերի միջնակարգ կրթություն ունեցողները՝ 5.2%-ը։ Գործազուրկների մեծ մասը՝ 79,1%-ն աշխատանքից ազատվել էին սեփական նախաձեռնությամբ, 18,8%-ը՝ գործատուի կողմից, 1,5%-ը աշխատանքային կարգապահության խախտման պատճառով։ Առաջին անգամ աշխատանք փնտրողները կազմել են գործազուրկների 0.6%-ը։*

*Գործազուրկների տարիքային ցեղը դիտարկվող ժամանակահատվածում հետևյալն է. մինչև 18 տարեկանները կազմել են գործազուրկների 0,1%-ը, 18-ից 22 տարեկանները՝ 1.6%-ը, 22-30 տարեկանները՝ 18,6%-ը, 30-50 տարեկանները՝ 67,2%-ը, իսկ 50-ից բարձր տարիքի անձինք՝ 12,6%՝*

*Շարունակել է բարձր մնալ մեկ տարուց ավելի գործազուրկի կարգավիճակում գտնվողների թվաքանակը (գործազուրկների 82.2%-ը)։ 6-12 ամիս գործազուրկի կարգավիճակում գտնվողները կազմել են 9.9%-ը, 3-6 ամիս՝ 5.0%-ը, մինչև 3 ամիս՝ 2.9%-ը։*

*Զանգվածային ազատամներ 2004թ.-ին հիմնականում եղել են արդյունաբերության և կրթության ոլորտներում։ Կրթական համակարգում՝ կրթության որակի և համապատասխանության վարկային ծրագրի շրջանակներում, կրճատվել են 5980 մանկավարժներ (գործընթացը շարունակվել է)։ Կրթության ոլորտում այդ ծրագրով ազատված մանկավարժներից զբաղվածության տարածքային կենտրոններ են դիմել 1734-ը։ Սկսվել են «Դպրոցական աշխատակազմի օպտիմալացման և սոցիալական աջակցության» ենթածրագրով նախատեսված աշխատանքները։ Ենթածրագրի իրականացման ընթացքում 2005թ.-ի հունվարի 1-ի դրությամբ 327 ուսուցչի տրվել է լրացուցիչ դրամական աջակցություն՝ 30.4 մլն դրամի չափով։ Կրճատված ուսուցիչներին այլ վայրում նոր աշխատանք գտնելու համար տրամադրվել է օժանդակություն՝ փոխհատուցելով տեղափոխման ծախսերը, կազմակերպվել են մասնագիտական ուսուցման ծրագրեր՝ վերամասնագիտացման կամ որակավորման բարձրացման նպատակով, տրամադրվել է ֆինանսական աջակցություն ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելու և սեփական գործ հիմնելու դեպքում՝ ձեռնարկության պետական գրանցման համար, տրամադրվել է ֆինանսական աջակցություն դպրոցական աշխատակազմի*

<sup>20</sup> Համաձայն ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա կատարված գնահատականների, աղքատության մակարդակի կրճատման միայն շատ չնչին մասն է պայմանավորված բնակչության միջ տարածաշրջանային միգրացիայով։

օպտիմալացման արդյունքում կրճատված 50 տարեկան և բարձր տարիքի ուսուցիչներին՝ 6 ամսվա միջին աշխատավարձի չափով:

Տարվա ընթացքում զանգվածային ազատման ենթակա աշխատողների թվաքանակի մասին տեղեկություններ է հաղորդել 61 գործատու: Ազատման ենթակա անձանց թվաքանակը կազմել է 3348, որոնց 68.3%-ը եղել են բանվորներ: 2004 թ. դեկտեմբեր ամսվա ընթացքում, համաձայն «Զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալների, 158 գործատուի աշխատուժի նկատմամբ պահանջարկը կազմել է 865 մարդ (աշխատատեղ), նրանցից 195-ը՝ ծառայողական, 670-ը՝ բանվորական:

2004թ.-ի ընթացքում Հայաստանի «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության կողմից իրականացվել են մի շարք ծրագրեր, գրանցված գործազուրկներին տրամադրվել է հիմնականում դրամական աջակցություն, և աշխատանք փնտրողներին՝ աջակցություն աշխատանք գտնելու գործում: ՀՀ պետական բյուջեի միջոցներով կազմակերպվել են աշխատանքներ, որոնք մատչելի են եղել բոլոր ցանկացողների համար՝ տրամադրելով ժամանակավոր աշխատանք և լրացուցիչ վաստակի հնարավորություն: Տարվա ընթացքում գործազրկության նպաստ է նշանակվել 7.2 հազ. գործազուրկի, դրամական օգնություն՝ 23.9 հազար աշխատանք փնտրող չգրառված անձի (2004թ. գործազրկության բազային նպաստի չափը կազմել է 3900 դրամ): 2004թ.-ի դեկտեմբերի 2-ի ՀՀ Կառավարության N1665-Ն որոշմամբ գործազրկության բազային նպաստի չափը սահմանվել է 7800 դրամ՝ հանրապետության նվազագույն աշխատավարձի 60%-ի չափով: 2004թ.-ի ընթացքում զբաղվածության պետական ծրագրով մասնագիտական ուսուցում է կազմակերպվել 512 գործազուրկի և 50 աշխատանք փնտրող չգրառված հաշմանդամի համար՝ համակարգչային գործավարի, հաշվապահի, դերձակի, գորգագործի, վաճառողի մասնագիտություններով, ինչպես նաև իրականացվել են քաղաքացիական ծառայության դասընթացներ: Ուսուցում անցած գործազուրկներից աշխատանքի են տեղավորվել 267-ը, հաշմանդամներից՝ 30-ը:

Հանրապետության 37 ՋՏԿ-ներում շուրջ 10102 աշխատանք փնտրող չգրառված անձ մասնակցել է ՄԱԿ-ի պարենային ծրագրի շրջանակներում իրականացվող «Սնունդ ուսուցման դիմաց» ծրագրին՝ «Շուկայական տնտեսություն, փոքր բիզնես, քաղաքացիական իրավունք» մասնագիտությամբ դասընթացներին: «Նպաստ աշխատանքի դիմաց» ծրագրով հասարակական աշխատանքների կատարման համար ծախսվել է 10755/507110 մարդ-օր:

## 5.2. Աշխատավարձը Հայաստանում

**Աշխատավարձն ու արտադրողականությունը.** Աշխատանքի բարձր արատադրողականություն Հայաստանում ապահովվեց ձեռնակությունների սեփականաշնորհման և վերակազմավորման գործընթացի ժամանակ, երբ հին, ոչ արդյունավետ աշխատանքները փոխարինվեցին նոր, առավել արդյունավետ աշխատանքներով: Ֆորմալ աշխատանքների արտադրողականության արագ աճը հանգեցրեց իրական աշխատավարձի ավելացմանը: 1998-2004թթ.-ի ընթացքում իրական աշխատավարձը ֆորմալ հատվածում՝ արտադրողականության աճի համեմատ, ավելի դանդաղ է ավելացել: Սակայն, վերջին մի քանի տարիների ընթացքում իրական աշխատավարձի աճը գերազանցել է արտադրողականության աճը՝ հանգեցնելով աշխատուժի միավորի գնի աճին, որը աշխատուժի պահանջարկի առումով, կարող է բացասական հետևանք ունենալ (Համաշխարհային բանկ, 2005b):

**Աղյուսակ 5.5. Հայաստան. Աշխատանքի արտադրողականության և իրական աշխատավարձի միջին տարեկան աճի տեմպն ըստ տնտեսության ճյուղերի 1999-2004թթ., 1998=100 (տոկոսներով)**

	Աշխատանքի արտադրողականություն	Իրական աշխատավարձ	Տարբերությունը
Ընդամենը տնտեսությունում	13.2	12.9	0.3
Արդյունաբերություն	16.4	16.1	0.3
Գյուղատնտեսություն	7.6	17.0	-9.4
Շինարարություն	34.0	8.3	25.7
Տրանսպորտ և կապ	8.2	9.5	-1.3
Առևտուր	15.2	7.2	8.0
Այլ ծառայություններ	12.5	...	...

Աղբյուրը. ՀՀ ԱՎՃ

Աղյուսակ 5.5-ում ներկայացված տվյալները բավական զգալի տարբերություններ են բացահայտում տնտեսության տարբեր ճյուղերում իրական աշխատավարձի և արտադրողականության մակարդակի աճի միջև: Իրական աշխատավարձն առավել բարձր տեմպով ավելացել է գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտներում: Սակայն, գյուղատնտեսության ոլորտում գրանցված աշխատավարձի վերաբերյալ տվյալները հարկ է դիտարկել որոշ վերապահումով, քանզի դրանք վերաբերում են գյուղատնտեսության մեջ զբաղված վարձու աշխատողների շատ փոքր հատվածին, այսինքն միայն աշխատավարձ ստացողներին և չեն ներառում փոքր և գեր փոքր չափի ձեռնարկությունները: Աշխատանքի արտադրողականությունը զգալիորեն ավելացել է շինարարության, արդյունաբերության և առևտրի ոլորտներում: Ընդ որում, շինարարության և առևտրի ոլորտներում աշխատանքի արտադրողականության աճը գերազանցել է իրական աշխատավարձի աճին:

***Աշխատավարձերի բաշխվածության անհավասարությունը.*** Հայաստանում աշխատավարձերի բաշխվածության անհավասարությունը՝ գնահատված Ջինիի գործակցով, բավական բարձր է անցումային տնտեսությամբ շատ այլ երկրների համեմատ (Ռուսկոլսկի և ուրիշներ, 2005թ.): Բայց այն զգալիորեն նվազել է 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում՝ 0.438-ից 0.37-ի (Աղյուսակ 4.7): Նման միտումը հիմնականում կարող է պայմանավորված լինել աշխատավարձերի բաշխվածության ամենաբարձր խմբերում աշխատավարձերի միջև եղած տարբերությունների փոքրացման, որը հակառակ պատկերն ունի անցումային տնտեսությամբ շատ երկրների համեմատ, որտեղ աշխատավարձերի տարբերությունը ավելի է մեծանում բաշխվածության բարձր դեցիլային խմբերում՝ բարձր որակավորում ունեցող աշխատողների բարձր աշխատավարձերի հաշվին: Հայաստանում միջին աշխատավարձ ստացողների և բարձր աշխատավարձ ստացողների միջև աշխատավարձերի բաշխվածության անհավասարությունը բավական խորացել է՝ վերին դեցիլային խմբի աշխատավարձի հարաբերությունը մեղիան դեցիլային խմբի աշխատավարձի նկատմամբ (P90/P50), մինչդեռ ցածր աշխատավարձ ստացողների և մեղիան աշխատավարձ ստացողների աշխատավարձերի միջև տարբերությունը շատ փոքր է՝ (P10/P50): Հակառակը, աշխատավարձի տարբերությունը բարձր աշխատավարձ ստացողների՝ վերին դեցիլի և ցածր աշխատավարձ ստացողների՝ ստորին դեցիլի միջև (P90/P10) նվազել է 1998/99-2004 ընթացքում: Այս հարաբերությամբ գնահատվող աշխատավարձերի անհավասարության գործակիցը շատ ավելի համադրելի է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների ցուցանիշների հետ, քան ԱՊՀ երկրների համապատասխան ցուցանիշների հետ, որտեղ աշխատավարձերի անհավասարության աստիճանը շատ ավելի բարձր է (Ռուսկոլսկի և ուրիշներ, 2005թ.):

2004թ.-ին ամսական աշխատավարձի սանդղակի ամենաստորին խմբում գտնվող աշխատողի աշխատավարձը կազմել է մեղիան աշխատավարձի 43 տոկոսը, ինչը վկայում է վերջինիս ճկունության բարձր մակարդակի մասին: Այդ հարաբերության արժեքն ավելի ցածր է անցումային տնտեսությամբ շատ երկրների համեմատ, որտեղ այն տատանվել է 50 տոկոսից՝ (Բուլղարիա (Կոլև, 2002թ.) և Մոնտենեգրո (Քրստիչ, 2004թ.)) 60 տոկոսի (Լիտվա (Ռուսկոլսկի, 2003a)) սահմաններում: Միևնույն ժամանակ, Հայաստանում բոլոր աշխատողների 23 տոկոսի աշխատավարձը մեղիան աշխատավարձի երկու երրորդից ցածր է եղել (ցածր աշխատավարձ ստացողներ), ինչը նշանակում է, որ ցածր աշխատավարձ ստացողների տեսակարար կշիռը բավական բարձր է: Իսկ եկամտի բարձր անհավասարությամբ ՏՀԶԿ երկրներում ցածր աշխատավարձ ստացողների համամասնությունը 20 տոկոսը չի գերազանցել (Ռուսկոլսկի, 1999թ.): Ցածր աշխատավարձով աշխատատեղերի համեմատաբար բարձր տեսակարար կշիռը ենթադրում է, որ աշխատանքի հնարավորություններ կան հմտության ցածր մակարդակ և քիչ աշխատանքային փորձ ունեցողների համար, ինչպես նաև կարող է պայմանավորված լինել պետական երթակառուցվածքներում շինարարության «վերելքով»: Հարկ է նշել, որ ցածր աշխատավարձ ստացողների համամասնությունը նվազել է 1998/99-2004թթ.-ի ընթացքում, չնայած ցածր աշխատավարձ ստացողների թվաքանակն ավելացել է և՛ պետական և՛ մասնավոր հատվածներում: Դա հետևանք է պետական և մասնավոր հատվածների միջև զբաղվածության կառուցվածքի փոփոխության՝ զբաղվածությունը զգալիորեն ավելացել է մասնավոր հատվածում, որտեղ պետական հատվածի համեմատ, ցածր աշխատավարձ ստացողների համամասնությունը բավական ցածր է:



**Աղյուսակ 5.6. Հայաստան. Աշխատավարձերի ամփոփ բաշխվածությունը, 1998/99 և 2004թթ.**

	Ամսական աշխատավարձ, 1998/99թ.			Ամսական աշխատավարձ, 2004թ.			Ժամավճար, 2004թ.		
	Ընդա մենը	Պետա կան	Մասն ավոր	Ընդամ ենը	Պետա կան	Մասնա վոր	Ընդամ ենը	Պետա կան	Մասնա վոր
P10/P50	0.50	0.48	0.35	0.43	0.44	0.38	0.43	0.42	0.43
P90/P50	3.00	2.50	3.00	2.33	2.22	2.13	2.33	2.26	2.23
P90/P10	6.01	5.21	8.57	5.38	5.00	5.67	5.44	5.36	5.20
Ջինիի գործակիցը	0.438	0.405	0.498	0.370	0.356	0.357	0.382	0.360	0.405
Ստանդարտ սխալ	(1.2)	(1.0)	(3.4)	(0.7)	(0.6)	(1.2)	(1.1)	(0.6)	(2.3)
<b>Ցածր և բարձր աշխատավարձերի մասնաբաժինը</b>									
Ցածր աշխ.վարձ, %	26.7	28.9	9.8	23.3	29.7	12.8	28.1	31.0	22.4
Բարձր աշխ.վարձ, %	28.7	25.4	54.5	29.8	22.3	41.2	26.1	24.3	29.2

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Նշում.** P10/P50 (P90/P50) ցույց է տալիս ամենաստորին (ամենավերին) դեցիլներում ստացվող աշխատավարձերի հարաբերությունը մեղիան դեցիլի նկատմամբ, իսկ P90/P10 դեցիլային հարաբերությունը (Decile ratio) ամենավերին դեցիլի հարաբերությունն է ամենաստորին դեցիլին: Ցածր աշխատավարձ է համարվել մեղիան աշխատավարձի երկու երրորդից ցածր վաստակը: Բարձր աշխատավարձ է համարվել մեղիան աշխատավարձը 1.5 անգամից ավել գերազանցող վաստակը: Ցածր (բարձր) աշխատավարձ ստացողների տոկոսը գնահատվել է բոլոր վարձու աշխատողների կազմում ըստ նրանց ունեցած մասնաբաժնի:

Միևնույն ժամանակ, Հայաստանում ամսական աշխատավարձի սանդղակի ամենավերին խմբում գտնվող աշխատողների աշխատավարձը 2004թ.-ին գրեթե կրկնակի անգամ գերազանցել է մեղիան աշխատավարձի չափը, որը բավական համադրելի է անցումային տնտեսությամբ շատ այլ երկրների հետ: Աշխատողների մոտ 30 տոկոսի աշխատավարձն ավելի քան 1.5 անգամ գերազանցել էր մեղիան աշխատավարձը (բարձր աշխատավարձ ստացողներ): Այդ ցուցանիշն ավելի բարձր է եղել Հունգարիայի, Լեհաստանի կամ Սլովենիայի համեմատ, որտեղ այն կազմել է մոտ 20 տոկոս:

Ինչպես և անցումային տնտեսությամբ այլ երկրներում, մասնավոր հատվածում աշխատավարձն առավել անհավասար է բաշխվել, քան պետական հատվածում: 2004թ.-ին դեցիլային հարաբերությունը (ամենավերին դեցիլի աշխատավարձի հարաբերությունն ամենաստորին դեցիլին) 2004թ.-ին կազմել է 5.7՝ մասնավոր հատվածում և 5՝ պետական հատվածում: Մյուս կողմից, Ջինիի գործակիցը երկու հատվածներում էլ ցույց է տալիս միատեսակ բաշխվածություն: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Ջինիի գործակիցը գնահատում է անհավասարությունը ողջ սանդղակի կտրվածքով, ուստի բոլոր տոկոսային խմբերում՝ ի տարբերություն դեցիլային հարաբերության, այդ գործակցի արժեքի վրա բավական մեծ ներգործություն ունի բաշխվածության ձևը: Հակառակը, ժամավճարի պարագայում հաշվարկված Ջինիի գործակիցը մասնավոր հատվածում նկատելիորեն ավելի բարձր անհավասարություն է ցույց տալիս՝ պետական հատվածի համեմատ: Մասնավոր հատվածն առավել շահեկան դիրք ուներ թե՛ ցածր և թե՛ բարձր աշխատավարձ ապահովող աշխատատեղերի մասնաբաժնով՝ իրավիճակ, որը բավական մասն է անցումային տնտեսությամբ շատ երկրների: Մասնավոր հատվածում աշխատողների 12.8 տոկոսն է ստացել ցածր աշխատավարձ, մինչդեռ պետական հատվածում ցածր աշխատավարձ ստացողները կազմել են 29.7 տոկոս: Նմանապես, եթե մասնավոր հատվածը բարձր աշխատավարձ ապահովել էր աշխատողների 41.2 տոկոսին, ապա պետական հատվածում բարձր աշխատավարձ ստացողները կազմել են 22.3 տոկոս:

Համաձայն վերը ներկայացված արդյունքների կարելի է եզրակացնել, որ աշխատանքի շուկայի հարաբերականորեն բարձր ճկունությունը՝ պայմանավորված ցածր աշխատավարձով

աշխատատեղերի բարձր տեսակարար կշռով, կարող էր Հայաստանում աղքատության մակարդակի կրճատմանը նպաստող գործոններից համարվել: Շատ մարդկանց համար ցածր արտադրողականությամբ և ցածր աշխատավարձ ապահովող աշխատատեղերը թերևս աղքատության շեմը հաղթահարելու միջոց են եղել, քանզի ցածր աշխատավարձ ստացող ամեն երեք աշխատողից երկուսը կարողացել են հաղթահարել աղքատության շեմը (տե՛ս հաջորդ բաժինը):

***Հայաստանում մասնավոր և պետական հատվածներում աշխատավարձերի չափը պայմանավորող գործոնները*<sup>21</sup>**

*Աշխատավարձը բարձրագույն կրթության դեպքում.* Եթե մասնավոր հատվածում առավել բարձր աշխատավարձ ստանում են միջնակարգ մասնագիտական և բարձրագույն կրթություն ունեցողները, ապա պետական հատվածում բարձր աշխատավարձ ստանում են միայն բարձրագույն կրթություն ունեցող անձինք: Մասնավոր հատվածում բարձրագույն կրթություն ունեցող աշխատողների աշխատավարձն, այլ հավասար պայմաններում, 63 տոկոսով ավելի էր՝ միջնակարգ և ցածր կրթություն ունեցողների համեմատ: Հակառակը, պետական հատվածում այդ տարբերությունը կազմել է 48 տոկոս: Նման ցուցանիշները համադրելի են անցումային տնտեսությամբ այլ երկրների համապատասխան ցուցանիշների հետ, որտեղ ևս մասնավոր հատվածում առավելությունը տրվում է բարձրագույն կրթությանը (Ռուտկովսկի և ուրիշներ, 2005թ.): Ստացվում է, որ բարձրագույն կրթություն ունեցողները և մասամբ էլ միջնակարգ մասնագիտական կրթությամբ անձինք ավելի շկենսունակ են անցումային տնտեսության ժամանակ:<sup>22</sup>

*Աշխատանքային ցածր եկամուտ ապահովող տնտեսության ճյուղերը.* Մեկականության երկու ձևերում էլ գյուղատնտեսությունն, այլ հավասար պայմաններում, ամենացածր աշխատանքային եկամուտ ապահովող ճյուղն է: Մասնավոր հատվածում գյուղատնտեսության մեջ զբաղված աշխատողների աշխատավարձը 21 տոկոսով ցածր է, քան մասնագիտական ծառայությունների դիմաց վճարվող աշխատավարձը (համեմատվող կատեգորիա): Այդ տարբերությունն ավելի նկատելի էր պետական հատվածում, որտեղ այն կազմել է 33 տոկոս: Մասնավոր հատվածում ցածր աշխատավարձ ապահովող ճյուղերից էին նաև վերամշակող արդյունաբերությունն ու առևտուրը: Պետական հատվածում ցածր աշխատավարձ ստացել են առողջապահության և կրթության ոլորտի աշխատողները, ինչպես նաև ծառայությունների այլ ոլորտի աշխատողները: Պետական հատվածում բարձր աշխատավարձ ստանում էին վերամշակող արդյունաբերության մեջ աշխատողները (համեմատվող կատեգորիայի նկատմամբ): Ընդհանուր առմամբ, զբաղվածների 46 տոկոսն, իսկ աղքատ աշխատողների 51 տոկոսն աշխատել է գյուղատնտեսության մեջ, որտեղ աշխատավարձերն ամենացածրն էին: Ուստի, տնտեսական գործունեության այդ ճյուղը կարևոր դեր ունի աշխատողների շրջանում աղքատության մակարդակի կրճատման առնչությամբ:

*Աշխատանքային պայմանագրեր.* Մասնավոր հատվածում պայմանագրային աշխատանք ունենալը երաշխիք է առավել լավ վարձատրվող աշխատանքի, իսկ պետական հատվածում գրավոր պայմանագիրն ամենևին էլ չի ենթադրում բարձր աշխատավարձ: Մասնավոր հատվածում պայմանագրային աշխատանքը՝ բանավոր համաձայնությամբ աշխատանքի համեմատ, բարձր է վարձատրվում, քանի որ նման աշխատանքները ոչ գյուղատնտեսական բնույթի են, իսկ առանց գրավոր պայմանագրի աշխատում են հիմնականում գյուղատնտեսության ոլորտում: Բացի այդ, մասնավոր հատվածում ցածր վարձատրվող աշխատողներն ունեն լրացուցիչ (երկրորդ) աշխատանք, ինչը վկայում է ցածր

<sup>21</sup> 16-ից 65 տարեկան վարձու աշխատողների համար ժամավճարի հավասարման OLS ծրագրային

գնահատականները բերված են Աղյուսակ A5.5 Վիճակագրական հավելվածում.

<sup>22</sup> Հարկ է նշել, որ պետական և մասնավոր հատվածներում բարձրագույն կրթությամբ անձանց աշխատավարձերի միջև տարբերությունները վիճակագրական նշանակություն չունեն: Միևնույն ժամանակ աշխատավարձերի համեմատական ռեգրեսիան 1998/99 և 2004թթ.-ի միջև ցույց է տալիս այդ ժամանակահատվածում բարձրագույն կրթություն ունեցողների մոտ աշխատավարձերի իջեցում և՛ պետական և՛ մասնավոր հատվածում: Սակայն այդ փոփոխությունները ևս վիճակագրական մեծ նշանակություն չունեն և փաստում են դիտարկվող ժամանակաշրջանում բարձր աշխատավարձ ապահովող աշխատատեղերի հարաբերականորեն կայուն տեսեսակարար կշռի մասին:

վարձատրվող աշխատողների համար լրացուցիչ աշխատանքի կարևոր դերի մասին և լայնորեն արժանավորում է անցումային տնտեսությամբ երկրների վերաբերյալ գրականության մեջ: Պետական հատվածում այդ փոփոխականը մեծ արժեք չունի:

**Սեռը և տարիքը.** Հայաստանում աշխատավարձերի տարբերությունն ըստ սեռերի՝ երբ առանձին անհատական բնութագրիչների վրա սահմանվում է ծրագրային հսկողություն հավասար պայմաններ ապահովելու համար, շատ բարձր է թե՛ մասնավոր և թե՛ պետական հատվածներում և ցույց է տալիս, որ կանայք ավելի քիչ են վարձատրվում, քան նրանց տղամարդ գործընկերները: Այդ տարբերությունն ավելի փոքր է պետական հատվածում՝ մասնավորի համեմատ: Կանայք մասնավոր հատվածում, համանման բնութագրիչների դեպքում, 32 տոկոսով ավելի ցածր են վարձատրվում, քան տղամարդիկ: Աշխատավարձերի տարբերությունն ըստ սեռերի Հայաստանում համադրելի է ԱՊՀ այլ երկրներում նույն ցուցանիշի հետ (տե՛ս Նյուել և Ռեյլի, 2001թ.): Իսկ տարիքային առանձնահատկությունը դիտարկելիս ակնհայտ է, որ մասնավոր հատվածում երիտասարդ աշխատողներն ավելի բարձր են վարձատրվում, քան տարիքով աշխատողները, իսկ պետական հատվածում աշխատավարձի տարիքային տարբերությունը շատ չնչին է:

### 5.3. Տնտեսական աճը, աշխատանքի շուկան և աղքատությունը Հայաստանում

Սույն բաժնում տարբեր բնութագրիչների հիման վրա դիտարկվում է 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում Հայաստանում զբաղվածության կառուցվածքը, քանզի վերջինիս կառուցվածքի փոփոխությունը կարող է բացահայտել տնտեսական աճի, աշխատանքի շուկայի և աղքատության միջև կապը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տնտեսական աճը դրական ազդեցություն ունի աշխատանքի շուկայում հատկապես աղքատների համար, երբ գործազրկությունը և թերզբաղվածությունը նվազում են և/կամ ավելանում են աղքատների աշխատավարձերը (Ներդիր 5.2): Այդ փոփոխությունների ազդեցությունը հաջորդաբար առաջ է բերում աշխատանքի առաջարկի և պահանջարկի փոփոխություն, որն էլ արտացոլվում է զբաղվածության կառուցվածքի փոփոխությամբ: Դիտարկվել է նաև ոչ ֆորմալ զբաղվածության շուկան, քանի որ ցածր և միջին եկամտով երկրների աշխատանքի շուկաների վերլուծությունները բացահայտել են վերջինիս կարևոր դերը աղքատների եկամուտների ձևավորման իմաստով: Ավելին, կան փաստեր, որ ոչ ֆորմալ հատվածում աշխատանքը սերտորեն կապված է աղքատության մակարդակի հետ:

Հայաստանում գերակշռում է զբաղվածությունը ոչ ֆորմալ հատվածում՝ 1998/99 և 2004թթ.-ին<sup>23</sup> կազմելով ընդհանուր զբաղվածության համապատասխանաբար 60 և 59 տոկոսը: Այդ գնահատականները համահունչ են Հայաստանում իրականացված Աշխատուժի հետազոտության տվյալների հիման վրա կատարված գնահատականների հետ (Քրստիչ, 2003թ. Դուկասյան, 2005թ.): Ֆորմալ զբաղվածության զարգացման հիմնական արգելքը, որը մինչև նույն ժամանակ խթանում է նաև ոչ ֆորմալ զբաղվածությունը, ֆորմալ հատվածում բարձր հարկերն են, ծանր հարկային վարչարարությունը և ֆինանսավորման բարձր արժեքը (տե՛ս ներդրումային մթնոլորտի և աշխատատեղերի ստեղծման վերաբերյալ մասը):

#### ***Ներդիր 5.2: Տնտեսական աճի, աշխատանքի շուկայի և աղքատության կրճատման փոխհարաբերությունը***

*Ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ աղքատների մեծ մասը ցածր և որոշ չափով նաև միջին եկամտով երկրներում աշխատող աղքատներ են (Մայիդ, 2001թ. Համաշխարհային բանկ 2005a): Բացահայտվել է, որ աշխատող աղքատների շրջանում աղքատության սկզբունքային պատճառները թերզբաղվածությունն ու ցածր աշխատավարձերն*

<sup>23</sup> Ոչ ֆորմալ աշխատող են հանդիսանում (ա) առանց գրավոր պայմանագրի աշխատողները; (բ) ինքնազբաղվածները (անհատ ձեռներեցներ և գործատուներ), ոչ գյուղատնտեսական չգրանցված գործունեությամբ զբաղվածներ, կամ եթե վարձել են աշխատող, ապա առանց գրավոր պայմանագրի, (գ) սեփական հողի վրա աշխատող գյուղացիները; (դ) սեփական տնային տնտեսությունում անվճար աշխատող ընտանիքի անդամները և ուրիշներ (Յանգ-Ռո և ուրիշներ, 2003թ.):

են, այլ խոսքով, զբաղվածության քանակն ու որակը (Օսմանի, 2003թ.)<sup>24</sup>: Թե որքանով տնտեսական աճը կհանգեցնի աղքատության կրճատմանը, կախված կլինի թե որքան այն կբարելավի զբաղվածության որակն ու քանակը, ինչպես նաև, որքանով աղքատները կկարողանան օգտվել այդ փոփոխություններից: Այսպիսով, գործազուրկ աղքատների համար տնտեսական աճը կստեղծի լրացուցիչ աշխատատեղեր, աշխատող աղքատների համար կավելանա աշխատանքի արտադրողականությունը և աշխատավարձերի մակարդակը, իսկ չաշխատող աղքատների համար կավելանան սոցիալական տրանսֆերտները:

Աղքատամետ տնտեսական աճը կարող է իմաստավորվել հետևյալ շղթայի արդյունավետ գործունեությամբ՝ տնտեսական աճ, որը հանգեցնում է աղքատության կրճատմանը՝ զբաղվածության մակարդակի և աշխատանքի արտադրողականության ավելացմամբ, իսկ կրճատված աղքատությունը նպաստում է աշխատանքի արտադրողականության ավելացմանը, որն էլ բերում է տնտեսական աճի առավել բարձր տեմպերի (Բսլամ, 2004թ.): 23 երկրների տնտեսական վերլուծությունների արդյունքում առանձնացվել են աղքատամետ տնտեսական աճը բացատրող աշխատանքի շուկայի կարևորագույն ցուցանիշները. (i) զբաղվածության կառուցվածքային փոփոխությունն ի հաշիվ վերամշակող և այլ ոչ գյուղատնտեսական արտադրական գործունեության, (ii) կրթության աստիճան և (iii) կախվածության գործակցի նվազեցում, ի հաշիվ տնտեսական ակտիվության մակարդակի աճի (Բսլամ, 2004թ.): Այլ հետազոտություններ նույնպես արձանագրել են տնտեսության կառուցվածքային այնպիսի փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք կհանգեցնեն բարձր արտադրողականությամբ ոլորտների հաշվին եկամուտների առավել բարձր մակարդակի ձևավորման: (Աղքատամետ տնտեսական աճի հետազոտություն, Երկրների փորձի ուսումնասիրություն, Համաշխարհային բանկ, 2005թ.):

Վիետնամում և Բուրկինա Ֆասոյում տնային տնտեսությունների հետազոտությունների հիման վրա կատարված վերլուծությունները բացահայտել են երկու կարևոր գործոններ, որոնք պայմանավորում են աղքատների համար զբաղվածության արդյունավետ ներգործությունը՝ տնտեսական աճից առավելապես օգտվելու տեսանկյունից: Այդ գործոններն են. (i) աշխատանքի արտադրողականության աճը, որը պետք է լայնամասշտաբ և բարձր լինի հատկապես այն հատվածներում, որտեղ հիմնականում աշխատում են աղքատները կամ որոնք մատչելի են աղքատների համար և (2) աղքատների կողմից արտադրվող ապրանքների և ծառայությունների նկատմամբ բարձր պահանջարկի ապահովում և այդ շուկաների մատչելիության բարձրացում (Բերնաբե և Քրստիչ, Համաշխարհային բանկ, 2005թ.):

**Աղքատները և աշխատանքի շուկան Հայաստանում:** Հայաստանում աղքատների կեսից ավելին կամ տնտեսապես ակտիվ չէին կամ գործազուրկ էին, որը կրկին շեշտադրում է, որ աշխատատեղերի սակավությունը աղքատության հիմնական պատճառներից է (Աղյուսակ 5.7): Գործազուրկների մասնաբաժինը գրեթե կրկնակի անգամ ավելի էր աղքատների շրջանում՝ ոչ աղքատների համեմատ: Գործազուրկների մեծ մասը հիմնականում քաղաքայիններ էին, քանի որ գյուղաբնակներն առավել մեծ հավանականությամբ զբաղվում էին գյուղատնտեսությամբ: Աղքատների մոտ 40 տոկոսը տնտեսապես ակտիվ չէր: Մինևույն ժամանակ ոչ աղքատների գրեթե մեկ երրորդը նույնպես տնտեսապես ակտիվ չէր, որն ընդգծում է այդ խմբի համար եկամտի այլընտրանքային աղբյուրների՝ կենսաթոշակների, ընտանեկան նպաստների և բարեկամներից ստացվող տրանսֆերտների կարևորությունը: 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում գործազուրկների տեսակարար կշիռն աղքատների մեջ նվազել է՝ 21-ից 16 տոկոսի:

Աշխատանք ունենալը միշտ չէ որ տնային տնտեսությանը պաշտպանում է աղքատությունից և աղքատների շրջանում աշխատող աղքատների բարձր տեսակարար կշիռը ենթադրում է, որ բացի գործազրկությունից, ցածր աշխատանքային եկամուտները և թերզբաղվածությունը աղքատության հիմնական պատճառներն են: Այդ ենթադրությունը հաստատվում է Աղյուսակ 5.7-ում ներկայացված աշխատանքային եկամուտների վերաբերյալ տվյալներով: Աղքատների և ոչ աղքատների շրջանում ցածր աշխատավարձով աշխատանքների տեսակարար կշիռների միջև տարբերությունը մեծ չէր, հատկապես

<sup>24</sup> Զբաղվածության որակը ներառում է աշխատանքի դիմաց ստացվող եկամուտը, սակայն ենթադրում է նաև աշխատանքի պայմանները, ինչպես օրինակ աշխատանքի անվտանգությունը: Զբաղվածության քանակը վերաբերում է աշխատանքի արտադրողականությանը՝ աշխատանքի ճշգրտված քանակը և ուստի ենթադրում է թերզբաղվածության մակարդակը: Աշխատանքի որակի և քանակի կատարելագործումը (կամ ասպես կոչված զբաղվածության ներուժը) կարտահայտվի աշխատանքի արդյունքի վեր բարձրացող կորի միջոցով:

1998/99թթ: Այդ տարբերությունը մեծացել է 1998/99թ.-ից հետո, սակայն դեռ համեմատաբար ցածր է, քանի որ 2004թ.-ին ցածր աշխատանքային եկամուտներ ստանում էին աղքատների 41 տոկոսը, իսկ ոչ աղքատների՝ 33 տոկոսը: Բացի այդ շատ աղքատներ ունեին միջին և անգամ բարձր աշխատավարձով աշխատանք (35 տոկոս և 24 տոկոս համապատասխանաբար), որը նշանակում է, որ անգամ բարձր աշխատանքային եկամուտ ապահովող աշխատանքը միշտ չէ պաշտպանում աղքատությունից:

2004թ.-ին աղքատների համեմատ ֆորմալ զբաղվածությունն առավել մեծ մասնաբաժին ուներ ոչ աղքատների շրջանում, իսկ ոչ ֆորմալ զբաղվածությունը հավասար բաշխվածություն ուներ աղքատների և ոչ աղքատների շրջանում: Ակնհայտ է, որ չնայած ոչ ֆորմալ զբաղվածությունը սովորաբար փրկություն է ցածր կամ ընդհանրապես եկամուտ չունեցողների համար, այնուհանդերձ այն աղքատությունից զերծ պահելու երաշխիք չէ:

**Աղյուսակ 5.7 Հայաստան. Աղքատների և ոչ աղքատների զբաղվածության առանձնահատկությունները, 1998/99-2004, (16 և բարձր տարիքի բնակչություն) տոկոսներով.**

	1998/99թ.			2004թ.		
	Ընդամենը	Աղքատներ	Ոչ աղքատներ	Ընդամենը	Աղքատներ	Ոչ աղքատներ
Ֆորմալ հատվածում զբաղվածներ	18.7	15.4	22.9	20.2	14.6	23.0
Ոչ ֆորմալ հատվածում զբաղվածներ	27.4	24.3	31.4	28.5	28.1	28.7
Գործազուրկներ	17.0	21.0	11.9	11.6	16.0	9.5
Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն	36.8	39.2	33.8	39.7	41.3	38.9
Զբաղվածներ.						
Արդյունաբերություն՝ ֆորմալ հատված	3.6	4.4	2.8	7.7	6.5	8.1
Ծառայություններ՝ ֆորմալ հատված	36.1	33.9	38.3	33.1	27.1	35.6
Արդյունաբերություն՝ ոչ ֆորմալ հատված	1.7	2.1	1.3	4.6	6.1	4.0
Ծառայություններ՝ ոչ ֆորմալ հատված	5.0	6.0	4.1	8.4	9.4	8.0
Գյուղատնտեսություն (ոչ ֆորմալ)	53.5	53.7	53.4	46.2	50.9	44.3
Աշխատավարձ						
Ցածր աշխատավարձ ստացողներ	32.5	33.5	31.6	35.2	41.1	33.1
Միջին աշխատավարձ ստացողներ	33.0	33.9	32.4	32.8	35.4	31.9
Բարձր աշխատավարձ ստացողներ	34.5	32.6	36.0	32.0	23.6	35.1

Աղբյուրը. SSԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Զբաղվածության կարգավիճակն ու աղքատության ռիսկը.** Աղքատ լինելու ռիսկն առավել բարձր էր գործազուրկների շրջանում, ինչն ակնհայտ երևում է, երբ աղքատության ռիսկը դիտարկվում է ըստ զբաղվածության կարգավիճակի (Աղյուսակ 5.8): Աղքատության մեծ հավանականություն ունեին նաև ոչ ֆորմալ հատվածում զբաղվածները՝ ֆորմալ հատվածում զբաղվածների համեմատ, աղքատության ռիսկը հատկապես բարձր էր ոչ ֆորմալ հատվածում վարձու աշխատողների մոտ: 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում աղքատության մակարդակի զգալի անկում նկատվել է ֆորմալ հատվածի ինքնազբաղվածների շրջանում, ինչը վկայում է, որ ֆորմալ ինքնազբաղվածությունը կարող է կարևոր ներուժ լինել աղքատությունը հաղթահարելու համար, ինչպես օրինակ անցումային տնտեսությամբ շատ երկրներում: Չնայած աղքատության մակարդակի նվազման աստիճանն ամենացածրն էր գյուղատնտեսությունում, այն շատ կարևոր նշանակություն ուներ ընդհանուր աղքատության մակարդակի անկման համար, քանի որ աղքատների մեծ մասը զբաղված էր գյուղատնտեսության ոլորտում: Աղքատության մակարդակը բավական զգալի կրճատվել էր ֆորմալ արդյունաբերությունում, որտեղ զբաղված էին շատ քիչ թվով աղքատներ: Միևնույն ժամանակ աղքատության

մակարդակը նշանակալի կրճատվել էր նաև ֆորմալ ծառայությունների ոլորտում, որտեղ սակայն զբաղված էր աղքատների՝ իր մեծությամբ երկրորդ խումբը: Նման դրական փոփոխությունների արդյունքում նշյալ ոլորտներում բարձրացել է աշխատանքի արտադրողականությունը և ավելացել են աշխատանքային եկամուտները:


**Աղյուսակ 5.8. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ զբաղվածության կարգավիճակի 1998/99-2004թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն, տոկոսներով)**

	1998/99թ.	2004թ.	Տարբերություն, %
<b>Զբաղվածներ</b>	48.6	29.4	-39.5
<b>Ֆորմալ:</b>	46.5	23.2	-50.1
Վարձու աշխատողներ	46.8	24.6	-47.5
Ինքնազբաղվածներ	42.9	12.0	-72.0
<b>Ոչ ֆորմալ:</b>	50.0	32.6	-34.8
Վարձու աշխատողներ	60.5	40.1	-33.7
Ինքնազբաղվածներ	42.6	27.6	-35.1
Գյուղատնտեսության մեջ զբաղվածներ	49.1	31.8	-35.2
Այլ	45.6	38.8	-14.9
Արդյունաբերություն՝ ֆորմալ հատված	59.3	24.9	-58.0
Ծառայություններ՝ ֆորմալ հատված	45.6	24.0	-47.3
Արդյունաբերություն՝ ոչ ֆորմալ հատված	59.5	39.1	-34.3
Ծառայություններ՝ ոչ ֆորմալ հատված	57.9	32.8	-43.3
Գյուղատնտեսություն (ոչ ֆորմալ)	48.7	32.3	-33.7
<b>Գործազուրկներ</b>	69.5	45.9	-33.9
<b>Տնտեսապես ոչ ակտիվ բնակչություն</b>	59.9	34.8	-41.9
<b>Ընդամենը</b>	56.3	33.5	-40.5

**Աղբյուրը. SSSUՀ 1998/99 և 2004թթ.**


Աշխատող աղքատների մեծ մասը զբաղված էին գյուղատնտեսության մեջ, որտեղ աշխատանքային եկամուտներն ամենացածրն էին: Ինչպես ցույց են տալիս պատկեր 5.2 և պատկեր 5.3-ը, ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածության մասնաբաժինն ավելանում է սպառման բաշխվածության վարից վեր քվանտիլային խմբերը դիտարկելիս: Այդ բաշխվածությունը ցույց է տալիս նաև, որ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածության մեծ մասը ֆորմալ զբաղվածությունն է: 1998/99 և 2004թթ. ընթացքում ոչ գյուղատնտեսական գործունեությամբ ոչ ֆորմալ զբաղվածության մասնաբաժինը, թեև քիչ սակայն ավելացել է՝ սպառման բաշխվածության վարից վեր քվանտիլային խմբերը դիտարկելիս:

**Պատկեր 5.2. Հայաստան. Սպառման բաշխվածության բվանտիլային խմբերն ըստ զբաղվածության տեսակի և հատվածի, 1998/99թթ.**



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99թ.

**Պատկեր 5.3. Հայաստան: Սպառման բաշխվածության բվանտիլային խմբերն ըստ զբաղվածության տեսակի և հատվածի, 2004թ.**



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

2004թ.-ին աղքատության մակարդակն ամենացածրն է եղել աշխատանքային բարձր եկամուտներ ունեցողների շրջանում. այստեղ այն նվազման ամենաբարձր տեմպերն է գրանցել 1998/99թ.-ից ի վեր և ապացուցել, որ աղքատության մակարդակի նվազմանը զգալիորեն նպաստել են աշխատանքային բարձր եկամուտները (Աղյուսակ 5.9): Այնուհանդերձ, 2004թ.-ին աշխատանքային բարձր եկամուտներ ունեցողներից ամեն հինգերորդը դեռ աղքատ էր: Եթե 1998/99թ.-ին ցածր, միջին և աշխատանքային բարձր եկամուտներ ունեցողների աղքատության մակարդակների միջև տարբերությունը մեծ չէր, ապա արդեն 2004թ.-ին այդ տարբերությունը զգալի էր, հատկապես մեծ էր աղքատության մակարդակի տարբերությունը աշխատանքային ցածր և միջին եկամուտներ ունեցողների և աշխատանքային բարձր եկամուտներ ունեցողների միջև:

**Աղյուսակ 5.9. Հայաստան. Աղքատության մակարդակն ըստ աշխատանքային եկամուտ  
տնեի չափի, 1998/99-2004թթ. (16 և բարձր տարիքի բնակչություն; տոկոսներով)**

	1998/99թ.	2004թ.	Տարբերությունը, %
<b>Աշխատանքից ստացված եկամուտներ</b>			
Ցածր	46.5	31.6	-32.0
Միջին	46.2	29.2	-36.8
Բարձր	42.6	20.0	-53.1
<b>Ընդամենը</b>	45.0	27.1	-39.8

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Տնտեսական աճ, զբաղվածություն և թերզբաղվածություն.** 1998 և 2004թթ. ընթացքում Հայաստանում գրանցված տնտեսական աճի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորված էին այնպիսի ծախսատար արտադրությունների արտահանման մակարդակով, ինչպիսիք են աղամանդագործությունը, կոնյակի արտադրությունը և տեղեկատվական տեխնոլոգիաները: Աշխատատար արդյունաբերությունը՝ սննդի վերամշակումը, տեքստիլ արդյունաբերությունը, հանքարդյունաբերությունը, զարգացել են համեմատաբար ավելի դանդաղ տեմպերով, սակայն ավելի արագ, քան ՀՆԱ-ն: Արդյունաբերության ոլորտում շինարարությունն արձանագրել է համեմատաբար առավել բարձր աճի տեմպեր: Ընդհանուր առմամբ, 1998 և 2004թթ. ընթացքում արդյունաբերական արտադրանքի արտահանումը, որը կազմել է ընդհանուր արտահանման երկու երրորդը, աճել է տարեկան միջինը 13 տոկոսով (Աղյուսակ 5.10)<sup>25</sup>: Հետևաբար, փոխվել է նաև ՀՆԱ-ի կառուցվածքը՝ ավելացել է արդյունաբերության մասնաբաժինը և հակառակը, նվազել է գյուղատնտեսության մասնաբաժինը:

**Աղյուսակ 5.10. Հայաստան. Տնտեսական աճի միջին տարեկան աճի տեմպն ըստ  
հատվածների, 1999-2004թթ. (տոկոսներով)**

	ՀՆԱ մեկ շնչի հաշվով	Զբաղվածության մակարդակ, տոկոսներով աշխատանքային տարիքի բնակչության նկատմամբ (16+)	Արտահանում
Գյուղատնտեսություն	5.7	-1.6	44.6
Արդյունաբերություն	13.3	16.8	13.2
Ծառայություններ	9.0	1.2	11.2

Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ.

Վերոնշյալ կառուցվածքային փոփոխությունները հանգեցրել են զբաղվածության կառուցվածքային փոփոխության: Զբաղվածության մակարդակն ավելացել է արդյունաբերության ոլորտում՝ 1998/99թ.-ի 5 տոկոսից 2004թ.-ի 12 տոկոսի, և նվազել է գյուղատնտեսության ոլորտում՝ 54 տոկոսից 46 տոկոսի: Զբաղվածության մակարդակը ծառայությունների ոլորտում մնացել է գրեթե անփոփոխ՝ 41.5 տոկոս 2004թ.-ին, 1998/99թ.-ի 41.1 տոկոսի համեմատ:

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 5.11-ի տվյալները, տնտեսական աճն ուղեկցվել է հիմնականում ֆորմալ զբաղվածության մասնաբաժնի ավելացմամբ՝ ոչ ֆորմալ զբաղվածության համեմատ: 1998 և 2004թթ. ընթացքում ֆորմալ զբաղվածության մակարդակն ավելացել է 8 տոկոսով, կամ տարեկան միջինը 1.4 տոկոսով, մինչդեռ նույն ժամանակաշրջանում ոչ ֆորմալ զբաղվածության աճը կրկնակի անգամ գիջել է՝ կազմելով ընդամենը 4 տոկոս, կամ 0.7 տոկոս միջին տարեկան: Ավելին, արդյունաբերության ոլորտում զբաղվածության մակարդակի զգալի աճը պայմանավորված էր և՛ ֆորմալ և՛ ոչ ֆորմալ հատվածներում զբաղվածության ավելացմամբ: Մյուս կողմից, ծառայությունների ոլորտում զբաղվածության մակարդակի աճը բավական «համեստ» էր՝ արտացոլելով այդ ոլորտում ֆորմալ զբաղվածության չնչին նվազում և ոչ ֆորմալ զբաղվածության համեմատաբար բարձր աճ: Չնայած ոչ ֆորմալ արդյունաբերության և ոչ ֆորմալ ծառայությունների ոլորտներում արձանագրված տնտեսական աճի համեմատաբար բարձր տեմպերին, ընդհանուր ոչ ֆորմալ

<sup>25</sup> Նույն ժամանակաշրջանում գյուղատնտեսական ապրանքների արտահանումն ավելի էր ավելացել, սակայն շատ ցածր մակարդակի համեմատ՝ 1998թ.-ին այն կազմում էր ընդհանուր արտահանման 0.4 տոկոսը միայն:



զբաղվածության մակարդակի աճի վրա դրանց ազդեցությունը մեծ չէր, ոչ ֆորմալ զբաղվածության մեջ վերջինների փոքր տեսակարար կշռով պայմանավորված. այստեղ հիմնական մասնաբաժինը գյուղատնտեսությանն էր: Քանի որ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածության մակարդակը նվազել էր, և հետևաբար, բացասաբար անդրադարձել ոչ ֆորմալ հատվածի զբաղվածության մակարդակի վրա, հետևաբար ֆորմալ զբաղվածությունն ավելացել էր՝ ոչ ֆորմալ զբաղվածության համեմատ:

**Աղյուսակ 5.11** Հայաստան. Ջրաղվածության մակարդակի փոփոխությունն ըստ զբաղվածության տեսակի և ոլորտի, 1998/99-2004թ. (Աշխատանքային տարիքի բնակչության տոկոսը; միջին տարեկան տոկոսային փոփոխությունը)

	Ջրաղվածության մակարդակի միջին տարեկան փոփոխությունը (%)
Արդյունաբերություն՝ ֆորմալ հատված	15.2
Ծառայություններ՝ ֆորմալ հատված	-0.5
Արդյունաբերություն՝ ոչ ֆորմալ հատված	20.2
Ծառայություններ՝ ոչ ֆորմալ հատված	10.6
Գյուղատնտեսություն (ոչ ֆորմալ)	-1.6
Արդյունաբերություն	16.8
Ծառայություններ	1.2
Ֆորմալ	1.4
Ոչ ֆորմալ	0.7
<b>Ընդամենը</b>	<b>1.0</b>

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

**Նշում.** Վերաբերում է հիմնական համարվող աշխատանքին: Աշխատանքային տարիքի բնակչություն համարվել է 16 և բարձր տարիքի բնակչությունը:

Տնտեսական աճն ուղեկցվել է թերզբաղվածության նվազմամբ, հատկապես այն ոլորտներում, որտեղ աղքատության մակարդակը նվազել էր համեմատաբար ավելի բարձր տեմպերով (Աղյուսակ 5.12): 1998/99 և 2004թթ.-ին թերզբաղվածությունը գնահատվել է՝ հիմք ընդունելով 16 և բարձր տարիքի այն աշխատողների համամասնությունը, ովքեր պատրաստ են եղել աշխատել ավելի շատ ժամանակ, քանի որ 1998/99թ.-ի ՏՏԿԱՀ միջոցով հնարավոր չի եղել պարզել հիմնական աշխատանքում ծախսած ժամանակը: 2004թ.-ին թերզբաղվածությունը կրկին գնահատվել է, նույն մեթոդով, ինչպես նաև հիմք ընդունելով 16 և բարձր տարիքի այն աշխատողների համամասնությունը, ովքեր հարկադրաբար ստիպված են եղել աշխատել ոչ լրիվ օր: 2004թ.-ին երկու գնահատականների հիման վրա ստացվել են նույն արդյունքները, բացառությամբ գյուղատնտեսության ոլորտի:

**Աղյուսակ 5.12.** Հայաստան. Թերզբաղվածներն ըստ տնտեսության ճյուղերի 1998/99 և 2004թթ. (տոկոսներով ընդամենը զբաղվածների նկատմամբ)

1998/99 և 2004 թթ. (անվաճված գնաճով, միլիարդ ՀՀ դրամ)				
	Թերզբաղվածներ, ովքեր ցանկացել են աշխատել ավելի երկար ժամանակ	Տարբերությունը %	Թերզբաղվածներ, ովքեր հարկադրաբար աշխատել են քիչ, քան 40 ժամ/աշաբաթական	
	1998/99թ.	2004թ.	2004/1998թ.	2004թ.
Արդյունաբերություն	64.4	37.9	-41.1	30.2
Ծառայություններ	55.5	36.0	-35.0	39.4
Գյուղատնտեսություն	59.8	50.7	-15.3	73.4
Արդյունաբերություն՝ ֆորմալ հատված	58.8	27.5	-53.2	26.9
Ծառայություններ՝ ֆորմալ հատված	53.7	30.9	-42.5	37.6
Արդյունաբերություն՝ ոչ ֆորմալ հատված	76.2	55.1	-27.7	35.6
Ծառայություններ՝ ոչ ֆորմալ հատված	68.0	56.2	-17.4	46.3
Ընդամենը	58.3	43.0	-26.2	54.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Թերզբաղվածության մակարդակը հիմնականում նվազել է ֆորմալ արդյունաբերության և ֆորմալ ծառայությունների ոլորտներում և ամենացածր նվազումը գրանցվել է

գյուղատնտեսության մեջ, այդպիսով արտացոլելով արդյունաբերության և զբաղվածության այլ ոլորտներից թաքցված լրացուցիչ աշխատուժը, որը մասամբ ներգրավվել է գյուղատնտեսության մեջ: Չնայած թերզբաղվածության մակարդակը հիմնականում նվազել է ֆորմալ արդյունաբերության և ֆորմալ ծառայությունների ոլորտներում, որտեղ աղքատության նվազման մակարդակն ամենաբարձրն է եղել, գյուղատնտեսության ոլորտում թերզբաղվածության մակարդակի համեմատաբար փոքր նվազումը շատ կարևոր էր, քանի որ աղքատների մեծ մասը զբաղված է եղել գյուղատնտեսության մեջ:

**Տնտեսական աճ, աշխատանքային եկամուտներ և աղքատություն.** Գյուղատնտեսությունից բացի ոչ ֆորմալ զբաղվածության աճն ուղեկցվել է հատկապես ֆորմալ աշխատանքային եկամուտների ավելացմամբ (աղյուսակ 5.13), ինչը պայմանավորված էր ֆորմալ հատվածում զբաղվածների աշխատանքի արտադրողականության առավել բարձր աճով: Նման արդյունքները պայմանավորված են մի քանի գործոնների ազդեցությամբ: Հնարավոր է, որ ցածր արտադրողականությամբ աշխատանքը թե՛ սեփականաշնորհված և թե՛ նոր մասնավոր ձեռնարկություններում դուրս է մղվել ֆորմալ զբաղվածությունից՝ կամ կրճատվել է կամ փոխարինվել է նոր արդյունավետ աշխատանքով, կամ ներգրավվել են բանավոր համաձայնությամբ նոր աշխատողներ: Այն կարող է նաև պայմանավորված լինել ֆորմալ հատվածում արդյունաբերության ծախսատար ճյուղերում կատարված բարձր ներդրումներով, որոնք հիմնականում նախատեսված են արտահանման համար: Վերջապես, ֆորմալ հատվածում զբաղվածների համար աշխատանքի արտադրողականության և աշխատանքային եկամուտների ավելացումը մասամբ արդյունք էր թերզբաղվածության մակարդակի նվազման (կամ աշխատած ժամերի ավելացման), որն ավելի նկատելի էր ֆորմալ հատվածի աշխատողների համար: Դա հանգեցրել է մեկ աշխատողի հաշվով թողարկվող արտադրանքի և ամսական իրական աշխատանքային եկամուտների ավելացմանը:

**Աղյուսակ 5.13. Հայաստան.** Ամսական միջին իրական (զուտ) եկամուտը և միջին տարեկան փոփոխությունը, 1998/99-2004թթ., (որամ, 1999թ. զարմանային գներով)

	1998/99թ.	2004թ.	Ամսական իրական եկամտի միջին տարեկան փոփոխությունը, (%)
Արդյունաբերություն՝ ֆորմալ հատված	21,386	42,067	12.5
Ծառայություններ՝ ֆորմալ հատված	14,910	34,594	15.8
Արդյունաբերություն՝ ոչ ֆորմալ հատված	29,116	39,807	5.6
Ծառայություններ՝ ոչ ֆորմալ հատված	23,219	35,038	7.4
Գյուղատնտեսություն՝ ոչ ֆորմալ	8,757	15,164	10.0
Արդյունաբերություն	22,959	41,230	10.7
Ծառայություններ	15,562	34,677	15.0
Ֆորմալ	15,688	35,904	15.8
Ոչ ֆորմալ	11,484	22,373	11.0
<b>Ընդամենը</b>	<b>14,468</b>	<b>29,663</b>	<b>13.3</b>

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 1998/99 և 2004թթ.

Գյուղատնտեսության ոլորտում արտադրանքի ավելացումը, որն ուղեկցվել է զբաղվածության մակարդակի նվազմամբ, և աշխատանքի արդյունավետության բարձրացումը հանգեցրել են գյուղատնտեսական արտադրության արտադրողականության բարձրացմանը, որն էլ հանգեցրել է աշխատանքային եկամուտների ավելացմանը: Գյուղատնտեսական գների

առաջանցիկ աճը՝ ոչ գյուղատնտեսական գների համեմատ, մույնպես նպաստել է աշխատանքային եկամուտների ավելացմանը:<sup>26</sup>

Ընդհանուր առմամբ աղքատության մակարդակը նվազել է հիմնականում ֆորմալ հատվածում, որտեղ բավական արագ տեմպերով ավելացել են և՛ աշխատանքային եկամուտները և՛ աշխատանքի արտադրողականությունը: Ֆորմալ աշխատողների շրջանում աղքատության մակարդակը զգալիորեն փոխվել էր ծառայությունների ոլորտի աշխատողների մոտ, քանի որ նրանք աղքատների շրջանում երկրորդ ամենամեծ խումբն էին կազմում 1998/99թ.-ին (34 տոկոս): Չնայած գյուղատնտեսության ոլորտն առանձնանում է եկամուտների մակարդակի դանդաղ աճով և աղքատության մակարդակի դանդաղ նվազմամբ, այն հանդիսանում է աղքատության մակարդակի կրճատման հիմնաքարը, քանի որ այստեղ է զբաղված աղքատ բնակչության հիմնական մասը՝ 54 տոկոսը:<sup>27</sup>

#### 5.4. Եզրահանգումներ

Աշխատանքի շուկայի զարգացումները Հայաստանում 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում դրսևորել են որոշ դրական առանձնահատկություններ, որոնք նպաստել են աղքատության մակարդակի զգալի կրճատմանը: Զբաղվածության մակարդակն ավելացել է 13 տոկոսով, կամ բացարձակ թվերով, Հայաստանում 1998/99թ.-ի համեմատ, 2004թ.-ին աշխատանք ուներ 142 հազարով ավելի մարդ: Նման զարգացումը որոշ չափով տարբերվում էր Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի այլ երկրների համեմատ, որտեղ գրանցվել է «աշխատանք կորցրածների» աճ: Գործազրկության մակարդակը նվազել է գրեթե 1/3-ով, զգալիորեն նվազել է թերզբաղվածությունը և աճել է իրական աշխատավարձը, որը արտադրողականության աճի արդյունք է: Այլ կերպ ասած, Հայաստանում ավելի շատ մարդ ուներ աշխատանք, և ավելի շատ մարդ էր ստանում բարձր աշխատավարձ, քան նախկինում: Արդյունքում բարձրացել է կենսամակարդակը և նվազել է աղքատության մակարդակը:

Չնայած նման դրական արդյունքներին, գործազրկության մակարդակը դեռ 19 տոկոս էր, իսկ գործազուրկներն առավել բարձր ռիսկ ունեին աղքատ լինելու: Գործազուրկների կազմում մեծ մասնաբաժին ունեին հիմնականում երիտասարդները, կրթական ցածր մակարդակ ունեցողները, կանայք, ամուսինները, հաշմանդամները և քաղաքաբնակները: Երիտասարդներն առավել անբարենպաստ դիրքում էին. նրանց համար աշխատանք գտնելը շատ ավելի դժվար էր: Գործազրկությունը տևական բնույթ ուներ, քանի որ ամեն երեք գործազուրկներից երկուսը աշխատանք չուներ մեկ տարուց ավելի ժամանակ: Թերզբաղվածությունը, հատկապես գյուղատնտեսությունում և ցածր վարձատրվող աշխատանքը դեռ օրակարգում էին:

Աշխատանք ունենալը աղքատությունից խուսափելու երաշխիք չէ, քանի որ Հայաստանում աղքատների կեսը աշխատող աղքատներ են: Գերակշռում է ոչ ֆորմալ զբաղվածությունը. վկայելով, որ ֆորմալ գործելը դեռ մեծ ծախսերի հետ է կապված: Չնայած գյուղատնտեսությունը ետ է մնում ֆորմալ արդյունաբերությունից, թե՛ աշխատանքի արտադրողականության ու իրական աշխատավարձի աճով թե՛ թերզբաղվածության նվազման տեմպերով, տնտեսական աճի դրական արդյունքները մեծապես նպաստել են աղքատների կենսամակարդակի վրա, քանի որ գյուղատնտեսության ոլորտում զբաղված է աղքատների մոտ

<sup>26</sup> Ավելացել է գյուղատնտեսական մթերքների նկատմամբ ներքին և արտաքին պահանջարկը (Համաշխարհային բանկ, 2005b). Գյուղատնտեսական արտադրության արտահանման մակարդակը զգալի ավելացել է 1998/99-2004թթ. ընթացքում (Աղյուսակ 5.10):

<sup>27</sup> Հարկ է նշել, որ աշխատողների ստացած աշխատանքային եկամուտների փոփոխությունները տնային տնտեսության աղքատության մակարդակի հետ համեմատելը պետք կատարվի որոշակի վերապահումներով, քանի որ մեկ տնային տնտեսության մեջ կարող են լինել տարբեր հատվածներում զբաղվածներ՝ տարբեր աշխատանքային եկամուտներով: Քանի որ եկամուտը ենթադրվում է, որ պետք բաշխվի տնային տնտեսությունում, հնարավոր չի լինում դիտարկել ցանկացած աշխատողի կենսամակարդակի փոփոխությունը աշխատանքային եկամուտների փոփոխության դեպքում: Այդպես է մալ գյուղաբնակ տնային տնտեսությունների մոտ, որոնք կարող է զբաղված լինեն գյուղատնտեսական կամ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ:

կեսը: Դա նշանակում է, որ աշխատանքի արտադրողականության աճն այն ոլորտներում, որտեղ հիմնականում զբաղված են աղքատները և աղքատների կողմից թողարկվող ապրանքների ու ծառայությունների նկատմամբ բարձր պահանջարկը կարևոր դեր ունեն Հայաստանում տնտեսական աճի դրական արդյունքներն աղքատներին փոխանցելու գործում:

Ընդհանուր առմամբ իրավիճակն ամփոփ կարելի ներկայացնել այսպես. մինչ այժմ գրանցվել են դրական տեղաշարժեր, սակայն դեռ կան դժվարին խնդիրներ, որոնք պետք ստանան իրենց լուծումը, քանի որ գործազրկությունը կրճատելու համար Հայաստանին հարկավոր են ոչ միայն նոր աշխատատեղեր, այլև լավ վարձատրվող աշխատանքներ:

## **Գլուխ VI. Ձեռնարկությունների վերակազմավորում, ներդրումային միջավայր և աշխատատեղերի ստեղծում**

*Հայաստանն ունի նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացը և ֆորմալ հատվածի զարգացումն արագացնելու մեծ ներուժ: Ձեռնարկություններում կատարվող ներդրումների արդյունքում ընդլայնվում են ձեռնարկությունները, ավելանում է աշխատողների թվաքանակը: Շատ ձեռնարկություններ գտնում են, որ իրենց աշխատակազմը ցածր է բավարար մակարդակից և կցանկանային վարձել նոր աշխատողներ: Այնուամենայնիվ, մի շարք ձեռնարկություններ, հատկապես մասնավոր փոքր ձեռնարկությունները, բազմաթիվ խոչընդոտների են հանդիպում իրենց գործունեության ծավալման և ընդարձակման ընթացքում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում ֆորմալ հատվածում աշխատատեղերի ստեղծման վրա: Ներդրումային միջավայրը խոչընդոտող արգելքների վերացման պարագայում, ֆորմալ հատվածում ավելի շատ աշխատատեղեր կստեղծվեն, իսկ գործազրկությունը կնվազի: Զբաղվածության մակարդակի աճի ներուժը հատկապես մեծ է Հայաստանի աշխատուժի բարձր որակավորմամբ պայմանավորված:*

### **6.1. Ձեռնարկությունների վերակազմավորում և աշխատատեղերի ստեղծում**

Աշխատանքի շուկայի պայմանները մեծապես կախված են արտադրանքի նկատմամբ պահանջարկի փոփոխությունից, հետևապես ձեռնարկությունների կողմից աշխատակազմ հավաքագրելու կամ կրճատելու որոշումներից: Ձեկույցի սույն մասը դիտարկում է ձեռնարկությունների մակարդակով զբաղվածության շարժը Հայաստանում և զբաղվածության աճը պայմանավորող որոշ գործոններ (դետերմինանտներ): Մասնավորապես այստեղ ընդգծվում է, որ զբաղվածության մակարդակի աճն անմիջականորեն կախված է ձեռնարկության գործունեությունից: Այն ձեռնարկությունները, որոնց գործունեությունը «ծաղկում» է՝ ներդրումներ են կատարում և ընդարձակվում, ավելացնում են իրենց աշխատակազմը: Դա նշանակում է, որ ձեռնարկության մակարդակով կապիտալի ձևավորումն ու արտադրողականության աճն ավելի շուտ օժանդակում, քան փոխարինում են աշխատատեղերի ստեղծումը: Բացի այդ, Հայաստանում զբաղվածության մակարդակի ավելացմանը նպաստող մեկ այլ դրական գործոն է այն հանգամանքը, որ ձեռնարկություններն անհրաժեշտության դեպքում շատ շուտ կարողանում են գտնել պահանջվող որակավորմամբ և հմտություններով աշխատողներ թափուր աշխատատեղերը լրացնելու համար:

Հայաստանում շատ ձեռնարկություններ նոր աշխատողներ են վարձում և ավելացնում աշխատակազմը<sup>28</sup>: Համաձայն որոշ գնահատականների, ամեն երկրորդ ձեռնարկություն վերջին երեք տարիների ընթացքում ավելացրել է իր աշխատողների թվաքանակը: Իր աշխատակազմը կրճատել է միայն ամեն հինգերորդ ձեռնարկություն<sup>29</sup>: Ինչևէ, աստիճանաբար ձեռնարկություններն առավել մեծ վստահություն են տալիս հիմնականում հին, մշտական աշխատողների նկատմամբ, իսկ ժամանակավոր աշխատողների թվաքանակը, թեև վերջին երեք տարիների ընթացքում կրկնապատկվել է, նրանք կազմել են աշխատողների թվաքանակի աճի մոտ 30 տոկոսը:

Կարևոր է, որ ձեռնարկությունների մեծ մասը իրենց ներկա աշխատակազմը համարել են շատ փոքրաթիվ օպտիմալ թվաքանակից: Ձեռնարկությունների 40 տոկոսից ավելին պատրաստ են ավելացնել աշխատողների թվաքանակը, եթե դա չառաջացնի լրացուցիչ ծախսեր (ներառյալ վարչական սահմանափակումները), և միայն ձեռնարկությունների 15



<sup>28</sup> Դա չի հակասում վերը նշված արդյունքներին, ըստ որոնց վերջին ժամանակահատվածում ձեռնարկությունների միջին չափերը կրճատվել են, քանի որ այդ ցուցանիշի նվազումը պայմանավորված է որոշ ձեռնարկությունների շուկայից հեռանալով (մեծ ձեռնարկություններ) և նոր ձեռնարկությունների մուտքով (փոքր ձեռնարկություններ):

<sup>29</sup> Արդյունքները բերված են ՎՋԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտությունից (BEEPS) III, 2005թ: Ընտրանքի չափը շատ փոքր է և կազմել է 201 ձեռնարկություն և լիովին ներկայացուցչական չէ : Հետևաբար հետազոտության արդյունքները մեծ չափերի հասնող սխալ են պարունակում և պետք է մեկնաբանվեն որոշ վերապահումով:

տոկոսն է նշել, որ կազատվելին աշխատուժի ավելցուկից, եթե դա չբերեր աշխատողների ազատման հետ կապված ծախսերի: Այսպիսով, ընդհանուր առմամբ, եթե չլինեն աշխատողների ազատման կամ ընդունման հետ կապված ծախսերը, ապա զբաղվածության մակարդակը Հայաստանում 15 տոկոսով կավելանա ներկա մակարդակից, ինչը կրկին անգամ ընդգծում է ձեռնարկությունների ընդլայնման՝ որպես զբաղվածության մակարդակի ավելացմանը նպաստող միջոցի համար անհրաժեշտ ներդրումային միջավայրը խոչընդոտող գործոնների վերացման անհրաժեշտությունը:

Հայաստանում այն ձեռնարկությունները, որոնք ընդարձակել են իրենց անձնակազմը հիմնականում միջին ու մեծ չափերի համեմատաբար երիտասարդ կամ հին, բայց սեփականաշնորհված ձեռնարկություններ էին (և ոչ թե նորաստեղծ մասնավոր ձեռնարկություններ): Օրինակ, այն ձեռնարկությունները, որոնք գործում էին շուկայում մինչև 5 տարի, վերջին երեք տարիների ընթացքում ավելացրել էին իրենց աշխատակազմի թվաքանակը միջինը 17 աշխատողով, մինչդեռ 6-ից 10 տարի գործող ձեռնարկություններում աշխատակազմի թվաքանակն ավելացել էր միջինը մինչև երկու աշխատողով: Միևնույն ժամանակ «հին» ձեռնարկությունները (որոնք հիմնադրվել էին դեռ խորհրդային տարիներին) աշխատակազմի թվաքանակն ավելացրել էր մոտ 30 աշխատողով (Պատկեր 6.1, Մաս Ա):

**Պատկեր 6.1: Հայաստան. Աշխատակազմի փոփոխությունն ըստ ձեռնարկության տարիքի և չափի**




**Աղբյուրը** ՎԶԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.; Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ

**Նշում.** Գերփոքր = 1–10 աշխատող; փոքր = 11–50; միջին = 51–250; մեծ = 250 և ավելի աշխատողներ:

Նմանապես, փոքր ձեռնարկությունները նույն ժամանակաշրջանի ընթացքում կրճատել էին իրենց աշխատողների թվաքանակը՝ միջինը երեքից չորս մարդով, մինչդեռ մեծ ձեռնարկությունները վարձել են տասյակ նոր աշխատողներ (Պատկեր 6.1, Մաս Բ)<sup>30</sup>:

Այդ միտումն ինչ որ տեղ անհամադրելի է անցումային տնտեսությամբ այլ երկրների հետ, որտեղ սովորաբար առավել ակտիվ են նորաստեղծ մասնավոր փոքր և երիտասարդ ձեռնարկությունները: Հայաստանում դիտարկվող ձեռնարկությունների ակտիվության առանձնահատկությունները բացահայտում են, որ նախկինում պետական և այժմ սեփականաշնորհված ձեռնարկությունները հիմնականում մեծ կազմակերպություններ են, և դեռ օգտվում են որոշ արտոնություններից, մինչդեռ նորաստեղծ մասնավոր ձեռնարկությունները, որոնք հիմնականում փոքր չափերի են լինում, զարգացման ճանապարհին հանդիպում են խոչընդոտների: Եթե այդպես է, ապա «խաղաղաշտի» համահարթեցումը և փոքր ձեռնարկությունների համար միջավայրի բարելավումը կարևոր գործոն կլինեն ֆորմալ հատվածում նոր աշխատատեղերի խթանման համար:

**Պատկեր 6.2:** Հայաստան. ձեռնարկությունների արտադրանքի և աշխատողների թվաքանակի աճի փոփոխությունը  
**Աշխատողների թվաքանակի փոփոխությունը 2002թ.-ից 2005թ.**



**Աղբյուրը:** ՎԶԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.: Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ

Ձեռնարկությունների մակարդակով հստակ դրական կապ է դիտարկվում ձեռնարկության աճի (կայուն կապիտալի և իրացման իմաստով) և աշխատատեղերի ստեղծման միջև: Այն ձեռնարկությունները, որոնք ներդրումներ էին կատարում կայուն կապիտալում և ավելացնում իրացումը, վարձում էին նոր աշխատողներ և ավելացնում զբաղվածությունը: Մինչդեռ, գործունեությունը կրճատող ձեռնարկություններն ազատվում էին ավելորդ աշխատուժից: Օրինակ, այն ձեռնարկությունները, որոնք վերջին երեք տարիների ընթացքում ավելացրել են իրենց կայուն կապիտալը միաժամանակ նկատելի ավելացրել են աշխատողների թվաքանակը (մոտ 30 աշխատողով), մինչդեռ այն ձեռնարկությունները, որոնք ներդրումներ չեն կատարել, աշխատակազմն ավելացրել են ավելի քիչ՝ 9 աշխատողով: Իրացման ծավալների աճի և զբաղվածության մակարդակի աճի միջև կապն առավել արտահայտիչ է (Պատկեր 6.2): Այն ձեռնարկությունները, որոնք վերջին երեք տարիների ընթացքում ավելացրել են իրացման ծավալները, աշխատողների թվաքանակը նույնպես ավելացրել են՝ մոտ 25 աշխատողով: Եվ հակառակը, այն ձեռնարկությունները, որոնք կրճատել

<sup>30</sup> Թեև այս տվյալները բնութագրում են ընդհանուր միտումը, բացարձակ թվերը կարող են չհամապատասխանել իրականությանը՝ ընտրանքի փոքր չափով պայմանավորված:

են սպառման ծավալները, կրճատել են նաև աշխատողների թվաքանակը՝ մոտ 7 մարդով: Այսպիսով, ձեռնարկության մակարդակով արտադրանքի աճը հանգեցնում է զբաղվածության մակարդակի աճին: Այնուամենայնիվ, Հայաստանում առկա է ձեռնարկությունների մի խումբ (ընտրանքի մեկ երրորդը), որը չի ավելացրել արտադրության ծավալները, սակայն ընդունել է նոր աշխատողներ: Դա հանգեցնում է աշխատանքի արտադրողականության անկմանը, ինչը բացասական գործոն է, քանի որ ավելացնում է աշխատուժի միավորի արժեքը և ընդհատում մրցակցությունը հայկական տուժած ձեռնարկությունների միջև: Այն կրկին ընդգծում է, որ Հայաստանում որոշ ձեռնարկություններ կարող են գործել ոչ մրցունակ միջավայրում: Եթե շուկան դառնա առավել մրցունակ, նման ձեռնարկությունները պատրաստ են ազատվել ավելորդ աշխատուժից:

Հայաստանում ձեռնարկությունները հեշտությամբ կարողանում են համարել թափուր աշխատատեղերը և վարձել անհրաժեշտ հմտությամբ աշխատողներ: Դա կարող է զարմանալի չթվալ գործազրկության նման բարձր մակարդակի պարագայում: Այնուամենայնիվ, անցումային տնտեսությամբ որոշ երկրներ (ինչպես օրինակ Լեհաստանն ու Սլովակիան) չնայած գործազրկության բարձր մակարդակի առկայությանը, դժվարանում են գտնել համապատասխան որակավորման աշխատողներ: Այսպիսով, այդ համատեքստում Հայաստանն առավել շահեկան դիրքում է, քան անցումային տնտեսությամբ այլ երկրները (Աղյուսակ 6.1): Օրինակ, որակյալ մասնագետ գտնելու համար Հայաստանում պահանջվում է մոտ երկու շաբաթ՝ Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում միջինը հինգ շաբաթվա համեմատ: Համեմատաբար հեշտ է գտնել նաև որակյալ բանվոր: Այսպիսով, որակյալ աշխատուժի պակասը Հայաստանում նոր աշխատատեղերի ստեղծման համար խոչընդոտ չէ:

**Աղյուսակ 6.1.** Համապատասխան հմտություններով աշխատող գտնելը բավական հեշտ է Հայաստանում

	Թափուր աշխատատեղը լրացնելու համար պահանջվող ժամանակը				
	Դեկավարի	Մասնագետի	Որակյալ բանվորի	Ոչ որակյալ բանվորի	Ոչ արտադրական անձնակազմի*
<i>Շաբաթներ</i>					
Հայաստան	2.4	2.3	2.1	1.2	1.5
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	5.7	4.9	3.7	2.1	2.8
Հարավ Արևելյան Եվրոպա	4.5	3.9	2.6	1.5	2.0
Միջին եկամտային ԱՊՀ երկրներ	4.3	4.3	3.8	1.8	3.0
Ցածր եկամտային ԱՊՀ երկրներ	2.4	2.7	2.2	1.3	1.4
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	4.0	3.9	3.2	1.7	2.3

**Աղբյուրը:** ՎՋԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ, Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.: Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ.

**Նշում \*** Արմինիստրացիա, վաճառողներ և այլն


## 6.2. Ներդրումային միջավայրն ու աշխատատեղերի ստեղծումը Հայաստանում

Ներդրումային միջավայրը ասելով, նկատի է առնվում գործոնների այն համախումբը, որով պայմանավորված ձեռնարկությունները որոշում են, թե որքանով է նպատակահարմար շուկա մուտք գործելը, ներդրումներ կատարելը, արտադրությունն ընդլայնելը և նոր աշխատողներ վարձելը: Նպաստավոր ներդրումային միջավայրը խթանում է նոր ձեռնարկությունների ստեղծումն ու զարգացումը և դրանով իսկ օժանդակում նոր աշխատատեղերի ստեղծմանն ու զբաղվածության աճին: Եվ հակառակը, ոչ նպաստավոր ներդրումային միջավայրը խոչընդոտում է նոր աշխատատեղերի ստեղծմանը և հանգեցնում աշխատանքի շուկայի թույլ զարգացվածության: Հետևաբար, ներդրումային միջավայրի



կատարելագործումը զբաղվածության մակարդակի ավելացմանն ու գործազրկության մակարդակի կրճատմանն ուղղված քաղաքականության հիմնական տարրն է:

**Պատկեր 6.3.** Հայաստան: Ոչ ֆորմալ հատվածի դերը  
(Ստվերային տնտեսությունը որպես % ՀՆԱ-ի նկատմամբ, ըստ Բազմաթիվ դինամիկ ցուցանիշների և բազմաթիվ դինամիկ գործոնների ու արժույթի պահանջարկի մեթոդի 2002/03թթ.)



Աղբյուր: Շնոյդեր, 2003թ.

Նշում. Բազմաթիվ դինամիկ ցուցանիշների և բազմաթիվ դինամիկ գործոնների ու արժույթի պահանջարկի մեթոդ՝ DYMIMIC and Currency Demand method, 2002/03թթ

Բարենպաստ ներդրումային միջավայրի կարևորությունն առանձնակի է ընդգծվում հատկապես ձեռնարկությունների ինտենսիվ վերածնունդի և աշխատատեղերի ու աշխատուժի համատարած վերաբաշխման ժամանակաշրջանում, ինչպիսին օրինակ անցումն է ազատական տնտեսակարգին, ինչն այժմ ընթանում է Հայաստանում և Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայի մի շարք երկրներում: Նախ, անցումը նոր տնտեսակարգի ուղեկցվում է մեծ թվով աշխատատեղերի փակմամբ, որի արդյունքում վերանում են հին, ցածր արտադրողականությամբ աշխատանքները: Բնականաբար, նոր աշխատատեղերի ստեղծման տեմպերը պետք է նույնչափ արագ լինեն, որպեսզի «նոր» հատվածը կարողանա կլանել «հին» հատվածից դուրս մնացած աշխատուժը: Երկրորդ, անցումը նոր տնտեսակարգի ուղեկցվում է զանգվածային ազատումներով, այսինքն ձեռնարկությունները ձեռքբազատվում են ավելորդ աշխատուժից և վերացնում են կոմունիստական կարգերին բնորոշ աշխատողներով գերհագեցվածությունը: Սակայն, եթե շատ ձեռնարկություններ իրականացնում են զանգվածային ազատումներ, ապա անհրաժեշտ է ավելացնել ձեռնարկությունների քանակը՝ զբաղվածության կրճատման արդյունքում փակված աշխատատեղերը նորերով փոխարինելու պահանջով պայմանավորված: Օրինակ, Հայաստանում ձեռնարկությունների միջին չափը 1995թ.-ին եղել է 200 աշխատող, իսկ 2003թ.-ին այն նվազել էր մինչև 40 աշխատողից էլ պակաս մակարդակի (Համաշխարհային բանկ, 2005): Ձեռնարկությունների չափի նման զգալի կրճատումը փոխհատուցելու (ինչը բնորոշ է գրեթե բոլոր անցումային տնտեսությամբ երկրներին) և զբաղվածության նախկին մակարդակը վերականգնելու համար ձեռնարկությունների քանակը պետք է առնվազն հնգապատկվի: Բայց իրականում ձեռնարկությունների քանակն ավելացել է միայն 3.4 անգամ: Սա բավական տպավորիչ արդյունք է, սակայն բավարար չէ աշխատանքով ապահովելու բոլոր աշխատանք

փնտրողներին: Արդյունքում նվազում է զբաղվածության մակարդակը և ավելանում գործազրկությունը<sup>31</sup>: Անհրաժեշտ է, որ ստեղծվեն և հիմնվեն նոր, սովորաբար փոքր չափի ձեռնարկություններ, կամ ընդլայնվեն գործող ձեռնարկությունները, որպեսզի երկրի տնտեսությունը թոթափի զանգվածային կրճատումների բեռը:

Հայաստանում զբաղվածության մակարդակը դեռ ցածր է, իսկ գործազրկության մակարդակը՝ բարձր, թեև 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում զբաղվածության մակարդակը որոշակի աճ, իսկ գործազրկությունը որոշակի անկում են գրանցել, իսկ տնտեսական աճը պահպանվել է համեմատաբար երկար ժամանակահատված<sup>32</sup>: Նման «աշխատանքի մասնաբաժնի ցածր աճը» բնորոշ է անցումային տնտեսությամբ երկրներին: Շատ ձեռնարկություններ, հատկապես «հին» ձեռնարկությունները, միշտ ունեցել և հաճախ հիմա էլ ունենում են բավական հնարավորություններ աշխատուժն առավել արդյունավետ օգտագործելու և արտադրությունն ընդլայնելու, առանց նոր աշխատողներ վարձելու անհրաժեշտության: Սակայն, միևնույն ժամանակ, տնտեսական աճի զգալի մասն ապահովում է մեծ չափերի հասնող ոչ ֆորմալ հատվածը, որը «թաքնված» (չգրանցված) զբաղվածության հնարավորություններ է առաջարկում աշխատուժի մի մեծ խմբի (Պատկեր 6.3): Ոչ ֆորմալ հատվածում աշխատանքը հաճախ պատահական և ժամանակավոր բնույթ է կրում և սովորաբար չի հաշվառվում զբաղվածության պաշտոնական տվյալներում: Միևնույն ժամանակ, գործազուրկներից շատերը կարողանում են ժամանակավոր աշխատանք գտնել ոչ ֆորմալ հատվածում:


Ինչու՞ են այդքան շատ ձեռնարկություններ գերադասում գործել ոչ ֆորմալ հատվածում: Մի կողմից նրանցից շատերը խուսափում են ֆորմալ հատված անցնելու հետ կապված մեծ ծախսերից՝ հարկեր, սահմանափակող օրենսդրություն և հնարավոր բյուրակրատական քաշքշուկ: Մյուս կողմից ֆորմալ գործելու առավելությունները մեծ չեն, հատկապես փոքր ձեռնարկությունների համար, որոնց համար հատկապես շատ դժվար է բանկային վարկ ստանալը: Թվարկված գործոնների կարևորության համեմատությունը դիտարկվել է ըստ ֆորմալ հատվածում գործելու և զարգանալու համար ձեռնարկությանը խոչընդոտող գործոնների վերաբերյալ ձեռներեցների տեսակետների: Ինչպես ներկայացնում է Պատկեր 6.4-ը, ֆորմալ հատվածում ձեռնարկության գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոններն են ծանր հարկային վարչարարությունը, բարձր հարկերը, ֆինանսավորման բարձր ծախսերը և կոռուպցիան: Բոլոր այդ գործոնները ավելացնում են ֆորմալ հատվածում գործելու արժեքը և հետևաբար խոչընդոտում նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Որոշ գործոններ, ինչպես օրինակ հարկերը, որպես ձեռնարկությունների համար ծանր բեռ նշվել են բոլոր երկրներում: Այսպիսով, կարևոր էր դիտարկել ներդրումային միջավայրը խոչընդոտող գործոնների վերաբերյալ տեսակետների համեմատությունը: Որո՞նք էին Հայաստանում ներդրումային միջավայրը խոչընդոտող առավել արտահայտված գործոնները Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համեմատ: Անցումային տնտեսությամբ այլ երկրների համեմատ, Հայաստանում առավել անարդար էին ներդրումային միջավայրի տեսանկյունից հետևյալ երեք գործոնները՝ (ա) հարկային վարչարարությունը, (բ) ֆինանսավորման մատչելիությունը և (գ) հողի մատչելիությունը (Պատկեր 6.5):

<sup>31</sup> Ակնհայտ է, որ կառուցվածքային փոփոխությունների արդյունքում աշխատողների մի մասը, որ կորցրել էին իրենց աշխատանքը, դարձել են ինքնագբաղվածներ կամ աշխատանք են գտել ոչ ֆորմալ հատվածում: Մյուսները դուրս են մնացել աշխատուժից:


<sup>32</sup> Տնային տնտեսությունների հետազոտության հիման վրա կատարված գնահատականներ:

**Պատկեր 6.4.** Հարկային վարչաարությունը, հարկերը, ֆինանսավորման արժեքը և կոռուպցիան  
Հայաստանում որպես ֆորմալ աշխատատեղերի ստեղծման արգելքներ (2005թ.)  
**Յվարկվածը որպես հիմնական խնդիր նշած ձեռնարկությունների համամասնությունը**



**Աղբյուր.** ՎԶԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.; Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ

**Պատկեր 6.5.** Հայաստան: Հարկային վարչաարությունը, ֆինանսական աղբյուրների մատչելիությունը և հողի ձեռք բերման հնարավորությունները, որպես գործարարության զարգացումը սահմանափակող գործոններ՝ անցումային տնտեսությամբ այլ երկրների համեմատ



**Աղբյուր.** ՎԶԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.; Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ.


Ճնշող հարկային վարչաարությունը, որպես կանոն, ենթադրում է բյուրոկրատական քաշքշուկ, հարկային օրենսդրության կամայական մեկնաբանություն, ճնշող հարկային ստուգումներ և հաճախ կեղեքում, որոնք հանգեցնում են գործարարության ծախսերի զգալի բարձրացմանը և այդպիսով խոչընդոտում գործարարության զարգացմանը: Ֆինանսական

աղբյուրների սահմանափակությունը և բարձր տոկոսադրույքները, որոնք պայմանավորված են բանկային համակարգի թերզարգացվածությամբ, սահմանափակում են ներդրումները և ձեռնարկությունների գործունեության ընդարձակմանը: Նմանապես, հող ձեռք բերելու դժվարությունները և անկայուն հողի սեփականության իրավունքը արգելակում են ձեռնարկությունների ստեղծմանը և զարգացմանը: Միևնույն ժամանակ, այդ բոլոր գործոնները ավելացնելով ֆորմալ գործարարության հետ կապված ծախսերը և սահմանափակելով վերջինի առավելությունները, նպաստում են ոչ ֆորմալ հատվածի զարգացմանը:

Ներդրումային միջավայրի առավել մանրամասն վերլուծությունը բացահայտում է մի շարք այլ ոլորտներ, որտեղ Հայաստանի ցուցանիշները բավական թույլ են տարածաշրջանի այլ երկրների համեմատ: Առավել արտահայտված են հետևյալ երեք գործոնները՝ (ա) օրենսդրության որակը, (բ) կոռուպցիան և (գ) տեղեկատվական տեխնոլոգիաների մատչելիությունը:

### Պատկեր 6.6: Օրենքների և օրենսդրության մեկնաբանությունն ըստ ձեռնարկությունների Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրներում

Օրենքների և օրենսդրության մեկնաբանությունն անհիմն է և անկանխատեսելի



Աղբյուրը. ՎՋԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.: Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ


Օրենքների և օրենսդրության կամայական ու անկանխատեսելի մեկնաբանությունը, որը նաև հետ է պահում շատ ձեռնարկությունների անցնելու ֆորմալ դաշտ, լուրջ խնդիր է անցումային տնտեսությամբ գրեթե բոլոր երկրների համար: Թեև Հայաստանն այդ շարքում գրավում է կենտրոնական դիրք (Պատկեր 6.6), այդ ուղղությամբ ևս մեծ անելիքներ դեռ կան: Ամեն երրորդ ձեռնարկություն Հայաստանում դժգոհություն է հայտնել խրթին ու խճճված օրենքներից ու կանոնակարգերից և նրանց մեկնաբանություններից: Այդ ցուցանիշը կրկնակի անգամ մեծ է Էստոնիայի և Սլովակիայի ցուցանիշներից, որոնք անցումային տնտեսությամբ երկրների շարքում այդ ոլորտում ունեն լավագույն արդյունքները:

Հայաստանում ձեռնարկությունները նշել են, որ ցանկացած տեսակի թույլություն ստանալու կամ հարկահավաքությունը մի փոքր մեղմացնելու համար հաճախ են ստիպված լինում դիմել կաշառքների (Պատկեր 6.7): Հայաստանում կոռուպցիան կարծես թե ավելի քիչ է տարածաշրջանի շատ այլ երկրների համեմատ, սակայն դեռ բավական տարածված է: Օրինակ, Հայաստանի ձեռնարկությունների մոտ 20 տոկոսը նշել են, որ հարկեր հավաքելն ուղեկցվում է գումարի շորթմամբ, մինչդեռ նման ձեռնարկությունների համամասնությունը շատ չնչին է Էստոնիայում և Սլովենիայում: Ակնհայտ է, որ կոռուպցիան դա հարկ է քիզնեսի վրա և


որպես այդպիսին, խոչընդոտում է ձեռնարկությունների կայուն զարգացումը և արգելակում դրանց անցումը ֆորմալ դաշտ:

**Պատկեր 6.7. Ոչ պաշտոնական վճարները (կաշառքները) Հայաստանում  
Մաս Ա.**

**Ոչ պաշտոնական վճարները բիզնեսի թույլտվություն ստանալու համար**



**Հարկերի հավաքագրման հետ կապված ոչ պաշտոնական վճարները**



**Աղբյուրը:** ՎՋԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.; Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ

Երբ ձեռնարկությունները դիտարկվում են ըստ ժամանակակից տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կիրառման աստիճանի, ապա պարզվում է, որ Հայաստանի ձեռնարկությունները բավական հետ են մնում: Այսպես օրինակ, Հայաստանի ձեռնարկությունների միայն 30 տոկոսն էր օգտագործում ինտերնետ՝ պատվիրատուների և

մատակարարների հետ գործարքների ժամանակ, ինչը չի կազմում տարածաշրջանային միջին ցուցանիշի կեսն անգամ (Աղյուսակ 6.2): Տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների թերզարգացած ենթակառուցվածքը կարող է սահմանափակել Հայաստանում ձեռնարկությունների զարգացման ներուժը և այդպիսով խոչընդոտել նոր աշխատատեղերի առավել արագ ստեղծմանը:

**Աղյուսակ 6.2.** Հայաստան. Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությունը, 2005թ.


Երկիր/տարածաշրջան	Պատվիրատուների ու մատակարարների հետ ինտերնետային կապի միջոցով գործարքներ կատարող ձեռնարկությունների մասնաբաժինը
Հայաստան	30.4
Կենտրոնական և Արևելյան Եվրոպա	78.8
Հարավ-արևելյան Եվրոպա	62.8
Միջին եկամտային ԱՊՀ երկրներ	61.9
Ցածր եկամտային ԱՊՀ երկրներ	35.8
Եվրոպա և Կենտրոնական Ասիա	64.0

**Աղբյուրը:** ՎԶԵԲ (EBRD)–Համաշխարհային բանկ. Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտություն (BEEPS) III, 2005թ.; Համաշխարհային բանկի անձնակազմի հաշվարկներ

Ներդրումային միջավայրի վրա ճնշող տարբեր գործոնների ազդեցության տակ, որոնցից շատերը Հայաստանում ավելի զգալի են՝ անցումային տնտեսությամբ այլ երկրների համեմատ, գործարարությունը Հայաստանում դառնում է նվազ մրցունակ: Ըստ գործարարության մրցունակության երկրների դասակարգման, Հայաստանը զբաղեցնում է 88-րդ տեղը՝ 116 երկրների շարքում (Պատկեր 6.8)<sup>33</sup>: Սա շատ կարևոր գործոն է և նույնպես պայմանավորում է Հայաստանի ֆորմալ հատվածում նոր աշխատատեղերի դանդաղ ստեղծումը:

<sup>33</sup> Դա գնահատվել է ըստ Միջազգային տնտեսական ֆորումի (2005թ.) կողմից մշակված գործարարության մրցունակության համաթվի: Ամփոփ համաթիվը բաղկացած է երկու բաղադրիչներից՝ (ա) ձեռնարկության գործունեություն և ռազմավարություն, և (բ) ներքին գործարար միջավայրի որակ: Մանրամասների համար տես Միջազգային տնտեսական ֆորում (2005թ.): Համաշխարհային բանկի «գործարարությամբ զբաղվելու արժեքը» ցուցանիշը Հայաստանի գործարար միջավայրը գնահատում է առավել դրական, հատկապես ԱՊՀ և Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների համեմատ (Կամինսկի, 2005թ.): Սակայն, ինչպես արդարացի նշել է Կամինսկին, «Հայաստանը իրավական բարեփոխումների չափանիշներով պետք է դասվի որպես լավագույնը առնվազն ԱՊՀ/ԿԱԵ-10 տարածաշրջանում, եթե ոչ լավագույնը միջազգային փորձում»: Թերևս Կամինսկու մտահոգությունները տեղին են, քանզի ս/թ հունվարին հրապարակված Հերիթեջ հիմնադրամի և Վոլ Սթրիթ Ջորնալ ամսագրի համատեղ, տարեկան պարբերականությամբ, հրապարակվող տնտեսական ազատության համաթվով Հայաստանը, 209 երկրների շարքում, տնտեսական ազատության ցուցանիշով զբաղեցրել է 27-րդ տեղը՝ հայտնվելով գերազանցապես ազատ երկրների շարքում, առաջ անցնելով բազմաթիվ տնտեսապես զարգացած երկրներից:

**Պատկեր 6.8:** Հայաստան: Գործարար մրցունակությունը տարածաշրջանի այլ անցումային երկրների համեմատ (2005թ.)  
Գործարար մրցակցության համաթիվ



Աղբյուրը: Միջազգային տնտեսական ֆորում (2005թ.).

### 6.3. Եզրահանգումներ

Հայաստանն ունի նոր աշխատատեղերի ստեղծման գործընթացը և ֆորմալ հատվածի զարգացումն արագացնելու մեծ ներուժ: Զեռնարկություններում կատարվում են ներդրումներ, որոնց արդյունքում ձեռնարկություններն ընդլայնվում են, ավելանում է աշխատողների թվաքանակը: Շատ ձեռնարկություններ համարում են, որ իրենց աշխատակազմը փոքրաթիվ է և ցածր է բավարար մակարդակից և կցանկանալին վարձել նոր աշխատողներ: Այնուամենայնիվ, մի շարք ձեռնարկություններ, հատկապես մասնավոր փոքր ձեռնարկությունները, բազմաթիվ խոչընդոտների են հանդիպում իրենց գործունեության ծավալման և ընդարձակման ընթացքում, ինչն էլ բացասաբար է անդրադառնում ֆորմալ հատվածում աշխատատեղերի ստեղծմանը:

Համաձայն Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի և Համաշխարհային բանկի կողմից Հայաստանում իրականացրած Գործարար միջավայրի և ձեռնարկությունների գործունեության հետազոտությանը մասնակցած գործարարների կարծիքի Հայաստանում գործարար միջավայրի զարգացմանը խոչընդոտող երեք կարևոր ոլորտներն են. ա) **կառավարումը**. ինչը ներառում է ճնշող և ծանր հարկային վարչարարությունն ու ստուգումները, գործարարությանն առնչվող օրենքների և օրենսդրության կամայական և անհիմն մեկնաբանությունները, բյուրոկրատների ձեռքում՝ առանց որոշակի պարտավորությունների և սեփական հայեցողությամբ գործելու իրավունքը (discretionary power) և կոռուպցիան, բ) **ֆինանսական միջոցների մատչելիությունը**. վարկ ստանալը շատ թանկ է ու շատ դժվար հատկապես փոքր ձեռնարկությունների համար: Չկա փոխառուների վարկունակության վերաբերյալ հանրամատչելի տեղեկատվություն, որը կնվազեցնի վարկավորման ռիսկը: Չկան գործարարության խորհրդատվական ծառայություններ, որոնք կաջակցեն ձեռներեցներին համապատասխան գործարար նախագծեր մշակելու և վարկավորման համար դիմելու գործում, գ) **հողի մատչելիությունը**. հող ձեռք բերելը դժվար է, իսկ հողի սեփականության իրավունքը պաշտպանված չէ, ինչն արգելակում է ներդրումները: Բացի այդ, Հայաստանի ձեռնարկությունների մրցունակությունը սահմանափակվում է **ժամանակակից**

**Ենթակառուցվածքներից,** հատկապես տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներից օգտվելու նվազ հնարավորություններով պայմանավորված:

Ներդրումային միջավայրը խոչընդոտող այդ արգելքների վերացման պարագայում, ֆորմալ հատվածում ավելի շատ աշխատատեղեր կստեղծվեն, իսկ գործազրկությունը կնվազի: Զբաղվածության մակարդակի աճի ներուժը հատկապես մեծ է Հայաստանի աշխատուժի բարձր որակավորմամբ պայմանավորված: Որակյալ աշխատուժի պակասը Հայաստանում նոր աշխատատեղերի ստեղծման համար խոչընդոտ չէ: Այսպիսով, աշխատատեղերի ստեղծման հիմնական խթանը ձեռնարկությունների գործունեությունը սահմանափակող և արգելակող խոչընդոտների վերացումն է, այսինքն՝ ներդրումային միջավայրի կատարելագործումը:



**ՄԱՍ 2. ՀԱՅԱՍՏԱՆ. ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ  
ԱՂԲԱՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

## Գլուխ VII: Կրթություն և Առողջապահություն

Հայաստանն ունի առողջապահական և կրթական լավ համակարգեր, քանզի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համեմատ բավական ցածր պետական ֆինանսավորմամբ կարողացել է ապահովել առողջապահության և կրթության լավ ցուցանիշներ: Մահացությունն ու մահացության ստանդատ գործակիցը ցածր են, իսկ կյանքի առաջին տարում, մինչև 5 տարեկանների և մայրամահացության գործակիցները նվազել են 1990թ.-ի համապատասխան ցուցանիշների համեմատ: Բարձր է պատվաստման մակարդակը: Գրեթե ողջ բնակչությունը գրագետ է: Հանրակրթությունը մատչելի է բոլորի համար՝ հավասարապես թե՛ տղաների և թե՛ աղջիկների համար: Միջնակարգ կրթության ավարտման տեսակարար կշիռը բարձր է: Ավելացել են կրթության և առողջապահության գծով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինները, փոփոխվել է նաև ծախսերի ենթաճյուղային կառուցվածքը՝ հիմնական շեշտադրում անելով միջնակարգ կրթությանն ու առաջնային բուժօգնության վրա: Այդուհանդերձ, դեռ բավական ցածր է առողջապահության և կրթության պետական ֆինանսավորումը և այդ ծառայությունների ծախսերի հիմնական բեռը կրում է բնակչությունը: Հիվանդանոցներում, ինչպես նաև բարձրագույն կրթության համար կատարվող բնակչության ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում ոչ աղքատ բնակչությանը, քանի որ աղքատ բնակչության համեմատ, ոչ աղքատներն ավելի են օգտվում այդ ծառայություններից:

Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում և բարձրագույն կրթական հաստատություններում համեմատաբար ավելի ցածր է, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը բավական նկատելի: Բարձրագույն կրթության հետ կապված բարձր ծախսերը և հատկապես դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը: Ոչ աղքատ, ինչպես նաև քաղաքաբնակ տնային տնտեսությունների երեխաներն ավելի լավ են սովորում, ինչը պայմանավորված է աղքատ տնային տնտեսությունների համեմատ, ոչ աղքատ տնային տնտեսությունների համար, ինչպես նաև գյուղաբնակների համեմատ քաղաքաբնակների համար առավել բարձր որակի կրթության մատչելիության տարբերությամբ: Առողջապահական ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավական ցածր է, հատկապես գյուղական բնակավայրերում և աղքատ բնակչության մոտ: Համախմբված բյուջեում առողջապահության համակարգին հատկացված ծախսերի ցածր մակարդակը, ինչպես նաև առողջապահական ծառայությունների մատչելիությունը (առողջապահական ծառայությունների դիմաց վճարումները հիմնականում ոչ պաշտոնական են) այն հիմնական պատճառներն են, որոնք պայմանավորում են բժշկական ծառայություններից աղքատ բնակչության չօգտվելը, կամ դիմելը ոչ ֆորմալ բուժ. ծառայությունների:

### 7.1. Հազարամյակի զարգացման նպատակները Հայաստանում

Հայաստանն ունի առողջապահական և կրթական լավ համակարգեր, քանզի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համեմատ բավական ցածր պետական ֆինանսավորմամբ, կարողացել է ապահովել առողջապահության և կրթության լավ ցուցանիշներ (համաձայն Եվրոպական չափորոշիչների): 2004թ.-ին կյանքի սպասվող տևողությունը ծնվելու պահից տղամարդկանց մոտ կազմել է 70.3 տարի, որն ավելի բարձր ցուցանիշ է, քան ԵԿԱ շատ այլ երկրներում, իսկ կանանց մոտ՝ 76.4 տարի: Այդ երկու ցուցանիշներն էլ գերազանցել են 1990թ.-ին գրանցված իրենց համապատասխան մակարդակները:

#### Ներդիր 7.1. Հայաստան. ԱՀՌԾ և առողջապահություն ու կրթություն

Լավ կրթված և առողջ բնակչությունը ոչ միայն որոշիչ նախապայման է ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման համար, այլև կարևոր նախադրյալ թե՛ տնային տնտեսությունների և թե՛ հենց անհատների բարգավաճման համար: Բնականաբար,

Հայաստանի Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի գերակայություններից են մարդկային կապիտալի պաշտպանությունն ու զարգացումը, ինչպես նաև մարդկային աղքատության էական կրճատումը: Առողջապահության և կրթության ծառայությունների որակի, արդյունավետության ու արդյունատվության կատարելագործմանն ուղղված բարեփոխումների շարունակականությունն ու զարգացումը, ինչպես նաև դրանց պետական ֆինանսավորման ծավալների ավելացումն ԱՀՌԾ մարդկային կապիտալի զարգացման նպատակների իրականացման Կառավարության ռազմավարության երկու որոշիչ բաղկացուցիչներն են:

#### Պատկեր 7.1. Հայաստան. Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման ներուժը

Ցածր եկամտուվ ԱՊՀ երկրներ	ՀՁՆ 2		ՀՁՆ 3	ՀՁՆ 4	ՀՁՆ 5	ՀՁՆ 6	ՀՁՆ 7
	ՀՁՆ 1	Ընդգրկվածու- թյունը կրթական համա- կարգում	Տղաների և աղջիկների հավասար ընդգրկվա- ծությունը դպրոցում				
	Աղքատու- թյուն			Մանկամա հացություն	Մայրամա հացություն	ՄԻԱՎ/ՋԻԱՀ և մալարիա	Խմելու ջրի մատչե- լիություն
Հայաստան							
Ադրբեջան							
Վրաստան							
Մոլդովա							
Ռուբենկստան							
Դրոգստան							
Տաջիկստան							
<p><b>Բանալի</b></p> <p><b>Հնարավոր է</b> ՀՁՆ հնարավոր է, որ կիրականանա</p> <p><b>Հավանաբար</b> Դժվար է ասել ՀՁՆ կիրականանա թե՞ ոչ</p> <p><b>Անհնար է</b> ՀՁՆ չի կիրականանա</p> <p><b>Տվյալ չկա</b> Տվյալները բավարար չեն եզրակացություն կատարելու համար</p>							

Աղբյուրը.. Համաշխարհային բանկ 2004թ.

Պաշտոնական վիճակագրությունը գրանցել է մանկա- և մայրամահացության ցուցանիշների անկում: 2004թ. ընթացքում կյանքի առաջին տարում արձանագրվել է երեխաների մահացության 430 դեպք, իսկ մանկական մահացության գործակիցը 1000 կենդանածնի հաշվով կազմել է 11.6 պրոմիլ՝ 1990թ-ի 18.5 պրոմիլի դիմաց: Մահացությունը մինչև 5 տարեկանների մոտ (1000 կենդանի ծնվածի հաշվով) կազմել է 13.0 պրոմիլ՝ 1990թ-ի 23.8 պրոմիլի դիմաց: Հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում, 2004թ. գրանցվել է մայրական մահացության 10 դեպք, որով պայմանավորված՝ մայրամահացության գործակիցը կազմել է 26.7 (10000 կենդանածնի հաշվով)՝ 1990թ-ի 40.1 դիմաց: Անգրագիտությունը խնդիր չէ Հայաստանի համար, քանզի գրեթե ողջ բնակչությունը կրթված է: Հիմնական կրթությունը մատչելի է բոլորի համար՝ հավասարապես թե՛ տղաների և թե՛ աղջիկների համար: Հանրակրթական դպրոցն ավարտողների տեսակարար կշիռը բավական բարձր է: Այդ լավ ցուցանիշների հիման վրա Համաշխարհային բանկը դրական է գնահատել Հայաստանի ներուժը՝ Հազարամյակի զարգացման նպատակների իրականացման գործում (Պատկեր 7.1):

#### 7.2. Պետական ծախսերը առողջապահության և կրթության ոլորտներում

2004թ.-ին առողջապահության և կրթության պետական ֆինանսավորումը համապատասխանաբար կազմել է ՀՆԱ-ի 1.3 և 2.8 տոկոսը: Չնայած համախմբված բյուջեի այդ գծով հատկացումներն իրական արտահայտությամբ էապես ավելացել են, այդուհանդերձ դրանք բավական ցածր են ԱՊՀ այլ երկրների համեմատ, հատկապես երբ հաշվի է առնվում Հայաստանի զարգացման տեմպերն ու մակարդակը: Այդուհանդերձ 7.1-ը ներկայացնում է առողջապահության և կրթության գծով կատարված ծախսերը: 2004թ.-ի ՏՏԿԱՀ գնահատել է այդ ծառայությունների վրա կատարված բնակչության մասնավոր ծախսերը, որոնք նույնպես ներկայացված են ստորև

աղյուսակում: Հայաստանի քաղաքացիների կրթության վրա կատարած ծախսերը գրեթե նույնքան են, որքան որ պետական ծախսերը, այնպես որ կրթության համակարգ ներդրված ընդհանուր ռեսուրսները կազմել են ՀՆԱ-ի մոտ 5 տոկոսը: Բնակչության ծախսերն առողջապահության վրա 3.4 անգամ ավել են եղել, քան պետական ծախսերը. առողջապահության հատված ներդրված պետական ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 1.3 տոկոսը<sup>1</sup>, մինչդեռ քաղաքացիների ներդրումը կազմել է 4.5 տոկոս: Այսպիսով, առողջապահության ոլորտի ֆինանսավորումը կազմել է ՀՆԱ-ի մոտ 6 տոկոսը: Քանի որ առողջապահության համակարգում կատարված բնակչության ծախսերի գերակշիռ մասը ոչ ֆորմալ վճարումներն են, Կառավարության համար բավական բարդ խնդիր է առողջապահության հատվածում կատարված ծախսերի ֆորմալացումը (պաշտոնականացնելը):

**Աղյուսակ 7.1.** Հայաստան. Բնակչության և հանրային ծախսերը կրթության և առողջապահության ոլորտներում 1995-2004թթ.

	1995թ.	1997թ.	1999թ.	2001թ.	2003թ.	2004թ.
<b>Կրթություն և գիտություն</b>						
Հանրային ծախսեր՝ % համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ	10.73	10.1	8.03	11.5	10.53	13.46
Հանրային ծախսեր՝ % ՀՆԱ-ի նկատմամբ	2.82	1.97	2.3	2.54	2.16	2.55
Բնակչության՝ % ՀՆԱ-ի նկատմամբ *	S.Չ.	S.Չ.	S.Չ.	S.Չ.	S.Չ.	2.28
<b>Առողջապահություն</b>						
Հանրային ծախսեր՝ % համախմբված բյուջեի ծախսերի նկատմամբ	7.02	6.10	5.35	6.07	5.87	6.86
Հանրային ծախսեր՝ % ՀՆԱ-ի նկատմամբ	1.85	1.19	1.38	1.34	1.17	1.30
Բնակչության՝ % ՀՆԱ-ի նկատմամբ *	S.Չ.	S.Չ.	S.Չ.	S.Չ.	S.Չ.	4.55


Աղբյուրը. ՀՀ ԱՎԾ և ՏՏԿԱՀ 2004թ.

Նշում. \*Բնակչության ծախսերը գնահատվել են 2004թ.-ի ՏՏԿԱՀ տվյալների և Համաշխարհային զարգացման ցուցանիշների (WDI) տվյալների բազայի հիման վրա: S.Չ – տվյալ չկա:

Առողջապահության և կրթության գծով պետական ֆինանսավորման փոփոխությունն արտացոլում է համախմբված բյուջեի ծախսերն առավել աղքատամետ դարձնելու կառավարության ջանքերը՝ ուղղելով այն սոցիալական հատվածների բարելավմանն ու զարգացմանը: Բնականաբար ավելացել են կրթության և առողջապահության գծով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժիններն, ի դեպ կրթության համակարգին ուղղված ծախսերը գերազանցել են առողջապահության ոլորտին տրամադրված ծախսերին: 2004թ.-ին կրթության ոլորտ ուղղված ծախսերի մասնաբաժինը կազմել է համախմբված բյուջեի ծախսերի 13 տոկոսը (1997թ.-ի 8.9 տոկոսի համեմատ), իսկ առողջապահության գծով ծախսերը կազմել են համախմբված բյուջեի ծախսերի 6.2 տոկոսը (1997թ.-ի 5.5 տոկոսի դիմաց): Ծախսերի ենթադյուղային կառուցվածքը նույնպես փոփոխվել է՝ հիմնական շեշտադրում անելով հիմնական կրթությանն ու առաջնային բուժօգնությանը (Պատկերներ 7.2 և 7.3):

<sup>1</sup> Առողջապահության գծով կատարված պետական ծախսերը հիմնականում վերաբերում են պետական պատվերով տրամադրվող ծառայությունների հիմնական փաթեթին, որից կարող են օգտվել ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ բնակչության առանձին սոցիալական խմբեր՝ որոշակի համաֆինանսավորմամբ, իսկ աղքատության ընտանեկան նպաստ ստացող և 38-ից բարձր կարիքավորության միավոր ունեցող տնային տնտեսությունների անդամների համար պետական պատվերի ներքո տրամադրվող բուժ ծառայություններն անվճար են:


**Պատկեր 7.2:** Հայաստան: Կրթության գծով համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքը 1995-2004թթ.-ին



Աղբյուրը. Հայաստան. Պետական վիճակագրություն (վարչական տվյալներ)


Կրկին անգամ բացահայտ երևում է, որ փոփոխությունները հիմնականում վերաբերել են կրթության համակարգին, որտեղ պետական ֆինանսավորման գրեթե երեք քառորդն ուղղվել է հիմնական կրթությանը: Հիմնական կրթությանն ուղղված միջոցների ավելացումը հիմնականում նախատեսված է դպրոցների վերակառուցման, ներառյալ ջեռուցման նոր համակարգերի ներդրման համար, ինչպես նաև ուսուցիչների աշխատավարձերի բարձրացման համար: Արդեն 2005թ.-ին ուսուցիչների միջին աշխատավարձը կազմել է 50500 դրամ (մոտ 110.3 ԱՄՆ դոլար<sup>2</sup>): Առողջապահական համակարգում ընդհանուր ծախսերի կեսից մի փոքր ավելին՝ 53 տոկոսն ուղղվել է հիվանդանոցների ֆինանսավորմանը:

**Պատկեր 7.3.** Հայաստան. Առողջապահության համակարգում համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքը 2002-2004թթ.-ին



<sup>2</sup> Ըստ 1\$=457.49 2005թ.-ի միջին փոխարժեքի

**Պատկեր 7.4:** Հայաստան: Աղքատ բնակչությունը և առողջապահության և կրթության համակարգերին հատկացված պետական ծախսերը



**Աղբյուրը.** Անժելա- Ուրդինոյա, Յան և Պրինա (2006թ.) 2004թ.-ի ՏՏԿԱՀ հիման վրա

**Նշում:** Որպես կրթության ծառայություններից օգտվողներ գնահատվել են այն տնային տնտեսությունները որոնց անդամներից առնվազն մեկը հաճախում է հանրային կրթական հաստատություն: Որպես առողջապահության ծառայություններից օգտվողներ են գնահատվել այն տնային տնտեսությունները, որոնց անդամներից առնվազն մեկը բուժում է ստացել հանրային առողջապահական հաստատությունում: Չնայած սպառողները որոշվել են տնային տնտեսությունների մակարդակով, գծապատկերում ներկայացված մասնաբաժինները կշռված են բնակչության կտրվածքով: Գնդի չափը համապատասխանում է ծառայությունը մատուցելու համար մեկ շնչի հաշվով կատարված ընդամենը պետական ծախսերին: Եթե հիմնական կրթության գումարը 5 անգամ գերազանցում է բարձրագույն կրթության գնդին, դա նշանակում է, որ համախմբված բյուջեի հատկացումները հիմնական կրթության համար մեկ շնչի հաշվով հինգ անգամ ավելի են՝ բարձրագույն կրթությանը հատկացված գումարներից:

Պատկեր 7.4-ը ցույց է տալիս, թե որքանով է աղքատ բնակչությունը Հայաստանում կարողանում օգտվել առողջապահության և կրթության համակարգերին հատկացված պետական ծախսերից: Հորիզոնական առանցքը ներկայացնում է հատկացված ռեսուրսները, այսինքն՝ առողջապահության և կրթության ծառայություններից օգտվող աղքատ բնակչության համար հատկացված ռեսուրսների տոկոսը: Ուղղահայաց առանցքը ներկայացնում է աղքատ բնակչության ընդգրկվածությունը, այսինքն՝ առողջապահության և կրթության ծառայություններից օգտվող աղքատ բնակչության տոկոսը:

**Ընդգրկվածությունը:** Բարձր է աղքատ սպառողների ընդգրկվածությունը<sup>3</sup> հիմնական կրթության ծառայություններում՝ ավելի քան 90 տոկոս: Հակառակը, աղքատ սպառողների ընդգրկվածությունը միզակարգ ընդհանուր և բարձրագույն կրթական համակարգի ծառայություններում ցածր է: Աղքատ սպառողների մոտ 30%-ն ունեն միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում սովորող առնվազն մեկ անդամ և միայն 10 տոկոսի մոտ կար բարձրագույն կրթական հաստատություն հաճախող անդամ: Ինչ վերաբերում է առողջապահական ծառայություններին, ապա այդ ծառայություններից օգտվող աղքատ սպառողների միայն 60 տոկոսն է բուժ. օգնություն ստացել հանրային բուժարարական (ամբուլատոր) բուժ. հաստատություններում, և միայն 5 տոկոսն է (շատ ցածր մասնաբաժինը) օգտվել հանրային հիվանդանոցային (ստացիոնար) բուժ. օգնությունից:

<sup>3</sup> Որպես կրթության ծառայություններից օգտվողներ գնահատվել են այն տնային տնտեսությունները որոնց անդամներից առնվազն մեկը հաճախում է հանրային կրթական հաստատություն: Որպես առողջապահության ծառայություններից օգտվողներ են գնահատվել այն տնային տնտեսությունները, որոնց անդամներից առնվազն մեկը բուժում է ստացել հանրային առողջապահական հաստատությունում:

**Ռեսուրսների հատկացումը:** Քանի որ աղքատ բնակչությունը կազմում է ընդհանուր բնակչության 34 տոկոսը, ռեսուրսների համարժեք հատկացում ապահովելու համար, աղքատ բնակչությանը պետք հասնի ռեսուրսների հավասար մասնաբաժին: Եթե աղքատ բնակչությանը հատկացված ռեսուրսների մասնաբաժինն ավելի մեծ է, քան ընդհանուր բնակչության մեջ աղքատների տեսակարար կշիռը, ապա պետական հատկացումները համարվում են աղքատամետ, այսինքն՝ առաջանցիկ (պրոգրեսիվ): Եթե պատկերը հակառակն է, ապա պետական հատկացումները համարվում են հարուստներին ուղղված կամ ետընթացական (ռեգրեսիվ): Ինչպես երևում է Պատկեր 7.4-ում, հիմնական և ընդհանուր միջնակարգ կրթությանը հատկացված ռեսուրսներն արդարացի են բաշխված, մինչդեռ բարձրագույն կրթության պետական ֆինանսավորման հիմնական մասն ուղղվում է ոչ աղքատներին, քանզի աղքատ սպառողները ստանում են բարձրագույն կրթության համար հատկացված պետական միջոցների միայն 18 տոկոսը: Առողջապահական ծառայություններն ետընթացական են, սակայն հիմնականում հիվանդանոցային (ստացիոնար), քան բուժարարական (ամբուլատոր) բուժ ծառայություններ մատուցելիս: Ամբուլատոր բուժ. սպասարկման համար հատկացված պետական ֆինանսավորման մոտ 31 տոկոսը օգտագործվում է աղքատ սպառողների կողմից, իսկ հիվանդանոցային բուժման դեպքում աղքատները կարողանում են օգտվել պետական ֆինանսավորման միայն 20 տոկոսից:

### 7.3. Սպառողների տեսակետն առողջապահական և կրթական ծառայությունների վերաբերյալ

Ըստ 2004թ.-ին իրականացրած ՏՏԿԱՀ արդյունքների, առողջական վիճակն ու կրթական մակարդակն իրենց ազդեցությունն են թողնում տնային տնտեսությունների կողմից իրենց իսկ սոցիալ-տնտեսական կարգավիճակին տրված գնահատականի վրա: Հիվանդ անդամ ունեցող տնային տնտեսությունները համարում են իրենց աղքատ, համանման բնութագրիչներ ունեցող, սակայն առանց հիվանդ անդամի այլ տնային տնտեսությունների համեմատ: Մյուս կողմից, լավ կրթված գլխավոր ունեցող կամ ամուսիններով տնային տնտեսությունները շատ քիչ հավանականությամբ է, որ իրենց կհամարեն աղքատ: Բարձրագույն կրթությամբ անհատներով գլխավորվող տնային տնտեսությունների սպառումը մեծ է և նման տնային տնտեսությունների աղքատ լինելու ռիսկը բավական ցածր է (տես Աղյուսակներ A7.1 և A7.2 Վիճակագրական հավելվածում): Չնայած այդ տեսակետներն արտացոլում են առողջական վիճակի ու կրթական մակարդակի սուբյեկտիվ կարծիքը, դրանք պարունակում են նաև օբյեկտիվ իրավիճակ, ինչպիսին օրինակ փաստացի ստացված ծառայությունների որակը: Առողջապահական ծառայությունները բավական թանկ են Հայաստանում և հիմնականում այդ ծախսերը կրում են տնային տնտեսությունները, և հետևաբար այդ ծախսերը մեծ ցնցում են տնային տնտեսության բյուջեի համար և կարող են նրան հետ մղել դեպի կամ ավելի խոր աղքատություն:

**Աղյուսակ 7.2. Հայաստան.** Անկարողությունն ապահովելու լավ առողջական վիճակ հիմնական խնդիր է առողջապահության ծառայությունների սպառողների շրջանում

	Ամենա աղքատ քվանտիլ	2-րդ	4-րդ	Ամենա հարուստ քվանտիլ	Ամենա աղքատ քվանտիլ	2-րդ	4-րդ	Ամենա հարուստ քվանտիլ
	<b>Չեն կարող ապահովել լավ կրթություն</b>				<b>Չեն կարող ապահովել լավ առողջություն</b>			
<b>Սպառող ունեցող տնային տնտեսություն</b>								
Հիմնական խնդիր է	16.0	16.7	19.9	18.5	64.8	61.6	65.1	56.1
Հիմնական խնդիր չէ	84.0	83.3	80.1	81.6	35.2	38.4	34.9	43.9

Աղբյուրը՝ Հայաստան ՏՏԿԱՀ 2004թ.

**Նշում:** Որպես կրթության ծառայություններից օգտվողներ գնահատվել են այն տնային տնտեսությունները որոնց անդամներից առնվազն մեկը հաճախում է հանրային կրթության հաստատություն: Որպես առողջապահության ծառայություններից օգտվողներ են գնահատվել այն տնային տնտեսությունները, որոնց անդամներից առնվազն մեկը բուժում է ստացել հանրային առողջապահական հաստատությունում:

Առողջապահական ծառայությունների սպառողները լավ առողջական վիճակ ապահովելու անկարողությունը համարում են հիմնական խնդիր: Առողջապահական ծառայություններից բոլոր օգնավորների 60 տոկոսից ավելին նշել են, որ լավ առողջական վիճակ ապահովելու

անկարողությունը լուրջ խնդիր է հանդիսանում իրենց համար: Աղքատներն ավելի են այդ հարցով մտահոգվում, քան ոչ աղքատները: Իսկ լավ կրթություն ապահովելու անկարողությունը համարվել է ոչ այնքան մեծ խնդիր (Աղյուսակ 7.2): Այդ հարցով աղքատներն ավելի քիչ են մտահոգվում, քան ոչ աղքատները: Տեսակետների այդ տարբերությունը կարող է պայմանավորված լինել պետականորեն ֆինանսավորվող ծառայությունների մատչելիության տարբերությամբ: Եթե ընդհանուր միջնակարգ կրթությունն անվճար է և մատչելի բոլորի համար, առողջապահական ծառայությունների մատչելիությունն այդպիսին չէ, քանի որ առողջապահական ծառայությունները մատչելի են միայն «վարձ ծառայության դիմաց» սկզբունքի հիան վրա:

Սպառողների անբավարարվածության աստիճանը մատուցված ծառայություններից բավական բարձր է, ընդ որում ավելի բարձր առողջապահական ծառայություններից, քան կրթական և աղքատների մոտ անբավարարվածությունն ավելի բարձր է, քան ոչ աղքատների մոտ (Աղյուսակ 7.3): Հիվանդ անդամ ունեցող բոլոր տնային տնտեսությունների գլխավորների 40-ից 45 տոկոսը նշել են, որ չեն գոհացել մատուցված առողջապահական ծառայություններից: Այդ ցուցանիշը բավական ցածր է կրթական ծառայությունների վերաբերյալ՝ 32 տոկոս: Սպառողների մեծ մասը կարծում է, որ ծառայությունների որակը վատացել է, և ոչ թե բարելավվել: Շատերը սակայն համոզված են, որ ծառայությունների որակը չի փոխվել: Եվ վերջապես, արդյունքները հուշում են, որ որքան աղքատ է տնային տնտեսությունն այնքան փոքր է ծառայությունների որակից բավարարված լինելու հավանականությունը: Նման արդյունքները վկայում են որ առողջապահական և կրթության ծառայությունների որակն ու մատչելիությունը զգալի տարբերվում է աղքատների և ոչ աղքատների մոտ: Շատ քիչ թվով սպառողներ են արձանագրել իրենց դժգոհությունը, որը կարող է ցույց տալ որ նրանք անուժ էին պայքարելու ծառայություն մատուցողների հետ: Այդուհանդերձ, սպառողների կեսից ավելին, որոնք դժգոհություններ են ունեցել, նշել են, որ ծառայություն մատուցողները քայլեր են ձեռնարկել իրենց խնդիրը լուծելու համար: Առավել հարուստ սպառողներն ավելի շատ էին բողոքում:

**Աղյուսակ 7.3.** Հայաստան. Սպառողների բավարարվածությունն առողջապահական և կրթական ծառայություններից, 2004թ.-ին

	Կրթություն				Առողջապահություն			
	Ամենա աղքատ քվանտիլ	2-րդ	4- րդ	Ամենա հարուստ քվանտիլ	Ամենա աղքատ քվանտիլ	2-րդ	4-րդ	Ամենա հարուստ քվանտիլ
<b>Բավարարված են ծառայությունների որակից:</b>								
% ոչ բավարարվածների	32.7	31.3	31.8	31.4	43.4	45.1	40.9	40.8
% բավարարվածների	59.1	62.2	62.6	62.6	40.5	39.3	42.5	45.7
% դժվարացել են պատասխանել	8.2	6.5	5.6	6.0	16.0	15.6	16.6	13.5
<b>Ծառայությունների որակը փոխվել է վերջին տարվա ընթացքում:</b>								
% այո, բարելավվել է	5.2	4.9	6.5	9.4	3.2	2.8	3.8	6.0
% ոչ, չի բարելավվել	11.4	9.6	12.6	13.1	13.5	10.3	11.8	10.9
% առանց փոփոխության	75.8	79.0	76.1	71.8	69.1	73.0	70.4	68.9
% դժվարացել են պատասխանել	7.6	6.5	4.8	5.7	14.3	13.9	14.0	14.3
<b>Բողոքարկել են:</b>								
% այո	2.2	3.1	2.9	2.6	4.6	5.0	5.3	6.3
% ոչ	97.8	96.9	97.1	97.5	95.4	95.0	94.7	93.7

Աղբյուրը. Հայաստան SSՀԱՀ 2004թ.




## 7.4. Կրթությունը և աղքատությունը Հայաստանում

### Ընդգրկվածությունը կրթական համակարգում

Չնայան սեղմ բյուջեի սահմանափակումներին, Հայաստանը կարողացել է պահպանել բաժր ընդգրկվածություն հիմնական կրթության համակարգում: Եվ թեև կրթության համակարգին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի մոտ 8 տոկոսից՝ 1990-ականներին նվազել է մինչև միջինը 2.9 տոկոսի՝ 2000-ականներին, ընդհանուր ընդգրկվածության աստիճանը շատ թերևակի է նվազել, իսկ ավարտման աստիճանը կայուն տեմպերով ավելացել է: Կրթական համակարգում ընդգրկվածության մակարդակը՝ գնահատված 2004թ.-ի տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության հիման վրա, ներկայացված է Պատկեր 7.5-ում<sup>4</sup>: Գնահատականները վկայում են հիմնական կրթական համակարգում շատ բարձր ընդգրկվածության աստիճանի մասին (95 տոկոս) և ըստ սպառման քվանտիլների բաշխվածության այդ մակարդակը շատ չի տարբերվում: Միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում ընդգրկվածության աստիճանը համեմատաբար ավելի ցածր է՝ մոտ 69 տոկոս և տարբերությունն աղքատների և ոչ աղքատների միջև արդեն նկատելի է (ամենաստորին և ամենավերին քվանտիլների միջև ընդգրկվածության զուտ մակարդակները տարբերվում են 10 տոկոսային կետով): Նախադպրոցական և բարձրագույն կրթական համակարգերում ընդգրկվածության զուտ աստիճանը կազմել է համապատասխանաբար 16 և 25 տոկոս, իսկ տարբերությունն աղքատների և ոչ աղքատների միջև զգալի է: Եթե ամենավերին քվանտիլում համապատասխան տարիքի երեխաների (ուսանողների) ընդգրկվածությունը նախադպրոցական (բարձրագույն) կրթական համակարգում կազմել է 41 (38) տոկոս, ապա ամենաստորին քվանտիլում համապատասխան տարիքի բնակչության մոտ այն կազմել է միայն 19 (5) տոկոս:


**Պատկեր 7.5.** Հայաստան. Կրթական համակարգում զուտ ընդգրկվածության աստիճանն ըստ կրթության մակարդակների և սպառման քվանտիլային խմբերի



Հիմնական կրթություն ստանալուց հետո կրթական համակարգից դուրս մնալը շատ մեծ տոկոս է կազմում հատկապես աղքատ ընտանիքների համապատասխան տարիքի բնակչության մոտ (Պատկեր 7.6):

<sup>4</sup> Կրթական համակարգում ընդգրկվածության աստիճանը ըստ ՏՏԿԱՀ կարող է տարբեր լինել վարչական վիճակագրության տվյալներից: 2004թ.-ի ՏՏԿԱՀ հիման վրա ընդգրկվածության զուտ և ամբողջական մակարդակներն ըստ քվանտիլների, սեռի և տարածաշրջանների ներկայացված են Վիճակագրական հավելվածի աղյուսակ A7.3-ում:

**Պատկեր 7.6.** Հայաստան. Ընդգրկվածության աստիճանն աղքատների և ոչ աղքատների շրջանում ըստ սեռի, տարիքի և կրթության մակարդակի



Աղբյուրը. SSՀԱՀ 2004թ.

Ինչպես երևում է Պատկեր 7.6-ում, նախադպրոցական համակարգում մինչև վեց տարեկանների տարիքային խմբի ընդգրկվածության տարբերությունը բավական մեծ է աղքատների և ոչ աղքատների միջև: Համամաձայն ստացված տվյալների ամենավերին քվանտիլային խմբում մինչև վեց տարեկան տղա երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական համակարգում շատ ավելի բարձր է, քան նույն սոցիալ-տնտեսական խմբի աղջիկների ընդգրկվածությունը: Ամենավերին քվանտիլում տղա երեխաների ընդգրկվածությունը նվազում է 5-ից 6 տարիքային խմբում, որը պայմանավորված է նաև նրանց ավելի վաղ տարիքում միջնակարգ դպրոց անցնելու հետ՝ այլ սոցիալ-տնտեսական խմբերի համեմատ: Յոթից 14 տարեկանների մոտ ընդգրկվածության աստիճանն ըստ սեռի և տարիքի գրեթե նույնն է և չի տարբերվում ըստ սոցիալ-տնտեսական կարգավիճակի: 14 տարեկանների մոտ (հատկապես հիմնական կրթությունն ավարտելուց հետո՝ 8-րդ դասարանից հետո) ընդգրկվածության աստիճանը կտրուկ իջնում է, հատկապես աղքատների մոտ: Ընդգրկվածության աստիճանն ավելի է իջնում արդեն 16 տարեկանների խմբում՝ երբ ավարտում են ընդհանուր միջնակարգ կրթությունը: Այդ անկումը հատկապես նկատելի է աղքատ ընտանիքների երեխաների կազմում և հատկապես տղա երեխաների մոտ, քանի որ նրանք անցնում են գլխ. ծառայության արդեն 18 տարեկան հասակում: Հարկ է նշել, աղքատ և ոչ աղքատ ընտանիքների երեխաների ընդգրկվածության աստիճանների միջև տարբերությունը բավական մեծանում է 14 և բարձր տարիքի երեխաների մոտ: Զինվորական ծառայությունից հետո, որոշ տղաներ շարունակում են կրթությունը և տղաների ընդգրկվածության աստիճանն ավելանում է և հետո կրկին նվազում: Պատկեր 7.5-ը ներկայացնում է նաև, որ ստորին քվանտիլային խմբում 14 տարեկանների մոտ աղջիկների ընդգրկվածության աստիճանն ավելի բարձր է, քան նույն սոցիալ-տնտեսական խմբի տղաների ընդգրկվածությունը:

Նախադպրոցական հաստատություններում ընդգրկվածության մակարդակը պայմանավորող գործոնների (դեմոգրաֆիկականների) ազդեցությունը գնահատելու համար գնահատվել են վիճակագրական մոդելի պարամետրերը<sup>5</sup>: Արդյունքները վկայում են, որ երեխայի խնամքի ոչ ֆորմալ տարբերակների մատչելիությունը, տնային տնտեսության գլխավորի կնոջ կրթության

<sup>5</sup> Գնահատվել է պրոբիտ ռեգրեսիոն մոդել: Նախադպրոցական և բարձրագույն կրթության համար ստացված արդյունքները ներկայացված են Վիճակագրական հավելվածի աղյուսակ A7.4-ում:

աստիճանը և բնակավայրը, նախադպրոցական համակարգում ընդգրկվածության աստիճանի վրա ներգործող առավել ազդեցիկ գործոններ են, քան սոցիալ-տնտեսական կարգավիճակը:

(i) *Երեխայի ոչ ֆորմալ խնամքը և ծնողի ամուսնական կարգավիճակը*. Եթե ընտանիքի անդամներից մեկը կարող է հոգավ երեխայի խնամքը, երբ երեխայի մայրը աշխատում է (կամ տանը չէ), ապա նման ընտանիքներում երեխայի նախադպրոցական հաստատություն հաճախելու հավանականությունը 49 տոկոսով քիչ է, նման խնամքի հնարավորություն չունեցող այլ երեխաների համեմատ: Եթե երեխայի խնամքը կարող է ստանձնել հարևանը կամ այլ բարեկամ, ապա երեխայի նախադպրոցական հաստատություն հաճախելու հավանականությունը նվազում է միայն վեցից յոթ տոկոս: Միայնակ ծնողի մինչև վեց տարեկան երեխաները 100 տոկոս հավանականությամբ են ընդգրկվում նախադպրոցական հաստատություններում, քան ամուսնական զուգի երեխաները:

(ii) *Տնային տնտեսության գլխավորի կնոջ կրթությունը*. Եթե տնային տնտեսության գլխավորի կրթության աստիճանն ու զբաղվածության կարգավիճակը որոշիչ գործոններ չեն նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկված լինելու համար, ապա գլխավորի կնոջ առնվազն միջնակարգ կրթությունը պայմանավորում է երեխաների 100 տոկոսով ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում՝ մոր տարրական կամ թերի միջնակարգ կրթության առկայության դեպքում:

(iii) *Սոցիալ տնտեսական կարգավիճակն ու բնակավայրը*. Այլ հավասար պայմաններում տնային տնտեսության սոցիալ տնտեսական կարգավիճակը շատ քիչ ազդեցություն ունի նախադպրոցական հաստատություն երեխաների հաճախելու հավանականության վրա: Գնահատականները ցույց են տալիս, որ նախադպրոցական հաստատություններում երեխաների ընդգրկվածության հավանականությունն ամենաստորին քվանտիլային խմբում մոտ 5 տոկոսով ավելի քիչ է, քան վերին քվանտիլում: Իսկ ահա գյուղական բնակավայրերում նախադպրոցական հաստատություն երեխաների հաճախելու հավանականությունը շատ ավելի ցածր է քան Երևանում:

*Բարձրագույն կրթության* համակարգում ընդգրկվածության աստիճանը պայմանավորող գործոնները դիտարկելիս, վիճակագրական մոդելի գնահատականները ցույց են տալիս, որ սոցիալ-տնտեսական կարգավիճակը, բարեկամներից ստացվող տրանսֆերտների հավանականությունը և զբաղվածության կարգավիճակը կարևոր ներգործություն ունեն բարձրագույն կրթության համակարգում երեխաների ընդգրկվածության աստիճանի վրա: Տնային տնտեսության այլ բնութագրիչները նվազ ազդեցություն ունեն: Հայաստանում բարձրագույն կրթության համակարգում ընդգրկվածության աստիճանը պայմանավորող գործոնների ռեգրեսիոն մոդելի արդյունքները հետևյալն են.


(i) *Անհատական բնութագրիչներ*: 16 տարեկանը լրանալուց հետո, կրթությունը շարունակելու հավանականությունը նվազում է ամեն տարվա համար 16 տոկոսով: 16-ից 28 տարեկան աշխատանք ունեցող անհատների բարձրագույն կրթության հաստատություն հաճախելու հավանականությունը 13 տոկոսով ցածր է:

(ii) *Տնային տնտեսության գլխավորի և նրա կնոջ բնութագրիչները*. Եթե տնային տնտեսության գլխավորն ունի բարձրագույն կրթություն, ապա երեխաների բարձրագույն կրթության հաստատություն հաճախելու հավանականությունը 7.5 տոկոսով ավելի է, տարրական կրթությամբ կամ առանց կրթության գլխավոր ունեցող տնային տնտեսությունների երեխաների համեմատ: Եթե տնային տնտեսության գլխավորի կինը աշխատում է, ապա երեխաների բարձրագույն կրթության հաստատություն հաճախելու հավանականությունը 5.7 տոկոսով ավելի է: Իսկ եթե տնային տնտեսության գլխավորի կինը հաշմանդամ է, ապա երեխաները 4.7 տոկոսով նվազ հավանականություն ունեն բարձրագույն կրթության հաստատություն հաճախելու:

(iii) *Բարեկամներից ստացվող տրանսֆերտները, սոցիալ տնտեսական պայմանները և բնակավայրը*. Եթե սոցիալ տնտեսական պայմանները հավասար են, ապա բարեկամներից տրանսֆերտներ ստացող ընտանիքներում ապրող անհատների ԲՈՒՀ ընդունվելու հավանականությունը շատ ավելի բարձր է: Դա կարող է պայմանավորված լինել, որ ծնողներն են գումար ուղարկում իրենց երեխաների կրթությունը ապահովելու համար, կամ այն

հանգամանքով, որ ոչ աղքատ տնային տնտեսությունները միջին հաշվով ավելի մեծ չափով տրանսֆերտներ են ստանում և կարողանում են վճարել իրենց երեխաների բարձրագույն կրթության ծախսերը: Ամենավերին սպառման քվանտիլի տնային տնտեսությունների երեխաները 10-ից 12 տոկոս ավելի շատ հավանականություն ունեն սովորելու բարձրագույն կրթության հաստատություններում, քան ստորին քվանտիլի տնային տնտեսությունների երեխաները՝ այլ հավասար պայմաններում: Վերջապես, Երևանի բնակիչներն ավելի մեծ հավանականություն ունեն ընդգրկված լինելու բարձրագույն կրթության հաստատություններում, քան այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում ապրողները:

**Պատկեր 7.7. Հայաստան. 5-14 տարիքի բնակչությունը 2000-2050թթ.-ի ընթացքում**



Հայաստանում կրթության համակարգակի համար լուրջ խնդիր է դադարակալան տարիքի բնակչության թվաքանակի անկումը: Որոշ չափով արտագաղթի և որոշ չափով ծնելիության ցածր մակարդակով պայմանավորված, Հայաստանի բնակչության թվաքանակը նվազում է<sup>6</sup>: Համաձայն ՄԱԿ-ի աշխարհի բնակչության թվաքանակին տրված գնահատականների, այդ միտումը շարունակվելու է մասնաւորապէս, այսինքն՝ այն կանխատեսել է, որ 2005-ից 2050թթ.-ի ընթացքում Հայաստանի ընդհանուր բնակչության թվաքանակը կնվազի 24 տոկոսով: Նման միտումը կազդի կրթության ծառայությունների նկատմամբ պահանջարկի վրա: Մասնավորապէս, նախատեսվում է, որ կնվազի հիմնական կրթության համակարգում սովորողների թվաքանակը: Համաձայն գնահատականների, 5-ից 14 տարիքի բնակչության թվաքանակը նախատեսվում է, որ կնվազի տարեկան 0.83 տոկոսով: Բնակչության այդ տարիքային խմբի նվազումը կհանգեցնի 2005-ից 2050թթ.-ի ընթացքում հիմնական կրթական համակարգում սովորողների 47 տոկոսով անկման (Պատկեր 7.7):

#### **Ներդիր 7.2. Կրթության համակարգի բարեփոխումները 2004թ.-ին**

Շարունակվում են կրթության բնագավառում դեռ 1990-ականների կեսերից ձեռնարկված կառուցվածքային բարեփոխումները, որոնք նպատակաուղղված են կրթության բոլոր մակարդակներում կրթության ծառայությունների որակի, մատչելիության և արդյունավետության բարձրացմանը:

**Նախադպրոցական կրթություն:** Այս ոլորտում առաջնային տեղ է տրվել 5 տարեկանների ուսուցման և նախադպրոցական կրթության համակարգին պետական աջակցության խնդրին: Պետական քաղաքականությունն այդ ոլորտում ուղղված է առկա ներուժի պահպանմանը, դրանց զարգացման նախադրյալների ստեղծմանը և գործունեության ընդլայնմանը: Այդ նպատակով վերջերս ՀՀ կառավարության կողմից հաստատվել է «ՀՀ նախադպրոցական կրթության զարգացման հայեցակարգը և ռազմավարությունը»: Մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը կոչված է կարգավորելու նախադպրոցական կրթության համակարգի գործունեության և զարգացման իրավական, կազմակերպական և ֆինանսական հիմքերը:

<sup>6</sup> Միայն վերջերս 2003 և 2004թթ.-ն պաշտոնական վիճակագրության կողմից գրանցվել է բնակչության թվաքանակի որոշակի չնչին աճ:

**Հիմնական կրթություն:** Հաստատվել է «Հանրակրթության պետական կրթակարգը» և «Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը», որոնցով ամրագրվել է միջնակարգ կրթության 12-ամյա կրթակարգը: Անցումը նոր կրթակարգի, հնարավորություն կտա ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան կրթության բովանդակություն: Բարեփոխումների մյուս խնդիրը կրթության որակի գնահատման նոր համակարգի ներդրումն է: ՀՀ կառավարության որոշմամբ հիմնադրվել է Գնահատման և թեստավորման կենտրոնը և մշակվել է «Գիտելիքների գնահատման նոր հայեցակարգը»: Շարունակվում է հանրակրթության համակարգի բարեփոխումների և արդիականացման գործընթացը: Մինչ ավժն ձեռք բերված արդյունքներն են. (i) շատ դպրոցներում ստեղծվել է համակարգիչների շրջանառու համակարգ և հիմնադրվել է Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնը, դպրոցներն ապահովվել են ինտերնետային կապով: (ii) Կառավարման ապակենտրոնացման և հաստատությունների ինքնավարության ընդլայնման քաղաքականությանը համապատասխան դպրոցներն անցել են կառավարման և ֆինանսավորման նոր կարգի: (iii) Աճել է «ուսուցիչ-աշակերտ» հարաբերակցությունը՝ կազմելով 1:13.21: (iv) Վերանայվել է դասարանների կոմպլեկտավորումը՝ դրանք մոտեցնելով նորմատիվային ցուցանիշների (դասարանների միջին խտությունը 22.2): Բարեփոխումների և արդիականացման գործընթացին գույքընթաց աշխատանքներ են տարվել ուսուցիչների սոցիալական պաշտպանվածության բարձրացման ուղղությամբ, մշակվել և իրականացվում է դպրոցից դուրս մնացած ուսուցիչների աջակցման ծրագիր:

**Հատուկ կարիքներով երեխաների կրթությունը:** Աշխատանքներ են տարվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը հանրակրթական դպրոցներում կազմակերպելու ուղղությամբ: Փոփոխություններ են իրականացվել «Կրթության մասին», «Երեխայի իրավունքների մասին» և «ՀՀ հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներում:

**Միջնակարգ մասնագիտական կրթություն:** Աշխատանքներ են տարվել մասնագիտական կրթության արդիականացման ու զարգացման ուղղությամբ: Մշակվել են «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման մասին» ՀՀ օրենքը, «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության և ուսուցման ռազմավարությունը», «Հայաստանի Հանրապետությունում մասնագիտական կրթության և ուսուցման արդիականացման գերակայությունները և 2005-2008թթ. գործողությունների պլանը»:

**Բարձրագույն կրթության ոլորտում** պետական քաղաքականությունն ուղղված է միջազգային չափանիշներին համապատասխան կրթության ապահովմանը և ինտեգրումը միջազգային կրթական դաշտին: Այս ոլորտում կարևորագույն արդյունքներն են եղել անցումը երկաստիճան համակարգի և բուհական մասնագիտությունների չափորոշիչների մշակումը: Չափորոշիչներին համապատասխան վերանայվել են բարձրագույն մասնագիտական առարկայական ծրագրերը: 2004թ. ընդունվել է «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, որը մեծ խթան է մասնագիտական կրթության զարգացման, արդյունավետության և որակի բարձրացման համար:

## **Հայաստանի կրթական համակարգում դիտարկվող միտումների բացատրությունը**

2004թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտությունը բավական տեղեկատվություն է տրամադրում Հայաստանում կրթության տարբեր մակարդակների խորը վերլուծության համար:

*Ինչու՞ ծնողները երեխաներին չեն տանում նախադպրոցական հաստատություններ:* Մոր չաշխատելը և տանը լինելը մինչև 6 տարեկան երեխաների նախադպրոցական հաստատություն չհաճախելու հիմնական պատճառն են: Նախադպրոցական հաստատության մատչելիությունը խնդիր չէ, բացառությամբ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների համար:

Նախադպրոցական հաստատություններ կան թե՛ Երևանում և թե՛ այլ քաղաքային բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունների 80 տոկոսը՝ բոլոր քվանտիլներում, նշել էին, որ իրենց բնակարանից մինչև 1կմ հեռավորության վրա գործում է նախադպրոցական հաստատություն: Նախադպրոցական հաստատությունները նվազ մատչելի էին գյուղական բնակավայրերում, հատկապես աղքատ տնային տնտեսությունների համար (Աղյուսակ 7.4):

**Աղյուսակ 7.4.** Հայաստան. Նախադպրոցական կրթություն. չհաճախման պատճառները և մատչելիությունը 2004թ.-ին

	Ամենա աղքատ ըվանտիլ	2-րդ	3-րդ	4-րդ	Ամենահա- րուստ ըվանտիլ	Ընդամենը
<b>Ինչու՞ չեն հաճախում նախադպրոցական հաստատություն:</b>						
Շատ քանկ է %	18.4	16.4	7.9	5.5	4.0	12.3
Մանկապարտեզը փակ է %	14.1	23.4	20.5	17.9	25.3	19.6
Մայրը չի աշխատում %	42.0	42.7	38.4	44.2	37.1	41.4
Արդեն դպրոց է գնում %	10.8	4.7	10.1	9.9	14.9	9.2
Այլ %	13.6	12.5	21.2	19.0	11.1	15.4
Պատասխան չկա %	1.2	0.3	1.9	3.5	7.6	2.1
<b>Ամենամոտ նախադպրոցական հաստատության հեռավորությունը</b>						
Երևան						
0-1 կմ	80.3	80.3	84.4	77.7	82.2	80.9
1-3 կմ	16.1	16.4	14.0	19.6	14.2	16.1
4-5 կմ	2.4	2.0	1.0	2.7	2.6	2.2
>6 կմ	1.2	1.3	0.5	0.0	1.0	0.8
Այլ քաղաքներ						
0-1 կմ	81.6	75.7	75.5	79.3	79.5	78.4
1-3 կմ	17.4	22.3	23.3	19.9	18.4	20.3
4-5 կմ	1.0	1.6	1.0	0.6	0.9	1.0
>6 կմ	0.0	0.5	0.2	0.2	1.1	0.4
Գյուղական վայրեր						
0-1 կմ	37.1	43.8	50.5	48.5	48.1	45.4
1-3 կմ	16.9	17.3	12.2	17.8	15.7	16.0
4-5 կմ	4.2	2.9	3.2	3.6	7.0	4.1
>6 կմ	41.7	36.0	34.1	30.1	29.3	34.5

Աղբյուրը. SSԿԱՀ 2004թ.

Նման արդյունքները պայմանավորված են այն հանգամանքով, որ նախադպրոցական հաստատությունը հստակ չի առանձնացված մանկապարտեզից: Խորհրդային ժամանակաշրջանում մայրերը հիմնականում աշխատում էին և նախադպրոցական հասակի երեխաները հիմնականում հաճախում էին մանկապարտեզներ՝ նախքան դպրոց ընդունվելը: Մանկապարտեզները կատարում էին նաև նախադպրոցական հաստատության դերը: Հաշվի առնելով վերոնշյալը, նախադպրոցական հաստատություններում ընդգրկված երեխաների թվաքանակը մեծացնելու համար, որը նաև Կառավարության նպատակներից է, պետք է կիրառվի երկու մասից բաղկացած ռազմավարություն: Նախ, ծնողներին պետք է տեղեկացվի ծրագրի և դրա անհրաժեշտությունն իրենց երեխաներին դպրոցին նախապատրաստելու համար: Երկրորդ, նախադպրոցական ծառայությունները հստակորեն պետք է սահմանազատվեն մանկապարտեզներից և որպեսզի նախադպրոցական կրթությունը տրամադրվի ոչ միայն մանկապարտեզներում, պետք է ստեղծվեն հատուկ նման կրթական հաստատություններ:

**Ինչու՞ 16-20 տարեկան տղաներն ու աղջիկները չեն շարունակում կրթությունը:** 16-ից 20 տարեկան շատ անհատներ, անկախ իրենց սոցիալ տնտեսական կարգավիճակից, գտնում են, որ թերի միջնակարգ կամ միջնակարգ կրթությունը բավարար է: Նման կարծիքը կարելի է բացատրել միջնակարգից բարձր կրթության ցածր փոխհատուցման մակարդակով<sup>7</sup> և բարձրագույն

<sup>7</sup> 16-ից 65 տարեկան աշխատավարձ ստացողների աշխատավարձերի չափի՝ ժամավճարի ռեգրեսիոն վերլուծությունը ցույց է տվել, որ աշխատավարձը բարձրագույն կրթության դեպքում, թեև վիճակագրականորեն նշանակալի է, բայց բավական ցածր է (ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ներկայացված են Վիճակագրական հավելվածի աղյուսակ A7.5-ում): Ըստ ստացված արդյունքների երկու

կրթության հետ կապված բարձր ծախսերով: Բարձրագույն կրթության ծախսերի մատչելիությունը որպես բարձրագույն կրթություն ստանալու արգելք նշել է անհատների միայն 5 տոկոսը: Ընտանեկան հարցերը, ինչպիսին օրինակ ամուսնությունն է, հղիությունը, շատ ավելի հաճախ են կրթությունը շարունակելու արգելք հանդիսանում հատկապես աղջիկների, և մասնավորապես լուրջ հանգամանք են աղքատ, քան թե ոչ աղքատ ընտանիքների աղջիկների համար (Աղյուսակ 7.5):

**Աղյուսակ 7.5.** Հայաստան. Ինչու՞ 16-20 տարեկան տղաներն ու աղջիկները չեն շարունակում կրթությունը


	Ամենա աղքատ քվանտիլ	2-րդ	3-րդ	4-րդ	Ամենահա րուստ քվանտիլ	Ընդամե նը
<b>Ինչու՞ չեն շարունակում կրթությունը</b>						
<b>Տղաներ</b>						
Հիվանդություն/ ժամանակա- վոր բացակայություն, %	3.9	5.9	4.4	0.4	6.7	4.2
Շատ թանկ է, %	2.8	2.4	3.5	0.0	3.2	2.3
Չի ցանկանում սովորել %	6.4	1.6	1.0	2.5	5.9	3.3
Ընտանեկան պատճառներ %	3.0	3.8	1.2	0.8	2.9	2.5
Ավարտել է հիմնական կրթությունը %	36.9	19.5	15.4	24.8	8.3	23.3
Ավարտել է միջնակարգ կրթությունը %	42.8	63.1	71.8	67.8	71.7	61.0
Այլ %	4.3	3.7	2.8	3.7	1.3	3.5
<b>Աղջիկներ</b>						
Հիվանդություն/ ժամանակա- վոր բացակայություն, %	0.5	1.9	1.3	1.0	2.7	1.3
Շատ թանկ է, %	6.9	2.6	6.1	2.3	8.8	5.0
Չի ցանկանում սովորել %	4.9	0.7	1.0	1.4	0.0	1.9
Ընտանեկան պատճառներ %	8.5	6.9	2.2	1.0	1.4	5.2
Ավարտել է հիմնական կրթությունը %	11.2	20.3	8.0	7.1	14.6	13.2
Ավարտել է միջնակարգ կրթությունը %	65.6	67.2	78.9	84.3	66.9	71.0
Այլ %	2.5	0.4	2.5	3.1	5.7	2.3

Աղբյուրը. ՏՏՀԱՀ 2004թ.

Չնայած բարձրագույն կրթության հետ կապված ծախսերն այդքան էլ հաճախ չեն նշվել որպես բարձրագույն կրթության համար դիմելու արգելք, ԲՈՒՀ-ում սովորելը բավական թանկ է: Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելը մատչելի չէ աղքատ տնային տնտեսությունների համար, որոնք ունեն ուսանողական տարիքի երեխա: Երեխային բարձրագույն կրթության հաստատությունը ընդունելը կպահանջի երրորդ քվանտիլի տնային տնտեսությունների ոչ պարենային ապրանքների միջին տարեկան ծախսերի 81-ից 92 տոկոսը: ԲՈՒՀ-ում սովորելու վարձը բավական ծանր բեռ է նաև ոչ աղքատ տնային տնտեսությունների համար. այն կազմում է նրանց ոչ պարենային ապրանքների միջին տարեկան ծախսերի մոտ 50-ից 65 տոկոսը (Պատկեր 7.8):

միանման բնութագրիչներով անհատների ժամավճարը 50 տոկոսով ավելի բարձր կլինի այն անհատի մոտ, որը բացի միջնակարգ դպրոցից ստացել է որևէ այլ կրթություն: Այլ կերպ ասած, եթե միջնակարգ կրթությամբ աշխատողը կարող է ժամում ստանալ միջինը 500 դրամ, ապա միջնակարգ կրթությունից բարձր կրթությամբ աշխատողի ժամավարձը կլինի ընդամենը 750 դրամ:

**Պատկեր 7.8.** Հայաստան. Բարձրագույն ուսումնական հաստատությունում սովորելու մատչելիությունն ըստ սոցիալ տնտեսական խմբերի 2004թ.-ին



**Աղբյուրը.** SSՀԱՀ 2004թ.

**Նշում.** Յուրաքանչյուր քվանտիլային խմբում հաշվարկներ է միջին ուսումնական վարձը և բաժանվել է տվյալ քվանտիլի այն տնային տնտեսությունների միջին եկամտի (և ոչ պարենային ապրանքների համար կատարվող ծախսերի) վրա, որոնք ունեն բարձրագույն կրթության ծառայությունից հնարավոր օգտվող անդամ (16-ից 29 տարեկան անդամ):

Ավելին, միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում սովորելու արժեքը մեկ աշակերտի հաշվով նույնպես էժան չէ: Քանի որ պարտադիր կրթությունը Հայաստանում անվճար է, ուսումնական վարձը տարրական և միջնակարգ կրթության համար ծանր հարց չէ տնային տնտեսությունների համար: Սակայն, ոչ ուսումնական ծախսերը բավական ծանր բեռ են աղքատ և հատկապես բարձր դասարաններում սովորող երեխաներ ունեցող տնային տնտեսությունների համար: Աղյուսակ 7.6-ում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ եթե դպրոցում հիմնական և բարձր դասարաններում սովորելը գումարային առումով ծանր չէ ոչ աղքատ տնային տնտեսությունների համար, ապա այն բավական մեծ ներդրումներ է պահանջում աղքատ քվանտիլների տնային տնտեսությունների համար:

**Աղյուսակ 7.6.** Հայաստան. Դպրոցում հիմնական և բարձր դասարաններում սովորելու մատչելիությունը , 2004թ.-ին

	Ամենա աղքատ քվանտիլ	2-րդ	3-րդ	4-րդ	Ամենահարուստ քվանտիլ
	Մեկ աշակերտի ծախսը, որպես % ընդամենը մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ				
Հիմնական	6.3	5.7	5.7	6.4	8.2
Բարձր	13.1	13.1	14.7	15.3	36.4
դասարաններ	Մեկ աշակերտի ծախսը, որպես % ընդամենը մեկ շնչի հաշվով ոչ պարենային ապրանքների համար կատարվող ծախսերի նկատմամբ				
Հիմնական	21.7	18.2	15.2	13.2	11.0
Բարձր	46.6	39.0	39.8	32.1	45.7
դասարաններ	Ուսումնական վարձը, որպես % ընդամենը մեկ շնչի հաշվով եկամտի նկատմամբ				
Միջնակարգ	0.0	0.0	0.0	0.1	0.1




մասնագիտական Բարձր դասարաններ	1.1	1.4	2.4	2.8	5.8
	Ուսումնական վարձը, որպես % ընդամենը մեկ շնչի հաշվով ոչ պարենային ապրանքների համար կատարվող ծախսերի նկատմամբ				
Միջնակարգ մասնագիտական Բարձր դասարաններ	0.1	0.1	0.0	0.1	0.2
	4.0	4.1	6.4	5.9	7.3

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ..

**Նշում.** Յուրաքանչյուր սպառման քվանտիլային խմբում հաշվարկներ է յուրաքանչյուր աշակերտի միջին ուսումնական ծախսը կրթության տարբեր մակարդակներում, ապա այն բաժանվել է տվյալ քվանտիլի այն տնային տնտեսությունների միջին եկամտի (և ոչ պարենային ապրանքների համար կատարվող ծախսերի) վրա, որոնք ունեն բարձրագույն կրթության ծառայությունից հնարավոր օգտվող անդամ (16-ից 29 տարեկան անդամ):

**Պատկեր 7.9.** Հայաստան. Տնային տնտեսության կրթության վրա կատարված ընդամենը ծախսերը ըստ սոցիալ տնտեսական խմբերի 2004թ.-ին




Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

**Նշում.** Այս պատկերում ներառված են յուրաքանչյուր կատեգորիայի ընդամենը ծախսերը, որպես տոկոս ընդամենը կրթության համար կատարված ծախսերի նկատմամբ՝ տվյալ քվանտիլում ուսանող/աշակերտ ունեցող տնային տնտեսությունների համար (ներառված են կրթության բոլոր մակարդակները):

Ինչպես վկայում է Պատկեր 7.9-ը, ամենաաղքատ քվանտիլային խմբում տրանսպորտային և դպրոցական պիտույքների համար կատարվող ծախսերը կազմում են ընդամենը կրթության համար կատարվող ծախսերի կեսից ավելին: Ոչ աղքատ տնային տնտեսությունները առավել շատ ծախսեր կատարում են ուսման վարձի համար (հատկապես ԲՈՒՀ-ում) և լրացուցիչ դասընթացների համար: Տրանսպորտային ծախսերը յուրաքանչյուր քվանտիլում կազմում են ընդամենը կրթության հետ կապված ծախսերի մոտ 30 տոկոսը:

**Պատկեր 7.10.** Հայաստան. Կրթության ավարտման մակարդակները 2004թ.-ին



Այսպիսով, լավ արտահայտված ուղղակի կապ է նկատվել ուսման ծախսերի մատչելիության և դիտարկվող կրթության մակարդակը ավարտողների միջև: Միջնակարգ դպրոցի բարձր դասարաններ ավարտողների մասնաբաժինը բավական ցածր է քան հիմնական կրթության ավարտողներինը: Այդ ցուցանիշն ավելի ցածր է աղքատ բնակչության մոտ: Բարձրագույն դպրոցից դուրս մնալու հավանականությունը նույնպես բարձր է, անգամ ոչ աղքատ քվանտիլային խմբերում, քանզի ուսման վարձերը և սովորելը բարձրագույն ուսումնական հաստատությունում շատ քանկ է Հայաստանում: Այդուհանդերձ, բարձրագույն դպրոցից դուրս մնալու հավանականությունը կրկնակի անգամ բարձր է աղքատ քվանտիլների ուսանողների համար՝ վերին քվանտիլի ուսանողների համեմատ (Պատկեր 7.10):

**Աշակերտներ, ուսուցիչներ, դպրոցներ և ուսուցման արդյունքներ/ աշակերտների գինեղքները միջնակարգ դպրոցում**

2003թ.-ին Հայաստանի միջնակարգ դպրոցների չորրորդ և ութերորդ դասարանների մի խումբ աշակերտներ մասնակցեցին Մաթեմատիկայի և այլ գիտությունների միջազգային ուսուցման միտումները ՄԳՄՈՒՄ (TIMMS—Trends in International Mathematics and Science Study) միջոցառմանը: Աշակերտները թեստեր հանձնեցին մաթեմատիկայից և այլ առարկաներից, մինևույն ժամանակակ հավաքագրվեց նաև ուսուցման գործընթացի հետ առնչվող այլ հետաքրքրական տեղեկատվություն: Այսպիսով ՄԳՄՈՒՄ հնարավորություն ընձեռեց տեղեկատվություն ստանալ աշակերտների գիտելիքների վերաբերյալ՝ թեստի արդյունքներ, հենց աշակերտների մասին՝ սովորելու անձնական դրդապատճառները, ինքնավստահությունը, համակարգչային գիտելիքները և կիրառությունը և տնային աշխատանքները կատարելու համար ծախսված ժամանակը, ուսուցիչների վերաբերյալ՝ կրթությունն ու փորձառությունը և աշխատանքով բավարարվածությունը, և դպրոցների՝ ֆիզիկական վիճակի, մաթեմատիկայի և այլ առարկաների դասավորման համար անհրաժեշտ ռեսուրսների առկայության և ապահովության վերաբերյալ:<sup>8</sup>

<sup>8</sup> ՄԳՄՈՒՄ արդյունքները՝ ողջ Հայաստանի վերաբերյալ եզրահանգումներ կատարելիս պետք է դիտարկվեն որոշակի վերապահումներով: Պատճառն այն է, որ ՄԳՄՈՒՄ թեստավորմանը մասնակցած աշակերտները ներկայացուցչական չեն ողջ հանրապետության համար: Այսպես, եթե ըստ 2004թ.-ի ՏՏԿԱՀ միջնակարգ դպրոցներում հիմնական և բարձր դասարաններում սովորողների միայն 15 տոկոսի մոտ էր տնային տնտեսության գլխավորը բարձրագույն կրթությամբ, ապա ՄԳՄՈՒՄ թեստավորմանը մասնակցած ութերորդ դասարանիկների շրջանում այդ համապատասխան ցուցանիշը կազմել է մոտ 50 տոկոս: Քանզի

Ընդհանուր առմամբ Հայաստանի աշակերտները վատ արդյունքներ չեն տվել: Աղյուսակ 7.7-ում ներկայացված է մի խումբ Եվրոպական և Նախկին Խորհրդային Միության երկրներից մասնակցած աշակերտների ՄԳՄՈՒՄ թեստավորման միավորները: Հայաստանի աշակերտներն իրենց արդյունքներով առաջ էին Մոլդովայի և Մակեդոնիայի իրենց հասակակիցներից և գրեթե նմանատիպ արդյունքներ են արձանագրել ինչպես Բուլղարիայի և Ռումինիայի աշակերտները:

**Աղյուսակ 7.7.** Մի խումբ երկրների աշակերտների ՄԳՄՈՒՄ թեստավորման միջին միավորները

	1995թ.	1999թ.	2003թ.
Չեխիա	546	520	..
Էստոնիա	..	..	531
Հունգարիա	527	532	529
Լատվիա	488	505	508
Լիտվա	472	482	502
Սլովակիա	534	534	508
Սլովենիա	531	530	493
Բուլղարիա	527	511	476
Ռումինիա	474	472	475
Մոլդովա	..	469	460
Հայաստան	..	..	478
Թուրքիա	..	429	..
Մակեդոնիա	..	447	435
Ռուսաստան	524	526	508
ԱՄՆ	492	502	504

**Աղբյուրը.** ՄԳՄՈՒՄ 2003թ. տվյալների բազա

Հաջորդ աղյուսակը ներկայացնում է այն աշակերտների համամասնությունը, որոնք չեն կարողացել հավաքել անհրաժեշտ նվազագույն միավորը (400), ինչպես նաև աշակերտների այն խումբը, որոնք ցուցադրել են գերազանց արդյունք՝ հավաքելով 625 և ավելի միավոր: ՄԳՄՈՒՄ թեստավորմանը մասնակցած Հայաստանի աշակերտներից ամեն հինգերորդը՝ 18 տոկոսը, չեն կարողացել հավաքել անհրաժեշտ նվազագույն միավորը: Նման արդյունք ցույց են տվել նաև Բուլղարիայի աշակերտները: Հայաստանի աշակերտների արդյունքն ավելի լավն էր, քան Սերբիայի, Մոլդովայի, Մակեդոնիայի և Ռումինիայի աշակերտներինը:

**Աղյուսակ 7.8.** ՄԳՄՈՒՄ. Չախողված և հաջողված արդյունքների մասնաբաժինները (%)

	625-ից բարձր			400-ից ցածր		
	1995թ.	1999թ.	2003թ.	1995թ.	1999թ.	2003թ.
Հայաստան	..	..	2	..	..	18
Բուլղարիա	17	9	3	10	10	18
Էստոնիա	..	..	9	..	..	3
Հունգարիա	10	13	11	6	7	5
Լատվիա	4	6	5	13	9	8
Լիտվա	2	3	5	19	15	10
Մակեդոնիա	..	2	1	..	30	34
Մոլդովա	..	3	1	..	21	23
Ռումինիա	4	4	4	21	21	21
Ռուսաստան	9	12	6	7	7	8
Սերբիա	..	..	4	..	..	20
Սլովակիա	11	11	8	4	4	10
Սլովենիա	4	3	3	10	10	10


**Աղբյուրը.** ՄԳՄՈՒՄ 2003թ. տվյալների բազա

տնային տնտեսության գլխավորի բարձրագույն կրթությունը պայմանավորում է նաև աղքատության համեմատաբար ցածր մակարդակ, այդ տարբերությունը նշանակում է, որ ՄԳՄՈՒՄ թեստավորմանը մասնակցած աշակերտները հավանաբար հիմնականում միջին և բարձր սպառման քվանտիլային խմբերից են: Այդպիսով, կրթության որակի ստորև բերված անհավասարությունը աղքատ և ոչ աղքատ աշակերտների միջև կարող է թերզնահատված լինել:

Ընդհանուր առմամբ ՄԳՄՈՒՄ թեստավորման արդյունքները ցույց են տվել, որ երեխայի գիտելիքները ուղղակիորեն կապված են սոցիալ տնտեսական կարգավիճակից և բնակության վայրից: Ըստ ՄԳՄՈՒՄ թեստավորման միավորների, քաղաքային բնակավայրերից և ոչ աղքատ տնային տնտեսություններից թեստավորմանը մասնակցած աշակերտներն ավելի լավ արդյունքներով են հանձնել թեստը, քան գյուղական բնակավայրերից աղքատ տնային տնտեսություններից իրենց հասակակիցները: Մյուս կողմից նկատելի տարբերություն չի գրանցվել Հայաստանի կտրվածքով ուսուցիչների որակավորման կամ դպրոցների ֆիզիկական պայմանների միջև:

**Աշակերտները.** ՄԳՄՈՒՄ թեստավորման արդյունքները Հայաստանի համար ցույց են տվել, որ հարուստ քվանտիլային խմբերից և՛ չորրորդ և՛ ութերորդ դասարանցիների սեփական նախաձեռնությամբ և ինքնագիտակցաբար սովորելու համաթիվն ավելի բարձր է և նրանք ավելի շատ ժամանակ են ծախսում դասերը սովորելու համար, քան ցածր քվանտիլային խմբերից նրանց հասակակիցները (Պատկեր 7.11): Այդուհանդերձ տարբերությունը մեծ չէ: Տանը համակարգիչ ունեցողների համամասնությունը կրկնակի անգամ ավել է ոչ աղքատ աշակերտների մոտ՝ աղքատ աշակերտների համեմատ, սակայն աղքատ աշակերտները, հատկապես ութերորդ դասարանցիները դպրոցում ավելի շատ են օգտագործում համակարգիչ, քան ոչ աղքատ իրենց հասակակիցները: Համակարգիչների օգտագործման ընդհանուր համաթիվը (տանը և դպրոցում համակարգիչ օգտագործելու կշռված միջինը) գրեթե չի տարբերվում աղքատ և ոչ աղքատ աշակերտների միջև. այն ընդհանուր առմամբ շատ ցածր է Հայաստանում, քանի որ համակարգիչ օգտագործում են ամեն տաս աշակերտից միայն չորսը: Մեծ չէ նաև քաղաք-գյուղ տարբերությունը:

**Պատկեր 7.11.** Հայաստան: Սովորելու անձնական նախաձեռնությունը, դասերի համար ծախսված ժամանակը և համակարգիչների օգտագործումը



**Աղբյուրը.** Անժելա- Ուրդինոլա, Յան և Պրինա (2006թ.) 2003թ.-ի ՄԳՄՈՒՄ թեստավորման արդյունքների հիման վրա.

**Նշում.** Ներկայացված համաթիվների հաշվարկման մանրամասն մեթոդաբանության համար տե՛ս Անժելա- Ուրդինոլա, Յան և Պրինա (2006թ.):

**Ուսուցիչները և դպրոցները.** Դիտարկելով ուսուցիչների որակավորումը և աշխատանքով նրանց բավարարվածությունը, ինչպես նաև դպրոցների ֆիզիկական պայմանները ՄԳՄՈՒՄ թեստավորման արդյունքները բացահայտում են հետևյալը.

- Ընդհանուր առմամբ, ՄԳՄՈՒՄ թեստավորմանը մասնակցած աշակերտները դասավանդվել էին լավ որակավորում և կրթություն ունեցող ուսուցիչների կողմից: Քաղաքային բնակավայրերի, հատկապես Երևանի չորրորդ դասարանների ուսուցիչները

որակավորման ավելի բարձր ցուցանիշներ ունեին քան, փոքր քաղաքների կամ գյուղերի ուսուցիչները: Երևանից դուրս այլ քաղաքների ութերորդ դասարանների ուսուցիչներն ունեին ավելի բարձր որակավորում, քան փոքր քաղաքների կամ գյուղերի իրենց գործընկերները: Երևան քաղաքի ութերորդ դասարանների ուսուցիչների որակավորումը զիջում էր այլ քաղաքների իրենց գործընկերների որակավորմանը: Բացի այդ, ուսուցիչներն ունեին միջինը 16-20 տարվա աշխատանքային փորձ և նշել էին, որ գոհ են իրենց աշխատանքից (70 տոկոսը նշել է միջին աստիճանի գոհունակություն իրենց աշխատանքից): Նման արդյունքները վկայում են ուսուցման բարձր մակարդակ ապահովելու ներուժի մասին<sup>9</sup>:


- Դպրոցները հիմնականում կարիք ունեին ոչ թե մարդկային այլ նյութական ռեսուրսների: Նյութական ռեսուրսների պակասը գրեթե նույնն էր թե՛ քաղաքներում և թե՛ գյուղերում (չնայած փոքր քաղաքներում դպրոցներում վիճակն ավելի բարվոք էր քան միջին մակարդակը): Մարդկային ռեսուրսների առկայությունը, չնայած համեմատաբար ցածր էր, ավելի բավարար էր նյութական հագեցվածության համեմատ և հատկապես քաղաքային բնակավայրերի չորրորդ դասարաններում:
- Դպրոցներում հարմարանքները շատ խղճուկ վիճակում են, քանի որ դպրոցների կեսից ավելին կարիք ունի ջեռուցման, համապատասխան լուսավորման, համակարգիչների և ինտերնետային կապի: Պատկերը գրեթե նույնն է և՛ քաղաքային և՛ գյուղական դպրոցներում և՛ ցածր և՛ բարձր դասարաններում:
- Ընդհանուր առմամբ դպրոցներն իրենց անվտանգության աստիճանը բավական բարձր են գնահատում, չնայած քաղաքային, հատկապես Երևանի դպրոցները փոքր ինչ զիջում են գյուղական դպրոցներին: Բացի այդ անվտանգության աստիճանը չորրորդ դասարաններում ավելի բարձր է, քան ութերորդ դասարաններում:

Ամփոփելով ՄԳՄՈՒՄ թեստավորման արդյունքները, կարելի է եզրակացնել, որ հանրակրթական դպրոցը Հայաստանում ունի որակյալ և փորձառու ուսուցչական անձնակազմ: Հակառակը, դպրոցների ֆիզիկական վիճակը շատ խղճուկ է և բարելավման խիստ կարիք ունի, դպրոցները հատկապես կարիք ունեն ջեռուցման, նորմալ լուսավորման, ինչպես նաև համակարգիչների և ինտերնետային կապի:

**Դասավանդման արդյունքները:** ՄԳՄՈՒՄ թեստավորման արդյունքները ցույց են տալիս, որ աշակերտների գիտելիքների մակարդակն ուղղակիորեն կապված է սոցիալ տնտեսական կարգավիճակից և բավական բարձր է քաղաքային բնակավայրերում, քան գյուղերում: Մաթեմատիկայից և այլ գիտություններից գիտելիքների մակարդակը՝ գնահատված ըստ ստանդարտացված միավորների, ավելի բարձր էր ոչ աղքատ տնային տնտեսություններից աշակերտների մոտ: Ինչպես ցույց է տալիս Պատկեր 7.12-ը թեստավորման արդյունքներն աճում են սպառման մակարդակի աճին զուգահեռ:

<sup>9</sup> Համաձայն Ալամի և ուրիշների (2005թ.), բավարար խթանիչների պակասը՝ ցածր աշխատավարձը և լճացված աշխատանքը, հանգեցրել են ԵԿԱ տարածաշրջանում ուսուցչական անձնակազմի արագ ծերացման (հատկապես ցածր եկամտով ԱՊՀ երկրներում): Հեղինակները նշում են, որ եթե ուսուցչական անձնակազմի ծերացումը բացասաբար չի անդրադառնում դասավանդման որակի վրա, անհարժեշտ ֆինանսական միջոցների և վերապատրաստման հնարավորությունների բացակայությունը շատ երկրներում կարող է հանգեցնել ոչ ժամանակակից մանկավարժական մեթոդներով ուսուցման:

**Պատկեր 7.12.** Հայաստան. Աշակերտների ՄԳՄՈՒՄ՝ թեստավորման արդյունքներն ըստ սպառման քվանտիլների



**Աղբյուրը.** Անձեյա- Ուրդինովա, Յան և Պրինա (2006թ.)՝ 2003թ.-ի ՄԳՄՈՒՄ՝ թեստավորման արդյունքների հիման վրա:

### ***Արտադպրոցական դասընթացների/ պարապմունքների մատչելիությունը***

2004թ.-ի տնային տնտեսությունների ամբողջացված հետազոտության տվյալները վկայում են, որ մասնավոր անհատական պարապմունքները միայն մատչելի են ոչ աղքատ տնային տնտեսությունների համար: Եթե սպառման վերին քվանտիլում բարձր դասարանցիներից ամեն հինգերորդ աշակերտից մեկը մասնավոր պարապում էր դասատուի/դասախոսի մոտ, հիմնականում ԲՈՒՀ ընդունվելու համար, ցածր քվանտիլում նման հնարավորություն ուներ նրանց հասակակիցների միայն 2 տոկոսը (Աղյուսակ 7.9): Սա վճարունակության խնդիր է, քանի որ մասնավոր դասընթացները բավական թանկ են:

**Աղյուսակ 7.9:** Հայաստան: Մասնավոր դասերի մատչելիությունը 2004թ.-ին

	Աղքատ քվանտիլ		Միջին քվանտիլ		Հարուստ քվանտիլ	
	Այո %	Եթե այո, ԲՈՒՀ ընդունվելու համար %	Այո %	Եթե այո, ԲՈՒՀ ընդունվելու համար %	Այո %	Եթե այո, ԲՈՒՀ ընդունվելու համար %
Աղջիկներ	2.1%	100.0%	9.7%	55.3%	25.7%	80.4%
Տղաներ	0.9%	100.0%	4.4%	0.0%	20.6%	70.1%

**Աղբյուրը** Հայաստան SSԿԱՀ 2004թ.

Հաշվի առնելով հանրակրթական դպրոցի բարձր դասարաններից և հատկապես բարձրագույն կրթությունից դուրս մնալը, ինչպես նաև երիտասարդների շրջանում գործազրկության բարձր մակարդակը, արտադպրոցական դասընթացները կարող են կարևոր խթան հանդիսանալ երիտասարդ, կրթությունը չշարունակած գործազուրկների համար մոտ գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու իմաստով և այդպիսով աշխատանքի շուկայում իրենց տեղը գտնելու համար: Սակայն նման ծրագրերը Հայաստանում հազվադեպ են կազմակերպվում: Ուսումնական հաստատություններում չտվող 16-ից 29 տարեկանների շատ չնչին մասն է 2004թ.-ին հաճախել նման դասընթացների/ուսումնական ծրագրերի: Նման ծրագրերի մասնակցած երիտասարդները հիմնականում սպառման բարձր քվանտիլային խմբերից էին: Եթե

մասնավոր դասընթացները թանկ են, ապա արտադասարանական ուսումնական ծրագրերն անվճար հիմունքներով են:

## 7.5. Առողջապահությունը և աղքատությունը

### Առողջական վիճակի ցուցանիշները

Հայաստանն առանձնանում է լավ առողջապահական ցուցանիշներով, որոնք շատ ավելի լավն են, քան նախկին Խորհրդային Միության այլ երկրներում գրանցված ցուցանիշները, ինչպես նաև բավական համադրելի են զարգացած երկրների համանման ցուցանիշների հետ (Աղյուսակ 7.10): Բարձր է կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, իսկ մահացությունն ու մահացության ստանդարտ գործակիցը ցածր են: Ինչպես արդեն նշվել էր սույն գլխի սկզբում, մանկամահացության, մինչև հինգ տարեկան երեխաների մահացության և մայրամահացության գործակիցները նվազել են 1990-ականների համեմատ: Բարձր է պատվաստումների գործակիցը: Հայաստանում առողջական կարգավիճակը բնութագրող շատ ցուցանիշներ շատ մեծ են Եվրոպական երկրների ցուցանիշներին և հստակ շատ ավելի լավն են, քան Վրաստանում, Ադրբեջանում կամ Կենտրոնական Ասիայում գրանցված ցուցանիշներից: Համաձայն ԱՀԿ-ի ցուցանիշների (2001թ.), մահացության ցուցանիշները Հայաստանում ցածր են, քան Եվրոպական միջին ցուցանիշը: Վաղաժամ մահացությունը (0-64 տարեկանների մոտ) Հայաստանում կայուն տեմպերով նվազել է 1994թ.-ից 2001թ.-ն ընկած ժամանակահատվածում, որը պայմանավորված է հատկապես տղամարդկանց մահացության նվազմամբ: Ծխելը և արյան շրջանառության հետ կապված հիվանդությունները հանդիսանում են մահացության հիմնական պատճառները Հայաստանում: Վաղաժամ մահերի պատճառները նույնպես հիմնականում արյան շրջանառության հետ կապված հիվանդություններն են (կազմելով 2003թ.-ին գրանցված բոլոր մահերի 58 տոկոսը) ապա չարորակ նորագոյացությունները՝ 15 տոկոս:

**Աղյուսակ 7.10. Հայաստան. Առողջական կարգավիճակը բնութագրող ցուցանիշների միջազգային համեմատականը (2003թ.)**

	Հայաստան	Եվրոպա	ՆԱՊ	ԱՊՀ	CSEC
Կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, տարիներ	73.1	74.1	74.3	66.9	68.9
Տղամարդկանց կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, տարիներ	70.0	70.1	70.1	61.6	64.4
Կանանց կյանքի սպասվող տևողությունը ծննդյան պահից, տարիներ	75.9	78.1	78.4	72.6	73.6
Գնահատված կյանքի սպասվող տևողությունը (Համաշխարհային բանկի զեկույց)	68.0	73.7	74.4	65.3	67.9
Մանկամահացությունը 1000 կենդանածնի հաշվով	11.5	9.0	6.6	14.5	19.8
Մայրամահացությունը 1000 կենդանածնի հաշվով	19.7	15.6	6.0	31.8	51.5
Արյան շրջանառության համակարգի հիվանդություններ բոլոր տարիքային խմբերում 100000 մարդու հաշվով	714.9	479.4	452.7	821.4	741.5
Սրտի իշեմիկ հիվանդություններ բոլոր տարիքային խմբերում 100000 մարդու հաշվով	387.3	222.7	176.1	433.8	362.3
Մահվան բոլոր դեպքերը, բոլոր տարիքային խմբերում 100000 մարդու հաշվով	1083.3	962.6	931.3	1431.2	1311.2
Շնչառական օրգանների հիվանդություններից, բոլոր տարիքային խմբերում 100000 մարդու հաշվով	63.4	55.5	42.7	70.1	63.1
Ծխելու հետ կապված որոշ հիվանդություններից, բոլոր տարիքային խմբերում 100000 մարդու հաշվով	653.2	243.7	370.7	716.4	577.0

	Հայաստան	Եվրոպա	ՆԱՊ	ԱՊՀ	CSEC
Տուբերկուլոզի դեպքեր 100000 մարդու հաշվով	47.9	42.4	26.3	87.3	69.0
ՄԻԱՀ/ՁԻԱՎ կինիկական ախտորոշման դեպքեր 100000 մարդու հաշվով	0.3	1.1	0.4	0.7	0.6
Շաքարախտի տեսակարար կշիռը, տոկոսներով	1.0	n.a.	4.9	1.4	1.6

**Աղբյուրը.** Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ): Առողջություն բոլորի համար (HFA) տվյալների բազա:

**Նշում.** Եվրոպա՝ ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի 52 երկրներ: ՆԱՊ՝ Նոր անդամ պետություններ – 2004թ.-ի մայիսի 1-ից Եվրամիությանը անդամակցած 10 նոր անդամ պետությունները: ԱՊՀ՝ Անկախ պետությունների համագործակցության 12 երկրներ: CSEC՝ մահացության բարձր գործակցով ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանի 25 երկրներ (Ալբանիա, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Էստոնիա, Վրաստան, Հունգարիա, Ղազախստան, Ղրղզստան, Լատվիա, Լիտվա, Լեհաստան, Մոլդովա, Ռումինիա, Ռուսաստան, Սերբիա և Մոնտենեգրո. Սլովակիա, Տաջիկստան, Մակեդոնիա, Թուրքիա, Թուրքմենստան և Ուկրաինա):

### Առողջապահական համակարգը և դրա օգտագործումը

Հայաստանը ժառանգել է շատ մեծ և անձնակազմով գերազանցված առողջապահական համակարգ, որը լրիվ չի օգտագործվում (Աղյուսակ 7.11): Ըստ 1991թ.-ի պաշտոնական տեղեկատվության, 100 հազար բնակչի հաշվով Հայաստանում կար 853 հիվանդանոցային մահճակալ և 370 բժիշկ: Այդ ցուցանիշները բարձր էին միջին Եվրոպական ցուցանիշներից, սակայն ավելի ցածր. քան ԱՊՀ միջին ցուցանիշները: 1990-ականներից հետո Հայաստանը սկսեց կրճատել ավելորդ միջոցները, կրճատելով հիվանդանոցների քանակը՝ հատկապես գյուղական բնակավայրերում, հիվանդանոցային մահճակալների քանակը՝ հիմնականում քաղաքային բնակավայրերում և բժիշկների թվաքանակը: 1991թ.-ից 2003թ.-ն ընկած ժամանակահատվածում հիվանդանոցային մահճակալների քանակը մոտավորապես կրճատվեց 50 տոկոսով, իսկ բժիշկների թվաքանակը՝ 11 տոկոսով:

**Աղյուսակ 7.11.** Հայաստան. Առողջապահական համակարգը և դրա օգտագործումը 1992-2003թթ.-ին


	1992	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
<b>Պաշտոնական զննատակալներ</b>												
Հիվանդանոցային մահճակալների քանակը 100 հազար բնակչի հաշվով	837	821	777	764	713	675	666	620	547	425	435	442
Բժիշկների թվաքանակը 100 հազար բնակչի հաշվով	360	335	312	304	340	344	343	332	323	303	358	365
Հիվանդանոցային բուժում ստացածները 100 բնակչի հաշվով	9.6	8.2	7.6	7.5	7.5	6.6	6.2	5.8	4.9	5.0	6.1	6.9
Բուժարարական օգնություն տարեկան մեկ շնչի հաշվով	5.3	5.5	5.0	4.8	4.6	3.2	2.4	2.3	2.1	1.8	1.9	2.0

**Աղբյուրը.** Առողջություն բոլորի համար տվյալների բազա: ԱՀԿ/Եվրոպա 2005թ.

Բուժ.անձնակազմի աշխատավարձը Հայաստանում միջինը 13-ից 22 տոկոսով ցածր է, քան այլ մասնագետների աշխատավարձը՝ հատկապես քաղաքային բնակավայրերում: Ցածր աշխատավարձը դրդում են բուժ. ծառայության համար ոչ պաշտոնական վճարների ստացման և բուժ. անձնակազմի արտագաղթի: Հայաստանում ավարտող բուժ.քույրերի թվաքանակը շատ ավելի բարձր է քան ԱՊՀ և Նախկին Խորհրդային երկրներից շատերում, այն մաս բարձր է ԵՄ միջին ցուցանիշից, սակայն փաստացի աշխատող բուժքույրերի թվաքանակը 100 հազար բնակչի հաշվով շատ ավելի ցածր է այլ երկրների համեմատ (Պատկեր 7.13):




**Պատկեր 7.13. Հայաստան. Բուժքույրերի կրթությունն ու զբաղվածությունը**



**Աղբյուր.** Առողջություն բոլորի համար տվյալների բազա: ԱՀԿ/Եվրոպա 2004թ.

2004թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքները մույնպես հաստատում են, որ Հայաստանի առողջապահական համակարգը թերբեռնված է<sup>10</sup>: Հիվանդանոցային և բուժարարական ծառայությունների բնակչության կողմից օգտագործման մակարդակը բավական ցածր է՝ տարածաշրջանի այլ երկրների համեմատ: Տարածաշրջանի կտրվածքով Հայաստանը հանդես է գալիս նման ծառայություններից բնակչության օգտվելու շատ ցածր մակարդակով, հատկապես հիվանդանոցային բուժման ցուցանիշներով: Եթե հիվանդանոցային բուժում ստացողների թվաքանակը 100 մարդու հաշվով տարածաշրջանում տատանվում է 15-ից 20-ի միջև, այդ ցուցանիշը 8-ից էլ ցածր է Հայաստանում: Եթե տարածաշրջանում բուժարարական (պոլիկլինիկա կամ այլ ամբուլատոր բուժ սպասարկման հաստատություն) հաստատություն այցերի թիվը տատանվում է տարեկան մեկ մարդու հաշվով 6-ից 10 անգամի միջև, այդ ցուցանիշը Հայաստանում կազմում է տարեկան մեկ մարդու հաշվով 3 այցից էլ պակաս (Պատկեր 7.14):.

**Պատկեր 7.14. Հայաստան. Առողջապահական համակարգի օգտագործման համեմատությունը միջազգային ցուցանիշների հետ**



**Աղբյուր.** ԱՀԿ և Առողջություն բոլորի համար տվյալների բազա 2004թ.

<sup>10</sup> Հայաստանում պետական պատվերի ներքո տրամադրվող բուժ ծառայություններից կարող են օգտվել միայն ՀՀ բնակչության առանձին սոցիալական խմբեր՝ որոշակի համաֆինանսավորմամբ, իսկ աղքատության ընտանեկան նպաստ ստացող և 38-ից բարձր կարիքավորության միավոր ունեցող տնային տնտեսությունների անդամներն՝ անվճար: Ծառայությունների այդ ցանկը շատ սահմանափակ է և վկայում է առողջապահական հատվածին հատկացված սուղ պետական միջիջների մասին: Նշյալ փաթեթում չներառված ծառայությունները մատուցվում են վճար՝ ծառայության դիմաց սկզբունքով:

Համաձայն 2004թ.-ի ՏՏԿԱՀ հիման վրա ստացված տվյալների, բավական զգալի տարբերություններ կան առողջապահական ծառայություններից օգտվելու միջև ըստ բնակչության սոցիալ տնտեսական կարգավիճակի (Աղյուսակ 7.12): Եթե արձանագրված հիվանդացության դեպքերի քանակը գրեթե չի տարբերվել ըստ տարածաշրջանների կամ սպառման քվանտիլային խմբերի, ապա բուժում ստացածների տեսակարար կշիռները տարբերվում են: Աղքատ քվանտիլային խմբում հիվանդության դեպքերից բուժվել է հիվանդների միայն 45 տոկոսը, իսկ ահա վերին քվանտիլում հիվանդությունը բուժվել է հիվանդների 95տոկոսի մոտ: Ոչ ֆորմալ բուժումը (հեքիմների մոտ կամ տան պայմաններում) բավական տարածված է և կազմել է հիվանդներին տրամադրված բուժ օգնության կեսից ավելին: Բացի այդ բոլոր հիվանդների մոտ 5 տոկոսն է դիմել (հիմնականում վերին քվանտիլային խմբերում) կանխարգելիչ բուժ օգնության ծառայություններին:

**Աղյուսակ 7.12.** Հայաստան. Առողջապահական ծառայությունների օգտագործումը 2004թ.-ին (տոկոսներով)

	Ընդամենը	Եթե հիվանդացել են	Եթե հիվանդացել են և բուժվել են		
	Կանխար գելիչ բուժում	Հիվանդություն	Բուժվել են	Ստացել են ֆորմալ բուժ օգնություն (բժիշկ/պոլիկ լինիկա)	Ստացել են ոչ ֆորմալ բուժ օգնություն (հեքիմ/ տան պայմաններում)
<b>Տնտեսական տարածաշրջան</b>					
Երևան	3.1	20.4	67.3	56.0	44.0
Քաղաքային բնակավայրեր	3.2	17.6	68.6	54.4	45.6
Գյուղական բնակավայրեր	5.4	19.2	74.0	43.6	56.4
<b>Սոցիալ տնտեսական խմբեր</b>					
Ամենաաղքատ քվանտիլ	2.0	18.7	45.5	51.6	48.4
2-րդ քվանտիլ	3.4	18.8	64.0	45.6	54.4
3-րդ քվանտիլ	4.1	18.1	71.0	46.3	53.7
4-րդ քվանտիլ	5.1	19.2	83.1	49.6	50.4
Ամենահարուստ քվանտիլ	6.5	20.8	94.2	56.6	43.4

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004.

Ոչ ֆորմալ բուժում ստացողների մեծ մասը բուժում ստացել է տանը՝ մոտ 90 տոկոսը: Շատ փոքր տոկոսը բուժում ստացել է բժշկի կողմից և շատ ավելի փոքր մաս բուժվել է հեքիմների մոտ: Տան բուժումը ենթադրում է կամ ինքնաբուժում կամ որ հիվանդին օգնել են բուժվել տան անդամները կամ հարևանները: Տան պայմաններում բուժում ստանալն այդքան էլ չի տարբերվում ըստ ապառման քվանտիլային խմբերի, քանզի բուժման այս տարբերակը կիրառվում է ոչ լուրջ հիվանդությունների դեպքում՝ անկախ հիվանդի սոցիալ տնտեսական կարգավիճակից (Աղյուսակ 7.13):

**Աղյուսակ 7.13.** Հայաստան. Ոչ ֆորմալ բուժման տեսակները 2004թ.-ին (%)

	Ավանդական հեքիմ	Բժիշկ	Տան պայմաններում
Երևան	1.0	5.3	93.7
Քաղաքային բնակ.վայր	1.9	10.6	87.5
Գյուղական բնակ.վայր	3.6	12.9	83.4
Առաջին քվանտիլ	1.4	5.6	92.9
2-րդ քվանտիլ	2.0	9.7	88.2

3-րդ քվանտիլ	4.4	10.0	85.6
4-րդ քվանտիլ	2.2	9.7	88.1
Վերին քվանտիլ	1.9	13.3	84.8
<b>Ընդամենը</b>	<b>2.2</b>	<b>10.2</b>	<b>87.7</b>

Աղբյուրը. Հայաստան SSԿԱՀ 2004.

Բուժ. ծառայությունների օգտագործման աստիճանը զգալի տարբերվում է աղքատ և ոչ աղքատ այն սպառողների միջև, որոնք շատ ծանր հիվանդ են եղել (Աղյուսակ 7.14): Չնայած շատ ծանր հիվանդների համաձայնությունը գրեթե նույնն էր բոլոր սոցիալ տնտեսական խմբերում, այդուհանդերձ բուժ. ծառայություններից օգտվելու աստիճանը տարբեր էր: Ամենաաղքատ քվանտիլային խմբի շատ ծանր հիվանդների միայն 40 տոկոսն է ստացել որևիցե բուժում, մինչդեռ բուժում ստացել է ամենահարուստ քվանտիլային խմբի ծանր հիվանդների 80 տոկոսը: Նմանապես բժշկի այցելել է ամենաաղքատ քվանտիլային խմբի հիվանդների մեկ քառորդը, իսկ վերին քվանտիլային խմբում բժշկի դիմել է հիվանդների 60 տոկոսը: Հիվանդանոցային բուժում ստացողների տեսակարար կշիռը հիմնականում ցածր է. ծանր հիվանդ անհատներից միայն մոտ 7 տոկոսն է բուժում ստացել հիվանդանոցում: Տնտեսական տարածաշրջանների կտրվածքով դիտարկելիս հիվանդանոցային բուժում ստացողների տեսակարար կշիռն ավելի ցածր է գյուղական բնակչության մոտ: Ոչ աղքատ բնակչությունը՝ աղքատ բնակչության համեմատ, ավելի հաճախ է օգտվում հիվանդանոցային բուժումից, սակայն բնակչության այդ խմբի շրջանում ևս հիվանդանոցային բուժում ստանալու մակարդակը շատ ցածր է <sup>11</sup>:

**Աղյուսակ 7.14.** Հայաստան. Առողջապահական ծառայությունների օգտագործումը ծանր հիվանդացության դեպքում 2004թ.

	<i>Եթե հիվանդ է</i>		<i>Եթե ծանր հիվանդ է</i>	
	Ծանր հիվանդների %	Բժշկի դիմածների %	հիվանդանոցային բուժում ստացողների %	ցանկացած այլ բուժում ստացողների %
Երևան	40.0	41.8	7.3	63.2
Քաղաք	42.6	38.3	5.9	56.8
Գյուղ	24.1	31.7	4.1	64.1
Առաջին քվանտիլ	34.9	25.5	5.2	41.7
2-րդ քվանտիլ	31.6	26.3	1.3	56.8
3-րդ քվանտիլ	29.9	35.9	4.9	61.7
4-րդ քվանտիլ	35.2	42.8	6.9	67.9
Վերին քվանտիլ	39.3	58.4	10.8	80.1

Աղբյուրը. Հայաստան SSԿԱՀ 2004.

*Աղքատության ընտանեկան նպաստը և առողջապահական ծառայությունների օգտագործումը.* Աղքատության ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների համար, որն աղքատությունը մեղմացնող ամենամեծ պետական դրամական աջակցության ծրագիրն է Հայաստանում և որից 2004թ.-ին օգտվում էին մոտ 130 հազար ընտանիքներ (տես Սոցիալական աջակցության վերաբերյալ գլուխը), պետական պատվերով տրամադրվող ծառայությունների հատուկ փաթեթի ներքո բուժ ծառայություններն անվճար են, եթե նպաստառու ընտանիքի կարիքավորության միավորը բարձր է 38-ից: Աղյուսակ 7.15-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս, որ չնայած ընտանեկան նպաստ ստանալը չի պայմանավորում բուժում ստանալու որոշումը, այն նպաստում է հիվանդանոցային բուժում ստանալու հավանականության վրա: Այդուհանդերձ, ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ այլ հավասար պայմաններում բուժ.

<sup>11</sup> Այս եզրակացությունը պետք դիտարկվի որոշակի վերապահումով, քանզի SSԿԱՀ միջոցով ստացվող հիվանդանոցային բուժում ստացողները կարող է թերհաշվառված լինեն: SSԿԱՀ հարցաշարը հիվանդանոցային բուժման վերաբերյալ հարցը վերաբերում է հետազոտությանը նախորդող 4 ամիսների ընթացքում հիվանդանոցներում բուժում ստացածներին: Նախընտրելի է, որ հարցաշարում հարցը ձևակերպվեր ներառելու հետազոտությանը նախորդող 12 ամիսների ընթացքում հիվանդանոցներում բուժման դեպքերը:

ծառայությունների օգտագործման մակարդակի տարբերությունները վիճակագրականորեն նշանակալի չեն (Աղյուսակ A7.6 Վիճակագրական հավելվածում):

**Աղյուսակ 7.15** Հայաստան. Աղքատության ընտանեկան նպաստը և առողջապահական ծառայությունների օգտագործումը 2004թ-ին

	Այցելել են բժշկի		Պարկել են հիվանդանոցում		Ստացել են այլ բուժում	
	ԱԸՆ չստացողներ	ԱԸՆ ստացողներ	ԱԸՆ չստացողներ	ԱԸՆ ստացողներ	ԱԸՆ չստացողներ	ԱԸՆ ստացողներ
Երևան	42.19	39.34	7.68	5.2	63.6	60.65
Քաղաք	39.08	36.39	6.39	4.48	55.6	59.98
Գյուղ	34.42	25.48	5.49	0.75	65.55	60.68
Աղքատ	26.14	26.73	3.37	4.27	46.37	53.04
Ոչ աղքատ	45.74	39.21	8.38	2.26	69.29	67.67
Ամենաաղքատ քվանտիլ	25.5	25.52	4.44	6.69	38.1	49.52

Աղբյուրը. **SSYԱՀ** 2004թ.


**Նշում:** ԱԸՆ- աղքատության ընտանեկան նպաստ: ԱԸՆ ստացողները պետապատվերի ներքո տրամադրվող ծառայությունների հատուկ փաթեթից օգտվում են անվճար: Ներկայացված տոկոսները վերաբերում են առողջապահական ծառայությունների սպառողներին (համարվել են այն տնային տնտեսությունները, որոնց առնվազն մեկ անդամը ստացել է բուժ օգնություն):

#### Առողջապահական ծառայությունների մատչելիությունը

Ըստ **SSYԱՀ** ստացված տվյալների, տնային տնտեսություններում, որոնց հիվանդ անդամները (առնվազն մեկ անդամը) բուժում են ստացել, հիվանդանոցային բուժումը և տանը ստացած բուժումը (հիմնականում դեղորայքը) հանդիսանում են բուժ ծառայությունների համար կատարված ծախսերի երկու հիմնական ուղղությունները:

Ինչպես ներկայացված է Պատկեր 7.15-ում, ամենաաղքատ քվանտիլում բուժ ծառայություններից օգտվածների բժշկական ծախսերի երեք քառորդը կազմել են հիվանդանոցային ծախսերը: Այդ ծախսերի տեսակրար կշիռը նվազում է վարից վեր քվանտիլների կտրվածքով՝ կազմելով ընդամենը բժշկական ծախսերի 28 տոկոսը ամենավերին քվանտիլում:

**Պատկեր 7.15.** Հայաստան. Ըստ սոցիալ-տնտեսական խմբերի տնային տնտեսությունների կողմից առողջապահական ծառայությունների\* վրա կատարված ծախսերի կառուցվածքը



Աղբյուրը. Անժելա- Ուրրդինոլա, Յան և Պրինա (2006թ) օգտագործելով **SSYԱՀ** 2004թ.

**Նշում:** Ներառված են միայն «սպառող» տնային տնտեսությունները:

### Ներդիր 7.3. Առողջապահական ծառայությունների օտազործման դետերմինանտները

Հայաստանում առողջապահական ծառայությունների օգտագործումը պայմանավորող գործոնների ազդեցությունը (դետերմինանտները) լավ հասկանալու համար իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն (ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ներկայացված են Վիճակագրական հավելվածի Աղյուսակ A7.6-ում): Այն ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական պայմանները, կրթության մակարդակը, սեռը և բնակավայրը կարևոր ներգործություն ունեն անհատների կողմից հիվանդ լինելու դեպքում բժշկի դիմելու հավանականության վրա:

- Անհատական բնութագրիչներ. Տղամարդիկ, երբ հիվանդ են լինում 7 տոկոսով քիչ հավանականությամբ են դիմում ֆորմալ բուժ օգնության, քան կանայք: Շատ ծանր հիվանդները 13-ից 20 տոկոսով ավելի հավանականությամբ են դիմում բժշկի և մոտ 30 տոկոսով ավելի հավանականությամբ են ստանում ցանկացած բուժում: Կրթական առավել բարձր մակարդակով անձինք (նվազագույնը միջնակարգ կրթությամբ) մոտ 20 տոկոսով ավելի մեծ հավանականությամբ են դիմում բժշկի կամ ստանում այլ բուժ օգնություն, երբ հիվանդ են լինում, քան թերի միջնակարգ կրթությամբ անհատները:
- Սոցիալ-տնտեսական պայմանները. Աղքատ տնային տնտեսություններում հիվանդները 15-16 տոկոսով ավելի քիչ հավանականությամբ են բուժ օգնության դիմում, քան ոչ աղքատ տնային տնտեսություններում հիվանդները, և 10 տոկոսով քիչ հավանականությամբ են ստանում հիվանդանոցային բուժում, երբ ծանր հիվանդ են լինում:
- Բարեկամներից ստացված տրանսֆերտները և աշխարհագրական դիրքը. Երևանի բնակիչները մոտ 17 տոկոսով քիչ հավանականությամբ են բուժ օգնության դիմում, քան այլ քաղաքներում ապրողները (չնայած բժշկին դիմելու հավանականությունը վիճակագրականորեն չի տարբերվում ըստ տնտեսական տարածաշրջանների): Այլ հավասար պայմաններում բուժ. ծառայություններից օգտվելու հավանականության վրա ոչ մի ներգործություն չի թողնում արտասահմանից տրանսֆերտներ ստացող տնային տնտեսության անդամ լինելը:

Բուժման համար կատարված միջին ծախսերը շատ ծանր բեռ են տնային տնտեսությունների համար, հատկապես աղքատ սպառողների համար: Այդ իսկ պատճառով բժշկական ծառայությունների բարձր արժեքը բուժ սպասարկումից չօգտվելու հիմնական պատճառն է աղքատ բնակչության շրջանում: Բժշկական ծառայությունների համար կատարված ծախսերը կազմել են բուժ օգնություն ստացած տնային տնտեսությունների ոչ պարենային ծախսերի մոտ կեսը (այդ հարաբերակցությունը կազմել է մոտ 70 տոկոս ամենաաղքատ քվանտիլային խմբում և 47 տոկոս՝ վերին քվանտիլում): Այսինքն, Հայաստանում տնային տնտեսության հիվանդ անդամի համար բուժ օգնություն ստանալը շատ թանկ է, հատկապես աղքատ տնային տնտեսությունների համար: Հիվանդանոցային բուժման դեպքում կատարված ծախսերը կազմել են բուժ օգնություն ստացած աղքատ տնային տնտեսությունների ոչ պարենային ծախսերի միջինը 52 տոկոսը: Այդ հարաբերակցությունը բավական ցածր է միջին խավի տնային տնտեսությունների մոտ, իսկ վերին քվանտիլային խմբի սպառողների մոտ կազմել է միայն 13 տոկոս (Աղյուսակ 7.16):

**Աղյուսակ 7.16.** Հայաստան. Բուժ ծառայությունների հարաբերական արժեքը առնվազն մեկ բուժ օգնություն ստացած անդամ ունեցող տնային տնտեսությունների մոտ \*, 2004թ.

	Ամենաաղքատ քվանտիլ	2-րդ	3-րդ	4-րդ	Վերին քվանտիլ
<b>Ընդամենը առողջապահական ծախսեր</b>					
Տոկոսն ընդամենը եկամտի նկատմամբ	19.9	13.3	17.8	22.1	32.4
Տոկոսն ընդամենը ոչ պարենային	69.1	44.2	47.7	47.9	47.2

	<i>Ամենաաղքատ տ քվանտիլ</i>	<i>2-րդ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>	<i>Վերին քվանտիլ</i>
Ծախսերի նկատմամբ	<b>Ծախսերի հիվանդանոցում</b>				
Տոկոսն ընդամենը եկամտի նկատմամբ	15.1	7.1	9.08	9.4	8.9
Տոկոսն ընդամենը ոչ պարենային ծախսերի նկատմամբ	52.4	23.5	24.29	20.5	13.0

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ..

Նշում. \* Այն տնային տնտեսությունները, որոնք հարցմանը նախորդող 4 շաբաթվա ընթացքում ունեցել են առնվազն մեկ հիվանդ անդամ, որը դիմել է բուժ օգնության համար:

Միջին տնային տնտեսության համար, որի անդամներից մեկը կարող է կարիք ունենալ հիվանդանոցային ծառայությունների (որպես այդպիսին գնահատվել է այն անդամը, որը հարցմանը նախորդող 4 շաբաթների ընթացքում օգտվել է բուժ սպասարկման ծառայություններից և ուստի կարող է ապագայում ևս կարիք ունենալ բուժ օգնության) հիվանդանոցում բուժում ստանալը, արժեքի տեսակետից, մատչելի չէ: Ինչպես ներկայացված է Աղյուսակ 7.17-ում ստորին երկու քվանտիլների տնային տնտեսությունների կողմից հիվանդանոցում փաստացի կատարված միջին ծախսերը կկազմեն հնարավոր վերոնշյալ սպառողների ամբողջական եկամուտների 45-ից 73 տոկոսը, կամ ոչ պարենային ծախսերի 146-ից 250 տոկոսը: Ֆորմալ բուժման միջին ծախսը վճարելու համար՝ բժշկի մոտ կամ պոլիկլինիկա գնալը) կպահանջի բոլոր քվանտիլներում բուժ ծառայություններից օգտվողների ոչ պարենային ծախսերի 60-տոկոսը: Անգամ ոչ ֆորմալ բուժ օգնության միջին ծախսը (ինչպիսին օրինակ տանը ստացած բուժ օգնությունն է) նշանակալի բեռ կլինի պոտենցիալ սպառողների համար:

**Աղյուսակ 7.17.** Հայաստան. Բուժ օգնության կարիք ունեցող տնային տնտեսությունների համար բուժ ծառայությունների արժեքի մատչելիությունը, 2004թ.-ին

	<i>Ամենաաղքատ քվանտիլ</i>	<i>2-րդ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>	<i>Վերին քվանտիլ</i>
Միջին արժեքը մեկ հիվանդի հաշվով որպես % հիվանդ անդամ ունեցող տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ընդամենը ծախսերի նկատմամբ *					
Բուժում	62.4	57.0	63.0	70.1	59.3
Հիվանդանոց	250.6	146.0	67.7	53.8	32.6
Հեքիմ	35.9	30.2	26.8	25.8	24.8
Բժիշկ	68.7	60.7	59.8	55.0	71.0
Բուժում տան պայմաններում	46.4	53.7	50.3	57.1	53.1
Հետծննդյան խնամք	33.2	20.2	26.0	12.6	8.3

#### **Աղյուսակ 7.17: շարունակություն**

	<i>Միջին արժեքը մեկ հիվանդի հաշվով որպես % հիվանդ անդամ ունեցող տնային տնտեսության մեկ շնչի հաշվով ընդամենը ոչ պարենային ծախսերի նկատմամբ*</i>				
Բուժում	18.1	17.7	23.6	33.8	43.8
Հիվանդանոց	72.6	45.3	25.4	26.0	24.1
Հեքիմ	10.4	9.4	10.0	12.4	18.3
Բժիշկ	19.9	18.8	22.4	26.5	52.5
Բուժում տան պայմաններում	13.4	16.7	18.8	27.5	39.2
Հետծննդյան խնամք	9.6	6.3	9.7	6.1	6.1

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004.

Նշում. Հաշվարկվել է փաստացի սպառված ցանկացած տեսակի բուժ սպասարկման միջին արժեքը և ապա բաժանվել տնային տնտեսության միջին եկամտի (ոչ պարենային ծախսերի) վրա:

Բուժ ծառայությունների համար կատարված ոչ ֆորմալ վճարումները բավական զգալի են, հատկապես հիվանդանոցներում: Բժիշկների պաշտոնական աշխատավարձը Հայաստանում շատ ցածր է, որը և խթանում է ոչ ֆորմալ վճարումներ վերցնելը: Ոչ ֆորմալ վճարները կազմում են մատուցված բոլոր տեսակի բուժ ծառայությունների համար կատարվող վճարների մոտ 10 տոկոսը, իսկ հիվանդանոցային բուժման համար՝ 22.5 տոկոս (շատ բարձր արժեք սպառողների համար): Ինչպես վկայում է Աղյուսակ 7.18-ը, բուժ սպասարկման համար վճարվող ոչ ֆորմալ վճարները հատկապես բարձր են Երևանում և հատկապես վերին քվանտիլային խմբերի մոտ: Հիվանդանոցային բուժման դեպքում, ամենաբարձր գումարներ ոչ ֆորմալ բժշկական ծառայությունների համար վճարում են աղքատները: Ոչ ֆորմալ վճարները հիվանդանոցային բուժման ժամանակ կրկին ամենաբարձրն են Երևանում, ինչպես նաև միջին եկամտով բնորոշվող մարզերում՝ Արագածոտնում, Արմավիրում և Սյունիքում:

**Աղյուսակ 7.18.** Հայաստան. Բուժ ծառայությունների համար կատարված ոչ ֆորմալ վճարումները 2004թ.

	<i>Ոչ ֆորմալ վճարները % ընդամենը բուժման համար կատարված ծախսերի նկատմամբ</i>	<i>Ոչ ֆորմալ վճարները % ընդամենը հիվանդանոցում կատարված վճարների նկատմամբ</i>
<b>Սոցիալ-տնտեսական խմբեր</b>		
Ամենաաղքատ քվանտիլ	6.3	39.7
2-րդ քվանտիլ	7.3	23.4
4-րդ քվանտիլ	12.2	25.5
Ամենահարուստ քվանտիլ	10.7	26.2
<b>Տնտեսական տարածաշրջաններ</b>		
Երևան	15.5	38.2
Քաղաքային բնակավայրեր	6.5	18.6
Գյուղական բնակավայրեր	7.7	13.9
<b>Ընդամենը</b>	9.3	22.5

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004.

Աղքատության ընտանեկան նպաստ ստացողները և բուժ ծառայությունների համար կատարված ոչ ֆորմալ վճարումները. ՏՏԿԱՀ տվյալները ցույց են տալիս, որ աղքատության ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունները, որոնք նաև իրավունք ունեն պետականության ներքո անվճար բուժ օգնություն ստանալու, շատ ավելի քիչ են ոչ ֆորմալ վճարումներ կատարում, քան նման առավելություն չունեցող այլ աղքատ ընտանիքներ: Ինչպես ցույց են տալիս Աղյուսակ 7.19-ի տվյալները ԱԸՆ ստացողների շրջանում բուժօգնության համար (հիվանդանոցում) վճարվող ոչ ֆորմալ վճարները մոտ կիսով չափ ավելի քիչ են: Եթե աղքատ քվանտիլում նպաստառու տնային տնտեսություններն ընդհանրապես ոչ ֆորմալ վճարում չեն կատարում (և՛ բուժման համար և՛ ոչ հիվանդանոցում), նույն սոցիալ տնտեսական խմբի ԱԸՆ չստացող աղքատ տնային տնտեսությունները վճարում են բավական մեծ գումարներ (8 տոկոս բուժման ժամանակ, և մոտ 43 տոկոս հիվանդանոցում):

**Աղյուսակ 7.19.** Աղքատության ընտանեկան նմաստ ստանալը և բուժ.սպասարկման համար կատարված ոչ ֆորմալ վճարումները

	<i>Բուժում</i>		<i>Հիվանդանոցում</i>	
	<i>Ոչ ֆորմալ վճարումների %-ն ընդհանուրի նկատմամբ</i>		<i>Ոչ ֆորմալ վճարումների %-ն ընդհանուրի նկատմամբ</i>	
	Չեն ստանում	Ստանում են	Չեն ստանում	Ստանում են
<b>Ընդամենը</b>	ԱԸՆ 10.80	ԱԸՆ 4.60	ԱԸՆ 26.60	ԱԸՆ 8.40
<b>Քվանտիլներ</b>				
Ամենաաղքատ	8.20	0.00	43.30	0.00
2-րդ քվանտիլ	8.30	4.00	27.70	2.40
4-րդ քվանտիլ	12.90	9.70	30.00	4.70

	<i>Բուժում</i>		<i>Հիվանդանոցում</i>	
	<i>Ոչ ֆորմալ վճարումների %-ն ընդհանուրի նկատմամբ</i>		<i>Ոչ ֆորմալ վճարումների %-ն ընդհանուրի նկատմամբ</i>	
Հարուսներ	11.30	0.40	26.90	0.00
<b>Սոցիալական խմբեր</b>				
Ոչ աղքատներ	11.10	6.30	25.80	9.90
Աղքատներ	9.20	0.00	30.90	1.80

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

Այդ արդյունքներն ընդգծում են անվճար բժշկական փաթեթի կարևորությունը աղքատ սպառողների համար: Ուստի, հաշվի առնելով, որ այն կախված է աղքատության ընտանեկան նպաստ ստանալու հետ, կարևորվում է ոչ միայն նպաստի հասցեականության բարձրացումը, այլև աղքատների և շատ աղքատների ընդգրկվածության աստիճանը: (տե՛ս Սոցիալական աջակցության վերաբերյալ գլուխը):

## 7.6. Եզրահանգումներ

Հայաստանն ունի առողջապահական և կրթական լավ համակարգեր, քանզի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի շատ երկրների համեմատ բավական ցածր պետական ֆինանսավորմամբ կարողացել է ապահովել առողջապահության և կրթության լավ ցուցանիշներ: 2004թ.-ին կյանքի սպասվող տևողությունը ծնվելու պահից տղամարդկանց մոտ կազմել է 70.3 տարի, որն ավելի բարձր ցուցանիշ է, քան ԵԿԱ շատ այլ երկրներում, իսկ կանանց մոտ՝ 76.4 տարի: Այդ երկու ցուցանիշներն էլ գերազանցել են 1990թ.-ին գրանցված իրենց համապատասխան մակարդակները: Մահացությունն ու մահացության ստանդարտ գործակիցը ցածր են, իսկ կյանքի առաջին տարում, մինչև 5 տարեկանների և մայրամահացության գործակիցները նվազել են 1990թ.-ի համապատասխան ցուցանիշների համեմատ: Բարձր է պատվաստումների մակարդակը: Գրեթե ողջ բնակչությունը գրագետ է: Հանրակրթությունը մատչելի է բոլորի համար՝ հավասարապես թե՛ տղաների և թե՛ աղջիկների համար: Միջնակարգ կրթության ավարտման տեսակարար կշիռը բարձր է:

Ավելացել են կրթության և առողջապահության գծով համախմբված բյուջեի ծախսերի մասնաբաժինները՝ արտացոլելով համախմբված բյուջեի ծախսերն առավել աղքատամետ դարձնելու կառավարության ջանքերը: Ծախսերի ենթաճյուղային կառուցվածքը նույնպես փոփոխվել է՝ հիմնական շեշտադրում անելով հիմնական կրթությանն ու առաջնային բուժօգնության վրա:

Թեև 2004թ.-ին առողջապահության և կրթության պետական ֆինանսավորումը համապատասխանաբար կազմել է ՀՆԱ-ի 1.3 և 2.8 տոկոսն, այն դեռ բավական ցածր է և կրթության ու առողջապահության ծախսերի հիմնական բեռը կրում է բնակչությունը: 2004թ.-ին բնակչության ծախսերը կրթության համար կազմել են ՀՆԱ-ի 2.3 իսկ առողջապահության վրա՝ 4.6 տոկոսը: Քանի որ առողջապահության համակարգում կատարված բնակչության ծախսերի գերակշիռ մասը ոչ ֆորմալ վճարումներն են, Կառավարության համար բավական բարդ խնդիր է առողջապահության հատվածում կատարված ծախսերի ֆորմալացումը: Հիվանդանոցներում, ինչպես նաև բարձրագույն կրթության համար կատարվող բնակչության ծախսերի մեծ մասը բաժին է ընկնում ոչ աղքատ բնակչությանը, քանի որ աղքատ բնակչության համեմատ, ոչ աղքատներն ավելի են օգտվում այդ ծառայություններից:

Ի տարբերություն հիմնական կրթության, սովորողների ընդգրկվածությունը միջնակարգ դպրոցի բարձր դասարաններում զգալի ընկնում է՝ կազմելով 69 տոկոս համապատասխան տարիքի բնակչության կտրվածքով, իսկ աղքատների և ոչ աղքատների ընդգրկվածության տարբերությունը բավական նկատելի է: Բարձրագույն կրթության համակարգում համապատասխան տարիքի բնակչության զուտ ընդգրկվածությունը 25 տոկոս է: Այստեղ ևս մեծ է ոչ աղքատների և աղքատների ընդգրկվածության տարբերությունը. 38 տոկոս՝ 5 տոկոսի դիմաց: Բարձրագույն կրթության հետ կապված բարձր ծախսերը և հատկապես դրանց մատչելիությունը, կրթություն ստանալուց հետո բարձր աշխատավարձ ստանալու ցածր հավանականությունն այն հիմնական պատճառներն են, որով կարելի է բացատրել հիմնական և, մասնավորապես, ընդհանուր



միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աղքատ տնային տնտեսությունների համապատասխան տարիքի բնակչության կրթական համակարգից դուրս մնալը:

«Լավ կրթություն» ստանալու մատչելիության տարբերությունը ոչ աղքատ և աղքատ բնակչության մոտ, ինչպես նաև քաղաքային և գյուղական բնակչության միջև բավական զգալի է: Աղքատ տնային տնտեսությունների համեմատ, ոչ աղքատ տնային տնտեսությունների համար առավել բարձր որակի կրթությունը՝ լրացուցիչ պարապմունքները, կրթական ծրագրերը, դասընթացներն առավել մատչելի են: Սովորելու դրդապատճառները, ինչպես նաև սովորելու միջոցների, ինչպես օրինակ համակարգիչների մատչելիությունն առավել բարձր է ոչ աղքատ տնային տնտեսությունների աշակերտների համար: Այս բոլոր գործոններն արմատապես անդրադառնում են ոչ աղքատ տնային տնտեսությունների աշակերտների ուսման առաջադիմության վրա: Թե՛ աշակերտների առաջադիմությունն ու գիտելիքները, թե՛ ուսուցիչների որակական ու մասնագիտական հմտությունները հիմնականում ավելի բարձր են քաղաքային բնակավայրերում, քան գյուղական դպրոցներում: Դպրոցներում անհրաժեշտ ենթակառուցվածքների և ռեսուրսների պակասը առավել մեծ խոչընդոտ է պարտադիր կրթական համակարգում, քան մարդկային ռեսուրսների պակասը:

Հայաստանում կրթության համակարգակի համար լուրջ խնդիր է դպրոցական տարիքի բնակչության թվաքանակի անկումը: Որոշ չափով արտագաղթի և որոշ չափով ծնելիության ցածր մակարդակով պայմանավորված, Հայաստանի բնակչության թվաքանակը նվազում է: Համաձայն ՄԱԿ-ի աշխարհի բնակչության թվաքանակին տրված գնահատականների, մինչև 2050թ.-ը Հայաստանի ընդհանուր բնակչության թվաքանակը կնվազի 24 տոկոսով, ամենամեծ անկում գրանցելով հիմնական կրթության համակարգում սովորողների թվաքանակում՝ 47 տոկոս:

Չնայած Հայաստանում առողջապահական կարգավիճակը բնութագրող շատ ցուցանիշներ համեմատաբար ավելի լավն են, քան Նախկին խորհրդային կամ ԱՊՀ շատ երկրներում, առողջապահական ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը բավական ցածր է, հատկապես գյուղական բնակավայրերում և աղքատ բնակչության մոտ: Համախմբված բյուջեում առողջապահության համակարգին հատկացված ծախսերի ցածր մակարդակը, ինչպես նաև առողջապահական ծառայությունների մատչելիությունը (առողջապահական ծառայությունների դիմաց վճարումները հիմնականում ոչ պաշտոնական են) այն հիմնական պատճառներն են, որոնք պայմանավորում են բժշկական ծառայություններից աղքատ բնակչության չօգտվելը, կամ դիմելը ոչ ֆորմալ բուժ. ծառայությունների:

Աղքատության ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունները, որոնք միևնույն ժամանակ իրավունք ունեն օգտվելու պետական պատվերի ներքո անվճար բուժ. ծառայությունների փաթեթից, ավելի քիչ են կատարում ոչ ֆորմալ վճարումներ, քան այլ աղքատ սպառողներ, որոնք չեն ստանում այդ աջակցությունը: Սա ընդգծում է պետական պատվերի ներքո անվճար բուժ. ծառայությունների փաթեթի մատչելիության անհրաժեշտությունը բոլոր աղքատների համար: Քանի որ այն կախված է աղքատության ընտանեկան նպաստ ստանալու հանգամանքից, անհրաժեշտ է ոչ միայն էլ ավելի կատարելագործել նպաստների տրամադրման հասցեականությունն այլև, զգալիորեն բարձրացնել աղքատ և շատ աղքատ բնակչության ընդգրկվածության աստիճանը:

## **Գլուխ VIII. Սոցիալական տրանսֆերտները Հայաստանում և դրանց ներգործությունը աղքատության կրճատման գործում**

*Չնայած սոցիալական տրանսֆերտներին ուղղված համախմբված բյուջեի ծախսերը ՀՆԱ-ի նկատմամբ բավական սահմանափակ են, դրանք զգալիորեն կրճատում են աղքատության մակարդակը: Ողջ բնակչության հաշվով, եթե դադարեցվեն վճարվել սոցիալական տրանսֆերտները, իսկ տնային տնտեսությունները՝ բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը զգալիորեն կաճի. աղքատության ընդհանուր մակարդակը կկազմի 44.8 տոկոս՝ ավելանալով 10.2 տոկոսային կետով, այն նաև էապես կխորանա և կսրվի: Իրավիճակն ավելի կսրվի հատկապես սոցիալական տրանսֆերտներ ստացող բնակչության համար: Կենսաթոշակները, որպես սոցիալական տրանսֆերտների առավել մեծ բաղադրիչ, առավել մեծ ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում: Սակայն փոքր չէ նաև դրամական սոցիալական աջակցության, մասնավորապես աղքատության ընտանեկան նպաստների դերը: Չնայած աղքատության ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկվածությունը սահմանափակ է՝ աղքատ բնակչության միայն մեկ քառորդն է ընդգրկված այդ ծրագրում, այն բավական բարձր հասցեականություն ունի, քանզի բոլոր նպաստառուների 63 տոկոսը, որոնք ստանում են ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների 67 տոկոսը գտնվում են սպառման բաշխվածության ամենաստորին երկու քվանտիլներում: Թեև դա բավական լավ արդյունք է, կատարելագործման անհրաժեշտություն այդուհանդերձ կա, քանզի նպաստառուների 20 տոկոսը, որոնց հատկացվում է ռեսուրսների 17 տոկոսը՝ ամենավերին քվանտիլի 40 տոկոս բնակչության կազմում են: Միջոցների նման կորուստը նվազեցնելու նպատակով, հավանաբար անհրաժեշտություն կառաջանա վերանայելու հասցեականության բանաձևը: Հասցեականության բարելավումը հնարավորություն կընձեռնի բյուջետային նույն միջոցների շրջանակում ընդլայնելու աղքատների ընդգրկվածությունը: Սակայն ավելի մեծ ծավալի ընդգրկվածություն ապահովելը կապականջի նաև միջոցների ավելացում:*

### **8.1. Մեթոդաբանությունը**

Սոցիալական պաշտպանության ծրագրերի ներգործությունն երկրում աղքատության մակարդակի փոփոխության վրա գնահատվել է տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության միջոցով: Վերլուծությունը ներառել է երկու հիմնական սոցիալական պաշտպանության ծրագրեր՝ կենսաթոշակները և սոցիալական աջակցությունը, որտեղ ներառվել են բոլոր տեսակի պետական դրամական աջակցությունները: Բացառությամբ աղքատության ընտանեկան նպաստների (ԱԸՆ), բոլոր այլ տեսակի պետական նպաստները հատկացվում են բնակչության շատ նեղ խմբերի, որի արդյունքում նման նպաստառուները շատ փոքր մաս են կազմում ՏՏԿԱՀ-ում և չեն բավարարում վիճակագրականորեն նշանակալի եզրահանգումներ կատարելու համար:

Սոցիալական տրանսֆերտների (կենսաթոշակների և պետական դրամական աջակցության) ներգործությունն աղքատության մակարդակի վրա գնահատելու համար կիրառվել է հետևյալ մոտեցումը. հետազոտությամբ դիտարկված աղքատության մակարդակի արդյունքները («հետ-տրանսֆերտային մակարդակ») համեմատվել են այն արդյունքների հետ, որոնք կստացվեին, եթե այդ տրանսֆերտները չվճարվեին («նախատրանսֆերտային» մակարդակ): Գնահատման մեթոդաբանությունն այսպիսին է. տնային տնտեսությունների համար հաշվարկվել է «նախատրանսֆերտային» սպառման ագրեգատը՝ տնային տնտեսությունների համար դիտարկված սպառման ագրեգատից հանելով սոցիալական տրանսֆերտների գումարը (կենսաթոշակների գումարը, դրամական սոցիալական աջակցության գումարը կամ երկուսը միասին), ելնելով այն ենթավարկածից, որ սոցիալական տրանսֆերտների ամբողջ գումարը սպառվում է տնային տնտեսության կողմից (իրավիճակ, որ շատ բնորոշ է Հայաստանի նման զարգացող երկրներին): Այդպիսով, «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակների տարբերությունն իրենից կներկայացնի աղքատության մակարդակի փոփոխության վրա սոցիալական տրանսֆերտների ներգործության գնահատականը: Այս մեթոդաբանությունը հատկապես կարևորվում է սոցիալական աջակցության

հասցեականության բարելավման տեսանկյունից: Սոցիալական աջակցության համար նպատակային բնակչությունը «նախատրանսֆերտային» աղքատներն են, քանզի սոցիալական աջակցություն ստանալուց հետո աղքատ բնակչության մի որոշ խումբ կարող է անցնել աղքատության շեմը, ուստի «հետտրանսֆերտային» բնակչության դիտարկումը, որպես նպատակային խումբ, կարող է իր մեջ բավական մեծ անճշտություն պարունակել: Կենսաթոշակների ներգործությունն աղքատության մակարդակի վրա գնահատվել է համեմատելով «նախատրանսֆերտային» աղքատության մակարդակը կենսաթոշակները ստանալուց հետո աղքատության մակարդակի հետ, այսինքն «հետ-կենսաթոշակային» (բայց «նախասոցիալական աջակցության») աղքատության մակարդակի հետ<sup>12</sup>:

## 8.2. Ինչպիսի՞ն է Հայաստանում սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մակարդակի վրա:

Սոցիալական տրանսֆերտների համար նախատեսվող միջոցները մեծ չեն Հայաստանում: 2004թ.-ին սոցիալական տրանսֆերտներին ուղղվել էր 84.4 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 4.45 տոկոսը: Ամենամեծ սոցիալական տրանսֆերտները՝ կենսաթոշակները, ներառյալ տարիքային, զինվորական, և սոցիալական կենսաթոշակները, կազմել են 63.1 մլրդ. դրամ կամ ՀՆԱ-ի 3.3 տոկոսը<sup>13</sup>: Իսկ ամենամեծ դրամական սոցիալական աջակցության ծրագրի՝ աղքատության ընտանեկան նպաստների համար հատկացվել էր 16.1 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 0.85 տոկոսը:

2004թ.-ին սոցիալական տրանսֆերտները կազմել են Հայաստանի տնային տնտեսությունների ամբողջական միջին ամսական եկամտի 11.3 տոկոսը: Ամենաստորին քվանտիլում սոցիալական տրանսֆերտները կազմել են տնային տնտեսությունների միջին ամսական եկամտի 16.7 տոկոսը, մինչդեռ սպառման վերին քվանտիլում գտնվող տնային տնտեսությունների համար դրանք կազմել են միայն 7.4 տոկոս: Ըստ բնակավայրերի դիտարկելիս, սոցիալական տրանսֆերտներն եկամտի կարևոր աղբյուր են եղել հիմնականում Երևանից դուրս քաղաքաբնակ տնային տնտեսությունների համար և նվազ կարևոր Երևանաբնակների համար:

Ըստ ՏՏԿԱՀ, ԱԸՆ-ը որպես եկամտի աղբյուր նշել էին տնային տնտեսությունների 14.3%-ը, կենսաթոշակները՝ 48.6%-ը և գործազրկության նպաստը՝ 0.7%-ը, երեխայի հետ կապված նպաստները՝ 1.2 %-ը և այլ նպաստներ ներառյալ արտոնությունները՝ 4.4 %-ը:

### Աղյուսակ 8.1. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա 2004թ.

	Աղքատներ			Շատ աղքատներ		
	Աղքատության մակարդակ %	Աղքատության խորություն (P1/P0); %	Աղքատության սրություն	Աղքատության մակարդակ %	Աղքատության խորություն (P1/P0); %	Աղքատության սրություն
<b>Հետտրանսֆերտային մակարդակ</b> (հետ կենսաթոշակային և հետ սոցիալական աջակցություն)	34.6	21.3	6.9	6.4	17.1	4.7
<b>Նախատրանսֆերտային մակարդակ</b> (նախակենսաթոշակային և նախասոցիալական)	44.8	29.8	13.7	15.4	28.2	15.9

<sup>12</sup> Հետազոտությամբ ստացված արդյունքները որոշակի վիճակագրական սխալով (շեղմամբ) են ներկայացնում Հայաստանի բնակչության պատկերը: Նման վիճակագրական սխալ պարունակում են նաև նախատրանսֆերտային և հետտրանսֆերտային աղքատության մակարդակները: Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մակարդակի վրա ունի վիճակագրական նշանակություն, եթե նախատրանսֆերտային և հետ-տրանսֆերտային աղքատության միջին մակարդակների վստահության միջակայքերը չեն համընկնում:

<sup>13</sup> Տարիքային կենսաթոշակները (պարտադիր սոցիալական ապահովագրության ներքո տրամադրվող կենսաթոշակները) կազմել են 50.9 մլրդ դրամ, կամ ՀՆԱ-ի 2.6 տոկոսը և վճարվել են 489,3 հազ. կենսաթոշակառուների: Այդ գումարը շատ փոքր է տարածաշրջանի այլ երկրների համեմատ:

	Աղքատներ		Շատ աղքատներ			
	Աղքատության մակարդակ %	Աղքատության խորություն (P1/P0); %	Աղքատության արություն	Աղքատության մակարդակ %	Աղքատության խորություն (P1/P0); %	Աղքատության արություն
կան աջակցություն)						
<b>Նախքան կենսաթոշակների վճարումը</b> (նախակենսաթոշակային և հետ սոցիալական աջակցություն)	42.7	27.2	11.5	12.3	25.8	13.9
<b>Նախքան ընդամենը սոցիալական աջակցության վճարումը</b> (նախա ԱԸՆ և այլ սոց աջակցություն, հետ կենսաթոշակային)	37.2	23.9	8.7	8.7	21.3	7.8
<b>Նախքան ԱԸՆ վճարումը</b> (նախա ԱԸՆ; հետ կենսաթոշակային և այլ սոց աջակցություն)	36.7	23.3	8.3	8.2	20.3	7.0

**Աղբյուրը.** 2004թ, ՏՏԿԱՀ

**Նշում.** Այդ տվյալները ստանդարտ սխալներով ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A8.1-ում: Աղքատության խորությունը (P1/P0) ցույց է տալիս աղքատ կամ շատ աղքատ բնակչության սպառման պակաստուրդն աղքատության ընդհանուր կամ պարենային գծի նկատմամբ:

2004թ.-ի հետազոտությամբ ստացված արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ թեև սոցիալական տրանսֆերտները ՀՆԱ-ի նկատմամբ բավական փոքր գումար են կազմում, դրանք կարևոր գործիք են աղքատության հաղթահարմանն ուղղված քաղաքականության համար: Եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումը, իսկ աղքատ բնակչությունը չկարողանա այլ աղբյուրների հաշվին փոխհատուցել այդ կորուստն, ապա աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակները զգալիորեն կաճեն (աղյուսակ 8.1): Աղքատության մակարդակը 34.6 տոկոսից կբարձրանա 44.8 տոկոսի, աղքատներն ավելի կաղքատանան, քանզի աղքատության խորությունը՝ աղքատության գծի նկատմամբ նրանց միջին սպառման պակաստուրդը, 21.3 տոկոսից կկազմի 29.8 տոկոս, իսկ աղքատությունն ավելի կսրվի՝ աղքատության սրության համաթիվը, որը գնահատում է աղքատների միջև սպառման բաշխվածության անհավասարությունը, կկրկնապատկվի<sup>14</sup>: Նման անբերենապատ ազդեցությունն առավել նկատելի կլինի շատ աղքատ (ծայրահեղ աղքատ) բնակչության համար:

Կենսաթոշակները, որպես առավել մեծ սոցիալական տրանսֆերտներ, աղքատության հաղթահարման իմաստով ավելի զգալի դեր ունեն: Այդուհանդերձ, քիչ չէ սոցիալական աջակցության, մասնավորապես վերջինիս առավել մեծ ծրագրի՝ աղքատության ընտանեկան նպաստների ներգործությունը: Օրինակ, եթե դադարեցվի միայն աղքատության ընտանեկան նպաստների վճարումն, ապա աղքատության մակարդակը կավելանա 2.1 տոկոսային կետով, իսկ ծայրահեղ աղքատությունը կաճի 2 տոկոսային կետով (15 տոկոսով), աղքատության խորությունն ու սրությունը կավելանան 9.3 և 20.3 տոկոսով, իսկ ծայրահեղ աղքատության խորությունն ու սրությունը կավելանան 18.7 և 48.9 տոկոսով, համապատասխանաբար:

Աղյուսակ 8.2-ում ներկայացված են աղքատության նախա և հետ տրանսֆերտային մակարդակները միայն այն տնային տնտեսությունների համար, որոնք ստանում են այդ սոցիալական տրանսֆերտները: Սոցիալական տրանսֆերտների չվճարման դեպքում էապես կդժվարանա մնալ տնային տնտեսությունների ապրուստը. ակնհայտ է, որ պատկերն այս դեպքում շատ ավելի ծանր կլինի, քան նախորդ աղյուսակի միջոցով՝ ողջ բնակչության կտրվածքով, գնահատված սոցիալական տրանսֆերտների չվճարման ազդեցությունը: Եթե չվճարվեն կենսաթոշակները, իսկ կենսաթոշակառու բնակչությունը չկարողանա փոխհատուցել

<sup>14</sup>Աղքատության խորությունը գնահատում է աղքատ տնային տնտեսությունների սպառման մակարդակի տարբերությունը աղքատության գծի նկատմամբ: Աղքատության սրությունը գնահատում է աղքատության գծից ներքև առկա անհավասարությունը՝ առավել բարձր կշիռ տալով սպառման բաշխվածության ամենաստորին մասում գտնվող տնային տնտեսություններին:

այդ կորուստն այլ աղբյուրների հաշվին, ապա աղքատության մակարդակը կենսաթոշակառուների շրջանում էապես կավելանա՝ կազմելով 48 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը կենսաթոշակառուների շրջանում կեռապատկվի: Աղքատության մակարդակն ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների շրջանում շատ ավելի բարձր է միջին մակարդակից, անգամ ԱԸՆ ստանալուց հետո՝ հետտրանսֆերտային աղքատության 34.6 տոկոս միջին մակարդակի համեմատ այն կազմում է 47.1 տոկոս: ԱԸՆ դադարեցումը կհանգեցնի նման տնային տնտեսությունների շրջանում աղքատության մակարդակի կտրուկ աճի՝ 47.1 տոկոսից՝ 61.4 տոկոսի, իսկ ծայրահեղ աղքատ բնակչության մասնաբաժինը կկրկնապատկվի:

**Աղյուսակ 8.2. Հայաստան. Կենսաթոշակ և /կամ սոցիալական աջակցություն ստացող տնային տնտեսությունների աղքատության մակարդակի վրա սոցիալական տրանսֆերտների ներգործությունը 2004թ.-ին**

	Շատ աղքատներ (%)	Աղքատներ (%)	Աղքատության խորություն (P1/P0)	Աղքատության սրություն
<b>Կենսաթոշակ ստացող տնային տնտեսություններ</b>				
Հետ-կենսաթոշակային	7.1	36.6	21.5	7.0
Նախա-կենսաթոշակային	19.1	53.2	31.1	14.6
<b>Սոցիալական աջակցություն ստացող տնային տնտեսություններ</b>				
Հետ սոց աջակցություն	10.0	45.4	23.0	7.9
Նախա սոց.աջակցություն	21.9	58.8	30.9	13.7
<b>ԱԸՆ ստացող տնային տնտեսություններ</b>				
Հետ –ԱԸՆ	9.9	47.1	22.7	7.6
Նախա-ԱԸՆ	22.0	61.4	30.5	13.1

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

**Նշում.** Այդ տվյալները ստանդարտ սխալներով ներկայացված են վիճակագրական հավելվածի աղյուսակ A8.2: Աղքատության խորությունը (P1/P0) ցույց է տալիս աղքատ կամ շատ աղքատ բնակչության սպառման պակաստուրդն աղքատության ընդհանուր կամ պարենային գծի նկատմամբ:

Եթե դադարեցվեն սոցիալական տրանսֆերտներն, ապա դա ոչ միայն կավելացնի աղքատության գծից ցած գտնվողների թվաքանակը, այլև կհանգեցնի աղքատության խորության ու սրության սաստկացմանը: Այսպիսով, սոցիալական տրանսֆերտները էական ազդեցություն ունեն նպաստառու տնային տնտեսությունների աղքատության մակարդակի կրճատման վրա, թեև ոչ բոլոր նպաստառուներն են կարողանում հաղթահարել աղքատության բեռը ԱԸՆ ստանալուց հետո, նրանց շրջանում էապես կրճատվում է թե/ աղքատության խորությունը և թե՝ աղքատության սրությունը:

### 8.3. Սոցիալական տրանսֆերտների արդյունավետություն ու արդյունավտությունը

*Ուլքե՞ր են ստանում սոցիալական տրանսֆերտներ:* Տնային տնտեսությունների հետազոտության տվյալների հիման վրա սոցիալական տրանսֆերտների արդյունավետությունը գնահատելու համար դիտարկվել է «նախատրանսֆերտային» աղքատ, ծայրահեղ աղքատ ինչպես նաև ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունը սոցիալական աջակցության ծրագրերում: Որքան բարձր է աղքատ և ծայրահեղ աղքատ բնակչության և ցածր ոչ աղքատ բնակչության ընդգրկվածությունն, այնքան արդյունավետ է սոցիալական աջակցությունը. այնքան բարձր է հասցեականությունն ուղղված առավել կարիքավորներին: Երբ դիտարկվում է աղքատության ընտանեկան նպաստների համակարգն, ապա արդյունքները ցույց են տալիս, որ 2004թ.-ին աղքատության ընտանեկան նպաստ են ստացել «նախա-ԱԸՆ» աղքատների 25.1 տոկոսը, իսկ ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունն ավելի բարձր էր՝ 40.6 տոկոս (աղյուսակ 8.3): Միևնույն ժամանակ աղքատության ընտանեկան նպաստ ստանում էր «նախա-ԱԸՆ» ոչ աղքատների միայն 9.3 տոկոսը: Հարկ է նշել, որ կենսաթոշակները, որպես զանգվող սոցիալական ապահովագրական նպաստ, ի տարբերություն աղքատության ընտանեկան նպաստների,

վճարվում են կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցողներին՝ անկախ աղքատության մակարդակը հաշվի առնելու: Այդուհանդերձ, ինչպես ցույց են տալիս 2004թ. ՏՏԿԱՀ տվյալները, կենսաթոշակները Հայաստանում բավական նպաստում են աղքատության մակարդակի թե՛ կրճատմանը և թե մեղմացմանը:

**Աղյուսակ 8.3. Հայաստան. Ովքե՞ր են ստացել սոցիալական տրանսֆերտներ 2004թ.-ին (տոկոսներով)**

	Նախա սոցիալական աջակցություն	Նախա աղքատության ընտանեկան նպաստներ	Նախա կենսաթոշակներ
«Նախատրանսֆերտային» բնակչության ընդգրկվածությունը կենսաթոշակային և սոցիալական աջակցության ծրագրերում			
Աղքատներ*	31.6	25.1	62.4
Ծայրահեղ աղքատներ*	51.1	40.6	79.9
Ոչ աղքատներ	12.8	9.3	39.7

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

Նշում. \*աղքատների և ծայրահեղ աղքատների ընդգրկվածությունն ավելի բարձր է քան ոչ աղքատների ընդգրկվածությունը

*Ռեսուրսների ո՞ր մասն է հատկացվում աղքատներին:* ՏՏԿԱՀ գնահատականները ցույց են տալիս, որ վճարվող կենսաթոշակների 57.8 տոկոսը ստանում են «նախատրանսֆերտային» աղքատները, իսկ հատկացված աղքատության ընտանեկան նպաստների 60.3 տոկոսը վճարվել է «նախասոցիալական աջակցություն» աղքատներին (աղյուսակ 8.4): Դա ենթադրում է, որ աղքատության ընտանեկան նպաստների համար նախատեսված ֆինանսական միջոցների «արտահոսքը» ոչ աղքատներին կազմել է մոտ 40 տոկոս: Այլ ձևակերպմամբ ստացվում է, որ «նախա-ԱԸՆ» աղքատներին հատկացված յուրաքանչյուր մեկ դրամ օգնության համար աղքատության ընտանեկան նպաստների համար հատկացված միջոցներից, միջին հաշվով, ծախսվում է 1.7 դրամ (ծախսատարություն):

**Աղյուսակ 8.4. Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների արդյունավետությունն ու արդյունատվությունը, 2004թ.-ին**

	Արդյունավետությունը՝ աղքատներին բաշխված սոցիալական տրանսֆերտների վճարների տոկոսը	Ծախսատարություն (100/սյուն 2)	Արդյունատվությունը՝ Սոցիալական տրանսֆերտների հաշվին կրճատված աղքատության խորության տոկոսը
Կենսաթոշակներ	57.8	1.7	19.8
Սոցիալական աջակցություն	59.7	1.7	10.9
Աղքատության ընտանեկան նպաստներ	60.3	1.7	8.6

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

Սոցիալական տրանսֆերտների հաշվին կրճատված աղքատության խորության մակարդակը ցույց է տալիս, թե որքան մեծ է սոցիալական տրանսֆերտների օգտակարությունը: Սոցիալական աջակցության կամ ԱԸՆ համեմատ կենսաթոշակներն առավել էֆֆեկտիվ են, պարզապես իրենց մեծությամբ պայմանավորված: Այսպիսով, եթե կենսաթոշակների հաշվին աղքատության խորությունը 2004թ.-ին կրճատվել է 19.8 տոկոսով, ապա սոցիալական աջակցության և ԱԸՆ ներգործության արդյունքները համապատասխանաբար կազմել են՝ 10.9 և 8.6 տոկոս:

*Սոցիալական տրանսֆերտները և անհավասարությունը.* ՏՏԿԱՀ գնահատականները ցույց են տալիս, որ սոցիալական տրանսֆերտները նպաստում են նաև սպառման բաշխվածության միջև անհավասարության նվազեցմանը: Սպառման ագրեգատի բաշխվածության նախատրանսֆերտային Ձիմիի գործակիցը նվազում է 10.4 տոկոսով, երբ սպառման ագրեգատին

ավելացվում են կենսաթոշակները և ևս 3.8 տոկոսով, երբ ավելացվում է աղքատության ընտանեկան նպաստի գումարները (աղյուսակ 8.5):

**Աղյուսակ 8.5.** Հայաստան. Սոցիալական տրանսֆերտների ներգործությունը սպառման ագրեգատի բաշխվածության անհավասարության վրա (սպառման ագրեգատի Ջինիի գործակիցները) 2004թ.

Նախատրանսֆերտային (առանց կենսաթոշակների և առանց սոց աջակցության)	0.298
Նախա սոցիալական աջակցության (կենսաթոշակների գումարը ավելացրած առանց սոցիալական աջակցության)	0.270
Հետտրանսֆերտային (ամբողջ սոցիալական աջակցության գումարն ավելացրած )	0.260

Աղբյուրը. SSԿԱՀ 2004թ.

#### 8.4. Աղքատության ընտանեկան նպաստներ

Աղյուսակ 8.6-ում ներկայացված են աղքատության ընտանեկան նպաստների համակարգի վարչական տվյալները: 1999-2004թթ.-ի ընթացքում 37 տոկոսով նվազել է նպաստառու տնային տնտեսությունների քանակը: Նպատակային բնակչության ընդգրկվածության աստիճանը ցածր է. անգամ եթե բոլոր նպաստառու տնային տնտեսությունները լինեին ամենաաղքատ քվանտիլային խմբերից, այսինքն հասցեականությունը լինեի գերազանց չլինեի միջոցների արտահոսքի դեպի ոչ աղքատ բնակչությանը, ԱԸՆ համակարգում ընդգրկված կլինեի աղքատ բնակչության միայն կեսը (2004թ.-ին Հայաստանում աղքատ էր մոտ մեկ միլիոն մարդ): ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա կատարված վերոնշյալ դիտարկումները (աղյուսակ 8.3) ցույց են տալիս, որ ԱԸՆ համակարգից օգտվում է աղքատ բնակչության 25, իսկ ծայրահեղ աղքատների 40 տոկոսը: Մինչև 2002թ.-ը էապես կրճատվել էին ծրագրին հատկացվող ֆինանսական միջոցները: Թեև 2002թ.-ից հետո իրավիճակը սկսել է շտկվել, 2004թ.-ին ծրագրի համար համախառն բյուջեի հատկացումները բավական ցածր էին 1999թ.-ի մակարդակից:

**Աղյուսակ 8.6.** Հայաստան. Աղքատության ընտանեկան նպաստները 1999-2004թթ.-ին (վարչական վիճակագրություն)

	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
<b>Նպաստառուներ</b>						
Ամենամսյա նպաստառուներ (հունվարի 1-ի դրությամբ)						
Ընտանիքների քանակը	211555	199456	174800	149603	141218	134224
Անդամների թվաքանակը	657071	667897	598616	532014	505560	476495
Միանվագ դրամական օգնություն ստացողներ						
Ընտանիքների քանակը	66980	11797	15917	10140	14889	7782
Անդամների թվաքանակը	289711	44935	54139	30544	39456	17680
<b>Միջին նպաստի չափը (ամսական դրամ)</b>						
Մեկ ընտանիքին վճարվող ամենամսյա նպաստ	7193	7196	7712	6554	7099	8254
%-ը միջին աշխատավարձի նկատմամբ	29.7	26.4	26.2	20.0	17.0	15.8
Ընտանիքի մեկ անդամի հաշվով վճարվող ամենամսյա նպաստ	2313	2148	2255	1841	1983	2520
%-ը աղքատության գծի նկատմամբ	13.1	S/Q	S/Q	S/Q	S/Q	13.0
%-ը ծայրահեղ աղքատության գծի նկատմամբ	20.6	S/Q	S/Q	S/Q	S/Q	20.2
Իրական արտահայտությամբ (1999թ.-ի կայուն գներով)	2313	2165	2205	1780	1831	2175
Միանվագ դրամական օգնություն (դրամ մեկ ընտանիքի հաշվով)	3500	3500	3500	4000	4000	4500

### Ֆինանսավորում

Ընդամենը (անվանական մլրդ դրամ)	21.08	17.72	16.85	14.85	13.23	16.09
Իրական գներով (1999=100)	21.08	17.86	16.48	11.08	12.22	14.60
%-ը ՀՆԱ-ի նկատմամբ	2.14	1.72	1.43	1.09	0.89	0.85

**Աղբյուրը.** ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն. ՀԲ գնահատականներ

2004թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության գնահատականների համաձայն, Հայաստանի տնային տնտեսությունների 29.5 տոկոսը դիմել է ԱԸՆ համակարգին, որոնցից 60 տոկոսը, կամ Հայաստանի բոլոր տնային տնտեսությունների 18%-ը գնահատվել է կարիքավոր և ստացել է աղքատության ընտանեկան նպաստ, մնացած 40 տոկոսը, կամ ընդամենը բոլոր տնային տնտեսությունների 11.5%-ը հաշվառվել է ԱԸՆ համակարգում, սակայն նպաստ չի ստացել: ԱԸՆ համակարգին ընդհանրապես չէր դիմել տնային տնտեսությունների 70.5%-ն, որպես հիմնական պատճառ նշելով անհույս լինելը որևէ օգնություն ստանալու՝ մոտ 61%, կամ իրենց ապահովված համարելը՝ մոտ 18%:

Աղյուսակ 8.7-ը ներկայացնում է ՏՏԿԱՀ հիման վրա ԱԸՆ բյուջեի և աղքատության ընտանեկան նպաստ ստացողների բաշխումն ըստ «նախա-ԱԸՆ» սպառման քվանտիլային խմբերի: Տվյալներն ակնհայտ ցույց են տալիս ԱԸՆ միջոցների աղքատամետ բաշխվածությունը. նպաստառուների 62.6 տոկոսը «նախա-ԱԸՆ» սպառման ամենաստորին քվանտիլներից են, որոնք ստանում են ԱԸՆ բյուջեի 67 տոկոսը: Նպաստառուների 18 տոկոսը, որոնք ստացել են ԱԸՆ միջոցների 16.5 տոկոսը՝ «նախա-ԱԸՆ» սպառման երրորդ քվանտիլից են: Այս քվանտիլում տնային տնտեսությունները ևս կարիքավոր են: Առաջին հայացքից կարող է թվալ, թե ԱԸՆ միջոցների իրական «արտահոսքը» սպառման վերին քվանտիլների նպաստառուներին բաշխված միջոցներն են՝ այսինքն, նպաստառուների այն 20 տոկոսը, որոնց հատկացվել է միջոցների 17 տոկոսը կարիքավոր չեն: Սակայն ամենավերին քվանտիլում գտնվող նպաստառուների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն միայնակ կենսաթոշակառուները, որոնք ստանալով իրենց կենսաթոշակը կարողանում են հաղթահարել աղքատության գիծը: Այսպիսով բերված արդյունքները բավական լավն են, սակայն դեռ կա հացեկանությունն էլ ավելի բարելավելու անհրաժեշտություն:

**Աղյուսակ 8.7.** Հայաստան. Աղքատության ընտանեկան նպաստ և այլ սոցիալական աջակցություն ստացողների և վճարված գումարների բաշխումն ըստ «նախա-ԱԸՆ» սպառման քվանտիլների 2004թ. տոկոսներով

Քվանտիլներ	Ստորին	2	3	4	Վերին
<b>Աղքատության ընտանեկան նպաստ</b>					
Նպաստառուներ	40.0	22.6	18.0	11.2	8.2
Գումարներ	44.8	21.9	16.5	9.6	7.2
<b>Սոցիալական առկայություն (ներառյալ ԱԸՆ)</b>					
Նպաստառուներ	45.0	23.7	15.2	9.0	7.1
Գումարներ	51.0	21.3	13.2	8.2	6.3

**Աղբյուրը.** ՏՏԿԱՀ 2004թ.

*Բնակչության ո՞ր խմբերն ունեն ավելի մեծ հավանականություն ընդգրկվելու կամ դուրս մնալու ԱԸՆ համակարգից:* Համաձայն ՏՏԿԱՀ արդյունքների հիման վրա կատարված գնահատականների, առավել բարձր աղքատության ռիսկ ունեն 4 և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունները և հողագուրկ գյուղաբնակ տնային տնտեսություններն՝ այլ կատեգորիաների համեմատ, սակայն սոցիալական աջակցություն ստանալու հավանականությունն առավել բարձր է 4 և ավելի երեխաներ ունեցող տնային տնտեսությունների, քան հողագուրկ գյուղաբնակ տնային տնտեսությունների մոտ (53.8 տոկոս՝ 34.9 տոկոսի դիմաց): Այն տնային տնտեսությունները, որոնք չունեն աշխատող անդամ և ըստ ՏՏԿԱՀ արդյունքների, բնակչության այլ խմբերի համեմատ, առավել քիչ հավանականություն ունեն աղքատ լինելու, ԱԸՆ ծրագրում ունեն կրկնակի անգամ ավելի ընդգրկվածություն, քան «իրենց» իսկ աղքատության մակարդակը (աղյուսակ 8.8):



**Աղյուսակ 8.8.** Հայաստան. Աղքատության մակարդակը և «նախա-ԱԸՆ» ընդգրկվածությունն ըստ տնային տնտեսությունների առանձին խմբերի, 2004թ. (տոկոսներով)

Տնային տնտեսության տեսակը	Ծայրահեղ աղքատության մակարդակը	Աղքատության մակարդակը	Նախա-ԱԸՆ աղքատների ընդգրկվածությունը
4 և ավելի երեխաներով տ/տ-ներ	21.5	60.6	53.8
Առանց աշխատող անդամի տ/տ	3.6	22.4	44.1
Առանց տնտեսապես ակտիվ անդամի տ/տ-ներ	9.1	37.3	31.7
Առանց վարձու աշխատանքից ստացվող եկամտի տ/տ-ներ	10.3	39.4	41.9
Գյուղաբնակ հողագուրկ տ/տ-ներ	10.9	53.6	34.9
Առանց բացակա անդամի տ/տ	9.0	37.7	31.7

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

*Աղքատության ընտանեկան նպաստների դետերմինանտները.* Որոշակի տնային տնտեսության համար աղքատության ընտանեկան նպաստ ստանալու հավանականությունը պայմանավորող որոշիչ գործոնների բացահայտման նպատակով գնահատվել են վիճակագրական մոդելի պարամետրերը (ռեգրեսիոն մոդելի անդյունքները ներկայացված են Վիճակագրական հավելվածի աղյուսակ A8.3-ում): Դիտարկվել են ԱԸՆ ստանալու հավանականության վրա հավանական ազդեցություն ունեցող հետևյալ գործոնները. տնային տնտեսության բնութագրիչները՝ տնային տնտեսության չափը, բնակավայրը, տնային տնտեսության գլխավորի տարիքը, սեռը, կրթությունը, տնային տնտեսության տնտեսական նկարագիրը՝ տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը և սպառումը մեկ չափահաս անդամի հաշվով, և տնային տնտեսության այլ բնութագրիչներ՝ բնակարանային պայմանները. բնակարան, առանձնատուն, ժամանակավոր կացարան և այլն, սեփական մեքենայի և հողի առկայությունը<sup>15</sup>: Պրոքիտ մոդելում այս գործոնները կիրառվել են որպես անկախ՝ բացատրող փոփոխականներ, իսկ սոցիալական աջակցություն ստանալը՝ կախյալ փոփոխական:

ԱԸՆ ստանալու առավել մեծ հավանականություն ունեն երեխաներն ու ծերերն՝ այլ տարիքային կատեգորիաների համեմատ: Որքան մեծ է բոլոր տարիքային խմբերի երեխաների մասնաբաժինը տնային տնտեսության կազմում, այնքան մեծ է ԱԸՆ ստանալու տնային տնտեսության հավանականությունը՝ համեմատվող կատեգորիայի (45-ից 60 տարեկան չափահաս անդամների մասնաբաժին) նկատմամբ տնային տնտեսության չափը պահպանելով անփոփոխ: Ծերերի մասնաբաժինը նույնպես դրական է ազդում ԱԸՆ ստանալու հավանականության վրա: Տնային տնտեսության չափն ազդեցիկ գործոն է՝ քանզի բազմանդամ ընտանիքներում գերակշռում են երեխաները և ԱԸՆ ստանալու հավանականությունն առավել մեծ է՝ 2 տոկոսային կետով: Եթե տնային տնտեսության գլխավորը կին է, ապա այլ հավասար պայմաններում տնային տնտեսության ԱԸՆ ստանալու հավանականությունն ավելի շատ է՝ տղամարդ գլխավոր ունեցող տնային տնտեսությունների համեմատ:

Եթե տնային տնտեսության գլխավորն ունի կրթության առավել բարձր մակարդակ, ապա միջին հաշվով տարրական կրթություն ունեցող գլխավորով տնային տնտեսությունների համեմատ, ԱԸՆ ստանալու հավանականությունը շատ ավելի ցածր է: Տնային տնտեսության անդամների զբաղվածության կարգավիճակը սերտորեն առնչվում է ԱԸՆ ստանալու հավանականության հետ. որքան բարձր է տնային տնտեսությունում գործազուրկ անդամների տեսակարար կշիռն, այնքան բարձր է ԱԸՆ ստանալու տնային տնտեսության հավանականությունը՝ համեմատվող կատեգորիայի, այն է վարձու աշխատողներ ունեցող տնային տնտեսության համեմատ: Նմանատիպ արդյունք է ստացվում տնտեսապես ոչ ակտիվ անդամների մասնաբաժինը դիտարկելիս: Բացի այդ մեկ չափահաս անձի հաշվով սպառումը բավական բացասական

<sup>15</sup> Այս գործոնների մեծ մասը ներառված է նաև տնային տնտեսությունների անապահովության աստիճանի գնահատման բանաձևում:

ազդեցություն ունի ԱԸՆ ստանալու հավանականության վրա: Եթե մեկ չափահաս անձի հաշվով սպառումն ավելանում է մեկ տոկոսային կետով, ապա ԱԸՆ ստանալու հավանականությունը նվազում է 3 տոկոսային կետով:

ԱԸՆ ստանալու հավանականությունը պայմանավորող դիտարկված հաջորդ բնութագրիչներն են տնային տնտեսության կացարանի տեսակը, սեփական մեքենայի և հողի առկայությունը: Ժամանակավոր կացարաններում բնակվող տնային տնտեսությունները՝ բնակարաններում կամ առանձնատներում բնակվողների համեմատ, առավել բարձր հավանականություն ունեն ԱԸՆ ստանալու: Մինչդեռ սեփական մեքենայի առկայությունը կտրուկ նվազեցնում է ԱԸՆ ստանալու հավանականությունը: Որքան մեծ է տնային տնտեսության կողմից տնօրինվող հողակտորն այնքան փոքր է ԱԸՆ ստանալու հավանականությունը: Բացակա անդամ ունեցող տնային տնտեսությունների համար բարձր է ԱԸՆ ստանալու հավանականությունը՝ նման անդամ չունեցողների համեմատ: Մինչդեռ, եթե տնային տնտեսության բացակա անդամը վերադարձել էր ՏՏԿԱՀ նախորդող 12 ամիսների ընթացքում, նման տնային տնտեսությունների համար ԱԸՆ ստանալու հավանականությունը շատ ավելի փոքր է:

Տնային տնտեսության բնակության վայրն ԱԸՆ ստանալու հավանականությունը պայմանավորող կարևոր գործոն է: Եթե մոդելում ընդգրկված այլ բնութագրիչները հավասար են, ապա տնային տնտեսությունների բնակության վայրը բավական որոշիչ է ԱԸՆ ստանալու հավանականության համար. Երևանաբնակների համար ԱԸՆ ստանալու հավանականությունը շատ ավելի ցածր է Լոռու կամ Շիրակի մարզերում բնակվող տնային տնտեսությունների համեմատ:

## 8.5. Եզրահանգումներ

Հայաստանում սոցիալական տրանսֆերտների համար նախատեսված միջոցները բավական սահմանափակ են, բոլոր տեսակի կենսաթոշակները, աղքատության ընտանեկան նպաստները, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի համար տրվող նպաստները, երեխայի ծննդյան միանվագ նպաստները և գործազրկության նպաստները կազմում են ՀՆԱ-ի 4.45 տոկոսը: Այդուհանդերձ, սոցիալական տրանսֆերտները եկամտի կարևոր աղբյուր են Հայաստանի բնակչության համար, հատկապես սպառման բաշխվածության ամենաստորին խմբերի բնակչության համար:

Ինչպես վկայում են ՏՏԿԱՀ արդյունքները, չնայած սոցիալական տրանսֆերտները բավական փոքր են ՀՆԱ-ի հաշվով, դրանք կարևոր լծակ են Հայաստանում աղքատության մակարդակի կրճատման տեսանկյունից. սոցիալական տրանսֆերտների համար ծախսված ՀՆԱ-ի յուրաքանչյուր տոկոսային կետի հաշվով աղքատության մակարդակը կրճատվում է 2.3 տոկոսային կետով: Ողջ բնակչության կտրվածքով, եթե դադարեցվի սոցիալական տրանսֆերտների վճարումն, իսկ տնային տնտեսությունները՝ բավարար ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված, չկարողանան փոխհատուցել այդ կորուստը, ապա աղքատության մակարդակը էապես կաճի. աղքատության ընդհանուր մակարդակը կկազմի 44.8 տոկոս՝ ավելանալով 10.2 տոկոսային կետով, այն նաև բավական կիտրանա և կսրվի:

Կենսաթոշակները, որպես սոցիալական տրանսֆերտների առավել մեծ բաղադրիչ, առավել մեծ ներգործություն ունեն աղքատության հաղթահարման գործում: Սակայն փոքր չէ նաև դրամական սոցիալական աջակցության, մասնավորապես աղքատության ընտանեկան նպաստների դերը:

Սոցիալական տրանսֆերտների ներգործությունը շատ ավելի ակնհայտ է հենց նպաստառու տնային տնտեսությունների համար: Եթե չվճարվեն կենսաթոշակները, իսկ կենսաթոշակառու բնակչությունը չկարողանա փոխհատուցել այդ կորուստն այլ աղբյուրների հաշվին, ապա աղքատության մակարդակը կենսաթոշակառուների շրջանում կիսով չափ կավելանա, իսկ ծայրահեղ աղքատների տեսակարար կշիռը կենսաթոշակառուների շրջանում կեռապատկվի: ԱԸՆ դադարեցումը կհանգեցնի նպաստառու տնային տնտեսությունների շրջանում աղքատության մակարդակի կտրուկ աճի՝ 47.1 տոկոսից 61.4 տոկոսի, իսկ ծայրահեղ աղքատ բնակչության մասնաբաժինը կկրկնապատկվի:

Աղքատության ընտանեկան նպաստների համակարգում ընդգրկվածությունը սահմանափակ է՝ համակարգում ընդգրկված է ծայրահեղ աղքատ բնակչության 40, իսկ աղքատների 25 տոկոսը: Այդուհանդերձ ծրագրի հասցեականությունը բավական բարձր է, քանզի բոլոր նպաստառուների 63 տոկոսը, որոնք ստանում են ծրագրին հատկացված ֆինանսական միջոցների 67 տոկոսը, գտնվում են սպառման բաշխվածության ամենաստորին երկու քվանտիլներում: Թեև դա բավական լավ արդյունք է, կատարելագործման անհրաժեշտություն այդուհանդերձ կա, քանզի նպաստառուների 20 տոկոսը, որոնց հատկացվում է ռեսուրսների 17 տոկոսը՝ ամենավերին քվանտիլի բնակչության կազմում են: Միջոցների մման կորուստը նվազեցնելու նպատակով, հավանաբար անհրաժեշտություն կառաջանա վերանայելու հասցեականության բանաձևը ՏՏԿԱՀ հիման վրա: Հասցեականության բարելավումը հնարավորություն կընձեռի բյուջետային մույն միջոցների շրջանակում ընդլայնելու աղքատների ընդգրկվածությունը: Սակայն ավելի մեծ ծավալի ընդգրկվածությունը պահանջում է նաև միջոցների ավելացում:

## ԳԼՈՒԽ IX. Բնակչության բնակարանային պայմանները

1998/99թ.-ի համեմատ 2004թ.-ին որոշ չափով բարելավվել էին բնակչության կենցաղային պայմանները, ինչը հիմնականում պայմանավորված էր բնակչության եկամուտների աճով, ինչպես նաև արդյունք էր Կառավարության կողմից իրականացված՝ հատկապես ժամանակավոր կացարանների բնակիչների բնակարանային պայմանների և բնակչությանը խմելու ջրի մատակարարման բարելավմանն ուղղված միջոցառումների: Նվազել է ժամանակավոր կացարաններում բնակվողների թվաքանակը, բնակչության մի փոքր խումբ կարողացել էր ընդլայնել բնակման տեղերը, վերանորոգել կամ կառուցել նոր բնակարաններ: Բնակարանային պայմանները համեմատաբար վատ էին աղքատ բնակչության մոտ: Բնակարանների հիմնական մասն ապահովված էր կենտրոնացված ջրամատակարարման համակարգով՝ հավասարապես թե՛ աղքատ և թե՛ ոչ աղքատ բնակչության մոտ: Քաղաքային բնակավայրերում կենտրոնացված ջրամատակարարումը գրեթե համատարած բնույթ ուներ՝ 96.5 տոկոս, իսկ գյուղական բնակավայրերում այն բարելավվել էր՝ 74.0 տոկոս: Բարելավվել էր նաև ջրի մատակարարման գրաֆիկը, հատկապես աղքատ բնակչության մոտ, այդուհանդերձ այն դեռ բավական բարելավման կարիք ուներ, քանզի 2004թ.-ին Հայաստանի տնային տնտեսությունների 40 տոկոսը ջուր ստանում էր օրական 1-5 ժամ: Կենտրոնացված ջրամատակարարումը նույնպես բարելավվել էր և կրկին մեծ չէր տարբերությունն ըստ սպառման քվանտիլների բաշխվածության, սակայն զգալի էր գյուղ-քաղաք տարբերությունը, քանզի կենտրոնացված ջրահեռացման համակարգ ուներ գյուղաբնակ տնային տնտեսությունների միայն 18 տոկոսը: Աղբահանումը հեռու էր բավարար գնահատականից, քանզի շատ քիչ թվով տնային տնտեսություններ էին նշել, որ բավարարված են աղբահանության ծառայություններից: 1998/99թ.-ի համեմատ նվազել էր կացարանը ջեռուցող տնային տնտեսությունների համամասնությունը՝ 99.4 տոկոսից կազմելով 96.2 տոկոս 2004թ.-ին և դա հատկապես նկատվել էր շատ աղքատ բնակչության շրջանում: Մյուս կողմից նկատվել էր նաև դրական փոփոխություն, քանի որ տնային տնտեսությունների մեծ մասն օգտվում էր էկոլոգիապես մաքուր ջեռուցման աղբյուրներից՝ էլեկտրաէներգիա և բնական գազ, իսկ փայտը՝ որպես ջեռուցման միջոց, ավելի քիչ էր օգտագործվում: Երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքներով տնային տնտեսությունների հագեցվածությունը բավական բարձր էր, սակայն նման ապրանքները հիմնականում ձեռք էին բերված շատ տարիներ առաջ: Իսկ ժամանակակից կենցաղային ապրանքներից առավել հաճախ գնվում էին բջջային հեռախոսներ, համակարգիչներ, արբանյակային ընդունիչներ և հեռուստացույցներ: Այնուամենայնիվ համակարգիչ և բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների քանակը շատ քիչ է հատկապես գյուղական բնակավայրերում:

### 9.1. Բնակչության բնակարանային պայմանները

Հայաստանում 2004թ.-ին տնային տնտեսությունների գերակշիռ մասը (91%-ը) հանդիսանում էր իրենց կացարանի սեփականատերեր: Քաղաքային բնակավայրերում տնային տնտեսությունները գլխավորապես բնակվում էին բնակարաններում՝ մոտ 69%-ը, իսկ գյուղական բնակավայրերում գերակշռում էին առանձնատները՝ մոտ 87% (աղյուսակ 9.1): Այդ ցուցանիշը գրեթե չէր փոփոխվել 1998/99թ.-ի համեմատ: 2004թ.-ին մոտ 115 հազար մարդ դեռ բնակվում էին հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում (ժամանակավոր կացարաններում հիմնականում բնակվում էին երկրաշարժից տուժած ընտանիքները, իսկ հանրակացարաններում՝ բռնի տեղահանվածներն ու փոխատականները), սակայն 1998/99թ.-ի համեմատ նրանց թվաքանակը կրճատվել էր 19 տոկոսով: Հանրակացարաններում ապրողների մոտ կեսը բնակվում էր Երևանում, իսկ ժամանակավոր կացարաններում բնակվողների մոտ 50%-ն՝ այլ քաղաքային բնակավայրերում:

Հարկ է նշել, որ աղքատության մակարդակի տեսանկյունից զգալի տարբերություններ չեն նկատվել ըստ կացարանի տեսակի տնային տնտեսությունների բաշխվածության դեպքում, բացառությամբ հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում բնակվողների, որոնց 56 տոկոսն աղքատ էր կամ շատ աղքատ:

### Ներդիր 9.1. Հայաստանում բնակչության բնակարանային պայմանները

Հայաստանում բնակչության բնակարանային ապահովվածության խնդիրը կտրուկ սրվեց 1988թ.-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժի և Ադրբեջանից փախստականների մեծ հոսքի հետևանքով: Երկրաժարժից տուժածներին, փոխստականներին և բռնի տեղահանվածներին տրամադրվեցին ժամանակավոր կացարաններ և հանրակացարանները: Ազատական տնտեսակարգին անցումային ժամանակաշրջանում բազմաբնակարան շենքերի շահագործման ընթացքում տեղ գտած բերություններն իրենց հերթին խորացրեցին շենքերի ու բնակարանների պահպանման, հետևաբար և նման շենքերում բնակվող մարդկանց կենցաղային խնդիրները:

Տնտեսական զարգացմանը զուգահեռ, երբ թե՛ բնակչության և թե՛ կառավարության մոտ առկա են անհրաժեշտ ռեսուրսներ, բնակարանային ապահովվածությունն աստիճանակար սկսել է բարելավվել և շատ ու շատ նոր շենքեր են սկսել կառուցվել: Կառավարության ուշադրության կենտրոնում՝ ԱՄՆ ՄՁԳ աջակցությամբ ադետի գոտու բնակարանային շինարարությունն էր: Ըստ պաշտոնական վիճակագրության 2004թ.-ին հանրապետությունում պետական բյուջեի, մարդասիրական օգնության, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 293163 քաղ.մ. բնօրհանուր (օգտակար) մակերեսով նոր կառուցված, ամրացված և վերակառուցված 712 բնակելի շենք: Ադետի գոտու քաղաքներում և գյուղական վայրերում շահագործման է հանձնվել 17329 քաղ.մ. բնօրհանուր (օգտակար) մակերեսով նոր կառուցված, ամրացված և վերակառուցված բնակելի շենք, կամ հանրապետությունում գործարկված մակերեսի 5.9%-ը:

**Աղյուսակ 9.1.** Հայաստան: Տնային տնտեսությունների բաշխումն ըստ բնակավայրի, աղքատության մակարդակի և սպառման քվանտիլային խմբերի 2004թ. տոկոսներով

Ընդամենը	աղ. թվում ըստ կացարանի տեսակի					
	Առանձնա-տուն	Բնակարան	Հանրակա-ցարան	Ժամանակավոր կացարան	Այլ տեսակի կացարան	
<b>Ըստ բնակության վայրի</b>						
Քաղաք	100	26.0	68.6	2.2	2.8	0.4
Գյուղ	100	86.8	7.2	0.2	5.3	0.5
Երևան	100	17.8	79.3	2.3	0.2	0.4
Ընդամենը	100	46.5	47.9	1.5	3.7	0.4
<b>Ըստ աղքատության մակարդակի</b>						
Ոչ աղքատ	100	47.2	48.3	1.2	3.1	0.3
Աղքատ	100	46.7	46.3	1.6	4.8	0.7
Շատ աղքատ	100	37.5	50.2	5.7	6.2	0.4
<b>Ըստ սպառման ագրեգատի քվանտիլային խմբերի</b>						
Առաջին	100	41.6	50.0	3.0	4.8	0.6
Երկրորդ	100	50.0	43.4	1.5	4.6	0.6
Երրորդ	100	51.3	43.9	1.3	3.1	0.4
Չորրորդ	100	47.9	46.4	1.5	3.9	0.3
Հինգերորդ	100	42.5	54.1	0.8	2.5	0.1

Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.

Կացարանների ծանրաբեռնվածությունը լուրջ խնդիր է քաղաքային բնակավայրերում՝ հատկապես Երևանում, մասնավորապես մեկ և երկու սենյականոց բնակարաններում: Այն ավելի է խստանում աղքատ բնակչության մոտ. 2004թ.-ի հետազոտության տվյալներով մեկ սենյականոց բնակարանների ծանրաբեռնվածությունը սպառման ագրեգատի ամենացածր քվանտիլում կազմել է 3.12 մարդ՝ ամենաբարձր քվանտիլի 1.95 ցուցանիշի համեմատ: Այդ ցուցանիշը բարելավվել է 1998/99թ.-ի համեմատ, երբ այն համապատասխանաբար կազմել էր՝ 3.48 և 2.15 մարդ: 1998/99թ.-ի համեմատ, 2004թ.-ին բարելավվել էր նաև բնակչության ապահովվածությունը բնակ-մակերեսով, սակայն ինչպես և նախորդ տարիներում, գյուղական բնակչության ապահովվածու-թյունը բնակմակերեսով բավական գերազանցել է քաղաքայինին (Աղյուսակ 9.2): Միևնույն ժամանակ, բնակարանային ֆոնդի բարեկարգվածությունը գյուղում անհամեմատ ավելի ցածր է, քան քաղաքում: Խոհանոցի, սառը ջրի, ողողվող գուգարանի, լոգարանի միաժամանակյա առկայություն (գործող) գրանցվել է գյուղական բնակավայրերի միայն 7.7 % տնային տնտեսու-

թյունների մոտ, իսկ քաղաքային բնակավայրերում նման տնային տնտեսությունները կազմում են 58.8%: Հանրապետության կտրվածքով բնակարանային ֆոնդի բարեկարգվածության մակարդակը միջին հաշվով կազմել է 41.6%: 1998/99թ.-ի հետազոտության համաձայն այս ցուցանիշը համապատասխանաբար եղել է՝ 30%:

**Աղյուսակ 9.2.** Հայաստան. Բնակչության ապահովվածությունը բնակելի մակերեսով 1998/99 և 2004թթ. (*միջինը քառակուսի մետրերով*)

	Մեկ տնային տնտեսության հաշվով		Տնային տնտեսության անդամի հաշվով	
	1998/99թ.	2004թ.	1998/99թ.	2004թ.
Ապահովվածությունը բնակման երեսով, ընդամենը այդ թվում	52.4	56.2	12.2	14.4
քաղաքային բնակավայրերում	42.4	47.1	10.5	12.8
գյուղական բնակավայրերում	67.9	74.2	14.6	17.1

*Աղբյուրը. ՏՏԿԱՀ 198/99 և 2004թթ.*

Հետազոտության արդյունքում ստացվել են նաև տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականներն իրենց բնակարանային պայմանների վերաբերյալ: Տնային տնտեսությունների մեծ մասի՝ 55.9%-ի կարծիքով իրենց բնակարանային պայմանները բավարար են, յուրաքանչյուր չորրորդ տնային տնտեսություն (23.1%) իր բնակարանային պայմանները գնահատել է վատ, 8.9%-ը՝ շատ վատ և միայն 12%-ն է իր բնակարանային պայմաններին տվել լավ կամ շատ լավ գնահատական: Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները դիտարկվել են նաև ըստ բնակության վայրի, աղքատության մակարդակի և ըստ սպառման ագրեգատի քվանտիլային խմբերի: Քաղաքային տնային տնտեսություններն ավելի բավարարված են իրենց բնակարանային պայմաններից, քան գյուղական տնային տնտեսությունները: Ակնհայտ է, որ թե առավել աղքատ տնային տնտեսությունները և ավելի ցածր քվանտիլային խմբերում գտնվող տնային տնտեսություններն իրենց բնակարանային պայմաններից բավական դժգոհ են. ամենաստորին սպառման քվանտիլում՝ 60 տոկոսն իր բնակարանային պայմանները գնահատել է վատ կամ շատ վատ, իսկ ամենավերին քվանտիլում, նման տնային տնտեսությունները կազմել են 20 տոկոս:

**Աղյուսակ 9.3.** Հայաստան. Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականը 2004թ.-ին (տոկոսներով)

Ընդամենը	Բնակարանային պայմանների վերաբերյալ տնային տնտեսությունների սուբյեկտիվ գնահատականները				
	Շատ լավ	Լավ	Բավարար	Վատ	Շատ վատ
<b>Ըստ բնակության վայրի</b>					
Քաղաք 100	1.0	12.2	58.3	20.4	8.2
Գյուղ 100	1.0	9.0	51.1	28.5	10.4
Երևան 100	1.0	13.5	59.2	19.5	6.8
Ընդամենը 100	1.0	11.1	55.9	23.1	8.9
<b>Ըստ աղքատության մակարդակի</b>					
Ոչ աղքատ 100	1.2	13.2	58.7	20.8	6.1
Աղքատ 100	0.5	6.9	50.7	28.6	13.3
Շատ աղքատ 100	0.0	3.2	42.1	28.5	26.2
<b>Ըստ սպառման ագրեգատի քվանտիլային խմբերի</b>					
Առաջին 100	0.2	4.7	47.8	29.3	18.0
Երկրորդ 100	0.7	8.0	53.3	26.5	11.5
Երրորդ 100	1.1	10.7	58.3	22.5	7.4
Չորրորդ 100	0.8	12.5	56.3	23.9	6.5
Հինգերորդ 100	1.8	17.0	61.0	16.1	4.1

*Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ.*

**Նշում.** Աղքատներն այս աղյուսակում գնահատվել են որպես ընդամենը աղքատ տնային տնտեսություններից հանաչ շատ աղքատ տնային տնտեսությունների համամասնությունը:

Բնակարանային պայմանները համեմատաբար ավելի վատ էին աղքատ և հատկապես շատ աղքատ տնային տնտեսությունների մոտ: Եթե ընդհանուր առմամբ բնակարանի մակերեսի անբավարարությունից դժգոհել է հարցման մասնակից տնային տնտեսությունների 31%-ն, ապա աղքատ տնային տնտեսությունների շրջանում բնակմակերեսի անբավարարությունից դժգոհ է եղել տնային տնտեսությունների 39%-ը և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների 46.7%-ը: Վատ լուսավորություն ուներ տնային տնտեսությունների 20%-ը՝ ընդ որում աղքատ տնային տնտեսությունների 25%-ը և ծայրահեղ աղքատների 36.4%-ը: Տնային տնտեսությունների բավական մեծ խումբ՝ 41.3%-ը նշել էր բնակարանի խոնավության մասին. նման տնային տնտեսությունների մասնաբաժինը մեծ էր աղքատ տնային տնտեսությունների կազմում՝ 48% և ծայրահեղ աղքատ տնային տնտեսությունների մոտ՝ 60%: Կաթող տանիքի մասին նշել էր տնային տնտեսությունների 25.4%-ը՝ ծայրահեղ աղքատների՝ 37.2%-ը:

2004թ.-ի տնային տնտեսությունների միայն մոտ 7 տոկոսը կամ 54 հազար տնային տնտեսություն էր կարողացել վերանորոգել իրենց կացարանը վերջին մեկ տարվա ընթացքում, ընդ որում նրանց գերակշռող մասը՝ 80 տոկոսը եղել են ոչ աղքատ տնային տնտեսություններ, իսկ աղքատ տնային տնտեսություններն այս խմբում կազմել են ընդամենը 15% (ծայրահեղ աղքատները՝ 2%):

## 9.2. Խմելու ջրի մատչելիությունը, ջրահեռացումը և աղբահանությունը

*Խմելու ջրի մատչելիությունը:* Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ուներ հարցման մասնակից տնային տնտեսությունների մեծամասնությունն, ինչպես 1998/99թ.-ի, այնպես էլ 2004թ.-ի հետազոտությունների ժամանակ: Քաղաքական տնային տնտեսությունների 96.5%-ը և գյուղաբնակ տնային տնտեսությունների 74.0%-ը 2004թ.-ին և համապատասխանաբար 96.2%-ը և 64.7%-ը 1998/99թ.-ին ունեին կենտրոնացված ջրամատակարարման համակարգ: Կենտրոնացված ջրամատակարարում ունեցող տնային տնտեսությունների 74.9 %-ի մոտ ջրի ծորակը գտնվում էր տանը, 20.7 %-ի մոտ՝ բակում, 4.4%-ի մոտ՝ փողոցում: 1998/99թ.-ի համեմատ, 2004թ.-ին բարելավվել էր գյուղաբնակ բնակչության ջրամատակարարումը: Բնականաբար շատ ավելի քիչ թվով գյուղաբնակ տնային տնտեսություններ էին նշել, որ օգտվում են աղբյուրներից, ջրհորներից կամ գնում են բերովի ջուր՝ ջրատար մեքենաներից (Աղյուսակ 9.4):

### *Ներդիր 9.2. Խմելու ջրի մատչելիությունը*

Անվտանգ խմելու ջրի մատչելիությունը, որպես բնակչության կենսամակարդակը պայմանավորող կարևորագույն գործոն, ԱՀՌԾ գերակայությունների շարքում է: Նախատեսվում է մինչև 2015թ.-ը կենտրոնացված ջրամատակարարումը հասանելի դարձնել բնակչության առնվազն 86%-ին՝ 98 տոկոս քաղաքային և 70 տոկոս գյուղական բնակչության համար: Ոլորտում շարունակական ներդրումներն ըստ ծրագրի ուղղված կլինեն համակարգի ֆիզիկական կառուցվածքների պահպանմանը, վերականգնմանը և ընտելացմանը, համակարգում հաշվառելիության բարելավմանը և արդիականացմանը: Վերջին տարիներին գրանցվել է ջրամատակարարման ծառայությունների մատչելիության աճ, հատկապես գյուղական բնակավայրերում: Գյուղական բնակավայրերում կենտրոնացված ջրամատակարարման մատչելիության աստիճանի բարձրացումը մեծապես կարող էր պայմանավորված լինել իրականացված մի շարք ներդրումային ծրագրերով: Մասնավորապես, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KfW), Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (IFAD), ԱՄՆ գյուղատնտեսության դեպարտամենտի և Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացված ծրագրերի արդյունքում ավելի քան 40 գյուղական բնակավայրերում վերականգնվել կամ կառուցվել են ջրամատակարարման համակարգեր:

**Աղյուսակ 9.4. Հայաստան. Խմելու ջրի մատչելիությունը տնային տնտեսությունների համար  
1998/99 -2004թթ.-ի համեմատականը (տոկոսներով)**

Ջրի հիմնական աղբյուրը	Ընդամենը		Քաղաքային		Գյուղական	
	հանրապետությունում		բնակավայրերում		բնակավայրերում	
	1998/99թ.	2004թ.	1998/99թ.	1998/99թ.	2004թ.	1998/99թ.
Կենտրոնացված ջրամատակարարում	83.7	88.9	96.2	96.5	64.7	74.0
o մինչև 1 ժամ	16.3	1.6	4.1	1.6	35.0	1.6
o 1-5 ժամ	43.2	39.5	56.4	40.9	23.1	36.0
o 6-12 ժամ	15.8	21.5	19.6	22.5	9.9	19.0
o 12-23 ժամ	4.1	4.5	4.9	5.2	2.8	2.8
o 24 ժամ	20.6	32.9	15.0	29.8	29.2	40.6
Ջրհոր, աղբյուր	5.9	3.8	1.2	0.9	13.0	9.4
Ջրամատակարարման սեփական աղբյուր	2.0	2.6	0.4	0.2	4.4	7.3
Բերովի ջուր	8.3	4.5	2.1	2.3	17.8	9.0
Այլ աղբյուրներ	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.3

Աղբյուրը. *SSGUL* 1998/99 և 2004թ

Սակայն կենտրոնացված ջրամատակարարման համակարգը միշտ չէ ապահովում բավարար ջրամատակարարման ծառայություններ: 2004թ.-ին տնային տնտեսությունները ջուր ունեցել են միջինը 12 ժամ: Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեցող տնային տնտեսությունների միայն 33%-ն է ունեցել շուրջօրյա ջրամատակարարում: Այդուհանդերձ դա շոշափելի բարելավում է 1998/99թ.-ի 20.6%-ի համեմատ: Ինչևէ, 2004թ.-ին Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 40 տոկոսը ջուր ունեցել էր օրական 1-5 ժամ (Աղյուսակ 9.5):

**Աղյուսակ 9.5. Հայաստան. Ջրամատակարարման ծառայությունների մատչելիությունն ըստ սպառման ագրեգատի քվանտիլային խմբերի (տոկոսներով)**

	Առաջին քվանտիլ		Երկրորդ քվանտիլ		Երրորդ քվանտիլ		Չորրորդ քվանտիլ		Հինգերորդ քվանտիլ	
	98/99	2004	98/99	2004	98/99	2004	98/99	2004	98/99	2004
Կենտրոնացված ջրամատակարարում	86.6	89.6	84.6	89.1	84.7	89.6	81.7	89.1	81.8	87.6
o մինչև 1 ժամ	13.4	2.1	15.4	1.8	15.2	1.9	18.2	1.4	18.8	1.1
o 1-5 ժամ	50.7	44.5	47.0	39.8	43.4	40.3	40.6	38.4	36.4	36.1
o 6-12 ժամ	16.0	19.8	15.2	20.7	15.4	22.5	14.5	21.8	17.6	22.3
o 12-23 ժամ	4.3	4.0	4.9	4.3	4.8	4.5	3.6	4.1	2.9	5.4
o 24 ժամ	15.6	29.6	17.5	33.4	21.2	30.8	23.1	34.3	24.3	35.1
Ջրհոր, աղբյուր	4.4	5.2	6.8	4.4	5.5	4.2	6.4	3.0	5.9	2.5
Ջրամատակարարման սեփական աղբյուր	0.9	0.6	0.7	1.0	2.3	1.8	2.4	3.4	3.3	5.1
Բերովի ջուր	8.1	4.5	7.8	5.2	7.4	4.1	9.5	4.4	8.8	4.5
Այլ աղբյուրներ	0.0	0.1	0.0	0.3	0.0	0.3	0.0	0.1	0.3	0.3

Աղբյուրը. *SSGUL* 1998/99 և 2004թ

Հետաքրքրական է, որ կենտրոնացված ջրամատակարարումը գրեթե պահպանվում է նույն մակարդակի վրա ըստ սպառման քվանտիլային բաշխվածության տնային տնտեսությունները դիտարկելիս: Ավելին, ջրամատակարարման տևողության բարելավում առավել նկատվել է բնակչության աղքատ հատվածների մոտ: Օրինակ, շուրջօրյա ջրամատակարարում ունեցող ամենաաղքատ քվանտիլի տնային տնտեսությունների համամասնությունը գրեթե կրկնապատկվել է 1998/99 և 2004թթ.-ի ընթացքում՝ 15.6 տոկոսից 29.6 տոկոսի (Աղյուսակ 9.5):

Ընդհանուր առմամբ, տնային տնտեսությունների մոտ 55 տոկոսը գոհ էր ջրամատակարարման ծառայություններից, մինչդեռ մոտ 44 տոկոսը դժգոհություն էր արտահայտել ծառայության մատակարարումից, որոնցից մեծ մասը հիմնականում աղքատ



տնային տնտեսություններն են՝ 59%: Միևնույն ժամանակ բնակչության բավարարվածության աստիճանը բավական բարձր էր մատակարարվող ջրի գույնից, համից, հոտից և մաքրությունից:

**Աղյուսակ 9.6.** Հայաստան. Ջրամատակարարման ծառայություններ. մատակարարվող ջրի որակ 2004թ.-ին (տոկոսներով)

	Լավ	Բավարար	Վատ
Ջրի մաքրությունը	41.1	43.4	15.7
Հոտը	40.9	43.7	15.4
Համը	41.1	41.8	17.1
Գույնը	42.2	43.1	14.7

Աղբյուրը. *SSGUL* 2004թ.

Ջրահեռացման կենտրոնացված համակարգ. 2004թ.-ին ավելացել էր ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվող տնային տնտեսությունների համամասնությունը՝ 1998/99թ.-ի համեմատ (57.9 և 61.6 տոկոս համապատասխանաբար): Սակայն այդ բարելավումը գրանցվել է հիմնականում Երևան քաղաքում՝ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվողների համամասնությունը նվազել էր (աղյուսակ 9.7):

**Աղյուսակ 9.7.** Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի մատչելիությունը 1998/99 և 2004թթ.-ին (տոկոսներով)

	Երևանում		Այլ քաղաքներում		Գյուղական բնակավայրերում		Ընդամենը	
	98/99	2004	98/99	2004	98/99	2004	98/99	2004
Ջրահեռացման կենտրոնացված համակարգ	90.6	93.4	81.0	79.0	15.4	12.8	57.9	61.6
Ջրահեռացման կենտրոնացված համակարգը չի գործում	3.3	0.1	5.5	2.2	2.0	0.8	3.5	1.0
Կոյուղու բացակայություն	6.1	6.5	13.5	18.8	82.6	86.4	38.6	37.4

Աղբյուրը. *SSGUL* 1998/99 և 2004թ.

Բավական զգալի էր քաղաք-գյուղ տարբերությունը: Ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում էին Երևանի գրեթե բոլոր բնակիչները: Այլ քաղաքային բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգ ուներ տնային տնտեսությունների մոտ 80 տոկոսը, մինչդեռ գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում էր տնային տնտեսությունների միայն 18 տոկոսը: Դա լուրջ խնդիր է, քանզի կոյուղու առկայությունը շատ կարևոր է բավարար սանիտարական պայմաններ ապահովելու համար:

**Աղյուսակ 9.8.** Հայաստան. Ջրահեռացման կենտրոնացված համակարգի առկայությունն ըստ աղքատության մակարդակի (տոկոսներով)

Ջրահեռացման համակարգի առկայությունը	Մպառման ազդեցատի քվանտիլային խմբեր				
	Առաջին	Երկրորդ	Երրորդ	Չորրորդ	Հինգերորդ
Կենտրոնացված ջրահեռացման համակարգ	64.3	57.0	57.9	59.9	67.3
o որից չի գործում	1.2	0.8	1.2	1.1	0.9
Կոյուղու բացակայություն	34.5	42.2	40.9	39.0	31.8

Աղբյուրը. *SSGUL* 2004թ.

Ինչպես ներկայացված է աղյուսակ 9.8-ում, ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվողների համամասնությունը գրեթե նույնն է ամենաղքատ և ամենահարուստ քվանտիլային խմբերում:

**Աղյուսակ 9.9. Հայաստան. Աղբահանությունը 1998/99 և 2004թթ.-ին**

	Երևանում		Այլ քաղաքներում		Գյուղական բնակավայրերում		Ընդամենը	
	98/99	2004	98/99	2004	98/99	2004	98/99	2004
Աղբամուղ և/կամ հավաքվում է բեռնատարով	98.7	99.3	93.3	90.5	53.9	46.0	79.4	78.5
Վառվում է	0.2	0.5	2.5	6.1	25.1	29.3	10.7	12.0
Հորվում է	0.2	0.0	2.4	1.3	17.3	17.1	7.6	6.2
Այլ	0.9	0.2	1.8	2.1	3.8	7.6	2.3	3.3

Աղբյուրը. *SSGLՀ 1998/99 և 2004թ*

**Աղբահանումը.** Աղբահանման ծառայությունը հիմնականում գործում է քաղաքային բնակավայրերում, համեմատաբար լավ այն գործում է հատկապես Երևան քաղաքում, քան գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունները հիմնականում վառում կամ հորում են իրենց աղբը (աղյուսակ 9.9): Բնակչության գոհունակության աստիճանը մատուցվող աղբահանման ծառայությունների մակարդակից բավական ցածր է, քանզի տնային տնտեսությունների կեսից ավելին՝ 52.8 դժգոհել է այդ ծառայության որակից 2004թ.-ին: Տնային տնտեսությունների միայն 40.7 տոկոսն է ինչ-որ չափով գոհունակություն հայտնել ծառայության այդ տեսակից:

### 9.3. Բնակարանների ջեռուցում

Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների մեծ մասը ջեռուցել են իրենց բնակարանները: Սակայն իրենց կացարանը ջեռուցող տնային տնտեսությունների համամասնությունը 1998/99թ.-ի 99.4 տոկոսից նվազել էր և 2004թ.-ին կազմել էր 96.2 տոկոս (աղյուսակ 9.10): Տնային տնտեսությունների կազմում, որոնք չեն կարողացել ջեռուցել իրենց կացարանը, 20 տոկոսը միայնակ կենսաթոշակառուներ էին, 53%-ը կնոջ գլխավորությամբ, իսկ 24%-ը երեք երեխա ունեցող տնային տնտեսություններ էին:

Բնակարանների կենտրոնացված ջեռուցում ուներ տնային տնտեսությունների միայն 3.5%-ը, մինչդեռ 1998/99թ.-ին այդ ցուցանիշը կազմել էր 10%, որը հավանաբար նախկին խորհրդային միության վերջին ժառանգությունն էր: Այն տնային տնտեսությունները, որոնք չեն ունեցել կենտրոնացված ջեռուցում, որպես ջեռուցման աղբյուր օգտագործել են միայն փայտը՝ 42.8%, միայն էլեկտրականությունը՝ 28.7%, գազը՝ 15.9% և այլն: Ընդ որում 1998/99թ.-ի հետազոտության արդյունքների համեմատ բավական նվազել է փայտով և էլեկտրականությամբ ջեռուցվող տնային տնտեսությունների մասնաբաժինն՝ ի հաշիվ գազը, որպես ջեռուցման աղբյուր օգտագործողների: Այսպես, 1998/99թ.-ի հետազոտության արդյունքներով գազով ջեռուցվում էր տնային տնտեսությունների միայն 2.3%-ը, իսկ փայտով և էլեկտրականությամբ՝ 61.3% և 17.7% համապատասխանաբար: Այդ փոփոխությունը բավական դրական է, քանի որ արտացոլում է Կառավարության ջանքերն ուղղված էկոլոգիապես առավել մաքուր ջեռուցման աղբյուրների օգտագործման:

**Աղյուսակ 9.10. Հայաստան. Կացարանների ջեռուցման տեսակները 1998/99 և 2004թթ.-ին (տոկոսներով)**

Կացարանի ջեռուցման տեսակը	Ընդամենը		Քաղաքներ		Գյուղեր	
	1998/99	2004	1998/99	2004	1998/99	2004
Ընդամենը	100	100	100	100	100	100
Զեն ջեռուցվել	0.6	3.8	1.0	5.5	0.0	0.5
Ջեռուցվել են	99.4	96.2	99.0	94.5	100.0	99.5
• կենտրոնացված ջեռուցում	10.0	3.5	16.2	4.9	0.6	0.8
• ջեռուցման սեփական	2.9	1.0	3.3	1.0	2.2	1.2

Կացարանի ջեռուցման տեսակը	Ընդամենը		Քաղաքներ		Գյուղեր	
	1998/99	2004	1998/99	2004	1998/99	2004
<ul style="list-style-type: none"> <li>համակարգ</li> <li>այլ աղբյուր (էլեկտրականություն, վառարան և այլն)</li> </ul>	86.5	91.7	79.5	88.6	97.2	97.5

Աղբյուրը. *SSՀԱՀ 1998/99 և 2004թ*

Երևանի բնակիչները որպես ջեռուցման այլընտրանքային աղբյուր հիմնականում օգտագործում էին էլեկտրաէներգիան, այլ քաղաքային բնակավայրերում էլեկտրական հոսանքով կացարանի ջեռուցումն այդքան էլ տարածված չէր և գրեթե բացակայում էր գյուղական բնակավայրերում: Դրան հակառակ այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում ջեռուցման համար շատ ավելի հաճախ օգտագործվում էր փայտը: Գնալով ավելանում էր գազի բաժանորդների թվաքանակը գրեթե բոլոր տարածաշրջաններում և հատկապես այլ քաղաքային բնակավայրերում (աղյուսակ 9.11):.

**Աղյուսակ 9.11.** Հայաստան. Բնակարանների ջեռուցման համար օգտագործված վառելիքը 1998/99 և 2004թթ.\* (տոկոսներով)

	Երևան		Այլ քաղաքներ		Գյուղեր		Ընդամենը	
	98/99թ.	2004թ.	98/99թ.	2004թ.	98/99թ.	2004թ.	98/99թ.	2004թ.
Նավթ, դիզելային վառելիք	7.8	1.2	5.3	0.1	0.7	0.0	4.2	0.5
Էլեկտրաէներգիա	44.2	65.9	15.0	12.8	1.2	1.0	17.7	28.7
Գազ	0.2	11.0	3.7	24.6	2.6	12.5	2.3	15.9
Ածուխ	0.2	0.1	0.2	0.1	0.1	0.1	0.2	0.1
Փայտ	40.5	18.7	69.3	56.3	69.2	57.3	61.3	42.8
Այլ	7.2	3.1	6.6	6.1	26.3	29.1	14.3	12.1
Ընդամենը	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0	100.0

Աղբյուրը. *SSՀԱՀ 1998/99 և 2004թթ.*

Նշում. \*Հաշվառված են այն տնային տնտեսությունները, որոնք ջեռուցել են իրենց կացարանները և որպես ջեռուցման աղբյուր օգտագործել են «այլ» աղբյուրներ, այսինքն՝ չեն ունեցել կենտրոնացված ջեռուցման համակարգ:

Ըստ սպառման ագրեգատի քվանտիլային խմբերի բնակարանների ջեռուցման մակարդակը դիտարկելիս պարզվել է, որ թեև բոլոր քվանտիլներում գրանցվել են տնային տնտեսություններ, որոնք չեն կարողացել ջեռուցել իրենց կացարանը, նման տնային տնտեսությունների համամասնությունը բարձր էր առաջին քվանտիլում (աղյուսակ 9.12).

**Աղյուսակ 9.12.** Հայաստան. Բնակարանների ջեռուցման մակարդակն ըստ սպառման ագրեգատի քվանտիլային խմբերի (տոկոսներով)

	Առաջին		Երկրորդ		Երրորդ		Չորրորդ		Հինգերորդ	
	98/99	2004	98/99	2004	98/99	2004	98/99	2004	98/99	2004
Չեն ջեռուցվել	1.6	5.6	0.7	4.4	0.4	3.2	0.4	4.2	0	2.4
Ջեռուցվել են	98.4	94.4	99.3	95.6	99.6	96.8	99.6	95.8	100.0	97.6
-կենտրոնացված	14.0	4.1	10.6	2.7	11.7	3.0	7.2	4.0	7.5	3.4
- սեփական համակարգ	1.9	0.8	3.8	0.5	1.8	0.8	3.9	1.0	3.0	2.0
-այլ աղբյուր (էլեկտրականություն, վառարան և այլն)	82.5	89.5	84.9	92.4	86.1	93.0	88.5	90.8	89.5	92.2
Ջեռուցման վրա կատարված միջին ամսական ծախսերը հազ դրամ	30.3	36.7	36.0	42.6	38.6	44.3	41.8	45.9	50.8	50.8

Աղբյուրը. *SSՀԱՀ. 1998/99 և 2004թ*

#### 9.4. Երկարաժամկետ օգտագործման ապրանքների առկայությունը

Չնայած Հայաստանի տնային տնտեսություններում բավական բարձր է երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների առկայությունը, դրանց մեծ մասը հիմնականում ձեռք է բերված տարիներ առաջ (աղյուսակ 9.13): Իսկ վերջին տարիների ընթացքում ձեռք բերված երկարաժամկետ օգտագործման ապրանքների շարքում առավել հաճախ գնվել են հեռուստացույց, կտրուկ աճել է բջջային հեռախոսների, արբանյակային ընդունիչների և համակարգչների ձեռքբերումը: Միայն վերջին երկու տարիների ընթացքում կրկնապատկվել է բջջային հեռախոս ունեցող տնային տնտեսությունների համամասնությունը, իսկ համակարգիչների առկայությանը եռապատկվել է (2002-2004թթ-ին): Այդուհանդերձ, թե՛ բջջային հեռախոս և թե՛ համակարգիչ ունեցող տնային տնտեսությունների համամասնությունը շատ փոքր է, հատկապես գյուղական բնակավայրերում:.

**Աղյուսակ 9.13.** Հայաստան. Երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների առկայությունը 100 ընտանիքի հաշվով 2002\* և 2004թթ.

	Ընդամենը		Քաղաք		Գյուղ	
	2002թ.*	2004թ	2002թ.	2004թ	2002թ.	2004թ
Հեռուստացույց	91	93	94	93	88	92
Սառնարան	85	82	87	85	81	78
Լվացքի մեքենա	76	70	80	72	71	66
Փոշեկուլ	44	33	50	40	34	22
Կարի մեքենա	70	51	70	50	69	52
Արբանյակային ընդունիչ	1.5	3.9	1.7	3.4	1.1	4.9
Բջջային հեռախոս	1.3	5.4	1.8	7.3	0.6	1.6
Տեսամագնիսոֆոն	20	23	24	26	15	16
Տեսախցիկ	1.7	1.4	2.3	1.9	0.8	0.3
Լուսանկարչական ապարատ	25	21	30	26	16	12
Երաժշտական կենտրոն	20	15	26	19	11	9
Համակարգիչ	1.2	3.9	1.6	5.5	0.6	1.0

*Աղբյուրը. SS4UՀ 2002 և 2004թ.*

*Նշում. \*Ավելի վաղ ժամանակահատվածի համար նման տեղեկատվություն չի հավաքագրվել:*

#### 9.5. Եզրահանգումներ

Մի կողմից բնակչության եկամուտների աճը, մյուս կողմից Կառավարության կողմից իրականացված՝ հատկապես ժամանակավոր կացարաններում բնակվողների բնակարանային պայմանների և բնակչությանը մատակարարվող խմելու ջրի ծառայությունների բարելավմանն ուղղված միջոցառումները հանգեցրել են 2004թ.-ին՝ 1998/99թ.-ի համեմատ, բնակչության կենցաղային պայմանների որոշ չափով բարելավման:

*Բնակարանային պայմանները* Նվազել է ժամանակավոր կացարաններում բնակվողների թվաքանակը. ժամանակավոր կացարաններում բնակվող երկրաշարժից տուժած ընտանիքների և հանրակացարաններում բնակվող բռնի տեղահանվածների ու փոխստականների թվաքանակը նվազել է 19 տոկոսով, կամ մոտ 115,000 մարդ ստացել է նոր բնակարան: Հանրակացարաններում և ժամանակավոր կացարաններում բնակվողներն ամենաաղքատ խումբն են, քանզի նման տնային տնտեսությունների մոտ 56%-ը կենտրոնացված էր սպառման ագրեգատով ամենացածր քվանտիլային խմբերում 2004թ.-ին: Բնակչության մի փոքր խումբ կարողացել էր ընդլայնել բնակմակերեսը, վերանորոգել կամ կառուցել նոր բնակարաններ: Տնային տնտեսությունների մոտ երկու երրորդը գոհ էր իր բնակարանային պայմաններից, իհարկե աղքատ բնակչության շրջանում գոհունակության աստիճանը բավական ցածր էր, քանզի աղքատ տնային տնտեսություններն ավելի մեծ հաճախականությամբ բնակվում էին վատ պայմաններում:

*Խմելու ջրի մատչելիությունը.* Կենտրոնացված ջրամատակարարման համակարգ ունեւ տնային տնտեսությունների մեծամասնությունը՝ քաղաքային տնային տնտեսությունների 96.5%-ը և գյուղական տնային տնտեսությունների 74.0%-ը: Կենտրոնացված ջրամատակարարման մատչելիությունը չէր տարբերվում ըստ սոցիալ-տնտեսական խմբերի: Ջրի մատչելիությունը բարելավվել էր հատկապես գյուղական բնակչության համար, քանզի ավելի քիչ թվով տնային տնտեսություններ եմ նշել, որ ջուր աղբյուրներից, ջրհորներից կամ գնում են բերովի ջուր: Բարելավվել է նաև ջրամատակարարման գտրաֆիկը՝ հատկապես աղքատ տնային տնտեսությունների մոտ, սակայն 2004թ.-ին Հայաստանի տնային տնտեսությունների մոտ 40 տոկոսը ջուր ստանում էր օրական 1-5 ժամ:

*Կենտրոնացված ջրահեռացում.* 1998/99թ.-ի համեմատ 2004թ.-ին ավելի մեծ թվով տնային տնտեսություններ էին օգտվում ջրահեռացման կենտրոնացված համակարգից՝ 57.9 և 61.6 տոկոս համապատասխանաբար: Սակայն այդ բարելավումը գրանցվել է հիմնականում Երևան քաղաքում՝ այլ քաղաքային և գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվողների համամասնությունը նվազել էր: Բավական զգալի էր քաղաք-գյուղ տարբերությունը. ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում էին Երևանի գրեթե բոլոր բնակիչները, մինչդեռ գյուղական բնակավայրերում ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվում էր տնային տնտեսությունների միայն 18 տոկոսը: Ջրահեռացման կենտրոնացված համակարգից օգտվողների համամասնությունը գրեթե չէր տարբերվում ըստ աղքատության մակարդակի:

*Աղբահանումը.* Աղբահանման ծառայությունը հիմնականում գործում է քաղաքային բնակավայրերում, համեմատաբար լավ այն գործում է հատկապես Երևան քաղաքում, քան գյուղական բնակավայրերում, որտեղ տնային տնտեսությունները հիմնականում վառում կամ հորում են իրենց աղբը: Ընդհանուր առմամբ բնակչության գոհունակության աստիճանը մատուցվող աղբահանման ծառայությունների մակարդակից բավական ցածր էր:

Բնակարանների ջեռուցում: Ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերի տնային տնտեսությունների մեծ մասը ջեռուցել են իրենց բնակարանները: Սակայն իրենց կացարանը ջեռուցող տնային տնտեսությունների համամասնությունը 1998/99թ.-ի համեմատ նվազել է՝ 99.4 տոկոսից կազմելով 96.2 տոկոս 2004թ.-ին: Այդ միտումն առավել նկատելի է եղել քաղաքային և հատկապես աղքատ տնային տնտեսությունների շրջանում: Տնային տնտեսությունների կազմում, որոնք չեն կարողացել ջեռուցել իրենց կացարանը, 20 տոկոսը միայնակ կենսաթոշակառու էր, 53%-ը կնոջ գլխավորությամբ էր, իսկ 24%-ը երեք երեխա ունեցող տնային տնտեսություններ էին: 2004թ.-ին տնային տնտեսությունները ջեռուցման համար ավելի քիչ էին օգտագործում փահտ և ավելի շատ էլեկտրաէներգիա և բնական գազ: Դա նկատելի բարելավում է, և վկայում է էկոլոգիապես առավել մաքուր ջեռուցման աղբյուրների կիրառմանն ուղղված կառավարության արդարացված ջանքերի մասին:

*Երկարաժամկետ օգտագործման ապրանքների առկայությունը.* Չնայած Հայաստանի տնային տնտեսություններում բավական բարձր է երկարաժամկետ օգտագործման կենցաղային ապրանքների առկայությունը, դրանց մեծ մասը հիմնականում ձեռք է բերված տարիներ առաջ: Իսկ վերջին տարիների ընթացքում ձեռք բերված երկարաժամկետ օգտագործման ապրանքների շարքում առավել հաճախ գնվել են հեռուստացույց, կտրուկ աճել է բջջային հեռախոսների, արբանյակային ընդունիչների և համակարգչների ձեռքբերումը: Այդուհանդերձ, թե՛ բջջային հեռախոս և թե՛ համակարգիչ ունեցող տնային տնտեսությունների համամասնությունը շատ փոքր է, հատկապես գյուղական բնակավայրերում:

ՄԱՍ 3. ՀԱՅԱՍՏԱՆ. ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ  
ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ 2004թ.-ին

## Գլուխ X. Աղքատության և կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականները

*Աղքատությունը կարելի է դիտարկել որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ իրավիճակ: Օբյեկտիվ է, եթե թե՛ նյութական և թե՛ ոչ նյութական մոտեցումների դեպքում համեմատության համար կիրառվում են քանակական համդրելի ցուցանիշներ և չափանիշներ: Սուբյեկտիվ իրավիճակ է, եթե թե՛ նյութական և թե՛ ոչ նյութական մոտեցումների դեպքում համեմատման համար կիրառվում են իրենց բարեկեցության վերաբերյալ անհատների սեփական տեսակետները:*

Հայաստանում սոցիալ տնտեսական պայմաններին տրված սուբյեկտիվ գնահատականները շատ ավելի ցածր էին մեկ չափահաս անձի սպառմանը համարժեք ագրեգատի հիման վրա հաշվարկված կենսամակարդակի օբյեկտիվ գնահատականի համեմատ: Ըստ սուբյեկտիվ գնահատականի, ծայրահեղ աղքատությունը կազմել է ընդամենը 3.3 տոկոս, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված ծայրահեղ աղքատությունը գնահատվել է 6.4 տոկոս: Նմանապես, իրենց աղքատ են համարել բնակչության 17 տոկոսը, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա աղքատ են գնահատվել 28.2 տոկոսը: Այդուհանդերձ հիմնական կարիքների բավարարման հոգսը դեռ բական լուրջ խնդիր է Հայաստանում շատ շատերի համար: Ավելին բնակչությունը շատ թույլ նախաձեռնություն է ցուցաբերում իր ընտանիքների կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ: Տնային տնտեսությունների միայն շատ փոքր տոկոսն է նշել, որ որոշակի քայլեր են նախաձեռնում բարելավելու իրենց կյանքի պայմանները: Հայաստանում բնակչությունը հիմնականում վստահում է եկեղեցուն և զինված ուժերին, բարձր է նաև վատահոլությունը լրատվական գործակալությունների նկատմամբ: Կառավարության նկատմամբ վատահոլություն տաժում է բնակչության 60 տոկոսը: Բնակչությանը մատուցվող կենցաղային, տրանսպորտային, կապի և այլ ծառայությունների որակը դեռ շատ հեռու է բավարար գնահատականից: Սպառողների կողմից ամենաբարձր գնահատականի արժանացել է էլեկտրաէներգիայի սպասարկումը: Այնուհետև համեմատաբար բավարարվածության բարձր աստիճան նշվել է հասարակական տրանսպորտի աշխատանքից, ջրահեռացման ծառայություններից և հեռախոսային ծառայությունից: Բնակչության անբավարարվածության աստիճանն ամենաբարձրն էր աղքատի մասն, ջրամատակարարման և առողջապահական ծառայություններից:

### 10.1. Բնակչության կարծիքն իր կենսամակարդակի վերաբերյալ

2004թ.-ի հետազոտության ընթացքում տնային տնտեսության 16 և բարձր տարիքի առկա անդամները պատասխանել են նաև մի շարք հարցերի, որոնց հիման վրա գնահատվել է կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը:

Տնային տնտեսության համար առավել առաջնային խնդիրների վերաբերյալ տրված հարցին, պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. բնակչության 41 տոկոսի համար կարևորը սննդից զատ այլ առաջնային կարիքների բավարարման հարցն է, որի համար սակայն, տնային տնտեսությունը բավարար գումար չունի, ամեն չորրորդը (25 տոկոսը) նշել է, որ անգամ գումար չունի սննդի խնդիրը հոգալու համար, մոտ ամեն յոթերորդ (15%) տնային տնտեսության համար ամենակարևորը բնակարանային հիմնահարցն էր, յոթ տոկոսի համար ամենա առաջնային խնդիրը՝ առողջությունն է, իսկ վեց տոկոսը նշել է երեխաներին բավարար կրթություն ապահովելու անկարողությունը:

Ըստ իրենց կենսամակարդակին տրված ընտանիքների ինքնագնահատականի ստացվել է հետևյալ պատկերը.

- հարցվածների 39 տոկոսն իրենց գնահատմամբ ունեն միջին կենսամակարդակ,
- 37 տոկոսի կարծիքով, իրենց կենսամակարդակը միջինից ցածր է,
- **17 տոկոսն իրենց համարում են աղքատ ընտանիք, իսկ**
- **միայն 3 տոկոսը համարել են իրենց շատ աղքատ:**
- միայն 0.1 տոկոսն է հարցված ընտանիքներից համարել ինենց հարուստ իսկ
- 3.2 տոկոսը միջինից բարձր կենսամակարդակ ունեցող:

Թե որքանով են համընկնում կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականները երևում է ստորև աղյուսակից, որտեղ տնային տնտեսությունները բաշխվել են ըստ իրենց կենսամակարդակին տրված իրենց իսկ գնահատականների և ըստ յուրաքանչյուր ընտանիքի համար հաշվարկված մեկ չափահաս անձին համարժեք սպառման ագրեգատի, որի համապատասխան նրանք բաշխվել են ըստ աղքատության մակարդակի:

**Աղյուսակ 10.1.** Հայաստան. Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականն ըստ սպառման ագրեգատի դեցիլային խմբերի (տոկոսներով յուրաքանչյուր խմբի մեջ)

տոկոսներով

Սպառման ագրեգատի դեցիլային խմբեր	Կենսամակարդակի սուբյեկտիվ գնահատականը					
	Շատ աղքատ	Աղքատ	Միջինից ցածր	Միջին	Միջինից բարձր	Հարուստ
Ընդամենը այդ թվում	3.3	17.0	37.4	39.0	3.2	0.1
Առաջին դեցիլ	11.9	29.7	35.9	21.3	1.2	0.0
II	5.2	24.6	40.2	29.3	0.7	0.0
III	3.0	28.3	38.9	29.3	0.5	0.0
IV	3.7	17.3	42.4	34.9	1.7	0.0
V	2.2	17.0	37.8	40.9	2.1	0.0
VI	1.9	13.4	36.7	44.0	3.6	0.4
VII	2.0	15.3	42.0	37.6	2.8	0.3
VIII	1.7	12.2	36.5	46.9	2.7	0.0
IX	0.6	8.2	35.8	49.3	6.1	0.0
Տասներորդ դեցիլ	1.5	6.6	28.6	53.7	9.3	0.3

Աղբյուրը. 2004թ. SSYԱՀ


Նշում. Սպառումը հաշվարկվել է ըստ մեկ չափահաս անձի սպառմանը համարժեք:

Զնայած արդյունքները հիմնականում համընկնում են, աղքատության օբյեկտիվ գնահատականն ավելի ցածր է, քան սուբյեկտիվը: Բնակչության միայն 3.3 տոկոսն է իրեն գնահատել շատ աղքատ, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության ցուցանիշներով ծայրահեղ աղքատ են գնահատվել բնակչության 6.4 տոկոսը: Նմանապես, իրենց աղքատ են համարել բնակչության 17 տոկոսը, մինչդեռ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա աղքատ են գնահատվել բնակչության 28.2 տոկոսը: Այդ իսկ պատճառով, 2004թ.-ին ըստ ինքնագնահատման աղքատության ընդհանուր մակարդակը կազմել է 20.3 տոկոս, իսկ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ընդհանուր աղքատության ցուցանիշը գնահատվել է 34.6 տոկոս: Հետաքրքիրն այն է, որ իրենց կենսամակարդակը միջինից բարձր գնահատած տնային տնտեսություններից (թեև նրանք շատ փոքր համամասնություն են կազմում) և ոչ մեկն իրեն հարուստ չի համարել:

Պատկեր 10.1-ում հետազոտված տնային տնտեսությունները բաշխվել են ըստ իրենց կենսամակարդակին տրված գնահատականների և ըստ մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա գնահատված աղքատության մակարդակի: Այսպես, մեկ չափահաս անձին համարժեք սպառման հիման վրա ոչ աղքատ գնահատված տնային տնտեսությունների 1.8 տոկոսն իրենց գնահատել են որպես ծայրահեղ աղքատ, սպառման ագրեգատի հիման վրա աղքատ գնահատված տնային տնտեսությունների 4.9 տոկոսը կարծում են, որ իրենք ծայրահեղ աղքատ են, իրենց ծայրահեղ աղքատ են համարել սպառման ագրեգատով ծայրահեղ աղքատ գնահատվածների 10.8 տոկոսը: Կամ սպառման ագրեգատով ծայրահեղ աղքատ գնահատվածները հետևալ գնահատականն են տվել իրենց սոցիալ-տնտեսական վիճակին՝ 10.8 տոկոսն իրեն համարել է ծայրահեղ աղքատ, 31 տոկոսն իրեն համարել է աղքատ, միջինից ցածր գնահատական իրենց կենսամակարդակին տվել են 38.2 տոկոսը, միջին՝ 19.1 տոկոսը և իրենց կենսամակարդակը միջինից բարձր գնահատել է տնային տնտեսությունների միայն 1 տոկոսը:



**Պատկեր 10.1.** Հիայաստան. Տոնային տնտեսությունների խմբավորումն ըստ կենսամակարդակի սուբյեկտիվ և օբյեկտիվ գնահատականների:




Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ..

Նշում. Աղքատների մասնաբաժինը գնահատվել է որպես ընդամենը աղքատների և ծայրահեղ աղքատների տարբերություն:

Հարցման մասնակիցները թույլ նախաձեռնություն են ցուցաբերում իրենց ընտանիքների կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ: Տնային տնտեսությունների մոտ 30%-ը գտնում են, որ իրենցից ոչինչ կախված չէ, կառավարությունը պետք է բավարարի աշխատատեղերով և ստեղծի համապատասխան պայմաններ: Տնային տնտեսությունների 21%-ը ոչ մի բան չեն նախաձեռնում, 13%-ը չգիտեին ինչ անել, իսկ 5%-ը ոչ մի հույս չունեն և ստիպված ծրագրել էր հեռանալ Հայաստանից: Տնային տնտեսությունների միայն 20 տոկոսն էր եկամտաբեր աշխատանք փնտրում Հայաստանում, իսկ 7%-ը համարում էին իրենց կենսամակարդակը բավարար և ոչինչ չէին ցանկանում փոխել:

Թե ամսական որքան գումար է անհրաժեշտ բավարար ապրելու համար, հարցման մասնակիցների պատասխանները (ներկայացված պատկեր 10.2.-ում) վկայում են, որ որքան բարձր է տնային տնտեսության կենսամակարդակն, այնքան շատ գումար է պահանջվում նրանց կողմից՝ ապահովելու ըստ իրենց պատկերացման «բավարար» ապրուստ:

**Պատկեր 10.2.** Հայաստան. Տնային տնտեսությունների տեսակետը բավարար ապրելու համար տնային տնտեսությանն անհրաժեշտ միջին ամսական եկամտի չափի վերաբերյալ (դրամ)



Աղբյուրը. ՏՏԿԱՀ 2004թ..

**Նշում.** Աղքատների մասնաբաժինը գնահատվել է որպես ընդամենը աղքատների և ծայրահեղ աղքատների տարբերություն:

Եվ վերջապես, հետազոտության մասնակիցները փորձել էին ներկայացնել ապագայի տկատմամբ իրենց հույսերը: Պարզվում է շատ քիչ թվով տնային տնտեսություններ չգիտեն ինչ սպասել ապագայում: Այսպես «ինչպե՞ս է ապրելու նոր սերունդը» հարցաշարում ընդգրկված հարցին հարցման մասնակիցների պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ. 34 տոկոսը դժվարացել է պատասխանել այս հարցին, 18 տոկոսի կարծիքով իրենց երեխաներն իրենցից ավելի վատ են ապրելու, իսկ 14 տոկոսը կարծում է, որ իրենց երեխաներն ապրելու են այնպես, ինչպես իրենց ծնողները: Հարցվածների միայն 26 տոկոսը հույս ունի, որ իրենց երեխաները՝ նոր սերունդը, ապրելու է ավելի լավ:

## 10.2. Բնակչության վերաբերմունքն ու վստահությունը պետական մարմինների նկատմամբ

Տնային տնտեսությունների կենսամակարդակի գնահատման ամբողջացված հետազոտության ժամանակ պարզվել է նաև հարցմանը մասնակից ընտանիքների 16-ից բարձր տարիքի առկա անդամների տեսակետը և վստահության աստիճանը տարբեր հաստատությունների նկատմամբ: Հարցման արդյունքները բերված են աղյուսակ 10.2-ում: Ինչպես երևում է աղյուսակից, հարցվածները հիմնականում վստահում են եկեղեցուն և զինված ուժերին՝ 87 տոկոս: Բավական բարձր է նաև վստահությունը հեռուստատեսության և լրատվամիջոցների հանդեպ: Անվստահության ասիճանն ամենաբարձրն էր Ազգային Ժողովի նկատմամբ, քանի որ 16-ից բարձր տարիքի բնակչության 48 տոկոսը նշել են, որ չեն վստահում այդ կառույցին:

**Աղյուսակ 10.2.** Հայաստան. Բնակչության վերաբերմունքն ու վստահությունը տարբեր հաստատությունների նկատմամբ (տոկոսներով)

Հաստատության անվանումը	Ընդհանուր առմամբ վերապահումներով վստահում են	Ընդհանրապես չեն վստահում	Պատասխան չկա
Կառավարություն	58.3	38.9	2.8
Ազգային ժողով	49.3	47.9	2.8
Տեղական ինքնակառավարման մարմիններ	62.9	33.5	3.6
Զինված ուժեր	87.0	10.4	2.6
Ոստիկանություն	59.6	35.6	4.8
Արդարադատություն	52.1	41.1	6.8
Սոցիալական ծառայություններ	59.7	29.4	10.9
Եկեղեցի	87.1	9.4	3.5
Արհմիություններ	30.8	36.8	32.4
Հեռուստատեսություն և լրատվամիջոցներ	74.7	22.4	2.9
Իրենց անմիջական ղեկավարին			
ա) մասնավոր հատվածում	64.7	16.6	18.7
բ) պետական հատվածում	67.6	15.3	17.1

Աղբյուրը. 2004թ. ՏՏԿԱՀ

## 10.3. Բնակչության բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայությունների որակից

Աղյուսակ 10.3-ում ներկայացված է հարցման մասնակիցների բավարարվածությունը մատուցվող վճարովի ծառայություններից: Աղյուսակից երևում է, որ բնակչությունը հիմնականում բավարարված է էլեկտրաէներգիայի մատուցումից, քանի որ 2004թ.-ի ՏՏԿԱՀ մասնակից բնակչության 95%-ը վկայել է այդ մասին: Բնակչության բավարարվածության

